

ՀՀ ՎՃՌԱԲԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՆ

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

(2006-2014)

Կազմեցին՝ ԱՇՈՏ ԽԼՈՑԱՆ («ԼեգէքսԳրուպ» փաստաբանական
գրասենյակի իրավաբան,
իրավագիտության մագիստրոս)

ՄԻԼՎԱ ԱՍՏՏՐՅԱՆ («Կոնցեռն-Դիալոգ» փաստաբանական
գրասենյակի իրավաբան,
իրավագիտության մագիստրոս)



ԿՈՆՑԵՐՆ ԴԻԱԼՈԳ
— Փաստաբանական
գրասենյակ —

ԵՐԵՎԱՆ

Հեղինակային հրատարակություն

2015

ՀՏԴ 347.651.68

ԳՄԴ 67.404.5

Հ 247

ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկան: Ժառանգական
Հ 247 իրավունք (2006-2014) / Կազմ.՝ Ա. Խլոյան, Ս. Ասատրյան. –
Եր.: Հեղ. հրատ., 2015. – 508 էջ. – (Փաստաբանի ուղեցույց):

Սույն ձեռնարկը «Փաստաբանի ուղեցույց» մատենաշարի 2-րդ հատորն է: Ձեռնարկում ժամանակագրական հերթականությամբ ներկայացվել են ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2006-2014 թվականների ընթացքում կայացված որոշումները, որոնք վերաբերում են ժառանգական իրավահարաբերություններին:

Ձեռնարկը նախատեսված է փաստաբանների համար:

ՀՏԴ 347.651.68

ԳՄԴ 67.404.

ISBN 978-9939-0-1528-6

© Խլոյան Ա., 2015
© Ասատրյան Ս., 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	8
ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ցանկ	9
ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների սեղմագիր	19
Հավելված – ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ	76
1. 3-1854/ՎԴ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 1227-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման վերաբերյալ)	76
2. 3-1629/ՎԴ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ մասերի, 1226-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման վերաբերյալ)	81
3. 3-2305/ՎԴ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի, 1228-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման վերաբերյալ)	89
4. 3-141/ՎԴ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի, 1225-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, 1226-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման վերաբերյալ)	95
5. 3-753/ՎԴ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի, 1227-րդ հոդվածի 1-ին մասի, 1228-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ)	106
6. 3-1179/ՎԴ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի, ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ պարբերությունների կիրառման վերաբերյալ)	114
7. 3-1224/ՎԴ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ և 1226-րդ հոդվածների, 1227-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման վերաբերյալ).....	125
8. 3-1345/ՎԴ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին մասի, 1227-րդ հոդվածի 1-ին մասի, 1228-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման վերաբերյալ)	135

9. <i>3-1621/ՎԴ</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի, 1225-րդ հոդվածի 5-րդ մասի, 1226-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ)	145
10. <i>3-1416/ՎԴ</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1194-րդ հոդվածի 2-րդ մասի, 1202-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, 1211-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ մասերի կիրառման վերաբերյալ)	153
11. <i>3-1792/ՏԴ</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի կիրառման վերաբերյալ)	162
12. <i>3-1778/ՎԴ</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի, 1244-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման վերաբերյալ)	170
13. <i>3-1843/ՎԴ</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 1226-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման վերաբերյալ)	181
14. <i>3-23/ՎԴ</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի, 1228-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման վերաբերյալ) ...	188
15. <i>3-29/ՎԴ</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1203-րդ և 1204-րդ հոդվածների, 1205-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի, 1225-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 1226-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման վերաբերյալ)	195
16. <i>3-148/ՎԴ</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի 1-ին մասի, 1186-րդ հոդվածի 1-ին մասի, 1230-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ)	206
17. <i>3-183/ՎԴ</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի, 1211-րդ հոդվածի 3-րդ մասի, 1225-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 1226-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման վերաբերյալ)	214
18. <i>3-446/ՎԴ</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ հոդվածի 1-ին մասի, 1224-րդ հոդվածի, 1227-րդ հոդվածի 1-ին մասի, 1243-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ)	225
19. <i>3-502/ՎԴ</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին մասի, 1226-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման վերաբերյալ) ...	231
20. <i>3-509/ՎԴ</i> (ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների կիրառման վերաբերյալ) ...	240

21. <i>ԵՄՆԴ/1823/02/08</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ)	251
22. <i>ԵՄՆԴ/2201/02/08</i> (ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ)	257
23. <i>ԵՇՂ/0630/02/08</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 1226-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման վերաբերյալ)	263
24. <i>ԵԷՂ/0293/02/08</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի, 1225-րդ հոդվածի 5-րդ մասի, 1226-րդ հոդվածի 3-րդ մասի, 1236-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման վերաբերյալ)	274
25. <i>ՎՂ/5980/05/08</i> (ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 530-րդ և 531-րդ հոդվածների, 537-րդ հոդվածի 1-ին պարբերության, 549-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների կիրառման վերաբերյալ)	283
26. <i>ԵՄՂ/0937/02/08</i> (ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 531-րդ հոդվածի, 549-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների կիրառման վերաբերյալ)	293
27. <i>ԵԷՂ/0272/02/08</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի, 1221-րդ հոդվածի 1-ին մասի, 1225-րդ հոդվածի, 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 1227-րդ հոդվածի 1-ին մասի, 1228-րդ հոդվածի 2-րդ մասի, 1230-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման վերաբերյալ)	300
28. <i>ԵԿՂ/0462/02/08</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին մասի, 1244-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի կիրառման վերաբերյալ)	317
29. <i>ԵՄՂԴ/0638/02/08</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի 1-ին մասի, 1225-րդ հոդվածի 5-րդ մասի, 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 1227-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման վերաբերյալ)	331
30. <i>ՎՂ4/0240/05/09</i> (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի, 1228-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման վերաբերյալ)	342

31. **ԵՔՂ/0279/02/08** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 2-րդ մասի, 1243-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ) **349**
32. **ԵԷՂ/1400/02/09** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին մասի, 1244-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի կիրառման վերաբերյալ) **358**
33. **ԵԱՔՂ/2478/02/09** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին մասի, 1227-րդ հոդվածի, 1228-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի կիրառման վերաբերյալ) **367**
34. **ՎՂ/5269/05/09** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման վերաբերյալ) **375**
35. **ԵՄՂ/0235/02/09** (ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 531-րդ հոդվածի, 549-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների կիրառման վերաբերյալ) **384**
36. **ԵԱՔՂ/1018/02/09** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 2-րդ մասի, 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 1227-րդ հոդվածի 1-ին մասի, 1228-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման վերաբերյալ) **395**
37. **ԵԷՂ/0850/02/11** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի, 1221-րդ հոդվածի 1-ին մասի, 1225-րդ հոդվածի, 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի կիրառման վերաբերյալ) **403**
38. **ԵԿՂ/2633/02/08** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կիրառման վերաբերյալ) **417**
39. **ԵԿՂ/2472/02/08** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին մասի, 1187-րդ հոդվածի 1-ին մասի, 1188-րդ հոդվածի 1-ին մասի, 1216-րդ հոդվածի, 1225-րդ հոդվածի 1-ին մասի, 1226-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 1227-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման վերաբերյալ) **424**
40. **ԵԱՔՂ/0554/02/11** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական

- օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ) **437**
- 41. ԱՆԱԴ2/0420/02/11** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ և 1225-րդ հոդվածների, 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի կիրառման վերաբերյալ) **451**
- 42. ԳԴ4/0191/02/11** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին մասի, 1187-րդ հոդվածի 1-ին մասի, 1188-րդ հոդվածի 1-ին մասի, 1193-րդ հոդվածի 3-րդ մասի, 1194-րդ հոդվածի 1-ին մասի, 1198-րդ, 1216-րդ, 1217-րդ, 1219-րդ և 1221-րդ հոդվածների, 1225-րդ հոդվածի 1-ին մասի, 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 1227-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 1229-րդ հոդվածի, 1230-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման վերաբերյալ) **464**
- 43. ԵՇԴ/1050/02/12** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին մասի, 1187-րդ հոդվածի 1-ին մասի, 1188-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 1190-րդ հոդվածի 1-ին մասի, 1221-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման վերաբերյալ) **482**
- 44. ԿԴ3/0232/02/13** (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ) **489**

ՆԱԽԱԲԱՆ

Սույն ձեռնարկում անդրադարձ է կատարվել ժառանգական իրավահարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ վճռաբեկ դատարանի դատական պրակտիկային:

Ձեռնարկում ըստ ժամանակագրական հերթականության (2006 թվականից մինչև 2014 թվականը ներառյալ) ներկայացվել են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, որոնք վերաբերում են ժառանգական հարաբերությունների ընթացքում առաջացող բազմաբնույթ հարցերի կարգավորմանը, այդ թվում՝ ժառանգության մասին ընդհանուր դրույթներին, ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգմանը և դրանց առանձնահատկություններին, ժառանգության ընդունմանը, ժառանգությունից հրաժարվելուն, ժառանգության բաժանմանը, ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելուն և այլն:

Առանձին սեղմագրի տեսքով ներկայացվել են նաև վերոնշյալ և ժառանգական հարաբերությունների ընթացքում ծագող այլ հարցերի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները ՀՀ քաղաքացիական և ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքերի ժառանգական իրավահարաբերություններին վերաբերող դրույթների վերաբերյալ:

ՀՀ ՎՃՌԱԲԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1184-րդ հոդված

3-148/ՎԴ (29.02.2008թ.)

ՎԴՅ/0421/05/08 (26.06.2009թ.)

ՀՅՔԴ4/0096/02/08 (30.07.2010թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1185-րդ հոդված

3-753/ՎԴ (06.07.2007թ.)

ՎԴ/1400/05/09 (02.04.2010թ.)

ԵԱՔԴ/1018/02/09 (01.07.2011թ.)

ԵԿԴ/2472/02/08 (05.04.2013թ.)

ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)

ԵՇԴ/1050/02/12 (29.11.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1186-րդ հոդված

3-2305/ՎԴ (30.11.2006թ.)

3-141/ՎԴ (06.07.2007թ.)

3-844/ՎԴ (06.07.2007թ.)

3-1476/ՎԴ (10.10.2007թ.)

3-1482/ՎԴ (10.10.2007թ.)

3-1621/ՎԴ (09.11.2007թ.)

3-1792/ՏԴ (12.12.2007թ.)

3-148/ՎԴ (29.02.2008թ.)

3-183/ՎԴ (27.03.2008թ.)

ԵԿԴ/2035/02/08 (27.05.2009թ.)

ՎԴՅ/0421/05/08 (26.06.2009թ.)

ԵԷԴ/0293/02/08 (16.10.2009թ.)

ՀՅՔԴ4/0096/02/08 (30.07.2010թ.)

ՎԴ/1864/05/09 (30.07.2010թ.)

ՎԴ/5269/05/09 (01.04.2011թ.)

ԵԿԴ/2633/02/08 (25.12.2012թ.)

ԵԷԴ/1643/02/09 (08.05.2014թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1187-րդ հոդված

Յ-2305/ՎԴ (30.11.2006թ.)

Յ-1224/ՎԴ (05.09.2007թ.)

Յ-1345/ՎԴ (10.10.2007թ.)

ԵԱՔԴ/2478/02/09 (01.10.2010թ.)

ԵԿԴ/2472/02/08 (05.04.2013թ.)

ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)

ԵՇԴ/1050/02/12 (29.11.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1188-րդ հոդված

ԵՔԴ/0119/02/08 (26.06.2009թ.)

ՇԴ/0023/02/09 (04.12.2009թ.)

ՎԴ/1400/05/09 (02.04.2010թ.)

ՎԴ/3465/05/09 (29.10.2010թ.)

ԱՐԱԴ/0214/02/11 (19.10.2012թ.)

ԵԿԴ/2472/02/08 (05.04.2013թ.)

ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)

ԵՇԴ/1050/02/12 (29.11.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1190-րդ հոդված

ԵՇԴ/1050/02/12 (29.11.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1193-րդ հոդված

ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1194-րդ հոդված

Յ-1416/ՎԴ (09.11.2007թ.)

ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1198-րդ հոդված
ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1202-րդ հոդված
3-1416/ՎԴ (09.11.2007թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1203-րդ հոդված
3-29/ՎԴ (29.02.2008թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1204-րդ հոդված
3-29/ՎԴ (29.02.2008թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1205-րդ հոդված
3-29/ՎԴ (29.02.2008թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1211-րդ հոդված
3-1416/ՎԴ (09.11.2007թ.)
3-183/ՎԴ (27.03.2008թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1215-րդ հոդված
3-446/ՎԴ (25.07.2008թ.)
ԵԱՔԴ/1516/02/08 (24.07.2009թ.)
ԵՇԴ/0230/02/11 (26.12.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1216-րդ հոդված
ԵԷԴ/0272/02/08 (12.03.2010թ.)
ՎԴ/3653/05/09 (30.07.2010թ.)
ԵԱՔԴ/0575/02/10 (03.12.2010թ.)
ԵԷԴ/0850/02/11 (19.10.2012թ.)
ԵԿԴ/2472/02/08 (05.04.2013թ.)
ԱՐԱԴ2/0420/02/11 (04.10.2013թ.)
ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1217-րդ հոդված

ԵԱՆԴ/1823/02/08 (13.02.2009թ.)

ԵԱՔԴ/1516/02/08 (24.07.2009թ.)

ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)

ԵՇԴ/0230/02/11 (26.12.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1219-րդ հոդված

ԵԱՔԴ/1516/02/08 (24.07.2009թ.)

ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1221-րդ հոդված

ԵԷԴ/0272/02/08 (12.03.2010թ.)

ԵԱԴԴ/0638/02/08 (12.03.2010թ.)

ԵԷԴ/0850/02/11 (19.10.2012թ.)

ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)

ԵՇԴ/1050/02/12 (29.11.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1222-րդ հոդված

3-415/ՎԴ (01.06.2007թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1224-րդ հոդված

3-446/ՎԴ (25.07.2008թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1225-րդ հոդված

3-1629/ՎԴ (26.10.2006թ.)

3-415/ՎԴ (01.06.2007թ.)

3-938/ՎԴ (01.06.2007թ.)

3-141/ՎԴ (06.07.2007թ.)

3-844/ՎԴ (06.07.2007թ.)

3-1476/ՎԴ (10.10.2007թ.)

3-1621/ՎԴ (09.11.2007թ.)

3-1843/ՎԴ (25.12.2007թ.)

3-29/ՎԴ (29.02.2008թ.)
3-183/ՎԴ (27.03.2008թ.)
3-502/ՎԴ (26.09.2008թ.)
ԵԿԴ/2035/02/08 (27.05.2009թ.)
ԵՔԴ/0119/02/08 (26.06.2009թ.)
ՎԴ3/0421/05/08 (26.06.2009թ.)
ԵՇԴ/0630/02/08 (11.08.2009թ.)
ԵԷԴ/0293/02/08 (16.10.2009թ.)
ԱՎԴ2/0387/02/08 (16.10.2009թ.)
ՇԴ/0023/02/09 (04.12.2009թ.)
ԵԷԴ/0272/02/08 (12.03.2010թ.)
ԵԱԴԴ/0638/02/08 (12.03.2010թ.)
ՎԴ/1400/05/09 (02.04.2010թ.)
ԵԿԴ/1596/02/09 (29.10.2010թ.)
ՎԴ/3465/05/09 (29.10.2010թ.)
ԿԴ1/0809/02/10 (23.03.2012թ.)
ԵԷԴ/0850/02/11 (19.10.2012թ.)
ԵԿԴ/2472/02/08 (05.04.2013թ.)
ԱՐԱԴ2/0420/02/11 (04.10.2013թ.)
ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)
ԵՇԴ/0230/02/11 (26.12.2013թ.)
ԵԷԴ/1643/02/09 (08.05.2014թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1226-րդ հոդված

3-1854/ՎԴ (28.09.2006թ.)
3-1629/ՎԴ (26.10.2006թ.)
3-415/ՎԴ (01.06.2007թ.)
3-938/ՎԴ (01.06.2007թ.)
3-141/ՎԴ (06.07.2007թ.)
3-1125/ՎԴ (05.09.2007թ.)
3-1224/ՎԴ (05.09.2007թ.)
3-1314/ՎԴ (10.10.2007թ.)

3-1476/ላገ (10.10.2007ጾ.)
3-1482/ላገ (10.10.2007ጾ.)
3-1621/ላገ (09.11.2007ጾ.)
3-1843/ላገ (25.12.2007ጾ.)
3-23/ላገ (29.02.2008ጾ.)
3-29/ላገ (29.02.2008ጾ.)
3-183/ላገ (27.03.2008ጾ.)
3-502/ላገ (26.09.2008ጾ.)
3-575/ላገ (28.11.2008ጾ.)
ፎቶ/0119/02/08 (26.06.2009ጾ.)
ላገ3/0421/05/08 (26.06.2009ጾ.)
ፎጵ/0630/02/08 (11.08.2009ጾ.)
ፎጵ/0293/02/08 (16.10.2009ጾ.)
ሀላገ2/0387/02/08 (16.10.2009ጾ.)
ጵ/0023/02/09 (04.12.2009ጾ.)
ጵ3ቶ/4/0048/02/08 (04.12.2009ጾ.)
ፎጵ/0272/02/08 (12.03.2010ጾ.)
ፎሀገ/0638/02/08 (12.03.2010ጾ.)
ላገ/1400/05/09 (02.04.2010ጾ.)
ፎሀቶ/1217/02/09 (25.06.2010ጾ.)
ፎሀቶ/1092/02/09 (30.07.2010ጾ.)
ፎላገ/1596/02/09 (29.10.2010ጾ.)
ፎሀቶ/1018/02/09 (01.07.2011ጾ.)
ላገ1/0809/02/10 (23.03.2012ጾ.)
ፎጵ/0850/02/11 (19.10.2012ጾ.)
ፎላገ/2472/02/08 (05.04.2013ጾ.)
ሀገሀገ2/0420/02/11 (04.10.2013ጾ.)
ባገ4/0191/02/11 (29.11.2013ጾ.)
ፎጵ/0230/02/11 (26.12.2013ጾ.)
ፎጵ/1643/02/09 (08.05.2014ጾ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1227-րդ հոդված

- 3-1854/ՎԴ (28.09.2006թ.)
- 3-753/ՎԴ (06.07.2007թ.)
- 3-1224/ՎԴ (05.09.2007թ.)
- 3-1314/ՎԴ (10.10.2007թ.)
- 3-1345/ՎԴ (10.10.2007թ.)
- 3-446/ՎԴ (25.07.2008թ.)
- 3-575/ՎԴ (28.11.2008թ.)
- ՇԴ/0023/02/09 (04.12.2009թ.)
- ԵԷԴ/0272/02/08 (12.03.2010թ.)
- ԵԱԴԴ/0638/02/08 (12.03.2010թ.)
- ՎԴ/1400/05/09 (02.04.2010թ.)
- ՎԴ4/0240/05/09 (27.05.2010թ.)
- ԵԱՔԴ/1217/02/09 (25.06.2010թ.)
- ՎԴ/3653/05/09 (30.07.2010թ.)
- ԵԱՔԴ/2478/02/09 (01.10.2010թ.)
- ՎԴ/3465/05/09 (29.10.2010թ.)
- ԵԱՔԴ/1018/02/09 (01.07.2011թ.)
- ԿԴ1/0809/02/10 (23.03.2012թ.)
- ԵԿԴ/2472/02/08 (05.04.2013թ.)
- ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)
- ԵՇԴ/0230/02/11 (26.12.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1228-րդ հոդված

- 3-2305/ՎԴ (30.11.2006թ.)
- 3-753/ՎԴ (06.07.2007թ.)
- 3-1179/ՎԴ (01.08.2007թ.)
- 3-1345/ՎԴ (10.10.2007թ.)
- 3-23/ՎԴ (29.02.2008թ.)
- ԵԷԴ/0272/02/08 (12.03.2010թ.)
- ՎԴ4/0240/05/09 (27.05.2010թ.)
- ՎԴ/3653/05/09 (30.07.2010թ.)

ԵԱՔԴ/2478/02/09 (01.10.2010թ.)

ԵԱՔԴ/1018/02/09 (01.07.2011թ.)

ԱՐԱԴ/0214/02/11 (19.10.2012թ.)

ԿԴՅ/0232/02/13 (18.07.2014թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1229-րդ հոդված

Յ-1314/ՎԴ (10.10.2007թ.)

ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1230-րդ հոդված

Յ-148/ՎԴ (29.02.2008թ.)

ԵԷԴ/0272/02/08 (12.03.2010թ.)

ԳԴ4/0191/02/11 (29.11.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1234-րդ հոդված

ԿԴՅ/0041/02/11 (05.04.2013թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1236-րդ հոդված

ԵԷԴ/0293/02/08 (16.10.2009թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1242-րդ հոդված

ԵԿԴ/0462/02/08 (12.03.2010թ.)

ԵՔԴ/0279/02/08 (25.06.2010թ.)

ԵԷԴ/1400/02/09 (25.06.2010թ.)

ՎԴ/3465/05/09 (29.10.2010թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1243-րդ հոդված

Յ-1778/ՎԴ (25.12.2007թ.)

Յ-446/ՎԴ (25.07.2008թ.)

ԵՔԴ/0279/02/08 (25.06.2010թ.)

ՎԴ/3465/05/09 (29.10.2010թ.)

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1244-րդ հոդված

3-1778/ՎԴ (25.12.2007թ.)

3-446/ՎԴ (25.07.2008թ.)

ԵԿԴ/0462/02/08 (12.03.2010թ.)

ԵԷԴ/1400/02/09 (25.06.2010թ.)

ՎԴ/3465/05/09 (29.10.2010թ.)

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված

3-1881/ՎԴ (25.12.2007թ.)

ԵԱՔԴ/0554/02/11 (04.07.2013թ.)

ԿԴ3/0232/02/13 (18.07.2014թ.)

ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգիրք, 530-րդ հոդված

ՇԴ/0835/02/08 (26.12.2008թ.)

ՎԴ/1605/05/08 (11.08.2009թ.)

ՎԴ/5980/05/08 (06.11.2009թ.)

ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգիրք, 531-րդ հոդված

3-1881/ՎԴ (25.12.2007թ.)

ՎԴ/5980/05/08 (06.11.2009թ.)

ԵՄԴ/0937/02/08 (04.12.2009թ.)

ԵՄԴ/0235/02/09 (27.05.2011թ.)

ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգիրք, 534-րդ հոդված

ՎԴ5/0953/05/09 (27.12.2010թ.)

ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգիրք, 535-րդ հոդված

ՎԴ5/0953/05/09 (27.12.2010թ.)

ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգիրք, 537-րդ հոդված

ՎԴ/5980/05/08 (06.11.2009թ.)

ՎՂ5/0953/05/09 (27.12.2010թ.)

ՀԻՍՆ քաղաքացիական օրենսգիրք, 549-րդ հոդված

Յ-1179/ՎՂ (01.08.2007թ.)

Յ-1881/ՎՂ (25.12.2007թ.)

Յ-509/ՎՂ (31.10.2008թ.)

ՇՂ/0835/02/08 (26.12.2008թ.)

ԵԱՆՂ/2201/02/08 (13.03.2009թ.)

ՎՂ/1605/05/08 (11.08.2009թ.)

ՎՂ/5980/05/08 (06.11.2009թ.)

ԵՄՂ/0937/02/08 (04.12.2009թ.)

ԵԱՔՂ/1092/02/09 (30.07.2010թ.)

ՎՂ5/0953/05/09 (27.12.2010թ.)

ՎՂ5/0006/05/10 (27.12.2010թ.)

ԵՄՂ/0235/02/09 (27.05.2011թ.)

ԵԱՔՂ/0554/02/11 (04.07.2013թ.)

ԿՂ3/0232/02/13 (18.07.2014թ.)

ՀՀ ՎՃՈՒՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՍԵՂՄԱԳԻՐ

1

28.09.2006թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-1854/ՎԴ

Ջիվան Խուրոյան vs. Սաղմոսավանի գյուղապետարան, Աշտարակի տարածքի նոտար (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգությունն ընդունած ժառանգ համարվելու համար ժառանգական գույքը փաստացի տիրապետելը կամ կառավարելը պետք է ապացուցվի ժառանգի կողմից:

ՀՀ վճարելի դատարանի դիրքորոշումը. Դատաքննությամբ ապացուցվել է, որ հայցվորը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, որևէ ձևով փաստացի չի տիրապետել և չի կառավարել ժառանգված գույքը, հետևապես նա ժառանգությունն ընդունած ժառանգ չէ:

Առնչվող նախադեպեր. 3-141/ՎԴ:

2

26.10.2006թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-1629/ՎԴ

Երեմ Հարությունյան vs. Գագիկ Հարությունյան, Եղեգնաձորի տարածքային նոտար Սոնա Պողոսյան (ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ համարելու դիմումի մերժումն անվավեր ճանաչելու և բնակարանից վտարելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում նոտարին դիմում չներկայացնելը և չտիրապետելը հանգեցնում է ժառանգությունը չընդունելուն:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված է, որ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Մինչդեռ հայցվորը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածով սահմանված ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում չի ընդունել ժառանգությունը, ժամանակին միջոցներ չի ձեռնարկել բնակարանը պատասխանողի տիրապետումից պաշտպանելու համար:

3

30.11.2006թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-2305/ՎԴ

Մառլեն Հակոբյան vs. Ալինա Ավետիսյան (ըստ օրենքի հասանելիք ժառանգական գույքն առանձնացնելու պահանջի մասին)

Խնդիրը. Ո՞ր դեպքում դատարանը կարող է հարգելի ճանաչել ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ դատարանը կարող է հարգելի ճանաչել ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները միայն այն դեպքում, երբ ժառանգը կապացուցի, որ չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին, այսինքն՝ ժառանգատուի մահվան մասին և այն պայմանով, որ իմանալուց հետո վեց ամսվա ընթացքում դիմել է դատարան:

Առնչվող նախադեպեր. 3-1345/ՎԴ:

06.07.2007թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-141/ՎԴ

Չարեհ Երիցյան vs. Կարինե Հարությունյան, Նոր Նորքի թաղապետարան, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արարկիյրի տարածքային ստորաբաժանում (որոշումները, բնակարանի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու, ժառանգության ընդունման փաստը հաստատելու և բնակարանի սեփականատեր ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգությունն ընդունած ժառանգ համարվելու համար ժառանգական գույքը փաստացի տիրապետելը կամ կառավարելը պետք է ապացուցվի ժառանգի կողմից:

ՀՀ վճարեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը:

Նշված նորմը ենթադրում է, որ ոչ թե ժառանգական գույքը տիրապետող ժառանգը պետք է ապացուցի իր կողմից այդ գույքի տիրապետումը, այլ այդպիսի փաստը վիճարկող անձը:

Առնչվող նախադեպեր. 3-1854/ՎԴ:

06.07.2007թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-753/ՎԴ

Աթանես Ստեփանյան vs. Ռազմիկ Ստեփանյան, երրորդ անձիք՝ Գառնիի գյուղապետարան, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արույանի տարածքային ստորաբաժանում (սեփականության ի-

իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու և ժառանգական գույքի նկատմամբ սեփականատեր ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք կտակի մասին չիմանալը կարող է ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ հանդիսանալ:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգության բացման պահից առաջացել է իրավահարաբերություն, որի բովանդակության տարրերից մեկը եղել է ժառանգի սուբյեկտիվ իրավունքը ժառանգելու ժառանգատուի ունեցվածքը: Եվ այդ սուբյեկտիվ իրավունքի դադարման փաստը եղել է ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված ժամկետի ավարտը: Հետևաբար, ժառանգն իրավունք ունի դիմելու դատարան ժառանգությունն ընդունած համարելու պահանջով՝ հիմք ընդունելով ժառանգության համար նախատեսված ժամկետի բաց թողման հարգելի պատճառները, քանի որ նրա սուբյեկտիվ իրավունքը գոյություն է ունեցել, սակայն դրա մասին նա օբյեկտիվ պատճառներով չի իմացել:

Առնչվող նախադեպեր. ԱՐԱԴ/0214/02/11:

6

01.08.2007թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-1179/ՎԴ

Արմեն Հայրապետյան vs. Ռուբեն Հայրապետյան, Արմեն Ճուղուրյան, թիվ 1 նոտարական գրասենյակ (ժառանգության իրավունքի վկայագիրը, սեփականության իրավունքի վկայականը, բնակարանի առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու և բնակարանի սեփականատեր ճանաչելու պահանջի մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Արմեն Ճուղուրյան vs. Արմեն Հայրապետյան (բնակելի տարածության օգտա-

գործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու և բնակարանից վտարելու պահանջների մասին)

Խնդիրը. Միննույն գույքի նկատմամբ կարող է արդյո՞ք ճանաչվել մեկ այլ անձի սեփականության իրավունքը, եթե այդ գույքի նկատմամբ որպես միակ սեփականատեր ժառանգության իրավունքի վկայագրում նշված է մեկ այլ անձ:

ՀՀ վճարելի դատարանի դիրքորոշումը. Սույն գործի փաստերի համաձայն՝ հայցվորը հոր մահվանից հետո, նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածին համապատասխան, ընդունել է ժառանգությունը: Ինչ վերաբերում է պատասխանողին, ապա վերջինս նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետում չի ընդունել ժառանգությունը: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ հայցվորին տրված ժառանգության իրավունքի վկայագրում բնակարանի միակ ժառանգ է ճանաչվել հայցվորը: Հետևաբար այդ վկայագրի առկայության պայմաններում այլ անձը այլևս չէր կարող ժառանգության իրավունքի վկայագիր ստանալ նույն գույքի նկատմամբ:

Առնչվող նախադեպեր. 3-123/ՎԴ:

7

05.09.2007թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-1224/ՎԴ

Գիմա Մարգարյան vs. Հարություն Մարգարյան, Վարդուհի Մարգարյան, Անժելա Մարգարյան (փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգությունն ընդունելու վերաբերյալ դիմումը այլ վայրի նոտարական գրասենյակին հանձնելը կարող է որակվել որպես ժառանգության ընդունում:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ տվյալ դեպքում Մոսկվա քաղաքի նոտարական գրասենյակին ժառանգությունն ընդունելու վերաբերյալ ժառանգի դիմումի հանձնելն ինքնին հիմք չէ վերջինիս այդ եղանակով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար, քանի որ ՀՀ Գյումրի քաղաքում բացված ժառանգությունն ընդունելու վերաբերյալ դիմումը պետք է ներկայացվեր Գյումրու տարածքի նոտարին:

Սակայն ՀՀ վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել այն հանգամանքը, որ ժառանգը Մոսկվա քաղաքի նոտարական գրասենյակում ժառանգության բացումից հետո վեցամսյա ժամկետում հայտարարություն է տվել ժառանգատուի ժառանգությունն ընդունելու վերաբերյալ, այսինքն՝ կատարել է ժառանգատուի գույքի փաստացի տիրապետմանը և կառավարմանն ուղղված կոնկրետ դեմ գործողություններ՝ կոնկրետ նպատակ ունենալով իր տիրապետման տակ վերցնել ժառանգական գույքը:

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով ժառանգի կողմից ժառանգությունն ընդունած կամ չընդունած լինելու փաստի գնահատման հարցում էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյո՞ք առկա են ժառանգի կամքը և ցանկությունը՝ ընդունելու ժառանգությունը, թե ոչ, և արդյո՞ք ժառանգությունն ընդունելու համար ժառանգը միջոցներ (ակտիվ գործողություններ) է ձեռնարկել գույքը պահպանելու և այն

երրորդ անձանց ուսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար: Սույն գործի փաստերից ելնելով՝ ժառանգը վերը նշված ակտիվ գործողությունները կատարել է գույքը երրորդ անձանց ուսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու և դրա նկատմամբ իր տիրապետությունը հաստատելու նպատակով:

Առնչվող նախադեպեր. ԵՔԴ/0119/02/08, ԵՄԴ/0937/02/08, ԵԴ/0023/02/09, ԵԱՔԴ/1092/02/09, ԿԴ1/0809/02/10, ՎԴ5/0006/05/10, ԳԴ4/0191/02/11:

8

10.10.2007թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-1345/ՎԴ

Մաստն Շահվերդյան vs. Ջոյա Գրիգորյան, Մարգարիտա և Սոննա Շահվերդյաններ (ժառանգության և սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու, ժառանգ ճանաչելու և բնակարանից փտարելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք քրեական հետախուզման մեջ գտնվելը կարող է դիտվել որպես ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողման հարգելի պատճառ:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին մասը, 1227-րդ հոդվածի 1-ին մասը, 1228-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետի բաց թողնելու պատճառը պետք է հիմնավոր լինի: Այն կարող է դատարանի կողմից հարգելի ճանաչվել, եթե ժառանգության բացման, կտակի առկայության մասին ժառանգը տեղյակ չի եղել կամ ժառանգության ընդունման համար օրենքով սահմանված ժամկետը բաց է թողել այլ հարգելի պատճառներով (ժառանգի անչափահաս լինելը, ժառանգի ծանր հիվանդությունը, նրա անօգնական վիճակում գտնվելը, անգրագիտու-

թյունը, իրավաբանական գործողություններ կատարելու հնարավորությունը բացառող կամ սահմանափակող պայմաններում երկարատև գործուղման մեջ գտնվելը և այլն):

ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ քրեական հետախուզման մեջ գտնվելը չի կարող դիտվել որպես ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողման հարգելի պատճառ:

Առնչվող նախադեպեր. 3-2305/ՎԴ:

9

09.11.2007թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-1621/ՎԴ

Արմինե Հակոբյան, Սամվել Հակոբյան vs. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյան, Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյաններ (ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգը, ժառանգատուի մահից հետո բնակվելով նրա տանը, սակայն չդիմելով նոտարական գրասենյակ և օրենքով սահմանված կարգով ժառանգությունը չձևակերպելով, կարող է համարվել ժառանգությունը ընդունած ժառանգ:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասը, 1226-րդ հոդվածը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է

փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման:

Սույն քաղաքացիական գործով ժառանգատուն մինչև մահը բնակվել է վեճի առարկա հանդիսացող տանը: Այսինքն՝ վեճի առարկա գույքը փաստացի տիրապետման ուժով ընդունել է ժառանգությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուի պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ վեճի առարկա գույքը ժառանգատուի մահից հետո ներառված է եղել նրա ժառանգության զանգվածի կազմում:

Առնչվող նախադեպեր. ԵԱՔԴ/1092/02/09, ԵԷԴ/0272/02/08, ԳԴ4/0191/02/11, ԱՐԱԴ2/0420/02/11:

10

09.11.2007թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-1416/ՎԴ

Ռիչարդ Հակոբյանի օրինական ներկայացուցիչ Աննա Բաղդասարյան vs. Լուան Ավետիսյան, Արթուր Հակոբյան, երրորդ անձ՝ Արաբկիրի տարածքային նոտարական գրասենյակ (ժառանգական գույքում 1/2-րդ բաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և կտակն անվավեր ճանաչելու պահանջների մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Տիգրան Հակոբյան vs. Լուան Ավետիսյան, Արթուր Հակոբյան, Ռիչարդ Հակոբյանի օրինական ներկայացուցիչ Աննա Բաղդասարյան (ժառանգությունն ընդունելու համար նախատեսված ժամկետը բաց թողնելու պատճառները հարզելի ճանաչելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և ժառանգական գույքի մասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին)

27

Խնդիրը. Արդյո՞ք կտակում առկա փոփոխության անվավերությունը հանգեցնում է ողջ կտակի անվավերության:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1211-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կտակն անվավեր է ճանաչվում կտակի ձևի մասին կանոնները և գործարքների անվավերության մասին՝ նույն օրենսգրքի այլ դրույթները խախտելու հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1211-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անվավեր կարող են ճանաչվել ինչպես կտակն ամբողջությամբ, այնպես էլ՝ դրանում պարունակվող առանձին կտակային կարգադրությունները: Առանձին կտակային կարգադրության անվավերությունը չի հանգեցնում կտակի մնացած մասի անվավերությանը:

Սույն քաղաքացիական գործով ներկայացվել է ամբողջ կտակը անվավեր ճանաչելու պահանջ՝ պահանջի հիմքում դնելով կտակում առկա ջնջումը: Այսինքն՝ վիճարկվում է կտակային կարգադրություններից մեկը՝ բնակարանը պատասխանողին կտակված լինելը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անվավեր է վեճի առարկա կտակում կատարված փոփոխությունը: Այսինքն՝ կտակում առկա փոփոխության անվավերությունը չի հանգեցնում ամբողջ կտակի անվավերության:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1211-րդ հոդվածի 1-ին մասը՝ միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել արձանագրել, որ կտակը չի կարող նաև մասնակի (կատարված փոփոխության մասով) անվավեր ճանաչվել, քանի որ սույն գործով հայցվորը կտակում կատարված փոփոխությունն անվավեր ճանաչելու հարցում չունի որևէ շահագրգռվածություն, ուստի և չի կարող այդ կտակային կարգադրությունն անվավեր ճանաչելու պահանջով պատշաճ հայցվոր լինել:

ՀՀ վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունել այն հանգամանքը, որ վերոհիշյալ կտակային կարգադրության անվավեր ճանաչումն անվավեր չի դարձնում ամբողջ կտակը, ինչի արդյունքում չի բացվում ըստ օրենքի ժառանգություն, և այս դեպքում

պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգ հանդիսացող հայցվորը չի կարող որպես ըստ օրենքի ժառանգ ընդունել ժառանգությունը:

11

12.12.2007թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-1792/ՏԴ

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն vs. «Արշո» ՍՊԸ (գույքը վերադարձնելու պահանջի մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ «Արշո» ՍՊԸ vs. ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն (օրենքով նախատեսված իրավունքը ճանաչելու պահանջի մասին)

Խնդիրը. Արդյո՞ք «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված արտոնությունները կարող են փոխանցվել ժառանգությամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականաշնորհման (պետական գույքի ձեռք բերման) սուբյեկտներ են նաև ՀՀ քաղաքացիները և քաղաքացիների խմբերը, այդ թվում՝ սեփականաշնորհվող ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամները: Նույն օրենքի 9-րդ հոդվածով աշխատավորական կոլեկտիվի անդամների համար, ելնելով նրանց անձնական (ֆիզիկական) առանձնահատկություններից, նախատեսվել են որոշակի արտոնություններ, այն է՝ աշխատավորական կոլեկտիվի անդամների համար սահմանվել են իրենց հասանելիք բաժնեմասի վճարման գեղչեր՝ պատերազմների մասնակիցների և երրորդ կարգի հաշմանդամների համար արժեքի 40 տոկոսի չափով, երկրորդ կարգի հաշմանդամների համար՝ 50 տոկոսի չափով, առաջին կարգի հաշմանդամների համար՝ 60 տոկոսի չափով:

29

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները, մասնավորապես՝ անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները, այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում սույն օրենսգրքով և այլ օրենքներով:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված արտոնություններն իրենց էությանմբ ֆիզիկական անձի հետ անխզելիորեն կապված իրավունքներ են և չեն կարող փոխանցվել ժառանգությամբ:

12

25.12.2007թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-1778/ՎԴ

Սեդա Սոնյան vs. Բոդա Էրզիմյան (տան նկատմամբ օգտագործման իրավունքն առանց փոխհատուցման դադարեցնելու և վտարելու պահանջների մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Բոդա Էրզիմյան vs. Սեդա Սոնյան (գումարի բռնագանձման, սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու, սեփականության իրավունքը ճանաչելու և փաստացի տիրապետմամբ ժառանգական գույքի բաժինն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգության բացմանը հաջորդող վեցամսյա ժամկետի ավարտից հետո ժառանգատուի պարտավորություններով պարտատերերի պահանջները ենթակա են բավարարման:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը անդրադարձել է այն հարցին, թե արդյո՞ք ժառանգներից մեկի կողմից ժառանգական գույքի արժեքի

30

սահմաններից դուրս ժառանգատուի պարտավորությունները մարելը նրա համար մյուս ժառանգի նկատմամբ կարող է հետադարձ պահանջի իրավունք առաջացնել:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածը և 1244-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալուց հետո ժառանգը ժառանգատուի պարտքերով պարտատերերի առջև իրեն անցած գույքի սահմաններում կարող է կրել պարտավորություններ, եթե ժառանգության բացումից վեցամսյա ժամկետում (կամ մինչև ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը) պարտատերերի կողմից իրեն պահանջ է ներկայացվել: Պահանջների ներկայացման համար սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո ներկայացված պահանջները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, ենթակա չեն բավարարման, քանի որ մինչև ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը պահանջի ներկայացման դեպքում միայն ժառանգը կարող էր որոշել ժառանգությունն ընդունելու նպատակահարմարությունը:

13

25.12.2007թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-1843/ՎԴ

Անժելա Ղազարյան, Արփիկ և Արմինե Գասպարյաններ vs. Շուշանիկ Սարգսյան, երրորդ անձիք՝ Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպարյաններ (ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգությունն ընդունելու հանգամանքը պետք է հաստատվի դիմումը նոտարին հանձնելու փաստը հաստատող ապացույցի առկայությամբ:

31

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածը, 1225-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 1226-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածը ենթադրում է գործի հանգամանքները որոշակի ապացույցներով հաստատելու պահանջ: Նման պահանջ ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ ժառանգությունն ընդունված է համարվում, երբ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգը դիմում է հանձնում ժառանգության բացման վայրի նոտարին: Նշված օրինադրույթը ենթադրում է, որ ժառանգությունն ընդունելու հանգամանքը պետք է հաստատվի դիմումը նոտարին հանձնելու փաստը հաստատող ապացույցի առկայությամբ:

Առնչվող նախադեպեր. 3-1551 (ՎԴ), ԵԱՔԴ/0442/02/08, ԵԱՔԴ/1217/02/09:

14

29.02.2008թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-23/ՎԴ

Միրանուշ և Մաթենիկ Ճշմարիտյանների դիմումը (բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու պահանջների մասին), ինչպես նաև Հասմիկ Ճշմարիտյանի դիմումը (բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետում ժառանգական զանգվածում ներառված տան միակ բնակչի կողմից կոմունալ և տան տիրապետման և շահագործման համար անհրաժեշտ այլ վճարումների կատարումը հիմք է ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար:

32

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգության փաստացի տիրապետումը կամ կառավարումը, որպես ժառանգության ընդունման եղանակ, կարող է դրսևորվել ժառանգի կողմից ժառանգական գույքի պահպանման ծախսերը կատարելով:

15

29.02.2008թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-29/ՎԴ

Նշան Ղազարյան vs. Արմենուհի Խաչատրյան, Երևանի առաջին նոտարական գրասենյակի նոտար Ե. Մարգարյան, Էրրորդ անձիք՝ Աշոտ Խաչատրյան, ՀՀ ԿՍ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանում (կտակը, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և տիրապետման փաստով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք կտակում վկայի բնակության հասցեն չնշելը պետք է դիտել կտակը կազմելու կարգի խախտում և նման խախտումը կարող է ազդել կտակարարի կամքի արտահայտության ըմբռնման վրա, ինչպես նաև կտակն անվավեր ճանաչելու հիմք հանդիսանալ:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ կտակում վկայի բնակության վայրի չնշելը սույն քաղաքացիական գործով կտակը կազմելու աննշան խախտում է և չէր կարող ազդել կտակարարի կամքի արտահայտության վրա: ՀՀ վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունել այն հանգամանքը, որ նոտարական գործում առկա է վկայի անձնագրի պատճենը, որը հնարավորություն է տալիս պարզելու վկայի բնակության վայրի

հասցեն: Հետևաբար, կտակում վկայի բնակության վայրի մասին նշում չկատարելը կտակն անվավեր ճանաչելու հիմք չէ:

16

29.02.2008թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-148/ՎԴ

Արմեն Ալլահվերդյան vs. Բարկեն Տեր-Մանվելյան, «Կենտրոն» նոտարական գրասենյակ (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. 1. Ի՞նչ կարգով է իրականացվում ժառանգի կողմից ժառանգությունից հրաժարվելը:

2. Արդյո՞ք հայցից հրաժարումը կարող է դիտվել որպես հայցվող գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարում (ժառանգությունից հրաժարում):

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. 1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը: Ժառանգությունից հրաժարվելն իրականացվում է ժառանգի կողմից ժառանգության բացման վայրի նոտարին դիմում տալու միջոցով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ժառանգը կարող է հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման վայրի նոտարին ժառանգությունից հրաժարվելու վերաբերյալ դիմում տալու միջոցով:

2. Սույն քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանն անհիմն է համարել վճռաբեկ բողոքում ներկայացված պատճառաբանությանն այն մասին, որ հայցից հրաժարումը անհրաժեշտ է որակել որպես ժառանգությունից հրաժարում, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը փոխել հայցի հիմքը կամ առարկան, ավելացնել կամ նվազեցնել հայցային պահանջների չափը կամ հրաժարվել հայցից:

Վերոնշյալից հետևում է, որ հայցից հրաժարումը հայցվորի դատավարական իրավունքն է: Հայցից հրաժարվելով, հայցվորն ըստ էության հրաժարվում է ոչ թե պատասխանողի նկատմամբ ունեցած պահանջից, այլ քաղաքացիական դատավարության կանոններով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցից: ՀՀ վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունել նաև դատավարական օրենքի այն կարգավորումը, համաձայն որի հայցից հրաժարումը հայցվորին չի զրկում նույն հայցով կրկին անգամ դատարան դիմելու իրավունքից:

17

27.03.2008թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-183/ՎԴ

Վլադիմիր Բալասանյան vs. Կարինե Սերոսյան, ՀՀ կենտրոն նոտարական տարածքի նոտար, երրորդ անձ՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրամադրելու, կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և բնակարանի ու ավտոտնակի նկատմամբ սեփականության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջների մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Կարինե Սերոսյան vs. Վլադիմիր Բալասանյան (բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը կողմերից յուրաքանչյուրի բաժնին համաչափ բաշխելու կամ ըստ սե-

35

փականության վկայականի 1/2 բաժնի դիմաց փոխհատուցելու պահանջների մասին

Խնդիրը. Արդյո՞ք էլեկտրաէներգիայի և հեռախոսակապի բաժանորդ հանդիսանալը, ինչպես նաև ՀՀ-ում աշխատելը հիմնավորում են ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելու փաստը:

ՀՀ վճարեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 1226-րդ հոդվածի 3-րդ մասը՝ ՀՀ վճարեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ ժառանգը չի բնակվել վեճի առարկա բնակարանում, որը վկայում է, որ նա փաստացի չի տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, հետևաբար, այն չի ընդունել:

Ինչ վերաբերում է ժառանգատուի էլեկտրաէներգիայի և հեռախոսակապի բաժանորդ լինելու, ինչպես նաև ՀՀ-ում աշխատելու հանգամանքներին, ապա ՀՀ վճարեկ դատարանը եզրահանգել է, որ դրանցով չի կարող հիմնավորվել ժառանգի կողմից վեճի առարկա գույքը փաստացի տիրապետելու փաստը:

Առնչվող նախադեպեր. ԵԱՔԴ/1092/02/09, ԳԴ4/0191/02/11:

18

25.07.2008թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-446/ՎԴ

Իրինա Շահումյան vs. Երևանի Կենտրոն և Արարկիի թաղային համայնքներ (գումարի բռնագանձման պահանջի մասին)

Խնդիրը. Արդյո՞ք համայնքը կարող է ձեռք բերել ժառանգի կարգավիճակ:

ՀՀ վճարեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ հոդվածի 1-ին մասը, 1224-րդ հոդվածը,

36

1227-րդ հողվածի 1-ին մասը, 1243-րդ հողվածը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը, սահմանելով ժառանգների ցանկը, որոնք իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընդունել ժառանգությունը, միաժամանակ նույն ժամկետը նախատեսել է ժառանգատուի պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման համար: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ ժառանգներ չկան կամ նրանք հրաժարվել են ժառանգությունից, ժառանգության ընդունման կամ պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման համար օրենքով նախատեսված ժամկետի լրացման փաստի ուժով ժառանգական գույքը ձեռք է բերում մի կարգավիճակ, որով փաստորեն համարվում է որևէ մեկի իրավունքով չձանրաբեռնված գույք՝ անժառանգ գույք:

Այսինքն՝ համայնքը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հողվածի ուժով ոչ թե ձեռք է բերում ժառանգի կարգավիճակ, այլ ժառանգների բացակայության, ինչպես նաև ժառանգատուի պարտատերերի կողմից օրենքով սահմանված ժամկետում որևէ պահանջ չներկայացնելու ուժով ձեռք է բերում սեփականության իրավունք ժառանգական զանգվածի նկատմամբ:

19

26.09.2008թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-502/ՎԴ

Արամ Հայրապետյան vs. Նորիկ Գզիրյան, Լիլյա և Վիլեն Հայրապետյաններ (ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջների մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Վիլեն Հայրապետյան vs. Արամ Հայրապետյան (գումարի բռնագանձելու պահանջի մասին)

Խնդիրը. Ինչպե՞ս կարող է դրսևորվել ժառանգության փաստացի տիրապետումը կամ կառավարումը, որպես ժառանգության ընդունման եղանակ:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին մասը և 1226-րդ հոդվածի 3-րդ մասը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգության փաստացի տիրապետումը կամ կառավարումը, որպես ժառանգության ընդունման եղանակ, կարող է դրսևորվել ժառանգի կողմից ժառանգական գույքը պահպանելով՝ այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, ժառանգական գույքի պահպանման ծախսերը կատարելով, իր հաշվից ժառանգատուի պարտքերը վճարելով կամ ժառանգատուին հասանելիք գումարներն երրորդ անձանցից ստանալով:

20

31.10.2008թ. - Քաղաքացիական գործ թիվ 3-509/ՎԴ

Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյաններ vs. Ռոզա Գրիգորյան, Նիկոլայ և Հասմիկ Սողոմոնյաններ (իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելության և ժառանգությունն ընդունելու փաստերը հաստատելու պահանջների մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Ռոզա Գրիգորյան vs. Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյաններ (սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և բնակելի տան ու հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք կարգավիճակը չորոշված շինությունը կարող է ներառվել ժառանգական գանգվածի կազմում:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կարգավիճակը չորոշված շինությունները ժառանգության գանգվածի մաս չեն կարող կազմել:

13.02.2009թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/1823/02/08

Արտավազդ Հովեյան vs. Լարիսա Հովեյան, երրորդ անձ՝ Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյան (ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի իմաստով ժառանգատուի «հարազատ քույրեր և եղբայրներ» հասկացությունն իր մեջ ներառում է նաև համահայր կամ համամայր քույրերին և եղբայրներին:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Ամուսնական իրավահարաբերություններում, կարևորելով գենետիկական ներդաշնակության առաջնայնությունը, օրենսդիրը տարանջատել է «հարազատ եղբայրներ ու քույրեր» և «համահայր կամ համամայր եղբայրներ ու քույրեր» հասկացությունները՝ ամուսնության արգելք սահմանելով նաև համահայր կամ համամայր եղբայրների և քույրերի միջև, ինչը կապված է այս հարաբերությունների խիստ անձնական-ֆիզիոլոգական բնույթի հետ:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «ժառանգական իրավունք» բաժնում զետեղված նորմերում որևէ տարանջատում սահմանված չէ «հարազատ քույրեր և եղբայրներ» և «համահայր կամ համամայր քույրեր և եղբայրներ» հասկացողությունների միջև, քանի որ այս հարաբերությունները գույքային բնույթի հարաբերություններ են:

Այսինքն, ժառանգական իրավահարաբերություններում անձի ժառանգական իրավունքները սահմանափակված չեն ժառանգատուի հետ համահայր կամ համամայր եղբայր կամ քույր լինելու հանգամանքով: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի իմաստով ժառանգատուի «հարազատ քույրեր և եղբայրներ» հասկացությունն իր մեջ ներառում է նաև համահայր կամ համամայր քույրերին և եղբայրներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգական իրավահարաբերություններում ժառանգատուի հարազատ եղբայրներին և քույրերին հավասարեցված են նաև ժառանգատուի հետ համահայր կամ համամայր քույրերը և եղբայրները:

Այսինքն, անձը երկրորդ հերթի ժառանգ է նաև այն դեպքում, երբ ժառանգատուի հետ համահայր կամ համամայր քույր կամ եղբայր է:

ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-917 որոշմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլուխն այն մասով, որով բացառում է համահայր կամ համամայր քույրերի և եղբայրների՝ ժառանգատուի հետ իրենց ազգակցական փոխկապվածության աստիճանին համարժեք ժառանգման իրավունքը, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներին և 14.1-րդ հոդվածի երկրորդ մասին հակասող և անվավեր: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածում կատարվեց փոփոխություն, որի արդյունքում երկրորդ հերթի ժառանգների թվին են դասվել նաև համահայր կամ համամայր քույրերը և եղբայրները:

Առնչվող նախադեպեր. ԵԱՔԴ/1516/02/08:

22

13.03.2009թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/2201/02/08

Ալետա, Անահիտ, Գոհարիկ Ավետիսյաններ vs. Հասմիկ Դիլանյան, Լիլիթ և Քրիստինե Ավետիսյաններ, երրորդ անձ՝ ՀՀ ԿԱ անջարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ավան տարածքային ստորաբաժանում, Երևանի Կենտրոն նոտարական տարածք (ժառանգության իրավունքի գրանցումը և վկայագիրը, սեփականության իրավունքի գրանցումը և վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և ժառանգական գույքի մի մասի սեփականատերեր ճանաչելու պահանջների մասին)

40

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգատուի մահից հետո ժառանգական գանգվածում ընդգրկված տանը բնակվելը ՀԽՍՀ 1964 թվականի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի իմաստով կարող է դիտվել ժառանգության ընդունում:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու մասին ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին դիմելը (հայտարարելը) և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը:

Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման է:

Հետևաբար, ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգության բացման ժամանակ բնակվելով վեճի առարկա տանը այդ պահին գործող ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի ուժով, այն է՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգները ընդունել են իրենց հասանելիք ժառանգությունը:

23

11.08.2009թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0630/02/08

Ռաֆայել Մկրտչյան vs. Միրանուշ Կարապետյան (փաստացի տիրապետմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու) և ըստ հակընդդեմ հայցի՝ Միրանուշ Կարապետյան vs. Ռաֆայել Մկրտչյան (ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու և տնից վտարելու պահանջների մասին)

41

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգի կողմից ժառանգատուի պարտքի վճարման կամահայտնությունը հիմք է անձին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգական զանգվածի մի մասի ընդունմանը, մասնավորապես, ժառանգատուի պարտքի վճարման վերաբերյալ կամահայտնությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի ուժով ժառանգատուի պարտքը վճարելու փաստ չէ, հետևաբար նաև ժառանգի կողմից ժառանգության ընդունման հիմք չէ:

24

16.10.2009թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԷՂ/0293/02/08

Վանուշ Հովհաննիսյան vs. Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյան, Արթուր Հովհաննիսյան, երրորդ անձ՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունու տարածքային ստորաբաժանում (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգական զանգվածում ներառված անշարժ գույքի բաժանման մասին պայմանագրից բխող սեփականության իրավունքի պետական գրանցում չիրականացնելու դեպքում ժառանգը ձեռք չի բերում սեփականության իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ սույն գործով ժառանգատուն վիճելի անշարժ գույքի փաստացի տիրապետման ուժով արդեն իսկ ձեռք է բերել դրա նկատմամբ սեփականության իրավունք՝ անկախ այդ իրավունքի պետական գրանցումից: Հետևաբար, ժառանգատուի որդին, որպես ըստ օրենքի առաջին հերթի ժառանգ, փաստացի տիրապետման ուժով համարվում է այդ ժառանգությունն ընդունած ժառանգ:

42

06.11.2009թ. - Վարչական գործ թիվ ՎՂ/5980/05/08

Հովհաննես Պողոսյան vs. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Էրեբունի» տարածքային ստորաբաժանում, երրորդ անձ՝ Ռոբերտ Մկրտչյան (կադաստրի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին)

Խնդիրը. Արդյո՞ք գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթի առկայությունն ինքնին բավարար է այն ժառանգության զանգվածի մեջ ներառելու համար, թե անհրաժեշտ է նաև հստակեցնել գույքի փաստացի առկա լինելը:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ սույն վարչական գործով վեճի լուծման համար էական նշանակություն ունի ժառանգության բացման ժամանակ կտակարարին պատկանող սենյակի, որպես ժառանգության զանգված, գոյություն ունենալու փաստը:

04.12.2009թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵՄՂ/0937/02/08

Անուշ Խաչատրյան vs. Թադևոս, Ալբերտ և Առաքել Խաչատրյաններ (ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգի մոտ ժառանգական զանգվածում ընդգրկված տան որոշակի հատվածի դռան բանալու գտնվելը, այդ հատվածում ժառանգին պատկանող իրերի առկայությունն ինքնին բավարար են հաստատված համարելու փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունելու փաստը:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգի մոտ ժառանգական զանգվածում ընդգրկված տան որոշակի հատվածի դռան բանալու գտնվելը, այդ հատվածում ժառանգին պատկանող իրերի առկայությունն ինքնին հիմք չէ ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար (տվյալ դեպքում անհրաժեշտ է ժառանգի կողմից ժառանգության զանգվածի փաստացի տիրապետման փաստի առկայությունը օրենքով սահմանված վեց ամսվա ընթացքում):

Առնչվող նախադեպեր. 3-1224/ՎԴ:

27

12.03.2010թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԷՂ/0272/02/08

Հրիտա Հակոբյանի իրավահաջորդ Հասմիկ Հարությունյան vs. Հենրիկ և Մյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններ, Կենտրոն նոտարական տարածքի նոտար (ըստ կտակի ու ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և կտակով ու փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Հենրիկ և Մյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններ vs. Հասմիկ Հարությունյան (սեփականության իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու և օրենքի ուժով ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ըստ կտակի ժառանգի կողմից ժառանգությունը ընդունելու դիմումը ոչ այն նոտարական գրասենյակ ներկայացնելը, որտեղ կազմվել է կտակը, ինքնին չի ենթադրում ժառանգության ընդունում ըստ կտակի, սակայն կարող է գնահատվել ըստ օրենքի ժառանգության ընդունմանն ուղղված գործողություն:

44

Միաժամանակ վճռաբեկ դատարանը անդրադարձել է ժառանգությունն ընդունելու եղանակների և փաստացի տիրապետմամբ ժառանգական գույքն ընդունելու փաստի ապացուցման հարցին՝ կրկնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգության ընդունման ժամկետը բաց թողած ժառանգը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է դիմեր դատարան՝ ժառանգության ընդունման համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու պահանջով, ապա՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում կարող էր դիմել նոտարական գրասենյակ՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ մասը և 1226-րդ հոդվածի 3-րդ մասը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման:

Առնչվող նախադեպեր. 3-1621/ՎԴ, 3-938/ՎԴ, 3-1125/ՎԴ, 3-1224/ՎԴ, 3-183/ՎԴ, ԵԿԴ/1596/02/09:

12.03.2010թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0462/02/08

Յուրիկ և Ադունիկ Փիլոյաններ vs. Միրանուշ Փիլոյան (գումարի բռնագանձման պահանջի մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Միրանուշ Փիլոյան vs. Յուրիկ և Ադունիկ Փիլոյաններ (բնակարանից բաժինը բնեղենով առանձնացնելու, դրա անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարն ընդհանուր սեփականության մասնակիցների միջև բաժիններին համաչափ բաշխելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգները ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո իրենց անցած գույքի արժեքի սահմաններում, համապարտ պատասխանատվություն են կրում ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները բավարարելու հարցում, և արդյո՞ք համապարտ պարտականությունը կատարած պարտապանը մյուս պարտապանների նկատմամբ ձեռք է բերում հետադարձ պահանջի իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգները ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո իրենց անցած գույքի արժեքի սահմաններում, ի թիվս այլ ծախսերի, համապարտ պատասխանատվություն են կրում ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը հատուցելու և ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները բավարարելու հարցում: Ընդ որում՝ եթե այլ բան չի բխում համապարտ պարտապանների հարաբերություններից, ապա համապարտ պարտականությունը կատարած պարտապանը մյուս պարտապանների նկատմամբ ձեռք է բերում հետադարձ պահանջի իրավունք, անկախ այն հանգամանքից, թե պարտատերը մնացած պարտապաններից պահանջել է կատարելու պարտավորությունը, թե ոչ:

12.03.2010թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0638/02/08

Մերուժան և Մերոբ Մարտիրոսյաններ vs. Ոսկեհատ Ումուրշատյան, Աննա Մարտիրոսյան, երրորդ անձիք՝ Շուշան Հովհաննիսյան, Անահիտ, Կորյուն և Կարեն Մարտիրոսյաններ (ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և ժառանգական գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Ոսկեհատ Ումուրշատյան, Աննա Մարտիրոսյան vs. Մերուժան և Մերոբ Մարտիրոսյաններ (ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և օգտագործման իրավունքը ճանաչելու պահանջների մասին), երրորդ անձիք՝ Շուշան Հովհաննիսյան, Անահիտ, Կորյուն և Կարեն Մարտիրոսյաններ vs. Ոսկեհատ Ումուրշատյան, Աննա Մարտիրոսյան (ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք օտարերկրյա քաղաքացուն կարող է ժառանգաբար անցնել հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենքով թույլատրվող հիմքերով, տվյալ դեպքում՝ ժառանգական իրավունքով, հողը՝ որպես սեփականություն, կարող է անցնել օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, սակայն մեկ տարվա ընթացքում օտարելու պայմանով:

27.05.2010թ. - Վարչական գործ թիվ ՎԴ4/0240/05/09

Անահիտ Եսայան, Ալվարդ, Շողեր և Սադաֆ Զորաբյաններ vs. Ալվարդ Գրիգորյան, Արմավիրի նոտարական գրասենյակ, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ՀՀ Արմավիրի տարածքային

ստորաբաժանում (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգության ընդունման համար սահմանված ժամկետը բաց թողնելու պայմաններում ժառանգն իրավունք ունի դիմել նոտարական գրասենյակ ժառանգությունն ընդունելու համար՝ առանց մյուս ժառանգների գրավոր համաձայնության:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգությունն ընդունելու համար ժառանգը դիմել է նոտարական գրասենյակ ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պայմաններում՝ առանց մյուս ժառանգների գրավոր համաձայնության: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է դիմեր նոտարին մյուս ժառանգների գրավոր համաձայնության դեպքում:

31

25.06.2010թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ/0279/02/08

Սերգեյ Թախրյան vs. Էդուարդ Արաբխանյան, Միլենա Աղամայան, Դանիելա Արաբխանյան (ժառանգական գույքը պարտքի դիմաց պարտատիրոջը հանձնելու պահանջի մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ժառանգատուի պարտատերերն իրավունք ունեն ներկայացնելու իրենց պահանջները ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, և միայն նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 2-րդ մասը, 1243-րդ հոդվածը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ

48

օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգատուի պարտատերերին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը ներկայացնել իրենց պահանջները նախ հետևյալ անձանց՝

- ժառանգությունն ընդունած ժառանգին, կամ
- կտակակատարին:

Ապա միայն նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածով նախատեսվել է ժառանգության հետ կապված ծախսերի հատուցման հերթականություն՝ սահմանելով յուրաքանչյուր հերթի պահանջների բավարարումը նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Ընդ որում, ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքն անբավարար լինելու դեպքում այն համապատասխան հերթի պարտատերերի միջև բաշխվում է բավարարման ենթակա պահանջների գումարներին համամասնորեն:

32

25.06.2010թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1400/02/09

Տուֆարիկ Եփրեմյան vs. Աիդա, Գայանե և Սամվել Եփրեմյաններ (ժառանգական գույքով ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Աիդա և Գայանե Եփրեմյաններ vs. Տուֆարիկ Եփրեմյան (ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և ժառանգական զանգվածի մեջ մտնող ընդհանուր գույքից ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելու պահանջների մասին)

Խնդիրը. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ժառանգության հետ կապված ծախսերի հատուցման իրավական կարգավորմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին մասը, 1244-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգներն իրենց անցած գույքի արժեքի սահմաններում, ի թիվս այլ ծախսերի, համապարտ պատասխանատվություն են կրում ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը հատուցելու և ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները բավարարելու հարցում:

Առնչվող նախադեպեր. ՎՂ/3465/05/09:

33

01.10.2010թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔՂ/2478/02/09

Լիլիթ և Կարինե Ղազանյանների դիմումը, երրորդ անձ՝ Փարավոն Ղազանյան (ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու պահանջի մասին)

Խնդիրը. Ժառանգություն ընդունելու ժամկետը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին պահանջ ներկայացված լինելու դեպքում ո՞ր փաստերն են կազմում ապացուցման առարկան:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին մասը, 1227-րդ հոդվածը, 1228-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգի կողմից ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի է՝

- եթե ժառանգն ապացուցում է, որ նա տեղյակ չէր և պարտավոր չէր իմանալու ժառանգության բացման մասին, այսինքն՝ ժառանգատուի մահվան օրվա մասին, և

- եթե ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու պահանջով ժառանգը դատարան է դիմել այդ ժամկետը բաց թողնելու պատճառը վերանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Ընդ որում, միաժամանակ միայն նշված պայմանների առկայության դեպքում է օրենսդիրն իրավունք վերապահել դատարաններին հարգելի ճանաչել ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառը և անվավեր ճանաչել նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը:

34

01.04.2011թ. - Վարչական գործ թիվ ՎՊ/5269/05/09

Շողեր Գրիգորյան vs. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Մարգարյան (ժառանգության իրավունքի վկայագիր տալուն պարտավորեցնելու պահանջի մասին)

Խնդիրը. Որո՞նք են ժառանգության զանգվածի որոշման գործընթացում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածը կիրառելիս նոտարի կողմից գնահատման ենթակա հանգամանքները:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգության իրավունքի վկայագիր տալու ժամանակ նոտարը պետք է որոշի նաև ժառանգության զանգվածի կազմը, որի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը: Միաժամանակ, ժառանգության զանգվածի որոշման գործընթացում նոտարը պետք է հաշվի առնի Հայաստանի Հանրապետության՝ նախկինում և ներկայումս գործող օրենսդրական կանոնակարգումների առանձնահատկությունները: Մասնավորապես՝ նախկինում գործող կանոնակարգումների համաձայն՝ հողի սեփականության և մշտական օգտագործման իրավունքը հաստատվում էր պետական ակտով, որը տրվում էր

պատգամավորների տեղական խորհրդի գործադիր կոմիտեի կողմից, իսկ գյուղացիական տնտեսությունը որպես սեփականություն կարող էր ունենալ նաև բնակելի տներ և հողամասեր, որոնց նկատմամբ իրավունքներն իրենց հերթին ձևակերպվում էին գյուղացիական ընտանիքի գլխի անունով և նույնպես ճանաչվում էին նրա անվամբ ձևակերպվող պատգամավորների գյուղական, ավանային, քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեների կողմից տրվող պետական ակտի հիման վրա: Հաշվի առնելով նշված կանոնակարգումները, ինչպես նաև սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը՝ ներկայումս գործող կանոնակարգումների համաձայն՝ մինչև 06.05.1999 թվականը հողամասերի նկատմամբ իրավունքների վերաբերյալ սահմանված կարգով տրված կամ ձեռք բերված փաստաթղթերը պահպանել են իրենց իրավաբանական ուժը, դրանք վերագրանցման ենթակա չեն և հիմք են հանդիսանում անշարժ գույքի նկատմամբ գործարքներ կատարելու համար: Այսինքն՝ ժառանգության իրավունքի վկայագիր տալու ժամանակ ժառանգության զանգվածի որոշման գործընթացում նոտարը պետք է հաշվի առնի, որ նախկինում տրված պետական ակտը դա գույքի նկատմամբ իրավունքը հաստատող և դրա պատկանելիության հարցը որոշող պետության կողմից տրված և ճանաչված պաշտոնական փաստաթուղթ է: Հետևաբար, նոտարը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածը պետք է մեկնաբանի՝ հաշվի առնելով ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրական կանոնակարգումները:

35

27.05.2011թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0235/02/09

Հարություն Հաբեշյան vs. Ռափսա, Իզնատ և Մանուկ Հաբեշյաններ, Հովսեփ Կալենդարյան, Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար

52

Էմմա Շաբոյան, երրորդ անձիք՝ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթի տարածքային ստորաբաժանում, Գագիկ Մարգսյան (ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման հիմքով ժառանգության ընդունման, ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու և բաժնեմասը բնեղենով առանձնացնելու պահանջների մասին)

Խնդիրը. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ 1964 թվականի քաղաքացիական օրենսգրքի կանոնակարգումների համատեքստում անդրադարձել է ժառանգության ընդունման հարցին:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 531-րդ և 549-րդ հոդվածները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնակարգմամբ ժառանգության բացման ժամանակ էր համարվում ժառանգատուի մահվան օրը, իսկ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված էր համարվում այն դեպքում, երբ նա փաստորեն սկսում էր տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, որպիսի գործողությունները պետք է կատարվեին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Այսինքն՝ վեցամսյա ժամկետը բաց թողնելու հետևանքով անձը կորցնում էր ժառանգությունն ընդունելու հնարավորությունը և չէր կարող համարվել որպես այն ընդունած:

Առնչվող նախադեպեր. ԵԱՔԴ/0554/02/11:

36

01.07.2011թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/1018/02/09

Գևորգ Բերբերյան vs. Մարինե Բերբերյան (իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի՝ հողամասը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու և ժառանգությունն ըն-

53

դունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Մարինե Բերբերյան vs. Գևորգ Բերբերյան (ժառանգությունն ընդունելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք ըստ կտակի ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգական զանգվածում ներառված գույքի փաստացի տիրապետմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Ելնելով ժառանգական իրավահարաբերությունների բնույթից՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգության ընդունումը ժառանգի կողմից իրականացվող կանխամտածված, ակտիվ գործողությունների համակցություն է, որն ուղղված է ժառանգական գույքն իր սեփականությունը դարձնելուն: Այսինքն, թե ըստ օրենքի և թե ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգը պետք է գիտակցի և նրա գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն համապատասխան ժառանգության ընդունմանը: Հետևաբար, ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգի կողմից պետք է ձեռնարկվեն ակտիվ քայլեր, որը պետք է ուղղված լինի հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն: Ժառանգի գործողություններից պետք է բխի, որ դրանք միտված են ոչ թե ըստ օրենքի ժառանգությունն ընդունելուն (եթե ըստ կտակի ժառանգը նաև ըստ օրենքի ժառանգ է), այլ հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն, որն էլ կարող է իրականացվել միայն ժառանգության բացման վայրի նոտարին դիմում հանձնելու եղանակով:

Եթե օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ժառանգը միջոցներ չի ձեռնարկում ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար, ապա ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի:

Առնչվող նախադեպեր. ԱԸԱԴ2/0420/02/11:

19.10.2012թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0850/02/11

Մխիթար Ասատրյան vs. Նարգիզ Ասատրյան, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյան, երրորդ անձ՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանում (իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու, փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքի նկատմամբ ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և այդ հիմքով ժառանգական գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու և որպես հետևանք սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատել է ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունելու վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումները:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածը, 1221-րդ հոդվածի 1-ին մասը, 1225-րդ հոդվածը, 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (*տես՝ Արմինե Հակոբյանը և Սամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի, Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ*

ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1621/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը (*ի թիվս այլ ակտերի տես՝ Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Սերոպյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրամադրելու, Սերյոժա Բալասանյանի 01.02.1994 թվականի կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և Սյգեստան 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ Կարինե Սերոպյանի սեփականության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջների մասին թիվ 3-183/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 27-ի որոշումը): Ուստի դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը: ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգական գույքի փաստացի տիրապետելու փաստը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով, ընդ որում գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների,*

բնակարանային-շինարարական կոռպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը, կամ այլ ապացույցներ, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը *(տես՝ Գառնիկ Նազարյանն ընդդեմ Գագիկ Նազարյանի, Արտաշատի նոտարական տարածքի նոտարի՝ փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ճանաչելու և Գագիկ Նազարյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1125/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը, ինչպես նաև Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի, Արմավիրի նոտարական տարածքի նոտար Նարինե Մկրտչյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արմավիրի տարածքային ստորաբաժանման՝ Վարդան Վարդանյանի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման եղանակով Միշա Վարդանյանին ժառանգությունը ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ 3-938/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճարեկ դատարանի 2007 թվականի հունիս 1-ի որոշումը):*

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը *(տես՝ Կիմա Մարգարյանն ընդդեմ Հարություն Մարգարյանի, Վարդուհի Մարգարյանի և Անժելա Մարգարյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին թիվ 3-1224/ՎԴ*

քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 05-ի որոշումը):

Առնչվող նախադեպեր. 3-1621/ՎԴ, 3-183/ՎԴ, 3-1125/ՎԴ, 3-938/ՎԴ, 3-1224/ՎԴ:

38

25.12.2012թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2633/02/08

Երևանի քաղաքապետարան vs. Մարի Չիրիյան, երրորդ անձ՝ ՀՀ ԿՍ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու, ինչպես նաև նախապես վճարված պետական տուրքը բռնագանձելու պահանջների մասին)

Խնդիրը. Արդյո՞ք առուվաճառքի պայմանագրի կողմ գնորդի մահից հետո նրա կողմից անշարժ գույքի վերաբերյալ կնքված առուվաճառքի պայմանագրի և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման վիճարկումը կարող է գնահատվել որպես անձնական, ժառանգատուի անձի հետ անխազելիորեն կապված իրավունքի վիճարկում, որի դեպքում իրավահաջորդությունը բացառվում է:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգության դեպքում տեղի է ունենում ընդհանուր իրավահաջորդություն, այսինքն՝ ժառանգին են փոխանցվում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ

հողվածի 2-րդ կետով նախատեսված իրավահաջորդության բացառման հետևյալ չորս դեպքերի.

1. ալիմենտային պարտավորություններով իրավունքների և պարտականությունների,

2. քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու իրավունքի,

3. անձնական ոչ գույքային իրավունքների և այլ ոչ նյութական բարիքների,

4. այն իրավունքների ու պարտականությունների, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

Ընդ որում, օրենսգրքի վերոնշյալ հոդվածում թվարկված դեպքերը սպառիչ են:

Հիմնվելով վերոգրյալի վրա և սույն գործի փաստերը համադրելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի կնքման և դրա հիման վրա այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման արդյունքում գնորդի մոտ ծագել է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք՝ գույքային իրավունք, որը ներառվում է ժառանգատուի ժառանգական զանգվածում և օրենքով սահմանված կարգով փոխանցվում է ժառանգներին: Սույն գործով անշարժ գույքի վերաբերյալ կնքված առուվաճառքի պայմանագրի և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման անվավերության պահանջի ներկայացմամբ վիճարկվում է անձի սեփականության իրավունքը, որն անձնական, ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունք չէ:

05.04.2013թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2472/02/08

Սուսաննա Նեմչինովա vs. Կենտրոն նոտարական գրասենյակի նոտար Հմմա Շաբոյան, Սուրեն Առաքելյան (ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին)

Խնդիրը. Այս որոշմամբ ՀՀ վճարելի դատարանն անդրադարձել է ժառանգությունը ներկայացուցչի միջոցով ընդունելու իրավական կարգավորման առանձնահատկություններին:

ՀՀ վճարելի դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ, 1187-րդ, 1188-րդ, 1216-րդ, 1225-րդ, 1226-րդ և 1227-րդ հոդվածները՝ ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ ժառանգության ընդունումն իրականացվում է երկու եղանակով՝ ըստ կտակի և ըստ օրենքի: Ընդ որում, ժառանգման երկու եղանակի դեպքում էլ ժառանգի կողմից ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Հատկանշական է, որ ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի, այդ թվում նաև՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգության ընդունման համար օրենսդիրը սահմանել է վեցամսյա ժամկետ, որը հաշվվում է ժառանգության բացման, այն է՝ ժառանգատուի մահվան օրվանից:

Օրենսդիրը նախատեսել է նաև ժառանգի կողմից դիմումը նոտարին անձամբ չհանձնելու դեպքում կատարելի հետևյալ պայմաններից որևէ մեկը

- դիմումի տակ ժառանգի ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը, կամ

- նոտարական գործողություններ կատարելու համար լիազորված պաշտոնատար անձը:

Նշված պայմաններից բացի օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգին ժառանգությունն ընդունել ներկայացուցչի միջոցով, և այն էլ մեկ պայմանով, որ լիազորագրում հատուկ նախատեսված լինի ժառանգությունն ընդունելու լիազորությունը:

Փաստորեն, օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը, հետևաբար ժառանգի կողմից ժառանգությունը ներկայացուցչի միջոցով ընդունելու դեպքում լիազորագիրը ևս պետք է ժառանգի կողմից

ներկայացուցչին տրամադրված լինի ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված վեցամսյա ժամկետում:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի և 290-րդ հոդվածի 3-րդ մասի (*ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ առկա է վրիպակ, նշված է՝ 290-րդ հոդվածի 4-րդ մաս*) ուժով ժառանգության ընդունումը դիտվում է միակողմ գործարք՝ վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումները:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասի իրավական կարգավորումը և հաշվի առնելով ժառանգական իրավահարաբերությունների առանձնահատկությունը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժառանգի անունից լիազորության բացակայությամբ կամ նման լիազորությունների սահմանազանցմամբ (օրինակ՝ լիազորված է ընդունելու միայն ըստ օրենքի ժառանգությունը, բայց ընդունել է ըստ կտակի ժառանգությունը) ներկայացուցչի կողմից գործելու դեպքում վերջինիս գործողությունների արդյունքում իրավական հետևանքներ չեն առաջանում ներկայացվողի՝ ժառանգի համար: Այդպիսի հետևանքներ չեն առաջանում նաև լիազորությունների բացակայությամբ դիմում ներկայացրած անձի նկատմամբ: Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կանոնների կիրառմանը, ապա ներկայացուցչի գործողություններին ապագայում հավանություն տալը կարող է տեղի ունենալ միայն ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված վեցամսյա ժամկետի ընթացքում, ինչը հավասարազոր է ժառանգի կողմից անձամբ ժառանգությունն ընդունելուն, այնքանով, որքանով նման հավանություն տալու համար ենթակա է կիրառման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված ընթացակարգը:

Առնչվող նախադեպեր. ԳԴ4/0191/02/11:

04.07.2013թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲՂ/0554/02/11

Օֆելյա Խաչատրյան vs. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմնա Շաբոյան, Սերոբ Խաչատրյան, Հրանտ Խաչատրյան, Ռինա Պողոսյան (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, նվիրատվության պայմանագրերը և դրանց հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները, առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու ու ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է մինչև 1999 թվականի հունվարի մեկը բացված ժառանգության դեպքում նշված հարաբերությունների նկատմամբ կիրառելի օրենսդրության, ինչպես նաև՝ ժառանգական զանգվածում ներառված գույքի մի մասի փաստացի տիրապետման դեպքում ժառանգության ընդունման հարցերին:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ սույն գործով վիճելի իրավահարաբերության նկատմամբ որպեսզի կիրառելի լինեն ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժնի նորմերը, Օրենքը նախատեսում է մի քանի պայման:

Նախ՝ ժառանգությունը պետք է բացված լինի մինչև ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի գործողության մեջ դնելը: Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ է դրվել 1999 թվականի հունվարի 1-ից:

Երկրորդ՝ ժառանգությունը չպետք է ընդունված լինի որևէ մեկի կողմից: Այսինքն պետք է բացակայի ժառանգական զանգվածում ներառված գույքի՝ իրավահաջորդության կարգով անցումը այլ անձանց՝ ժառանգներին:

Երրորդ՝ ժառանգությունը որևէ մեկի կողմից ընդունված չլինելու դեպքում այն չպետք է դարձած լինի պետության կամ համայնքի սեփականությունը:

ՀՀ վճարեկ դատարանն ընդգծել է, որ երկրորդ և երրորդ պայմանները չպետք է տարանջատել, քանի որ դրանք գործում են միաժամանակ՝ հաշվի առնելով այն, որ ժառանգությունը չընդունվելու դեպքում այն դառնում է պետության կամ համայնքի սեփականությունը: Ընդ որում, այդ պայմանները պետք է առկա լինեն մինչև 1999 թվականի հունվարի մեկը:

Նշված իրավակարգավորումից հետևում է, որ նախկին՝ ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի ժառանգման հարաբերությունների նկատմամբ կարող է կիրառվել, եթե ժառանգությունը բացվել է մինչև 1999 թվականի հունվարի 1-ը, և բացակայում են վերոնշյալ պայմանները:

ՀՀ վճարեկ դատարանը, հիմք ընդունելով պրակտիկայում ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի կիրառման և մեկնաբանման միասնականությունն ապահովելու անհրաժեշտությունը, արձանագրել է, որ դատարանները ժառանգման հարաբերությունների հետ կապված այնպիսի վեճեր լուծելիս, որոնց դեպքում կիրառման է ենթակա հիշատակված հոդվածը, պետք է հաշվի առնեն այն, որ ժառանգման հարաբերությունները կանոնակարգող դրույթները նպատակ են հետապնդում պահպանել անձանց սեփականության իրավունքը, որոնց օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոխանցվում է մահացած անձի գույքը (ժառանգությունը): Այս առումով ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածն ուղղակիորեն չի նախատեսում դրույթ, որն ամրագրված է ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ կետում, այն է՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն

հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Այդուհանդերձ ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի հիշատակված դրույթն ուղղակիորեն ամրագրում է «ժառանգության ընդունում», «ժառանգական գույք» եզրույթները, առանց տարանջատելու ամբողջ ժառանգության կամ դրա մասի ընդունումը: Հետևաբար, նույնիսկ այն դեպքում, երբ ժառանգի կողմից ընդունված գույքը կազմել է ժառանգական զանգվածի միայն մի մասը, այն չի դադարում ժառանգական գույք լինելուց, ժառանգը պետք է համարվի ժառանգությունն ընդունած:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ժառանգության ընդունման ընդհանուր ժամկետների վերաբերյալ նախկին և գործող օրենսդրական կարգավորումները նույնն են՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատել է ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածով նախատեսված ժառանգության ընդունման ժամկետի հաշվարկի և այդ ժամկետը բաց թողնելու իրավական հետևանքների հարցի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնակարգմամբ ժառանգության բացման ժամանակ էր համարվում ժառանգատուի մահվան օրը, իսկ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված էր համարվում այն դեպքում, երբ նա փաստորեն սկսում էր տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, որպիսի գործողությունները պետք է կատարվեին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Այսինքն՝ վեցամսյա ժամկետը բաց թողնելու հետևանքով անձը կորցնում էր ժառանգությունն ընդունելու հնարավորությունը և չէր կարող համարվել այն ընդունած (*տե՛ս Հարություն Հաբեշյանն ընդդեմ Ռաիսա Հաբեշյանի և մյուսների թիվ ԵՄԴ/0235/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Առնչվող նախադեպեր. ԵՄԴ/0235/02/09:

04.10.2013թ. - Քաղաքացիական գործ թիվ ԱԸԱԴ2/0420/02/11

Սանվել Հովհաննիսյան vs. Լիդա, Քնարիկ, Սանվել Հովհաննիսյաններ, Գոհարիկ Մայխասյան (ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Սանվել Հովհաննիսյան vs. Սանվել Հովհաննիսյան (ժառանգությունն ընդունելու փաստը հաստատելու պահանջի մասին)

Խնդիրը. Ժառանգման իրավունք ունեցող անձի կողմից մինչ ժառանգատուի մահը նրան պատկանող որևէ գույքի փաստացի տիրապետումը և կառավարումը ժառանգության բացումից հետո շարունակելը կարո՞ղ է համարվել ժառանգությունն ընդունելու կամքի դրսևորում, թե՞ անհրաժեշտ են նաև այլ կանխամտածված, ակտիվ գործողություններ:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վերահաստատելով նախկին որոշումներում (մասնավորապես՝ թիվ 3-1621/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը, թիվ 3-183/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 27-ի որոշումը, թիվ 3-938/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի որոշումը, թիվ 3-1224/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը) արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում ժառանգի կողմից ժառանգված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն արդեն իսկ գիտակցված, ակտիվ գործողություններ են, որոնք նպատակաուղղված են ժառանգության ընդունմանը: Եթե ժառանգը, գիտակցելով, որ գույքը պատկանել է ժառանգատուին, վերջինիս մահվանից հետո տիրապետում և կառավարում է այդ գույքը, ըստ էության գիտակցաբար կատարում է ակտիվ գործողություններ, իսկ նման գործողությունների կատարումն օրենսդիրը համարում է ժառանգության ընդունման եղանակներից մեկը: Հետևաբար, բոլոր այն

դեպքերում, երբ գործով հիմնավորված է ժառանգատուի մահվանից հետո ժառանգված գույքի փաստացի տիրապետման և կառավարման հանգամանքը, ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար այլևս անհրաժեշտություն չկա ապացուցելու այլ ակտիվ, գիտակցված գործողությունների կատարման վերաբերյալ փաստեր: Ընդ որում, ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, որ ժառանգը գույքը տիրապետել և կառավարել է նաև մինչև ժառանգատուի մահը: Ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված ժառանգության զանգվածի մեջ մտնող որևէ գույք ժառանգման իրավունք ունեցող անձի փաստացի տիրապետման և կառավարման ներքո կարող է գտնվել նաև մինչև ժառանգության բացումը: Նման պարագայում ժառանգության ընդունման համար էական է այն փաստը, որ ժառանգը ժառանգատուին պատկանող գույքի փաստացի տիրապետման և կառավարման գործողությունները շարունակի կատարել նաև ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում: Այլ է իրավիճակն ըստ կտակի ժառանգման պարագայում, քանի որ այդ դեպքում ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար ժառանգը պետք է հիմնավորի, որ իր գործողությունները միտված են եղել հատկապես ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն (*տե՛ս Գևորգ Բերբերյանն ընդդեմ Մարինե Բերբերյանի թիվ ԵԱՔԴ/1018/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*): Ըստ կտակի ժառանգության դեպքում օրենքով սահմանված ժամկետում կտակված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն ինքնին չեն վկայում այն մասին, որ ժառանգն ընդունել է ըստ կտակի ժառանգությունը, այդ դեպքում գույքի փաստացի տիրապետման և կառավարման գործողությունները կարող են վկայել ըստ օրենքի ժառանգությունն ընդունելու մասին (եթե ըստ կտակի ժառանգը պատկանում է ըստ օրենքի ժառանգների թվին), իսկ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար անհրաժեշտ են գիտակցված, ակտիվ գործողություններ: Ըստ էության, դրանք հանգում են ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին

դիմումն օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում ժառանգության քացման վայրի նոտարին հանձնելուն:

Առնչվող նախադեպեր. 3-1224/ՎԴ, 3-1621/ՎԴ, 3-938/ՎԴ, 3-183/ՎԴ, ԵԱՔԴ/1018/02/09, ԵԷԴ/1643/02/09:

42

29.11.2013թ. - Քաղաքացիական գործ թիվ ԳԴ4/0191/02/11

Տաթևիկ Մուշեղյան vs. Վաչե Մուշեղյան, Նինա Յագոտկինա, Արսյում Մուշեղյան, Արսեն Մուշեղյան (բնակարանի ապօրինի օգտագործումը դադարեցնելու և վտարելու պահանջների մասին) և ըստ հակընդդեմ հայցի՝ Վաչե Մուշեղյան vs. Տաթևիկ Մուշեղյան, Սևանի նոտարական տարածքի նոտար Արմեն Հարությունյան, երրորդ անձ՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Սևանի տարածքային ստորաբաժանում (ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու, սեփականության իրավունքի պետական գրանցումը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Այս որոշմամբ ՀՀ վճարեկ դատարանն անդրադարձել է ժառանգությունն ընդունելու իրավունքը փոխանցելու (ժառանգության տրանսմիսիա) ինստիտուտի իրավական կարգավորման առանձնահատկություններին:

Միաժամանակ ՀՀ վճարեկ դատարանը վերահաստատել է մի շարք որոշումներում նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՀՀ վճարեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածը՝ ՀՀ վճարեկ դատարանը եզրա-

հանգել է, որ նշված դրույթով օրենսդիրը նախատեսել է այնպիսի դեպքեր, երբ ժառանգը (ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի), չհասցնելով ընդունել ժառանգությունը, մահանում է մինչև ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը: Նման պարագայում գործում է քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված ժառանգության տրանսմիսիայի ինստիտուտը, ըստ որի՝ նշված իրավիճակում մահացած ժառանգի ժառանգը ձեռք է բերում ժառանգի այն իրավունքը, որը վերջինս չի հասցրել իրականացնել: Այսինքն՝ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգատուի ժառանգի չիրականացված իրավունքի փոխանցումը վերջինիս ժառանգներին: Ընդ որում, ժառանգը, որը հրավիրված էր ժառանգության և չհասցնելով ընդունել ժառանգությունը կամ հրաժարվել ժառանգությունից, մահանում է ժառանգությունը բացելուց հետո, քաղաքացիական իրավունքի տեսությունում անվանվում է տրանսմիտենտ, իսկ այն անձինք, որոնց փոխանցվում է ժառանգությունն ընդունելու իրավունքը՝ տրանսմիսսարներ:

Ժառանգության տրանսմիսիայի իրավահարաբերությունը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով և ծագում է հետևյալ պայմաններում.

- Ժառանգը, որը հրավիրված է ժառանգության և ունի ժառանգելու սուբյեկտիվ իրավունք (իրավասու է ընդունելու ժառանգությունը կամ հրաժարվել ժառանգությունից), ժառանգությունը բացելուց հետո, չհասցնելով այն ընդունել կամ հրաժարվել ժառանգությունից, մահացել է.

- Մահացած ժառանգը (տրանսմիտենտ) կարող է լինել ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգ.

- Ժառանգը մահանում է ժառանգության բացումից հետո մինչև ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը լրանալը.

- Ժառանգելու իրավունքը, որը պատկանում էր մահացած ժառանգին, փոխանցվում է նրա ժառանգներին: Ընդ որում, առաջին ժառանգը կապված է երկրորդ ժառանգի հետ այնպես, ինչպես ժառանգատուն և ժառանգները.

- Մահացածի ժառանգը (տրանսմիսսարը) իրավասու է ընդունելու ժառանգությունը լիազորությունների այն ծավալով և բովանդակությամբ,

որին հրավիրված էր մահացած ժառանգը, կամ հրաժարվելու այդ ժառանգությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ժառանգության տրանսմիսիայի իրավահարաբերության վերը նշված առանձնահատկությունները և ծագման հիմքերը, անհրաժեշտ է համարել անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի կանոնակարգմանը ժառանգական իրավունքի նորմերի լույսի ներքո:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին մասը, 1187-րդ հոդվածի 1-ին մասը, 1188-րդ հոդվածի 1-ին մասը, 1216-րդ հոդվածը, 1225-րդ հոդվածի 1-ին մասը, 1226-րդ հոդվածի 1-ին մասը, 1227-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի, այդ թվում նաև՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգության ընդունման համար օրենսդիրը սահմանել է վեցամսյա ժամկետ, որը հաշվվում է ժառանգության բացման, այն է՝ ժառանգատուի մահվան օրվանից (*տե՛ս Մուսաննա Նեմչինովայի հայցն ընդդեմ Կենտրոն նոտարական գրասենյակի նոտար Էմմա Շաբոյանի, Սուրեն Առաքելյանի թիվ ԵԿՂ/2472/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ չի կարող խոսք լինել ժառանգության տրանսմիսիայի մասին այն դեպքում, երբ ժառանգը ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում չի արտահայտել իր ցանկությունը ժառանգությունն ընդունելու կապակցությամբ, և մահացել է ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետից հետո: Պետք է ի նկատի ունենալ, որ կենդանության ընթացքում ժառանգի կողմից ժառանգության ընդունման համար սահմանված ժամկետի բացթողումը պայմանականորեն նշանակում է իրավունքի կորուստ, քանի որ ժառանգն այնուամենայնիվ կարող էր ընդունել ժառանգությունը սահմանված ժամկետում, մինչդեռ այն չի իրականացրել մինչև ժամկետի ավարտը: Ընդ որում, եթե ժառանգը մահացել է ժառանգությունն ընդունելու համար

սահմանված ժամկետից հետո, ապա ժառանգի այդպիսի իրավունքի կորուստն ունի բացառիկ նշանակություն, քանի որ ոչ ոք բացի անմիջապես ժառանգից չի կարող հարց բարձրացնել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին:

Այսինքն՝ ժառանգության տրանսմիսիայի կանոնները գործում են այն դեպքում, երբ տրանսմիտենտը մահացել է մինչև ժառանգությունն ընդունելու կամ ժառանգությունից հրաժարվելու համար սահմանված ժամկետի ավարտը՝ չհասցնելով այն ընդունել կամ դրանից հրաժարվել:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1193-րդ հոդվածի 3-րդ մասը և 1194-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված նորմով օրենսդիրը կտակի ազատությունը սահմանափակել է պարտադիր բաժնի իրավունքով, որը կտակի առկայության պայմաններում համարվում է ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից՝ վերջինիս շնորհելով հատուկ սուբյեկտի կարգավիճակ: Մինչդեռ, կտակի առկայության պայմաններում ժառանգության տրանսմիսիայի ուժով ժառանգության ընդունման իրավունքը մահացածի ժառանգներին փոխանցվելու դեպքում առկա է սահմանափակում՝ մահացած ժառանգի (տրանսմիտենտի) ժառանգության պարտադիր բաժնի իրավունքի փոխանցումը վերջիններիս ժառանգներին (տրանսմիսաարներին) արգելվում է: Այսպիսի սահմանափակումը պայմանավորված է կտակի ազատության, ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը միայն այդ անձին անմիջականորեն պատկանելու սկզբունքով, ինչպես նաև պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգի՝ հատուկ սուբյեկտ լինելու հանգամանքով: Հետևաբար, ժառանգության պարտադիր բաժինը չի կարող փոխանցվել այլ անձի, ով անմիջականորեն չունի պարտադիր բաժնի պահանջի իրավունք:

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1198-րդ հոդվածի համաձայն՝ կտակարարը կարող է կտակում նշել այլ ժառանգի (ենթաժառանգի) այն դեպքի համար, եթե նրա նշանակած ժառանգը մահանա մինչև ժառանգությունը բացվելը, հրաժարվի ժառանգությունից, որպես անարժան ժառանգ մեկուսացվի ժառանգությունից կամ չկատարի կտակարարի օրինաչափ պայմանները:

Նշված նորմով ամրագրված են այն դեպքերը, երբ կտակարարն իրավունք ունի կտակում ոչ միայն նշել հիմնական ժառանգին կամ ժառանգներին, այլև ենթանշանակել այսպես կոչված պահեստային ժառանգ այն դեպքի համար, եթե ժառանգության բացման պահին մահացած լինի կտակում սկզբնապես նշված ժառանգը՝ չհասցնելով այն ժառանգել:

Մատնանշված իրավահարաբերության դեպքում չի կարող գործել տրանսմիսիայի ուժով ժառանգության ընդունման իրավունքը մահացածի ժառանգներին փոխանցելու ընթացակարգը, ինչն ուղղակիորեն բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1198-րդ հոդվածի իրավակարգավորումից:

Տրանսմիսիայի հիմքով ժառանգությունն ընդունելու իրավունքը կարող է իրականացվել ընդհանուր հիմունքներով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-1228-րդ հոդվածներին համապատասխան:

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն անձինք, որոնց համար ժառանգության իրավունքն առաջանում է միայն այլ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում, կարող են ժառանգությունն ընդունել նույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետն ավարտվելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Տվյալ դեպքում ժառանգության տրանսմիսիայի կարգով ժառանգը կարող է ժառանգությունն ընդունել ժառանգության ընդունման ժամկետն ավարտվելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Ընդ որում, մահացած ժառանգի ժառանգները ժառանգությունն ընդունելու համար ընդհանուր հիմունքներով սահմանված կարգով պետք է իրականացնեն ակտիվ գործողություններ, ինչպես նաև՝ ժառանգությունն իրենց կողմից ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում իրավասու են դիմելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու կապակցությամբ:

Հատկանշական է, որ մահացած ժառանգի (տրանսմիտենտի) այլ ժառանգների (տրանսմիսսարների) կողմից ժառանգությունն ընդունելու պարագայում վերջիններիս համաձայնության առկայության դեպքում ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգը (տրանս-

միասար) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ևս կարող է ընդունել ժառանգությունը:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նպատակահարմար է գտել զուգահեռներ անցկացնել տրանսմիսայի իրավունքով ժառանգությունն ընդունելու և ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունելու ինստիտուտների միջև:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1217-րդ, 1219-րդ, 1221-րդ հոդվածները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը նախատեսել է նաև այնպիսի դեպքեր, երբ ըստ օրենքի ժառանգը մահանում է մինչև ժառանգատուի ժառանգության բացումը: Նման պարագայում գործում է քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունելու ինստիտուտը, որը ենթադրում է, որ ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է վերջինիս երեխաներին, որոնց միջև այն բաշխվում է հավասարապես: Ընդ որում, ժառանգությունից մեկուսացված կամ ժառանգատուի կողմից ժառանգությունից զրկված ըստ օրենքի ժառանգի երեխաները ներկայացման իրավունքով չեն կարող ժառանգել:

Փաստորեն, ըստ օրենքի ժառանգների շրջանակն ընդարձակվել է նաև ներկայացման իրավունքով ժառանգելու ժառանգների շրջանակով, այսինքն՝ ներկայացման իրավունքով ժառանգման հրավիրվող անձինք դասվում են ըստ օրենքի ժառանգների թվին: Ի դեպ, օրենսդիրը հստակ սահմանել է, թե ովքեր կարող են ներկայացման իրավունքով համարվել ժառանգներ՝ ամրագրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1217-րդ և 1219-րդ հոդվածներում:

Համեմատելով ժառանգության իրավունքի վերոնշյալ երկու ինստիտուտները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝

առաջին. տրանսմիսայի իրավունքով ժառանգումը տեղի է ունենում ինչպես ըստ օրենքի, այնպես էլ՝ ըստ կտակի, մինչդեռ ներկայացման իրավունքով ժառանգումը տեղի է ունենում միայն ըստ օրենքի:

երկրորդ. տրանսմիսայի իրավունքով ժառանգելու ժառանգների շրջանակը սահմանափակված չէ, մինչդեռ ներկայացման իրավունքով

ժառանգել կարող են միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1217-րդ և 1219-րդ հոդվածներում ամրագրված ժառանգների զավակները:

Երրորդ. տրանսմիսիայի իրավունքով ժառանգելու դեպքում ժառանգը մահանում է ժառանգատուից հետո՝ չհասցնելով ընդունել ժառանգությունը: Մինչդեռ ներկայացման իրավունքով ժառանգելու դեպքում ժառանգը մահանում է մինչև ժառանգությունը բացվելը, այսինքն՝ ժառանգատուից առաջ:

Առնչվող նախադեպեր. 3-938(ՎԴ), 3-1125(ՎԴ), 3-1224/ՎԴ, 3-1621(ՎԴ), 3-183(ՎԴ), ԵԿԴ/2472/02/08:

43

29.11.2013թ. - Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/1050/02/12

Արթուր Վարտանով vs. Մարինա Եզինա, Էրրորդ անձ՝ Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյան (ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու և անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Ովքե՞ր են հրավիրվում ժառանգման մեկը մյուսից հետո ժառանգելու իրավունք ունեցող անձանց նույն օրը մահանալու դեպքում:

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին մասը, 1187-րդ հոդվածի 1-ին մասը, 1188-րդ հոդվածի 1-ին մասը, 1190-րդ հոդվածի 1-ին մասը, 1221-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մեկը մյուսից հետո ժառանգելու իրավունք ունեցող անձանց նույն օրը մահանալու դեպքում նրանք մահացած են ճանաչվում միաժամանակ և ժառանգման են հրավիրվում նրանցից յուրաքանչյուրի ժառանգները՝ ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի

73

կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները:

44

18.07.2014թ. - Քաղաքացիական գործ թիվ ԿԴ3/0232/02/13

Ռիտա Մնացականյան vs. Շավիղ Մնացականյան, երրորդ անձիք՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանում, Աշտարակի նոտարական տարածքի նոտար, Լուսինե և Գևորգ Մնացականյաններ (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած համարելու պահանջների մասին), և ըստ հակընդդեմ հայցի՝ Գևորգ Մնացականյան vs. Շավիղ Մնացականյան, երրորդ անձիք՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանում, Աշտարակի նոտարական տարածքի նոտար, Ռիտա և Լուսինե Մնացականյաններ (ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին)

Խնդիրը. Ժառանգի կողմից ըստ կտակի ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջ ներկայացնելու դեպքում արդյո՞ք ժառանգության ընդունման օրենքով սահմանված ժամկետը հայցվորի կողմից հարգելի պատճառներով բաց թողնելու փաստի ապացուցման պարտականությունը կարող է դրվել պատասխանողի կամ երրորդ անձի վրա:

74

ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը. ՀՀ վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հիմքն ի հայտ է եկել գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կիրառության ժամանակահատվածում, եզրահանգել է, որ այդ մասով վիճելի իրավահարաբերության նկատմամբ ենթակա են կիրառման գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան իրավանորմերը:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգության ընդունման օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու հարցը դատարանը լուծում է այն ժառանգի դիմումի հիման վրա, որը բաց է թողել ժառանգությունն ընդունելու օրենքով սահմանված ժամկետը, և միայն այն դեպքում, եթե այդ ժառանգի կողմից դիմումը ներկայացվել է բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ժառանգության ընդունման օրենքով սահմանված ժամկետը հայցվորի կողմից հարգելի պատճառներով բաց թողնելու փաստի ապացուցման պարտականությունը կրում է այն կողմը, որի վրա օրենքով սահմանված կարգով, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, դրված է ժառանգության ընդունման օրենքով սահմանված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու և այդ պահից վեց ամսվա ընթացքում դատարան դիմելու հանգամանքները հիմնավորելու պարտականությունը:

Առնչվող նախադեպեր. ԵՄԴ/0235/02/09, ԵԱԲԴ/0554/02/11:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական գործերով Քաղաքացիական գործ թիվ 3-1854 (ՎԴ)
վերաքննիչ դատարանի վճիռ 2006 թ.
Նախագահող դատավոր՝ Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
դատավորներ՝ Գ. ՄԱՏԻՆՅԱՆ
Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Քաղաքացիական գործ թիվ 06-2506/2006 թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
դատավորներ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Ս. ԳՅՈՒՐԶՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ

2006 թ. սեպտեմբերի 28-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Ալիխան Խուբոյանի ներ-
կայացուցիչ Ռ. Պողոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական գործերով
վերաքննիչ դատարանի 12.07.2006 թվականի վճռի դեմ Ա. Խուբոյանի

հայցով ընդդեմ Ջիվան Խուբոյանի, Մաղմուսավանի գյուղապետարանի և Աշտարակի տարածքի նոտարի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան հայցվորը՝ պահանջել է մասնակի՝ 1/2 մասով, անվավեր ճանաչել պատասխանողին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը:

Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 13.03.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 12.07.2006 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքը ներկայացրել է հայցվորը:

Պատասխանողի կողմից վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով՝

1) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:

Դատարանը անտեսել է Մաղմուսավանի համայնքի ղեկավարի, գյուղապետարանի հաշվապահի և ավագանու անդամների բացատրություններն ու հայտարարություններն այն մասին, որ հայցվորը մշտապես բնակվել է Մաղմուսավանում:

2) Դատարանը չի կիրառել նույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասը, որը պետք է կիրառեր, և կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի դրույթները, որը չպետք է կիրառեր:

Հանգուցյալ մոր գծով ժառանգության բացման պահից վեց ամսվա ընթացքում հայցվորը կատարել է ժառանգատուի պարտքերի վճարում, փաստացի կառավարել է ժառանգական գույքը՝ մոր բաժնային սեփականությունը, իսկ նրա մահվանից հետո փաստացի տիրապետել է անշարժ գույքին:

Վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 12.07.2006 թվականի վճիռը և օրինական ուժ տալ ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարանի 13.03.2006 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ Արագածոտնի մարզի Սաղմոսավան գյուղում գտնվող տունը և հողամասը հանդիսացել են Ջլֆո և Ջիվան Խուբոյանների սեփականությունը:

2) Ջլֆո Խուբոյանը մահացել է 02.04.2005 թվականին:

3) 03.10.2005 թվականին Ջիվան Խուբոյանը ստացել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր:

4) Հայցվորն օրենքով սահմանված ժամկետում չի դիմել նոտարական գրասենյակ ինչպես հոր՝ Քյարամ Խուբոյանի, այնպես էլ մոր՝ Ջլֆո Խուբոյանի մահվանից հետո նրանց ժառանգությունն ընդունելու մասին հայտարարությամբ:

5) Ալիխան Խուբոյանը մինչև 1990 թվականը բնակվել է Սաղմոսավան գյուղում, հանդիսացել է առանձին ծուխ՝ «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի իմաստով, օգտվելով հողի սեփականաշնորհումից՝ իր անվամբ ստացել է հողամաս, ունեցել է նաև երկուսենյականոց գերատեսչական բնակարան:

6) Ալիխան Խուբոյանը 1990 թվականի կեսերից մշտապես բնակվում է Ռուսաստանի Դաշնությունում:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր պայացույց գնահատում է գործում

եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Բողոք բերած անձը բողոքում հիշատակված ապացույցների՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության պահանջի խախտման որևէ կոնկրետ դեպք իր հիմնավորմամբ չի ներկայացրել: Բողոքում, բացի դատաքննության ընթացքում հետազոտված և գնահատված ապացույցների վերաշարադրանքից, բողոք բերած անձը կատարել է սուկ պնդում այն մասին, որ հիշատակված ապացույցները. «...վերաքննիչ դատարանը համակցության մեջ պատշաճ քաղաքացիաիրավական գնահատության չի արժանացրել, որի արդյունքում հանգել է գործի սխալ լուծման, ինչը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի մասով հիմք է վերանայվող դատական ակտի բեկանման համար»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման հիմնավորումների բացակայությունը ինքնին անհիմն է դարձնում բողոքի հիմքը, և վերաքննիչ դատարանի կողմից ապացույցների հետազոտման և գնահատման օրինականության ստուգման հիմք առկա չէ:

2) բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով: Սույն գործի փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ հայցվորն օրենքով սահմանված ժամկետում չի դիմել նոտարական գրասենյակ ինչպես հոր՝ Քյարամ Խուբոյանի, այնպես էլ մոր՝ Զլֆո Խուբոյանի մահվանից հետո նրանց ժառանգությունն ընդունելու մասին հայտարարությամբ, հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ 4 հոդվածի 1-ին մասի հիմքով հայցվորի կողմից ժառանգության ընդունում տեղի չի ունեցել:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար,

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսերը,

3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Դատաքննությամբ ապացուցվել է, որ հայցվոր Ալիխան Խուբոյանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, որևէ ձևով փաստացի չի տիրապետել և չի կառավարել ժառանգված գույքը, հետևապես նա ժառանգությունն ընդունած ժառանգ չէ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Վերաքննիչ դատարանը ապացուցված է համարել, որ ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում հանգուցյալ մոր գծով Ալիխան Խուբոյանը օրենքով նախատեսված որևէ ձևով չի ընդունել ժառանգությունը, հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածը Վճռաբեկ դատարանը սույն վեճի նկատմամբ համարում է կիրառելի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Վճռաբեկ բողոքը մերժել, ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 12.07.2006 թվականի վճիռը թողնել անփոփոխ:

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական գործերով Քաղաքացիական գործ թիվ 3-1629(ՎԴ)
վերաքննիչ դատարանի վճիռ 2006 թ.
Նախագահող դատավոր՝ Վ. Ավանեսյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Դ. Խաչատրյան
Քաղաքացիական գործ թիվ 06-1934/2006 թ.

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս. ԳՅՈՒՐՉՅԱՆԻ
Ա. ԱՆՏՈՆՅԱՆԻ

2006 թվականի հոկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գագիկ Հարությունյանի
վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի
22.06.2006 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Երեմ Հարությունյանի ընդդեմ
Գագիկ Հարությունյանի և Եղեգնաձորի տարածքային նոտար Սոնա
Պողոսյանի՝ ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ համարելու
դիմումի մերժումն անվավեր ճանաչելու և բնակարանից վտարելու
պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է անվավեր ճանաչել Եղեգնաձորի պետական նոտարի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տալու մասին դիմումի 12.09.2005 թվականի մերժումը, իրեն համարել Արևհատ Հարությունյանի՝ ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ, Գագիկ Հարությունյանին ընտանիքի հետ միասին վտարել ժառանգական գույք հանդիսացող Եղեգնաձոր քաղաքի Արսենյան փողոցի 5-րդ շենքի թիվ 19 բնակարանից և այն հանձնել իրեն:

Վայոց Ձորի մարզի առաջին ստյանի դատարանի 22.12.2005 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.06.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գագիկ Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Երեմ Հարությունյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 174-րդ, 178-րդ և 187-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Եղեգնաձոր քաղաքի Արսենյան փողոցի 5-րդ շենքի թիվ 19 բնակարանը պատկանել է Գագիկ Հարությունյանի մորաքրոջը՝ Արևհատ Հարությունյանին: Արևհատ Հարությունյանը մահացել է 10.11.1995 թվականին: Երեմ Հարությունյանը ժառանգությունը որևէ եղանակով չի ընդունել, մինչև Արևհատ Հարությունյանի մահը և դրանից հետո նշված բնակարանում չի բնակվել, ժառանգական գույքը սահմանված ժամկետում չի ընդունել, հոգ չի տարել և չի տիրապետել: Նշված բնակարանում բնակվել է Գագիկ Հարությունյանը և փաստացի տիրապետել է այն:

2) Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ և 1226-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ հայցվորը համարվում էր առաջին հերթի ժառանգ, ով լիիրավ իրավունք և հնարավորություն է ունեցել ժառանգությունն ընդունելու և այդ առթիվ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետում նոտարին հայտարարելու, սակայն չի կատարել: Փաստորեն հրաժարվել է ժառանգությունից, քանի որ իր ծնողներն այդպես են ցանկացել: Երեմ Հարությունյանն ընտանիքով մշտապես ապրել է հարազատ ծնողների հետ, վարել ընդհանուր տնտեսություն:

3) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները: Երեմ Հարությունյանի ներկայացրած ապացույցները շինծու են և անհիմն: Առանց որևէ հիմքի Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ հայցվորը մուծել է վիճելի բնակարանի կոմունալ ծախսերը, հաշվի չի առել այն փաստը, որ Գազիկ Հարությունյանի կողմից կատարված բոլոր տարիների մուծումների վերաբերյալ անդորրագրերը գտնվում են քաղաքացիական գործի նյութերում:

4) Վերաքննիչ դատարանը չի ղեկավարվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ և 188-րդ հոդվածներով, որոնցով պետք է ղեկավարվեր:

Վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.06.2006 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Վայոց ձորի մարզի առաջին աստիճանի դատարանի 22.12.2005 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.

Գազիկ Հարությունյանը վճռաբեկ բողոքում կասկածի տակ է դրել 03.01.2006 թվականին իր ձեռքով գրված հայտարարության իսկությունը, որով պարտավորվել է վիճելի բնակարանի դիմաց իրեն վճարել 7.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Գ. Հարությունյանի ստորագրության իսկությունը հաստատվել է «Երևանի դատական փորձաքննությունների ինստիտուտ «ԴԻԵՔՍ»-ի 20.09.2006 թվականի թիվ Ել-90 դատաձեռագրաբանական փորձագետի եզրակացությամբ (ներկայացվել է պատասխանին կից):

Գագիկ Հարությունյանի պատճառաբանությունը, թե սույն գործով Վայոց Ձորի մարզի առաջին աստյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 22.12.2005 թվականի վճռի հիման վրա ինքը ստացել է սեփականության իրավունքի վկայական և չի կարող վտարվել վիճելի բնակարանից, անհիմն է, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված 15-օրյա ժամկետում առաջին աստյանի դատարանի վճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, և վճիռը չէր կարող օրինական ուժ ստանալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ և 1226-րդ հոդվածի 3-րդ մասերի համաձայն՝ Երեմ Հարությունյանը փաստացի տիրապետման և կառավարման ուժով ընդունել է մոր ժառանգական գույքը, այդ թվում՝ վիճելի բնակարանը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 11.02.1982 թվականին Արևհատ Հարությունյանը որդեգրել է Երեմ Հարությունյանին:

2) Արևհատ Հարությունյանը Եղեգնաձորի Արսենյան փողոցի թիվ 5 շենքի թիվ 19 բնակարանի սեփականատերն է հանդիսացել: Նա մահացել է 10.11.1995 թվականին:

3) Արևհատ Հարությունյանի մահից հետո Գագիկ Հարությունյանը կնոջ և երեք երեխայի հետ բնակվում է Եղեգնաձորի Արսենյանի փողոցի թիվ 5 շենքի թիվ 19 բնակարանում:

4) Գ. Հարությունյանը 1995 թվականից Եղեգնաձորի Արսենյան փողոցի թիվ 5 շենքի թիվ 19 բնակարանի էլեկտրաէներգիայի մատակարարման ցանցի բաժանորդ է:

5) 2003-2004 թվականներին Եղեգնաձորի «Արսենյան 5» հասցեով Գ. Հարությունյանի հետ կնքվել են «Խմելու ջուր օգտագործողի միջոցներով ջրաչափական սարքի տեղադրման», «Ջրամատակարարման և ջրահեռացման» պայմանագրեր և «Խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի կիրարկման

արդյունքում վճարված և դուրս գրվող (չվճարվող) գումարների վերաբերյալ» փոխադարձ հաշվարկների ակտ:

6) Եղեգնաձորի Արսենյան փողոցի թիվ 5 շենքի թիվ 19 հասցեում բնակվող Գ. Հարությունյանից՝ որպես վարձակալ, պարբերաբար գանձվել է կոմունալ վարձ:

7) Եղեգնաձորի Արսենյան փողոցի թիվ 5 շենքի թիվ 19 բնակարանի 1996-2005 թվականների կոմունալ և էլեկտրաէներգիայի վարձերը վճարել է Գագիկ Հարությունյանը:

8) Եղեգնաձոր տարածքի նոտարի 12.09.2005 թվականի որոշմամբ մերժվել է Երեմ Յուլյկի Հարությունյանի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տալու մասին դիմումը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 174-րդ հոդվածը վերաբերում է անձի կողմից իրեն չպատկանող նյութերի վերամշակման միջոցով պատրաստված նոր շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածը սահմանում է տիրագուրկ գույքի կարգավիճակը, իսկ 187-րդ հոդվածը՝ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ճանաչման կարգը:

Սույն գործով վեճը վերաբերում է ժառանգական հարաբերություններին և բնակելի տարածքից վտարելու հետ կապված խնդիրներին: Հետևաբար, բողոքի այս հիմքում հիշատակված հոդվածները սույն վեճի նկատմամբ կիրառելի չեն:

2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված է, որ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության

ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում:

Սույն գործի փաստերը վկայում են, որ Արևհատ Հարությունյանի մահից՝ 10.11.1995 թվականից հետո նրան պատկանող Եղեգնաձորի Արսենյան փողոցի թիվ 5 շենքի թիվ 19 բնակարանը կնոջ և երեխաների հետ միասին փաստացի տիրապետում է Գագիկ Հարությունյանը: Վերջինս վճարել է այդ բնակարանի կոմունալ և այլ վճարները, այսինքն՝ փաստացի տիրապետել ու օգտագործել է նշված բնակարանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է, որ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելը հանգեցնում է նույն իրավական հետևանքներին, ինչը ժառանգությունից հրաժարվելն առանց այն անձին նշելու, հօգուտ որի նա հրաժարվել է ժառանգությունից, եթե այլ բան սահմանված չէ օրենսգրքով: Նույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Երեմ Հարությունյանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածին համապատասխան, իր պահանջը հիմնավորող ապացույցներ չի ներկայացրել, չի ապացուցել, որ Արևհատ Հարությունյանի մահից հետո փաստացի տիրապետել և կառավարել է ժառանգական գույքը, սահմանված կարգով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածով սահմանված ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում չի ընդունել ժառանգությունը, ժամանակին միջոցներ չի ձեռնարկել Եղեգնաձորի Արսենյան փողոցի 5-րդ շենքի թիվ 19 բնակարանը Գագիկ Հարությունյանի տիրապետումից պաշտպանելու համար:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի վճռի պատճառաբանական մասի այն փաստարկներին, թե Երեմ Հարությունյանն Արևհատ Հարությունյանի որդեգրված որդին է, հաշվառված է տնային գրքում, մեխանիկորեն հաշվառվել է որպես վիճելի տան սեփականատեր, նրանից զանձվել է նախորդ տարիների կոմունալ

վարձերի պարտքը, Արևհատ Հարությունյանի մահից հետո Երեմ Հարությունյանին են անցել ժառանգատուի շարժական գույք հանդիսացող կարի մեքենան և երկու մատանին, Երեմ Հարությունյանը Յու. Վարդանյանին վճարել է Արևհատ Հարությունյանի պարտքը, ինչպես նաև Գագիկ Հարությունյանը պարտավորվել է Երեմ Հարությունյանին տալ 7.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ վիճելի բնակարանի դիմաց, ապա դրանք հիմնավորված չեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով նախատեսված թույլատրելի ապացույցներով: Հետևաբար, Երեմ Հարությունյանի կողմից ժառանգությունն ընդունված լինելը չի ապացուցվել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ և 1226-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

3) բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է, քանի որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, մասնավորապես սույն որոշման 3-րդ բաժնում հիշատակված ապացույցները:

4) բողոքը չորրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածով սահմանված դատարանի կողմից հանրահայտ ճանաչված հանգամանքներ՝ նախկինում քննված քաղաքացիական գործով ուժի մեջ մտած դատարանի վճիռ և քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, գործում առկա չեն: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջին համապատասխան, վճռաբեկ բողոքում նշված չեն նույն օրենսգրքի 52-րդ և 188-րդ հոդվածների խախտման հիմքերը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եկավ եզրակացության, որ բողոքի երկրորդ և երրորդ հիմքերի առկայությունը բավարար հիմք է ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Երեմ Հարությունյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկներն էական չեն Վճռաբեկ դատարանի եզրակացությունների տեսանկյունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 22.06.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ, Է. ՀԱՅՐԻՅԱՆ, Ս. ԳՅՈՒՐՋՅԱՆ, Ս.

ԱՆՏՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական գործերով Քաղաքացիական գործ թիվ 3-2305 (ՎԴ)
վերաքննիչ դատարանի վճիռ 2006թ.
Քաղաքացիական գործ թիվ 06-2357
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ն. Հովսեփյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԳՅՈՒՐՋՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

2006 թվականի նոյեմբերի 30-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Մառլեն Հակոբյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքն ըստ Ալինա Ավետիսյանի հայցի ընդդեմ Մառլեն Հակոբյանի՝ ըստ օրենքի հասանելիք ժառանգական գույքն առանձնացնելու պահանջի մասին թիվ 06-2357 քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 04.10.2006 թվականի վճռի դեմ,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է համատեղ սեփականությունն հանդիսացող գույքից որպես ժառանգական գույք առանձնացնել իր հանգուցյալ ամուսնու՝ Արսեն Հակոբյանի բաժինը և հարգելի ճանաչել ժառանգության ընդունման ժամկետի բացթողումը:

Վայոց Ձորի մարզի առաջին աստյանի դատարանի 10.05.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 04.10.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքը ներկայացրել է Մ.Հակոբյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.

Հայցվորը դատարանին չի ներկայացրել ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու՝ օրենքով նախատեսված հարգելի պատճառ: Մինչդեռ, վերաքննիչ դատարանն Ա.Ավետիսյանի կողմից ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողումն անհիմն ճանաչել է հարգելի:

2) վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները, ինչի արդյունքում չի կիրառել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը և 31-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի

1-ին մասը, 201-րդ հոդվածը և 1186-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.

Գործի քննությամբ ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ վեճի առարկան՝ Եղեգնաձոր քաղաքի Սպանդարյան 35 հասցեում գտնվող տունը հանդիսանում է հանգուցյալ Արսեն Հակոբյանի սեփականությունը: Դատարանը, ըստ էության, առանց պատշաճ հիմնավորման, ճանաչել է Ալինա Ավետիսյանի և նրա երեխաների սեփականության իրավունքը Մառլեն Հակոբյանի սեփականությունը հանդիսացող տան նկատմամբ:

3) վերաքննիչ դատարանը չի կիրառել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.

Նշված հոդվածի համաձայն, իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների գործողությունները տարածվում են դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասի փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել 10.10.2005 թվականին, և սահմանում են, որ հողամասի սեփականատերը ձեռք է բերում իրեն պատկանող հողամասի վրա կառուցված շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի սեփականության իրավունք, չեն կարող տարածվել 1963 թվականին պատասխանողի հոր կողմից կառուցված շինության վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 04.10.2006 թվականի վճիռը՝ տան և տնամերձ հողամասի մասով և այդ մասով գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Եղեգնաձոր քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 35 բնակելի տունը կառուցվել է 1963 թվականին՝ Երանոս Հովհաննեսի Հակոբյանի կողմից: Այդ տունը գրանցվել է նրա որդի Մառլեն Երանոսի Հակոբյանի անունով, որտեղ ավելացել են նաև օժանդակ կառույցներ և շենքը վերակառուցվել է:

2) 05.04.1991 թվականին հողի սեփականաշնորհմանը մասնակցել են Մառլեն Հակոբյանը, նրա կինը՝ Ալվարդ Թումանյանը, դուստրը՝ Ալիսա Հակոբյանը, որդին՝ Արմեն Հակոբյանը և հայցվորի ամուսինը՝ Արսեն Հակոբյանը, որոնց սեփականաշնորհվել է 0,66 հա հողամաս:

3) Արսեն Հակոբյանը ծնվել է 1965 թվականին, ամուսնացել է Ա.Ավետիսյանի հետ 1996 թվականին, համատեղ ամուսնության ընթացքում ունեցել են երկու երեխա՝ Արման Արսենի Հակոբյան և Ալլա Արսենի Հակոբյան: Արսեն Հակոբյանը մահացել է 19.05.2004 թվականին:

4) Ժառանգության իրավունքի վկայական ստանալու խնդրանքով Ա.Ավետիսյանը դիմել է նոտարական գրասենյակ, սակայն ստացել է մերժում այն պատճառաբանությամբ, որ բաց է թողել ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը: Սույն գործով հայցը ներկայացվել է դատարան 01.03.2006 թվականին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին, ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ դատարանը կարող է հարգելի ճանաչել ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները միայն այն դեպքում, երբ ժառանգը կապացուցի, որ չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին, այսինքն՝ ժառանգատուի մահվան մասին (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդված) և այն պայմանով, որ իմանալուց հետո վեց ամսվա ընթացքում դիմել է դատարան:

Նշված պատճառաբանությունների հիման վրա հիմնավոր է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստարկը, քանի որ վերաքննիչ դատարանն առանց որևէ պատճառաբանության հարգելի է ճանաչել Ա.Ավետիսյանի կողմից ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողումը:

2) վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը:

Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով Մառլեն Հակոբյանի և նրա ընտանիքի անդամների, այդ թվում՝ Արսեն Հակոբյանի, կողմից 05.04.1991 թվականին հողամասը սեփականաշնորհելու հանգամանքը, միաժամանակ, ճանաչել է Արսեն Հակոբյանի սեփականության իրավունքը 1963 թվականին կառուցված տան նկատմամբ: Այսինքն՝ ըստ էության, ժառանգական զանգվածի մեջ ընդգրկվել է նաև ժառանգատուին չպատկանող գույք:

Վերը նշված պատճառաբանության հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր են նաև ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի, 31-րդ հոդվածի 1-ին մասի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստարկները, քանի որ Մառլեն Հակոբյանի սեփականության (սեփականության իրավունքը գրանցված է) նկատմամբ, առանց դրա դադարելու, ըստ էության, ճանաչվել է մեկ այլ անձի՝ Արսեն Հակոբյանի սեփականության իրավունքը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի գրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված

պայմաններով: Այսպիսով, դատարանի կողմից խախտվել է նաև Կոնվենցիայի 1-ին արձանագրության նշված հոդվածի պահանջը:

3) վճռաբեկ բողոքն երրորդ հիմքով անհիմն է:

Բողոքարկվող վճռում վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասը չի կիրառել, հետևաբար այդ հիմքով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը չկիրառելու (խախտելու) վերաբերյալ ներկայացված՝ սույն բողոքի երրորդ հիմքի փաստարկն անհիմն է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին և երկրորդ հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու բավարար հիմք է համարում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 04.10.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, Է. ՀԱՅՐԻՅԱՆ, Ս. ՍԱՐԳՍՅԱՆ,
Վ. ԱԲԵԼՅԱՆ, Ս. ԳՅՈՒՐՁՅԱՆ, Ս. ԱՆՏՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական գործ թիվ 3-141 (ՎԴ)
քաղաքացիական գործերով 2007թ.
վերաքննիչ դատարանի վճիռ
Քաղաքացիական գործ թիվ 06-1425
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
դատավորներ՝ Ա. Բարսեղյան
Ռ. Մարգարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ. Մանուկյանի
մասնակցությամբ դատավորներ Ա. Մկրտումյանի
Ս. Անտոնյանի
Վ. Աբելյանի
Է. Հայրիյանի
Ս. Մարգարյանի

2007 թվականի հուլիսի 6-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Կարինե Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մայիսի 12-ի թիվ 06-1425 քաղաքացիական գործով կայացված վճռի դեմ՝ ըստ Ջարեհ Երիցյանի (այսուհետ՝ նաև հայցվոր) հայցի ընդդեմ Կարինե Հարությունյանի (այսուհետ նաև՝ պատասխանող), Նոր Նորքի թաղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի տարածքային ստորաբաժանման՝ 01.09.1993 թվականի «Հրատարակիչ» ԲՇԿ-ի և 23.12.1993 թվականի Խորհրդային շրջգործկոմի թիվ 27/24 որոշումները, Ազատության նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 բնակարանի վերաբերյալ Կարինե Հարությունյանին տրված սեփականության իրավունքի գրանց-

ման վկայականն անվավեր ճանաչելու, ժառանգության ընդունման փաստը հաստատելու և բնակարանի սեփականատեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է հաստատել Վարդանուշ Երիցյանի կողմից մինչև նրա մահը Երևանի Ազատության նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքով տիրապետման փաստը, Զարեհ Երիցյանին ճանաչել Վ. Երիցյանի ժառանգությունն ընդունած ժառանգ, անվավեր ճանաչել պատասխանողին նշված բնակարանի փայտտեր ճանաչելու վերաբերյալ «Հրատարակիչ» ԲՇԿ-ի և Խորհրդային շրջգործկոմի որոշումները, պատասխանողի անվամբ տրված սեփականության իրավունքի վկայականը, ինչպես նաև ճանաչել նշված բնակարանի նկատմամբ հայցվորի սեփականության իրավունքը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 13.09.2004 թվականի թիվ 2-4431 վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 01.11.2004 թվականի թիվ 04-2916 վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի 20.01.2005 թվականի թիվ 3-103 որոշմամբ վերաքննիչ դատարանի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 22.03.2005 թվականի թիվ 05-759 վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի 05.05.2005 թվականի թիվ 3-1009 որոշմամբ վերաքննիչ դատարանի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 06.09.2005 թվականի թիվ 05-1993 վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի 27.01.2006 թվականի թիվ 3-2 որոշմամբ վերաքննիչ դատարանի

վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 12.05.2006 թվականի թիվ 06-1425 վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կարինե Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ, 53-րդ և 54-րդ հոդվածների պահանջները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանի պատճառաբանությունները, որ Վ. Երիցյանին փայը զիջելու հանգամանքը հաստատվում է 11.01.1984 թվականի վճռի պատճենով, չի կարող դիտվել որպես Վ. Երիցյանի կողմից բանկի հանդեպ ունեցած պարտքը վճարած լինելու ապացույց, քանի որ բացակայում են համապատասխան ապացույցները գումարը վճարելու վերաբերյալ, իսկ գումարը բռնագանձելու վերաբերյալ վճիռը դեռևս չի նշանակում, որ գումարը վճարվել է:

Դատարանը պատշաճ չի գնահատել գործում առկա հետևյալ ապացույցները՝

- Խորհրդային շրջխորհրդի գործկոմի 23.12.1993 թվականի թիվ 23/24 որոշումը.

- «Հրատարակիչ» բնակչինկոռայի փայատերերի 01.09.1993 թվականի ընդհանուր ժողովի որոշումը, որոնցով հաստատվում է, որ Կ. Հարությունյանը ճանաչվում է թիվ 58 բնակարանի փայատեր՝ հաշվի առնելով այն, որ Ջ. Երիցյանը 1985 թվականից գրանցված չէ և չի բնակվում այդ բնակարանում:

- Կ. Հարությունյանի կողմից 1994 թվականին բնակարանի փայատիրական գումարը վճարելու անդորրագիրը.

- «Հրատարակիչ» բնակչինկոոպի կողմից 1994 թվականին Կ. Հարությունյանին տրամադրված տեղեկանքը, համաձայն որի՝ վերջինս մուծել է բնակարանի փայտտիրական գումարն ամբողջությամբ:

Դատարանի այն պատճառաբանությունը, որ գործում առկա են բավարար ապացույցներ այն մասին, որ Ջ. Երիցյանը փաստացի տիրապետել է մոր ժառանգական գույքը, հիմնավոր չէ, քանի որ գործում բավարար ապացույցներ չկան, և նոր ապացույցներ չեն ներկայացվել: Գործում առկա ապացույցների վերաբերյալ Վճռաբեկ դատարանը արդեն իսկ արտահայտել է իր կարծիքը 27.01.2006 թվականի որոշմամբ:

Դատարանը ժառանգական գույքը ընդունած համարելու համար հիմք է ընդունել հայցվորի նախկին կնոջ և մանկության ընկերոջ՝ Ջ. Սարոյանի, մանկության մյուս ընկերոջ՝ Վ. Գերաշենկոյի (հիմք՝ նրանց իսկ ցուցմունքները առաջին ատյանի դատարանում) ցուցմունքները և չի գնահատել գործով մյուս վկաներ և շենքի 24 բնակիչների հայտարարությունները, որոնք ապացուցում են ժառանգությունը չընդունելու փաստը:

Ջ. Երիցյանի կողմից մոր ժառանգությունն ընդունելու հանգամանքն ապացուցող թույլատրելի ապացույցներ կհամարվեին, եթե դատարանին ներկայացվեր՝

ա) ժառանգությունն ընդունելու մասին նոտարի կողմից տրված վկայագիրը, կամ

բ) ապացույց նրա կողմից ժառանգական գույքը տիրապետելու մասին, կամ

գ) համապատասխան ապացույցներ, որ ժառանգատուին սեփականության իրավունքով պատկանել է որոշակի այլ գույք, որ հենց այդ գույքն է տիրապետվել ժառանգի կողմից, և որ ժառանգը այդ գույքը տիրապետել է ժառանգատուի մահից հետո 6 ամսվա ընթացքում:

Ակնհայտ է, որ նման ապացույցներ հայցվորի կողմից չեն ներկայացվել դատարանին, իսկ վերաքննիչ դատարանի կողմից այդ փաստը ցուցմունքներով հաստատված համարելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի խախտում է, ինչն արձանագրված է նաև Վճռաբեկ դատարանի 27.01.2006 թվականի որոշման 3-րդ էջի 7-րդ պարբերությունում:

Դատարանը կրկին անգամ հաստատված է համարել այն հանգամանքը, որ իբրև Վ. Երիցյանը իր փայլ զիջել է՝ հիմք ընդունելով կեղծված պայմանագրերը, ինչպես նաև հիմք ընդունելով այն, որ պայմանագրերի կնքումը նախատեսված է կանոնադրությամբ և փայլվճարը զիջելու հետ

կապված կոռուպցիայի պայմանագրեր է կնքել նաև այլ անձանց հետ, որոնք տվել են գրավոր հայտարարություններ:

Դատարանը, չկիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետը, փորձագետների եզրակացությամբ հաստատված կեղծ պայմանագրերը հիմք է ընդունել որպես ապացույց: Նշված փաստը նույնպես արձանագրվել է Վճռաբեկ դատարանի 27.01.2006 թվականի որոշման մեջ:

Դատարանը, ի խախտումն ՀՍՍՀ քաղաքացիական օրենսգրքի 99-րդ հոդվածի 2-րդ կետի և ԲՇԿ-ի կանոնադրության 34-րդ կետի պահանջների, հիմք է ընդունել ինչ-որ անձանց հայտարարությունները այն դեպքում, երբ վերը նշված նորմերով սահմանված է նման գործարքի համար փայտերերի ժողովի որոշման առկայություն, որը դատարանին չի ներկայացվել:

Գործի նյութերից ակնհայտ է, որ Վ. Երիցյանի մահվան օրը՝ 03.05.1990 թվականին նրան սեփականության իրավունքով բնակարան չի պատկանել, քանի որ նա բնակարանի փայավճարը մուծած չի եղել: Նման պայմաններում ոչ մի դեպքում չի կարելի բնակարանը համարել ժառանգական գույք:

2) Դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը կրկին անգամ անտեսել է այն հանգամանքը, որ հայցվոր Ջ. Երիցյանը երբևիցե չի հանդիսացել սեփականատեր, և նրա սեփականության իրավունքը ճանաչելու պահանջ ներկայացված է սույն քաղաքացիական գործով:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերի պալատի 20.01.2005 թվականի, 05.05.2005 թվականի և 27.01.2006 թվականի որոշումներով հիշյալ քաղաքացիական գործը բեկանվել է հայցային վաղեմության ժամկետի լրանալու և դատարանի կողմից չկիրառելու պատճառաբանությամբ: Հետևաբար, դատարանի կողմից այդ իմաստով թույլ է տրվել օրենքի կոպիտ խախտում:

Եթե նույնիսկ հայցվոր Ջ. Երիցյանը 1990 թվականից հանդիսացած լիներ վիճելի բնակարանի սեփականատեր, ապա նրա պահանջի նկատմամբ նույնպես պետք է տարածվեր հայցային վաղեմություն, քանի որ այդ ժամանակ գործող ՀՍՍՀ քաղաքացիական օրենսգրքի 78-րդ

հողվածի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետը 3 տարի է: ՀՄՄՀ քաղաքացիական օրենսգրքի 90-րդ հոդվածի համաձայն՝ սեփականության պահանջի նկատմամբ նույնպես տարածվել է 3 տարվա հայցային վաղեմության ժամկետը: «ՀՀ քաղաքացիական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «օրենսգրքով սահմանված հայցային վաղեմության ժամկետները կիրառվում են այն հայցերի նկատմամբ, որոնց նախկինում գործող օրենսդրությամբ նախատեսված ներկայացման ժամկետները չեն լրացել մինչև 1999 թվականի հունվարի մեկը»: Այսինքն՝ օրենսդիրը նոր քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի մասով օրենքին հետադարձ ուժ չի տվել՝ բացառությամբ 1999 թվականի հունվարի մեկի դրությամբ նախկին օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետը լրացած չլինելու դեպքերի: Իսկ այն, որ 1999 թվականի հունվարի մեկի դրությամբ նույնպես Չ. Երիցյանը բաց է թողել 3 տարվա հայցային վաղեմության ժամկետը ակնհայտ է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մայիսի 12-ի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) «Հրատարակիչ» բնակչինկոոպի վարչության նախագահի 26.04.1994 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Կարինե Հարությունյանը ամբողջությամբ մուծել է իր բնակարանի փայտտիրակն գումարը:

2) «Հրատարակիչ» բնակչինկոոպի վարչության նախագահի, անդամների և Վ. Երիցյանի միջև 02.10.1970 թվականին կնքված պայմանագրի համաձայն՝ Երևանի Ազատության պողոտայի նրբանցքի 26 Կոմիտասների շրջտվետի թիվ 2 շենքի իրացման կապակցությամբ «Հրատարակիչ» բնակչինկոոպի կառուցվող բնակելի շենքից Վ. Երիցյանին է տրամադրվել 2 սենյականոց բնակարան՝ նկատի ունենալով, որ նրա ընտանիքը բաղկացած է երկու անձից:

3) Համաձայն 05.07.1974 թվականին տրված թիվ 64 միասնական օրդերի Երևանի Ազատության նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 բնակարանը հատկացվել է Վարդանուշ Երիցյանին և Զարեհ Երիցյանին:

4) Վ. Երիցյանը մահացել է 1990 թվականին և Զարեհ Երիցյանը հանդիսանում է Վ. Երիցյանի միակ ժառանգը և մոր մահից հետո փաստացի բնակվելով այդ տանը, իսկ հեռանալուց վերցնելով մորը պատկանող որոշ իրեր, փաստացի տիրապետել է ժառանգական գույքը:

5) Կարինե Հարությունյանը և Զարեհ Երիցյանը ամուսնացել են 1979 թվականին:

6) Երևանի Սովետական շրջանի ժողդատարանի 04.11.1983 թվականի թիվ 2-1079 վճռով բավարարվել է Կ. Հարությունյանի հայցն ընդդեմ Վ. Երիցյանի՝ երեխայի հետ բնակվելու համար առանձին սենյակ հատկացնելու պահանջի մասին:

7) «Հրատարակիչ» բնակշինկոոպի փայատերերի 01.09.1993 թվականի ընդհանուր ժողովի որոշմամբ Կ. Հարությունյանը ճանաչվել է Երևանի Ազատության նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 բնակարանի փայատեր՝ հաշվի առնելով այն, որ Զ. Երիցյանը 1985 թվականից գրանցված չէ և չի բնակվում այդ բնակարանում:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն քաղաքացիական գործի նյութերով ապացուցված է, որ Վ. Երիցյանը հանդիսացել է «Հրատարակիչ» բնակշինկոոպի փայատեր և այդ հիմքով տիրապետել է Երևանի Ազատության նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 բնակարանը:

Համաձայն Բնակարանային շինարարական կոոպերատիվի օրինակելի կանոնադրության 29-րդ կետի՝ կոոպերատիվի անդամի փայն անցնում է նրա ժառանգներին՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 1225-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական

գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում:

Օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը:

Նշված նորմը ենթադրում է, որ ոչ թե ժառանգական գույքը տիրապետող ժառանգը պետք է ապացուցի իր կողմից այդ գույքի տիրապետումը, այլ այդպիսի փաստը վիճարկող անձը: Հետևաբար սույն քաղաքացիական գործի շրջանակներում հակառակը հիմնավորող ապացույցների բացակայության պարագայում պետք է հաստատված համարել այն հանգամանքը, որ Ջարեհ Երիցյանը տիրապետել է իր մորը՝ Վ. Երիցյանին պատկանող ժառանգական գույքի մասը, իսկ Օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով նաև ամբողջը, և այդ գույքի մաս է կազմել նաև Վ. Երիցյանին պատկանող «Հրատարակիչ» բնակչինկոռպի փայը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ մտնում է ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

Սույն քաղաքացիական գործի նյութերով հիմնավորվում է այն հանգամանքը, որ Վարդանուշ Երիցյանը հանդիսացել է «Հրատարակիչ» բնակչինկոռպի փայատեր և այդ հիմքով տիրապետել է Երևանի Ազատության նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 բնակարանը: Հետևաբար կողպերատիվի փայը հանդիսացել է վերջինիս գույքային իրավունքը և մտնում է ժառանգության զանգվածի մեջ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով վիճարկվող իրավահարաբերությունների ծագման ժամանակ գործող «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բնակարանային, բնակչինարարական, ավտոտնակային և այլ կողպերատիվի այն անդամը, որը լրիվ մուծել է իր փայը բնակարանի, ամառանոցի, ավտոտնակի, իր օգտագործմանը տրված այլ շինարարության կամ տեղի համար, ձեռք է բերում այդ գույքի սեփականության իրավունք:

Բնակարանային շինարարական կոոպերատիվների օրինակելի կանոնադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ կոոպերատիվի մահացած անդամի փայն անցնում է նրա ժառանգներին՝ օրենքով սահմանված կարգով: Այն ժառանգներին, ովքեր չէին օգտվել բնակարանից ժառանգատուի կյանքի ընթացքում, ինչպես նաև հրաժարվել են բնակարանի հետագա օգտագործումից կոոպերատիվը վճարում է նրանց կողմից ժառանգվող փայի արժեքը կամ նրա բաժնեմասը: Կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովն իրավունք ունի ընդունել որպես կոոպերատիվի անդամներ մի քանի ժառանգների, բնակարանում յուրաքանչյուրի համար առանձնացված բնակելի տարածքի առկայության և նույն կանոնադրության 6-րդ կետով սահմանված պայմանների պահպանման պայմանով:

Վերը նշված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ կոոպերատիվի փայն ամբողջությամբ վճարած կոոպերատիվի անդամը գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք, իսկ այն ժառանգները, ովքեր ժառանգատուի կյանքի ընթացքում օգտվել են բնակարանից, կարող են ժառանգել կոոպերատիվի մահացած անդամի փայի վճարված մասին համապատասխան բնակարանի մասը:

Երևանի Ազատության նրբանցքի թիվ 2 հասցեի կոոպերատիվ շենքի թիվ 58 երկսենյականոց բնակարանը Վարդուհի Երիցյանին հատկացվել է իրացված սեփական տան դիմաց՝ երկու անձի՝ նրա և որդու՝ Զարեհ Երիցյանի համար: Բնակարանի օրդերը 05.07.1974 թվականին տրվել է նրանց անվամբ: Զարեհ Երիցյանը մոր հետ միասին բնակվել է այդ բնակարանում: Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 04.11.1983 թվականի վճռով կոոպերատիվ բնակարանի նկատմամբ կոոպերատիվի անդամների սեփականության իրավունքը ճանաչվելը (01.12.1990 թվական), վիճելի բնակարանի մեկ սենյակը բնակության իրավունքով հատկացվել է Կարինե Հարությունյանին և նրա երեխային, իսկ մյուս սենյակը՝ Վարդուհի Երիցյանին: Կոոպերատիվի անդամ Վարդուհի Երիցյանի փայի՝ բնակարանի արժեքի մասը վճարել է կոոպերատիվը՝ որպես իրացված տան փոխհատուցում, իսկ արժեքի մյուս մասի գումարը հետագայում վճարել է Կարինե Հարությունյանը, այսինքն՝ կոոպերատիվի փայը վճարել են երկու անձով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Ազատության նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 երկուսենյականոց բնակարանի նկատմամբ փայի մասի վճարման հիմքով սեփականության իրավունք են ձեռք բերել Կարինե Հարությունյանը և նախկին բնակելի

տան իրացման և փայի վճարման հիմքով՝ Վարդուհի Երիցյանը՝ յուրաքանչյուրը 1/2 մասով: Ջարեհ Երիցյանը ժառանգության իրավունքով սեփականության իրավունք է ձեռք բերել Վարդուհի Երիցյանի բաժնի՝ բնակարանի 1/2-րդ մասի նկատմամբ:

Սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի մասնակիորեն հիմնավոր լինելը Վճռաբեկ դատարանը բավարար է համարում ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մայիսի 12-ի վճիռը բեկանելու համար:

Վերը նշված հիմնավորումների և եզրահանգման հիմքով վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքի մյուս փաստարկներին, դրանց՝ գործի ելքի համար ոչ էական նշանակություն ունենալու պատճառաբանությամբ:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդարադատության արդյունավետության սկզբունքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով, գտնում է, որ Կարինե Հարությունյանի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման՝ բողոքարկվող դատական ակտը փոփոխելու միջոցով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հաստատված փաստերը բավարար են դատական ակտը փոփոխելու համար, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, թե երբ է ներկայացվել սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցապահանջը:

Այսպիսով՝ սույն քաղաքացիական գործով սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցապահանջը ներկայացվել է 2004 թվականի մայիսի 31-ին, երբ առկա չէր Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը: Հետևաբար, այդ պայմաններում հայցվորը ողջամտորեն կարող էր շարունակել ենթադրել, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականը վիճարկելով՝ ըստ էության վիճարկում էր սեփականության իրավունքի գրանցումը:

Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն

վեճով սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջի նկատմամբ կարող է անբարենպաստ դատավարական հետևանքներ առաջացնել սույն գործով հայցվորի համար, մասնավորապես նա ստիպված կլինի նույն իրավունքի պաշտպանության համար կրկին դիմել դատարան, այս անգամ սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջով, ինչը Վճռաբեկ դատարանը դիտում է որպես անձի արդար դատաքննության իրավունքի ոչ արդյունավետ իրացման օրինակ, Վճռաբեկ դատարանը հնարավոր է համարում սույն գործով ներկայացված սեփականության իրավունքի վկայականի անվավերության պահանջը դիտել որպես սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի մայիսի 12-ի վճիռը և փոփոխել այն:

2. Մասնակիորեն անվավեր ճանաչել «Հրատարակիչ» ԲՇԿ-ի 01.09.1993 թվականի, ժողովրդական պատգամավորների Երևանի Խորհրդային գործադիր կոմիտեի 23.12.1993 թվականի թիվ 27/24 որոշումները: Մասնակիորեն անվավեր ճանաչել Կարինե Հարությունյանի անվամբ սեփականության իրավունքի գրանցումը Երևանի Ազատության նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 երկուսենյականոց բնակարանի նկատմամբ՝ 1/2 մասով: Զարեհ Երիցյանին համարել ժառանգությունն ընդունած ժառանգ: Ճանաչել նրա սեփականության իրավունքը Երևանի Ազատության նրբանցքի 2-րդ շենքի թիվ 58 երկուսենյականոց բնակարանի 1/2 մասի նկատմամբ:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Հ. Մանուկյան

Դատավորներ՝ Ա. Մկրտումյան, Ս. Անտոնյան, Վ. Աբելյան, Է. Հայրիյան,
Ս. Սարգսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական գործ թիվ 3-753 (ՎԴ)
քաղաքացիական գործերով 2007 թ.
վերաքննիչ դատարանի վճիռ
Քաղաքացիական գործ թիվ 07-1111
Նախագահող դատավոր՝ Վ. Ավանեսյան
դատավորներ՝ Դ. Խաչատրյան
Գ. Մատինյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ՄԿԴՏՈՒՄՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԳՅՈՒՐՉՅԱՆԻ
Է. ՀԱՅԲԻՅԱՆԻ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի հուլիսի 6-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Հովհաննես Գալյանի միջոցով Աթանես Ստեփանյանի կողմից բերված վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ նաև դատարան) 2007 թվականի փետրվարի 23-ի թիվ 07-1111 գործով կայացված վճռի դեմ՝ ըստ Աթանես Ստեփանյանի (այսուհետ նաև՝ հայցվոր) հայցի ընդդեմ Ռազմիկ Ստեփանյանի (այսուհետ նաև՝ պատասխանող), երրորդ անձինք Գառնիի գյուղապետարանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աբովյանի տարածքային ստորաբաժանման՝ սեփականության իրավունքի վկայականն

անվավեր ճանաչելու և ժառանգական գույքի նկատմամբ սեփականատեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Աթանես Ստեփանյանը պահանջել է անվավեր ճանաչել Ռազմիկ Ստեփանյանի անվամբ տրված սեփականության իրավունքի վկայականը և իրեն ճանաչել Վարսո Ստեփանյանի ժառանգական գույքի նկատմամբ սեփականատեր:

Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 12.12.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 23.02.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աթանես Ստեփանյանը Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբան Հովհաննես Գալյանի միջոցով:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Ռազմիկ Ստեփանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ, 218-րդ հոդվածների և 132-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը չի նշել այն ապացույցները, որոնց վրա հիմնված են նրա հետևությունները, այլ սոսկ հիշատակելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ, 1225-րդ և 1227-րդ հոդվածները, որոնք ոչ մի կապ չունեն հայցվորի ներկայացրած պահանջի հետ, վճռի պատճառաբանական մասում նշել է, որ օրենքի նշված դրույթները հիմք ընդունելով դատարանը գտնում է, որ Աթանես Ստեփանյանի հայցն անհիմն է և ենթակա մերժման:

Դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել գործում առկա ՀՀ ազգային արխիվի Արժվյանի ներկայացուցչության 28.07.2006 թվականի տեղեկանքը և Գառնիի գյուղապետի կողմից 15.09.2006 թվականին տրված թիվ 03-1216 տեղեկանքը, որոնցով ապացուցվում է, որ հայցվորը կտակի գոյության մասին իմացել է 28.07.2006 թվականին, և ժառանգության բացման պահին, այն է 1993 թվականի դեկտեմբերից մինչև 1994 թվականի հունիս ամիսը բնակվել է Վարսո Ստեփանյանին պատկանող տանը:

Նշված ապացույցների առկայության պայմաններում դատարանը պատասխանողից չի պահանջել ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները, այլ հիմնվելով պատասխանողի անհիմն հայտարարության վրա, թե իբր հայցվորը կտակի մասին իմացել է ժառանգության բացման պահից, առանց հիմքի այն համարել է իրականություն:

2) Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1193-րդ, 1199-րդ, 1194-րդ, 1201-րդ և 1228-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր և սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ և 1227-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ըստ Վարսո Ստեփանյանի 25.02.1981 թվականին կազմված կտակի 1-ին կետի՝ ամբողջ իր գույքը, որը պատկանում է իրեն նա կտակել է իր թոռ՝ Աթանես Ռազմիկի Ստեփանյանին, իսկ կտակի 2-րդ կետի համաձայն՝ իր մահից հետո ի հայտ եկող այլ ժառանգներին Վ. Ստեփանյանը գրկել է ժառանգման իրավունքից: Վ. Ստեփանյանի 25.02.1981 թվականին կազմված կտակը վավերացվել է Գառնիի գյուղական խորհրդի (սովետի) նախագահի կողմից:

Պատասխանողը Վ. Ստեփանյանին պատկանող գույքի նկատմամբ որևէ իրավունք չունի և չի կարող ունենալ, քանի որ գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորվում է, որ չիմանալով կտակի գոյության մասին հայցվորը բնակվել է կտակարարի հետ ինչպես նրա կենդանության օրոք, այնպես էլ նրա մահվանից հետո և փաստորեն ընդունել է ըստ կտակի ժառանգությունը, իսկ կտակի մասին չիմանալու հանգամանքը հարգելի է դարձնում ըստ կտակի ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը, որպիսի հանգամանքներում հայցը ենթակա էր քավարարման:

Վերոգրյալի հիման վրա վճարել բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 23.02.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի 12.12.2006 թվականի վճիռն:

2.1. Վճարել բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.

Դատաքննության ընթացքում հայցվորն ընդունել է այն հանգամանքը, որ իմացել է կտակի գոյության մասին, սակայն չի ցանկացել ընդունել այն, հետևաբար անհիմն է բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել ՀՀ ազգային արխիվի Աբովյանի ներկայացուցչության 28.07.2006 թվականի տեղեկանքը և Գառնիի գյուղապետի կողմից 15.09.2006 թվականին տրված թիվ 03-1216 տեղեկանքը, որոնցով ապացուցվում է, որ հայցվորը կտակի գոյության մասին իմացել է 28.07.2006 թվականին:

Դատարանի վճռում հստակ նշված են ապացույցները, որոնց վրա հիմնվել է դատարանը վճիռը կայացնելիս, ավելին, մանրամասն մեկնաբանվել են հայցապահանջի մերժման համար հիմք հանդիսացող հողվածները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ վճարել բողոքում նշված փաստարկը նույնպես անհիմն է, քանի որ այն կարգավորում է ժառանգությունն ընդունելու կարգը, իսկ կտակը նույնպես ժառանգության հիմք է համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին մասի:

Բողոք բերած անձը չի նշել թե ինչում է արտահայտվում դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ և 1227-րդ հոդվածների սխալ մեկնաբանությունը:

Բողոք բերած անձի կողմից, որպես կիրառման ենթակա վկայակոչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1193-րդ, 1199-րդ, 1194-րդ և 2001-րդ հոդվածները առնչություն չունեն սույն վեճի հետ, քանի որ կտակարարին՝ Վարսո Ստեփանյանին երբևէ որևէ մեկը չի արգելել և չի սահմանափակել կտակ կազմելու ազատությունը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հայցվորը հանդիսանում է պատասխանողի որդին և Վարսո Ստեփանյանի թոռը:

2) Վարսո Ստեփանյանը 25.02.1981 թվականին կազմված կտակով նշել է, որ մահվան պահին իրեն պատկանող ողջ գույքը կտակում է իր թոռ Աթանես Ստեփանյանին և մյուս ժառանգներին զրկում է ժառանգությունից:

3) Կտակը վավերացվել և մեկ օրինակը պահվել է Գառնիի գյուղական սովետում:

4) Կտակը կազմելու ժամանակ՝ 25.02.1981 թվականին, Աթանես Ստեփանյանը եղել է 6 տարեկան:

5) Վարսո Ստեփանյանը մահացել է 24.12.1993 թվականին:

6) 28.07.2006 թվականին Աթանես Ստեփանյանը ՀՀ ազգային արխիվից ստացել է Վարսո Ստեփանյանի կտակի պատճենը:

7) 2004 թվականին՝ պատասխանողի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցման պահին, գյուղապետարանում կտակի օրինակը չի եղել այն ՀՀ ազգային պետական արխիվ հանձնելու պատճառով:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն վերաքննիչ դատարանի վճռի մեջ պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև օրենքները ու այլ

իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս:

Դատարանը վճռում նշել է, որ գործի դատաքննությամբ հիմնավորվել է այն փաստը, որ հայցվորը մինչև ժառանգատուի մահը իմացել է կտակի մասին, սակայն նրա մահվանից հետո չի դիմել ըստ կտակի ժառանգությունը ընդունելու համար: Սակայն վերոնշյալ օրենքի համաձայն՝ դատարանը չի նշել, թե ինչպիսի ապացույցների և հանգամանքների վրա է հիմնված դատարանի նման եզրահանգումը:

Դատարանը չի անդրադարձել և պատշաճ գնահատման չի արժանացրել հայցը հիմնավորող՝ հայցվորի կողմից ներկայացրած ապացույցներին: Մասնավորապես, ՀՀ ազգային արխիվի Արքովյանի ներկայացուցչության 28.07.2006 թվականի և Գառնիի գյուղապետի կողմից 15.09.2006 թվականին տրված թիվ 03-1216 տեղեկանքները, որոնք կտակի գոյության, հայցվորի՝ ըստ կտակի ժառանգորդ հանդիսանալու մասին տեղեկություններ պարունակող ապացույցներ են:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած անձի փաստարկն այն մասին, որ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 48-րդ, 53-րդ, 132-րդ և 218-րդ հոդվածների պահանջները:

2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակի հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Վարսո Ստեփանյանը կտակը կազմել է 1981 թվականի փետրվարի 25-ին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1193-րդ, 1199-րդ, 1194-րդ և 1201-րդ հոդվածները սույն գործով ենթակա չէին կիրառման, քանի որ կտակը կազմելու հետ կապված հարաբերությունները դադարել են այն վավերացնելու պահին:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ և 1227-րդ հոդվածների խախտմանը, ապա բողոքն այդ հիմքերով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Վարսո Ստեփանյանը մահացել է 24.12.1993 թվականին:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի՝ քաղաքացիական օրենսդրության ակտերը և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն ու կիրառվում են ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների նկատմամբ: Օրենքի գործողությունը մինչև

դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում է միայն այն դեպքերում, երբ այն ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

«Քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տասնմեկերորդ բաժնի նորմերը կիրառվում են նաև այն ժառանգությունների նկատմամբ, որոնք բացվել են մինչև օրենսգիրքը գործողության մեջ դնելը, սակայն չեն ընդունվել ժառանգներից ոչ մեկի կողմից և ժառանգման իրավունքով պետության կամ համայնքի սեփականությունը չեն դարձել մինչև 1999 թվականի հունվարի 1-ը:

Նշված իրավանորմերի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժնի նորմերը կիրառելի են սույն գործով դեռևս չդադարած իրավահարաբերությունների նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի: Ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը, ինչպես նաև նույն օրենսգրքով սահմանված այլ դեպքերում:

Սույն գործով ժառանգների շրջանակը պետք է որոշվեր 25.02.1981 թվականին կազմված կտակով, քանի որ Աթանես Ստեփանյանից բացի մնացած ժառանգները այդ կտակի 2-րդ կետով զրկված են եղել ժառանգությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Նույն օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան:

Սույն գործով ժառանգության բացման պահից առաջացել է իրավահարաբերություն, որի բովանդակության տարրերից մեկը եղել է Ա.

Մտեփանյանի սուբյեկտիվ իրավունքը ժառանգելու տասի ունեցվածքը: Եվ այդ սուբյեկտիվ իրավունքի դադարման փաստը եղել է ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված ժամկետի ավարտը: Հետևաբար, Ա. Մտեփանյանը իրավունք ունի դիմելու դատարան ժառանգությունն ընդունած համարվելու պահանջով՝ հիմք ընդունելով ժառանգության համար նախատեսված ժամկետի բաց թողման հարգելի պատճառները, քանի որ նրա սուբյեկտիվ իրավունքը գոյություն է ունեցել, սակայն դրա մասին նա օբյեկտիվ պատճառներով չի իմացել:

Այսպիսով, բողոքի հիմքերի մասնակիորեն հիմնավոր լինելը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների համաձայն վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելու և ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 23.02.2007 թվականի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 23.02.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, Ս. ԱՆՏՈՆՅԱՆ, Վ. ԱԲԵԼՅԱՆ,
Ս. ԳՅՈՒՐՋՅԱՆ, Է. ՀԱՅՐԻՅԱՆ, Ս. ՍԱՐԳՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական գործ թիվ 3-1179 (ՎԴ)
քաղաքացիական վերաքննիչ 2007 թ.
դատարանի վճիռ
Քաղաքացիական գործ թիվ 07-583/2007
Նախագահող դատավոր՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
դատավորներ՝ Կ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ. Մանուկյանի
մասնակցությամբ դատավորներ՝ Ա. Մկրտումյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Ս. Գյուրջյանի
Է. Հայրիյանի
Ս. Սարգսյանի

2007 թվականի օգոստոսի 1-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Հայրապետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 17.01.2007 թվականի թիվ 07-583/2007 գործով կայացված վճռի դեմ՝ ըստ Արմեն Հայրապետյանի հայցի ընդդեմ Ռուբեն Հայրապետյանի, Արմեն Ճուղուրյանի և թիվ 1 նոտարական գրասենյակի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը, սեփականության իրավունքի վկայականը, բնակարանի առուվաճառքի պայմանագիրն ու դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու և բնակարանի սեփականատեր ճանաչելու մասին և ըստ Արմեն Ճուղուրյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Արմեն Հայրապետյանի՝ բնակելի տարածության

օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու և բնակարանից վտարելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Արմեն Հայրապետյանը պահանջել է անվավեր ճանաչել Ռ. Հայրապետյանին 24.10.2001 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա 29.10.2001 թվականին տրված թիվ 493702 սեփականության իրավունքի վկայականը, Ռ. Հայրապետյանի և Ա. Ճուղուրյանի միջև 30.04.2002 թվականի Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի թիվ 22 բնակարանի 30.04.2002 թվականի առուծախի պայմանագիրը և այդ պայմանագրի հիման վրա Ա. Ճուղուրյանին 03.12.2002 թվականին տրված թիվ 445693 սեփականության իրավունքի վկայականը:

Մեկ այլ քաղաքացիական գործով Արմեն Հայրապետյանը հայց է ներկայացրել ընդդեմ Ա. Ճուղուրյանի՝ իրեն վեճի առարկա հանդիսացող բնակարանի նկատմամբ սեփականատեր ճանաչելու պահանջով:

Առաջին հայցի դեմ ներկայացված հակընդդեմ հայցով Ա. Ճուղուրյանը պահանջել է հատուցմամբ դադարեցնել Ա. Հայրապետյանի՝ Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ ունեցած անհատույց օգտագործման իրավունքը, վտարել Ա. Հայրապետյանին նշված բնակարանից և հատուցել բնակարանի գույքի փչացմամբ իրեն պատճառված վնասը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 11.08.2004 թվականի վճռով Ա. Հայրապետյանի առաջին հայցը բավարարվել է, իսկ Ա. Ճուղուրյանի հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 14.10.2004 թվականի վճռով Ա. Հայրապետյանի առաջին հայցը մերժվել է, իսկ Ա. Ճուղուրյանի հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակի՝ բնակարանի նկատմամբ Ա. Հայրապետյանի անհատույց օգտագործման իրավունքը հատուցմամբ դադարեցնելու և բնակարանից վտարելու մասով:

ՀՀ վճռաբեկ դատարանի 24.12.2004 թվականի որոշմամբ ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 14.10.2004 թվականի վճիռը մասնակի բեկանվել է. ուժի մեջ է թողնվել հակընդդեմ հայցի՝ Ա. Ճուղուր-

յանին պատճառով ավաստի հատուցման մասը: Մնացած մասով գործն ուղարկվել է նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 20.01.2006 թվականի վճռով Ա. Հայրապետյանի կողմից ներկայացված երկրորդ հայցը բավարարվել է. վճռվել է վիճելի բնակարանը վերադարձնել Ա. Հայրապետյանին՝ որպես միակ սեփականատիրոջ:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 14.12.2006 թվականի որոշմամբ թիվ 06-3979 և 06-3596 քաղաքացիական գործերով վարույթները միացվել են մեկ վարույթում:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 17.01.2007 թվականի վճռով Ա. Հայրապետյանի հայցը մասնակի բավարարվել է: Վճռվել է 1/2-րդ մասով անվավեր ճանաչել Ռ. Հայրապետյանին 24.10.2001 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը, մասնակի անվավեր ճանաչել Ռ. Հայրապետյանի և Ա. Ճուղուրյանի միջև 30.04.2002 թվականին կնքված Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի 22-րդ բնակարանի առուվաճառքի պայմանագիրը և որպես անվավերության հետևանք՝ Ռ. Հայրապետյանից հոգուտ Ա. Ճուղուրյանի բռնագանձել 2 միլիոն ՀՀ դրամ, բնակարանի 1/2-րդ մասը հանձնել Ա. Հայրապետյանի տնօրինությանը, սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու պահանջի մասով գործի վարույթը կարճել:

Նույն վճռով Ա. Ճուղուրյանի հակընդդեմ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ա. Հայրապետյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածը:

Բողոք բերած անձն իր պնդումը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Մեկ տարվա ընթացքում Ա. Ճուղուրյանը, զբաղվելով Ռ. Հայրապետյանի բազմաբնույթ գործերով, չէր կարող չիմանալ Ռ. Հայրապետյանի՝ կեղծ ճանապարհով Ա. Հայրապետյանին փաստացի պատկանող բնակարանի յուրացման և իրացման մասին:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի ուժով սեփականատերն իրավունք ունի բարեխիղճ ձեռք բերողից գույքը հետ պահանջել այն դեպքում, երբ գույքը նրա տիրապետումից դուրս է եկել անկախ նրա կամքից: Սույն գործում առկա ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի՝ 20.10.2005 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ վիճելի բնակարանը Ա. Հայրապետյանի տնօրինությունից դուրս է եկել նրա կամքից անկախ:

2) Դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասը, որը չպետք է կիրառեր և չի կիրառել ՀՀ նախկին քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձն իր պնդումը հիմնավորել է այն փաստարկով, որ Ա. Հայրապետյանը ժառանգությունն ընդունած է համարվում անկախ բնակարանի նկատմամբ իրավունքների պետական գրանցման փաստից:

Սույն իրավահարաբերությունները ծագել են նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գործողության ժամանակաշրջանում:

3) Դատարանը չի կիրառել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը:

Բողոք բերած անձն իր պնդումը հիմնավորել է այն փաստարկով, որ վիճելի բնակարանը 1998 թվականից պատկանել է Ա. Հայրապետյանին, և նա չի կարող զրկվել այդ սեփականությունից հանցավոր գործողությունների հետևանքով:

4) Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը և 53-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձն իր պնդումը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել քաղաքացիական գործում առկա՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը և Ա. Ճուղուրյանին ճանաչել է բարեխիղճ ձեռք բերող:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ քրեական գործով քննության ընթացքում Ռ. Հայրապետյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ նա հրաժարվել է ժառանգությունն ընդունելուց:

5) Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձն իր պնդումը հիմնավորել է հետևյալ փաստարկով.

Ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո առանց դատարան դիմելու ժառանգությունը կարող է ընդունվել միայն ժառանգությունն ընդունած մնացած ժառանգների գրավոր համաձայնությամբ, որպիսի համաձայնություն դեռևս 07.11.1997 թվականին ժառանգությունն ընդունած Արմեն Հայրապետյանը չէր տվել դրանից 4 տարի անց՝ 24.10.2001 թվականին ապօրինի ճանապարհով ժառանգության իրավունքի վկայագիր ստացած Ռուբեն Հայրապետյանին:

Բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 17.01.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 20.06.2006 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Արմեն Հայրապետյանի հայրը՝ Արսեն Հայրապետյանը, մահացել է 13.05.1997 թվականին: Արսեն Հայրապետյանի գույքը ժառանգել է Արմեն Հայրապետյանը, որին էլ 28.09.1998 թվականին տրվել է ժառանգության իրավունքի վկայագիր: Նշված վկայագրով որպես ժառանգական գույք է նշվել Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի 22-րդ բնակարանը: Արմեն Հայրապետյանի՝ 28.09.1998 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագրից ծագած իր իրավունքները պետական գրանցման չեն ենթարկվել:

2) Ռուբեն Հայրապետյանը՝ Արմեն Հայրապետյանի հարազատ եղբայրը, 24.10.2001 թվականին ժառանգության իրավունքի վկայագիր է ստացել նույն գույքի նկատմամբ (ամբողջ գույքի նկատմամբ): Ռ. Հայրապետյանը 24.10.2001 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագրից բխող իր իրավունքները գրանցել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի տարածքային ստորաբաժանումում (այսուհետ նաև՝ Կադաստր) և 29.10.2001 թվականին ստացել է Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի 22-րդ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3) Ռ. Հայրապետյանը 30.04.2002 թվականին վիճելի բնակարանը վաճառել է Ա. Ճուղուրյանին: Ա. Ճուղուրյանը 30.04.2002 թվականի առուծախի պայմանագրից բխող իրավունքները գրանցել է Կադաստրում և 03.12.2002 թվականին ստացել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4) Ռուբեն Հայրապետյանը ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 20.10.2005 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 2-րդ մասի 2-րդ կետով և 3-րդ կետով, 1-ին մասով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 192-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված արարքներ կատարելու համար: Նշված դատավճռի համաձայն՝ Ռ. Հայրապետյանը խարդախությանը տիրացել է Արմեն Հայրապետյանին փաստացի պատկանող Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի 22-րդ բնակարանին:

Բացի այդ, նշված քրեական գործի քննության ընթացքում պարզվել է, որ Արմեն Ճուղուրյանը Ռուբեն Հայրապետյանին ճանաչել է՝ սկսած 2001 թվականից, նրան ցույց է տվել իրավաբանական օգնություն, տեղյակ է եղել, որ վիճելի բնակարանում հաշվառված անձանց վերաբերյալ տեղեկանքը կազմել է Ռուբեն Հայրապետյանը, իսկ ինքը Ռ. Հայրապետյանի կողմից ռուսերենով կազմած տեղեկանքը թարգմանել է հայերեն:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքները նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ, ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հասփշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց

տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արմեն Հայրապետյանը հոր՝ Արսեն Հայրապետյանի մահվանից հետո, նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածին համապատասխան ընդունել է ժառանգությունը: Ինչ վերաբերում է Ռուբեն Հայրապետյանին, ապա վերջինս նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետում չի ընդունել ժառանգությունը: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ Արմեն Հայրապետյանին 28.09.1998 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագրում Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի 22-րդ բնակարանի միակ ժառանգ է ճանաչվել Արմեն Հայրապետյանը:

Սիննույն ժամանակ սույն գործում առկա՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 20.10.2005 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է այն հանգամանքը, որ Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի թիվ 22 բնակարանը Արմեն Հայրապետյանից հափշտակել է Ռուբեն Հայրապետյանը: Նույն դատավճռով հաստատված է համարվել այն, որ Արմեն ճուղուրյանը ծանոթ է եղել Ռուբեն Հայրապետյանի հետ մինչև վիճելի բնակարանի առուվաճառքի պայմանագրի կնքումը, նրան մատուցել է իրավաբանական ծառայություններ, աջակցել է կեղծ փաստաթուղթ կազմելու գործում:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով գործով հաստատված նշված փաստերը, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի ուժով Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի 22-րդ բնակարանի նկատմամբ պետք է ճանաչվի Արմեն Հայրապետյանի սեփականության իրավունքը, քանի որ այդ բնակարանը նրանից հափշտակել են, և բացի այդ, Արմեն ճուղուրյանը չի կարող բարեխիղճ ձեռք բերող համարվել, քանի որ պատշաճ հոգածություն չի ցուցաբերել Ռուբեն Հայրապետյանի՝ նշված բնակարանն օտարելու լիազորությունները պարզելու համար:

Նշված պատճառաբանությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը սույն վճռաբեկ բողոքի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի սխալ մեկնաբանության վերաբերյալ հիմքը հիմնավոր է համարում:

2) Արմեն Հայրապետյանի բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակի հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Արսեն Հայրապետյանը մահացել է 13.05.1997 թվականին: Հետևաբար նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 531-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգության բացման օր պետք է համարել 13.05.1997 թվականը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի՝ քաղաքացիական օրենսդրության ակտերը և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն ու կիրառվում են ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

Գործող ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականին, հետևաբար դրանով կարող են կարգավորվել միայն այն հարաբերությունները, որոնք ծագել են՝ սկսած 01.01.1999 թվականից:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասը սույն գործով կիրառելի չէ:

Համաձայն նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգի սեփականությունն է համարվում ժառանգության բացման պահից:

Հաշվի առնելով նշված հոդվածը և նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի թիվ 22 բնակարանի նկատմամբ Արսեն Հայրապետյանի սեփականության իրավունքը ծագել է 28.09.1998 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա:

3) Բողոքն երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասի՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իր գույքից անարգել օգտվելու իրավունք ունի: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով:

Սույն գործի փաստերի ուսումնասիրումից պարզ է դառնում, որ Արմեն Հայրապետյանը հանդիսացել է Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի թիվ 22 բնակարանի սեփականատեր: ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 20.10.2005 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ Ռուբեն Հայրապետյանը վիճելի բնակարանին տիրացել է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հակաօրինական արարքով:

Նման պայմաններում խախտվում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության 1-ին հոդվածը, քանի որ նշված հոդվածը սեփականության իրավունքից զրկելու համար պահանջում է բացարձակապես միայն օրենքով նախատեսված որոշակի գործողությունների կատարում և պայմանների պահպանում, որոնց խստագույն իրականացման դեպքում միայն անձը կարող է զրկվել իր գույքից: Քննարկվող գործով անձը զրկվել է իր գույքից առանց որևէ իրավական հիմքի:

4) Բողոքը չորրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի՝ քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճիռը պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց՝ հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը անտեսել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի՝ 20.10.2005 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված այն հանգամանքները, որ Ռ. Հայրապետյանը քննարկվող բնակարանը հափշտակել է, Ա. Ճուղուրյանը աջակցել է Ռ. Հայրապետյանին տեղեկանք կեղծելու հարցում: Այս փաստերն էական նշանակություն ունեն սույն գործի քննության համար և ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի կողմից հաշվի առնվելու դեպքում կհանգեցնեին սույն քաղաքացիական գործի այլ լուծման:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանը վերը նշված կանոնը չի պահպանել մասնավորապես Արմեն Հայրապետյանին 28.09.1998 թվա-

կանին տրված ժառանգության իրավունքի վկայագրի առումով: Այսպես՝ նշված վկայագրով հաստատվում է այն հանգամանքը, որ Երևանի Լեփսիուսի փողոցի 14 շենքի թիվ 22 բնակարանի միակ սեփականատեր է հանդիսանում Արմեն Հայրապետյանը: Հետևաբար այդ վկայագրի առկայության պայմաններում այլ անձը այլևս չէր կարող ժառանգության իրավունքի վկայագիր ստանալ նույն գույքի նկատմամբ:

5) Բողոքը հինգերորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի՝ ժառանգության ընդունման հետ կապված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում:

Սույն գործով հաստատված է այն հանգամանքը, որ Ռուբեն Հայրապետյանը Արսեն Հայրապետյանի մահից հետո՝ ժառանգության բացման պահից սկսած վեց ամսվա ընթացքում՝ չի ընդունել ժառանգությունը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի՝ ժառանգը կարող է առանց դատարան դիմելու ժառանգությունն ընդունել այն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը: Նման համաձայնություն պարունակող փաստաթղթերի վրա ժառանգների դրած ստորագրությունները պետք է վավերացվեն սույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված կարգով:

Ռուբեն Հայրապետյանը կարող էր Արսեն Հայրապետյանի ժառանգությունն ընդունել միայն Արմեն Հայրապետյանի կողմից վկայակոչված համաձայնությունը տալու պարագայում, քանի որ Ռ. Հայրապետյանը բաց է թողել ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործի նյութերում նման համաձայնությունը բացակայում է՝ Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 1-ին մասը չկիրառելու մասին բողոքի հիմքը հիմնավոր է համարում:

Այսպիսով, սույն բողոքի հիմքերի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների համաձայն, ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 17.01.2007 թվականի վճիռը բեկանելու բավարար հիմք են հանդիսանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Արմեն Հայրապետյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 17.01.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Հ. Մանուկյան
Դատավորներ՝ Ա. Մկրտումյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Ս. Գյուրջյան
Է. Հայրիյան
Ս. Սարգսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական քաղաքացիական գործ թիվ 3-1224 (ՎԴ)
վերաքննիչ դատարանի վճիռ 2007 թ.
Քաղաքացիական գործ թիվ 07-1524/2007
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան
դատավորներ՝ Տ. Սահակյան
Ն. Հովսեփյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ. Մանուկյանի
մասնակցությամբ դատավորներ՝ Ա. Մկրտումյանի
Վ. Աբելյանի
Ս. Գյուրջյանի
Է. Հայրիյանի

2007 թվականի սեպտեմբերի 5-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Հարություն, Վարդուհի, Ան-
ժելա Սարգսյանների վճռաբեկ բողոքը՝ ՀՀ քաղաքացիական վերաքննիչ
դատարանի 10.05.2007 թվականի թիվ 07-1524 քաղաքացիական գործով
կայացրած վճռի դեմ՝ ըստ հայցի Կիմա Սարգսյանի ընդդեմ Հարություն
Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի
տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած
համարելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով Շիրակի մարզի առաջին ատյանի դատարան՝ հայցվորը պահանջել է հաստատել ք. Գյումրի, Մերկուրովի փողոցի 9ա տան նկատմամբ փաստացի տիրապետման եղանակով ժառանգությունն ընդունելու փաստը:

Առաջին ատյանի դատարանի 14.02.2007 թվականի վճռով Կիմա Մարգարյանը ճանաչվել է ք. Գյումրի, Մերկուրովի փողոցի 9ա շենքի 2/3 մասի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 10.05.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ Կիմա Հարությունի Մարգարյանը ճանաչվել է 11.05.2005 թ. մահացած Սամվել Մարգարյանի ժառանգությունը՝ (Գյումրի քաղաքի Մերկուրովի փողոցի 9ա շենքի 2/3 մաս) փաստացի տիրապետման հիմքով ընդունած ժառանգ:

Սույն վճռաբեկ բողոքը ներկայացվել է Հարություն, Վարդուհի և Անժելա Մարգարյանների կողմից:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները, ինչի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ հոդվածը, 1225-րդ հոդվածի 3-րդ կետի, 1226-րդ հոդվածի 3-րդ կետի և 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

Բողոք բերած անձն իր պնդումները պատճառաբանել է հետևյալ փաստարկներով:

Դատարանը գործի քննությամբ ձեռք բերված ապացույցները չի գնահատել զործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը առաջին հերթի ժառանգների կողմից փաստացի տիրապետմամբ և կառավարմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ լինելու հանգամանքը հիմնավորող՝ գործով ձեռք բերված ապացույցներին համարժեք գնահա-

տական չի տվել, մասնավորապես՝ Մոսկվա քաղաքի նոտարական գրասենյակում առաջին հերթի ժառանգների կողմից հայտարարություն տալը, թաղման արարողությունը կազմակերպելու, մահից հետո տանը ապրելու, այնուհետև տունը հայցվորին ի պահ հանձնելու հանգամանքները:

Առկա է եղել 1-ին հերթի ժառանգ (Հարություն Սարգսյանը), որը փաստացի կառավարման հիմքով ընդունել է հոր ամբողջ ժառանգությունը, քանի որ առաջին հերթի մյուս ժառանգները Մոսկվա քաղաքի նոտարական գրասենյակում դիմում են ներկայացրել ժառանգությունից հոգուտ Հ. Սարգսյանի հրաժարվելու մասին: Այսպիսի պայմաններում 2-րդ հերթի ժառանգին ժառանգության իրավունք տրամադրելը իրավաչափ չէ:

3) Սույն գործով առկա են նոր երևան եկած հանգամանքներ:

Բողոք բերած անձն իր պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով:

ա) Գյումրի քաղաքի Մերկուրովի փողոցի թիվ 11ա հասցեի բնակիչ Քնարիկ Մինասյանի կողմից տրված հայտարարության համաձայն Սամվել Սարգսյանի որդին՝ Հարություն Սարգսյանը իր հոր առողջական վիճակի վատացման պատճառով 02.05.2005 թվականին Մոսկվայից եկել է Գյումրի և մայիսի 11-ին հոր մահից հետո կատարել է հուղարկավորությունը, որից հետո տանից իր հետ Մոսկվա է տարել հորը պատկանող գորգը և ջահը:

բ) Գյումրի քաղաքի Մերկուրովի 3 հասցեի բնակիչ Նազիկ Տասչյանի բացատրությամբ հիմնավորվում է, որ Հարություն Սարգսյանը հոր հիվանդության ժամանակ հիվանդանոցում խնամել է հորը, մահվանից հետո պատշաճ ձևով կատարել է հուղարկավորությունը, հետո վերցրել է տանից մի քանի կարևոր իրեր, գորգ, ջահ և վերադարձել Մոսկվա: Հարություն Սարգսյանը իր հոր մահից հետո վիճելի հասցեում բնակվելով ևս ընդունել է հոր ժառանգությունը և կատարել է անհրաժեշտ ծախսերը:

Վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 10.05.2007 թվականին թիվ 07-1524 քաղաքացիական գործով կայացված վճիռը և գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստաթղթերը.

Ըստ վճռաբեկ բողոքի պատասխանի՝ Հարություն Սարգսյանը չի կարող համարվել տիրապետող ժառանգ, քանի որ նա մինչև ժառանգատուի մահը և նրա մահից հետո բնակվել է ՌԴ Մոսկվայի մարզի Մերպուխովոյի շրջանի Ռայսեմյոնովսկոյե գյուղի 1-ին տուն, 11-րդ բնակարան հասցեում, իսկ Կիմա Սարգսյանը գրանցված է և մինչ այժմ ապրում է Մերկուրովի 9ա տանը: Սամվել Սարգսյանի որդին և դուստրերը մասնակցել են հուղարկավորությանը և մի քանի օրից հետո վերադարձել են ՌԴ: Հարություն Սարգսյանը իր հետ ոչ մի շարժական գույք չի վերցրել: Կիմա Սարգսյանը Մերկուրովի 9ա տանը կատարել է բնակարանի հետ կապված բոլոր հարկերի և կոմունալ վարձերի վճարումները, ինչպես նաև պաշտպանել է գույքը երրորդ անձանցից:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Գյումրի քաղաքի Մերկուրովի փողոցի 9ա տունը սեփականության իրավունքով պատկանել է Հարություն, Վարդուհի և Անժելա Սարգսյանների հորը՝ Սամվել Սարգսյանին, իսկ 1/3 մասով՝ Կիմա Սարգսյանին:

2) Սամվել Սարգսյանը մահացել է 11.05.2005 թվականին:

3) 13.09.2005 թվականին Հարություն Սարգսյանը Մոսկվայում հայտարարություն է տվել հոր ժառանգությունը ընդունելու մասին: Միաժամանակ Մոսկվայում հայտարարություն են տվել քույրերը, որոնք հրաժարվել են ժառանգության իրենց բաժնից՝ հօգուտ Հարություն Սարգսյանի:

4) Բոլոր փաստաթղթերը ուղարկվել են Գյումրու նոտարական գրասենյակ:

5) Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի 07.04.2006 թվականի վճռով բավարարվել է Հարություն Սարգսյանի դիմումը և վճռվել է Գյումրիի Մերկուրովի փողոցի թիվ 9ա հասցեում գտնվող Սամվել Սարգսյանին պատկանող տան 2/3 բաժնեմասի նկատմամբ ժառանգությունը համարել ընդունած Հարություն Սամվելի Սարգսյանի կողմից:

6) ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 21.06.2006 թվականին Հարություն Սարգսյանի անվամբ կատարվել է նշված բնակարանի 66 տոկոսի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում:

7) Հարություն Սարգսյանը բնակարանը 26.06.2006 թվականին նվիրատվության պայմանագրով տան սեփականության իրավունքում իր բաժինը նվիրել է Գևորգ Թաշչյանին: Այդ պայմանագիրը ստացել է նոտարական վավերացում, սակայն պետական գրանցում չի ստացել:

8) Կիմա Սարգսյանը հանդիսանալով 2-րդ հերթի ժառանգ, վերաքննիչ բողոք է բերել Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի 04.04.2006 թվականի վճռի դեմ:

9) Վերաքննիչ դատարանի 28.11.2006 թվականի որոշմամբ կատարվել է վճռի շրջադարձ, իսկ Հ. Սարգսյանի դիմումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի հիմքով թողնվել է առանց քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց պետք է գնահատի գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությամբ Վճռաբեկ դատարանը պարզեց, որ Վերաքննիչ դատարանը Կիմա Սարգսյանի կողմից վիճելի ժառանգությունը փաստացի տիրապետման և կառավարման հիմքով ընդունելու հանգամանքը ապացուցված է համարել բավարար ապացույցների բացակայությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կիմա Սարգսյանի կողմից վիճելի հասցեում միայն հաշվառված լինելը և մշտապես բնակվելը դեռևս

հիմք չէ ժառանգական գույքը փաստացի կառավարման և տիրապետման հիմքով ընդունած ճանաչելու համար, քանի որ տվյալ դեպքում ժառանգական գույքը ոչ թե ամբողջ տունն է, այլ տան սեփականության իրավունքում 2/3 բաժինը: Հետևաբար, հայցվորը պետք է դատարան ներկայացնէր այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեին հատկապես վերջինիս կողմից Սամվել Սարգսյանի բաժինը փաստացի տիրապետելու և կառավարելու հանգամանքները, ինչը հայցվորի կողմից չի արվել:

Գործում առկա՝

- Գազասպատման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման վերաբերյալ պայմանագիրը «Հայրուսզագարդ» ՓԲԸ-ի հետ 12.02.2006 թվականին կնքվել է Սամվել Սարգսյանի անունից,

- Գազամատակարարման ներտնային համակարգի փականագործի 12.02.2006 թվականի այցի կտրոնով հիմնավորվում է ընդամենը այն փաստը, որ տանը տեղադրված է մեկ գազօջախ, սակայն գործում առկա ապացույցներով չի հիմնավորվել վիճելի տան՝ Սամվել Սարգսյանի բաժինը գազաֆիկացնելու և գազասպատման սարք տեղադրելու հանգամանքը:

- Կիմա Սարգսյանի հետ կնքված՝ «ԱրմենՏել» ՀՀ ՓԲԸ-ի կողմից բաժանորդին մատուցվող հեռախոսակապի ծառայությունների թիվ 410021103 պայմանագիրը կնքվել է 27.04.2006 թվականին,

- Վիճելի հասցեի հեռախոսի, էլեկտրաէներգիայի և գազի վարձավճարների մուծման անդորրագրերում որպես վճարող նշված է Սամվել Սարգսյանը, իսկ վերջինիս մահից հետո վճարումները Սամվել Սարգսյանի անունով Կիմա Սարգսյանի կողմից կատարված լինելու փաստը որևէ այլ ապացույցով չի հիմնավորվել:

Այսպիսով՝ հայցվորն իր կողմից ժառանգական գույքի կառավարմանն ուղղված գործողություններն սկսել է իրականացնել ժառանգության բացումից ավելի քան 11 ամիս անց՝ 27.04.2006 թվականին «ԱրմենՏել» ՀՀ ՓԲԸ-ի հետ կնքելով բաժանորդին մատուցվող հեռախոսակապի ծառայությունների թիվ 410021103 պայմանագիրը կնքելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո: Նույն օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը (անկախ դրա ընդունման եղանակներից) կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգատուի գույքը ժառանգության բացումից հետո

ավելի քան տասնմեկ ամիս անց սկսված փաստացի տիրապետելու և կառավարելու գործողությունները հիմք չեն կարող հանդիսանալ ժառանգին ժառանգությունը փաստացի տիրապետման և կառավարման հիմքով ընդունած ժառանգ ճանաչելու համար:

Բացի այդ, սույն գործի փաստերի համաձայն՝ 13.09.2005 թվականին Հարություն Սարգսյանը Մոսկվա քաղաքի նոտարական գրասենյակում հայտարարություն է տվել հոր ժառանգությունն ընդունելու մասին: Միաժամանակ Մոսկվայի մարզի Օդինցովո քաղաքի նոտարական գրասենյակում հայտարարություն են տվել Սամվել Սարգսյանի մյուս ժառանգները՝ Վարդուհի Սարգսյանը և Անժելա Սարգսյանը, որոնք հրաժարվել են ժառանգության իրենց բաժնից՝ հօգուտ Հարություն Սարգսյանի: Այնուհետև բոլոր փաստաթղթերը ուղարկվել են Գյումրու նոտարական գրասենյակ: Գալով Գյումրի, Հարություն Սարգսյանը իրականացրել է ժառանգության ձևակերպմանն ուղղված գործողություններ. դիմել է Գյումրու տարածքային նոտարին՝ ժառանգության վկայագիր տալու խնդրանքով, ապա դիմել է Շիրակի մարզի առաջին ատյանի դատարան՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջով, այնուհետև ստանալով ժառանգության իրավունքի վկայագիր՝ դրանից բխող իր իրավունքները գրանցել է կադաստրի մարմնում, ապա 26.06.2006 թվականին նվիրատվության պայմանագրով վիճելի տան 2/3 բաժինը օտարել է Գևորգ Տաշյանին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով: Տվյալ դեպքում Մոսկվա քաղաքի նոտարական գրասենյակին ժառանգությունն ընդունելու վերաբերյալ Հարություն Սարգսյանի դիմումի հանձնելն ինքնին հիմք չէ վերջինիս այդ եղանակով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար, քանի որ ՀՀ Գյումրի քաղաքում բացված ժառանգությունն ընդունելու վերաբերյալ դիմումը պետք է ներկայացվեր Գյումրու տարածքի նոտարին: Այս առումով Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի փաստարկները:

Ինչ վերաբերում է բողոքի այն փաստարկին, թե գործում առկա բազմաթիվ ապացույցներով հաստատվում է այն փաստը, որ Սամվել Սարգսյանի անձնական գույք հանդիսացող մեծ գորգին և ջահին տիրապետելով առաջին հերթի ժառանգներն ընդունել են ժառանգության իրենց բաժինը, ապա Վճռաբեկ դատարանն այն անհիմն է համարում այն

պատճառաբանությամբ, որ այդ հանգամանքը հաստատող որևէ ապացույց դատաքննության ընթացքում չի ներկայացվել և դատարանի կողմից չի հետազոտվել:

Սակայն Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել այն հանգամանքը, որ Սամվել Մարգսյանի առաջին հերթի ժառանգներ Անժելա և Վարդուհի Մարգսյանները դիմել են համապատասխանաբար Մոսկվա քաղաքի և Օդինսցովո քաղաքի նոտարական գրասենյակներ և հրաժարվել են հոր ժառանգության իրենց բաժնից՝ հոգուտ Հարություն Մարգսյանի: Վերջինս Մոսկվա քաղաքի նոտարական գրասենյակում ժառանգության բացումից հետո վեցամսյա ժամկետում հայտարարություն է տվել Սամվել Մարգսյանի ժառանգությունն ընդունելու վերաբերյալ, այսինքն՝ կատարել է ժառանգատուի գույքի փաստացի տիրապետմանը և կառավարմանն ուղղված կոնկլյուզենտ գործողություններ՝ կոնկրետ նպատակ ունենալով իր տիրապետման տակ վերցնել ժառանգական գույքը:

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով ժառանգի կողմից ժառանգությունն ընդունած կամ չընդունած լինելու փաստի գնահատման հարցում էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք առկա է ժառանգի կամքը և ցանկությունը՝ ընդունելու ժառանգությունը, թե ոչ, և արդյոք ժառանգությունն ընդունելու համար ժառանգը միջոցներ (ակտիվ գործողություններ) է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ

երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար:

Սույն գործի փաստերից ելնելով, Սամվել Սարգսյանի առաջին հերթի ժառանգ Հարություն Սարգսյանը վերը նշված ակտիվ գործողությունները կատարել է գույքը երրորդ անձանց ոսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու և դրա նկատմամբ իր տիրապետությունը հաստատելու նպատակով:

Վերը նշված պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը սույն բողոքի առաջին հիմքում նշված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ հոդվածի, 1225-1226-րդ հոդվածների կիրառելիության վերաբերյալ փաստարկները հիմնավոր է համարում:

Նշված հոդվածների խախտումը հանգեցրել է քաղաքացիական գործի սխալ լուծման, ինչը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի բեկանման բավարար հիմք է:

2) Բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմք են գործի համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք կամ հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ, չնայած հայտնի են եղել, սակայն նրանցից անկախ պատճառներով չէին կարող ներկայացվել դատարան:

Նշված կետերի բովանդակությունից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքներ կարող են ներկայացնել միայն գործին մասնակից դարձած անձինք, այդ հանգամանքները պետք է անհայտ եղած լինեն գործին մասնակցող անձանց, կամ հայտնի լինեն, սակայն դրանց ներկայացումը դատարան անհնար լինի և տվյալ հանգամանքները գործի համար պետք է ունենան էական նշանակություն:

Ինչ վերաբերում է դատավարությանը մասնակցող անձի կողմից այդ փաստի վկայակոչմանը որպես նոր երևան եկած հանգամանք, ապա այն նրանց համար նույնպես չի կարող համարվել նոր երևան եկած հանգամանք, քանի որ սույն գործի քննությունը ՀՀ տնտեսական դատարանի կողմից ավարտվել է վճռի կայացմամբ 10.05.2007 թվականին:

Որպես նոր երևան եկած հանգամանք՝ ներկայացված իրադարձությունը տեղի է ունեցել մինչև սույն գործով վճռի կայացումը՝ 2005 թվականի մայիսին, այսինքն հայտնի է եղել գործին մասնակցող անձանց: Մինչդեռ հանգամանքը կարող է ճանաչվել նոր երևան եկած, եթե այն գործի ըստ էության քննության ժամանակ գոյություն է ունեցել, սակայն դատավարությանը մասնակցող անձի համար օբյեկտիվ պատճառներով անհնարին է եղել դրա ներկայացումը դատարան:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սամվել Սարգսյանի սեփականությունը հանդիսացող գորգը և ջահը Հարություն Սարգսյանի կողմից տիրապետելու հանգամանքը սույն գործի համար էական նշանակություն ունեցող նոր երևան եկած հանգամանք չի կարող ճանաչվել, քանի որ այն չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը սույն բողոքի առաջին հիմքը հիմնավոր համարելով՝ դրա առկայությունը բավարար է դիտում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների ուժով ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 10.05.2007 թվականի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 10.05.2007 թվականի թիվ 07-1524 քաղաքացիական գործով կայացված վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Հ. Մանուկյան
Դատավորներ՝ Ա. Մկրտումյան

Վ. Աբելյան
Ս. Գյուրջյան
Է. Հայրիյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵՎ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական ֆաղաքացիական գործ թիվ 3-1345 (ՎԴ)
վերաքննիչ դատարանի վճիռ 2007 թ.
Քաղաքացիական գործ թիվ 07-1914
Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան
դատավորներ՝ Վ. Ավանեսյան
Գ. Մատինյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ. Մանուկյանի
մասնակցությամբ դատավորներ՝ Ա. Մկրտումյանի
Վ. Աբելյանի
Է. Հայրիյանի
Ս. Գյուրջյանի

2007 թվականի հոկտեմբերի 10-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վճռաբեկ դատարանում
հավատարմագրված փաստաբանի միջոցով Ջոյա Գրիգորյանի կողմից
ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատա-
րանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.06.2007 թվականի վճռի
դեմ՝ ըստ Սամսոն Շահվերդյանի հայցի ընդդեմ Ջոյա Գրիգորյանի, Մար-
գարիտա և Սոննա Շահվերդյանների՝ ժառանգության և սեփականու-
թյան իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու,
ժառանգ ճանաչելու և բնակարանից վտարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի կողմից 13.01.2006 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության վկայագիրը, դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման վկայագիրը, հարգելի համարել ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը, իրեն համարել ժառանգությունն ընդունած ժառանգ և պատասխանողներին վտարել Երևանի Ծովակալ Իսակովի փողոցի 52/1 շենքի թիվ 28 բնակարանից:

ՀՀ Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 02.04.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 18.06.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն:

Սույն վճռաբեկ բողոքը ներկայացրել է Ջոյա Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Սամսոն Շահվերդյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասը և 1228-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Սամսոն Շահվերդյանի նկատմամբ քրեական գործ հարուցված լինելու հանգամանքը վերջինիս կողմից ժառանգությունը չընդունելու համար հարգելի պատճառ չի կարող հանդիսանալ, քանի որ նշվածը Սամսոն Շահվերդյանի կամքից անկախ հանգամանք չի եղել, որովհետև և՛ իսկական զինվորական ծառայությունից խուսափելը, և՛ քրեական գործի կարճումը, հայցվորի կամքից կախված սուբյեկտիվ հանգամանքներ են, քանի որ վերջինիս կողմից զինվորական ծառայության ներկայանալու դեպքում հետախուզում չէր հայտարարվի, իսկ ներկայանալու և սահմանված կարգով գումարը վճարելու դեպքում քրեական գործով վարույթը կարող էր կարճվել: Բացի այդ, քրեական գործի հարուցված

լինելու հանգամանքը խոչընդոտ չէր Սամսոն Շահվերդյանի՝ ներկայացուցչի միջոցով դատարան դիմելու կամ ժառանգությունն ընդունելու հարցում:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի, 53-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև 218-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվորեն չի գնահատել գործում առկա ապացույցներն այն մասին, որ Սամսոն Շահվերդյանը դեռևս 2004 թվականի ամռանը տեղյակ է եղել կտակի առկայության մասին:

Միաժամանակ, հիմք ընդունելով հայցվորի ներկայացուցչի հայտարարությունն այն մասին, որ Սամսոն Շահվերդյանը կտակի մասին իմացել է 2006 թվականի ապրիլին, վերաքննիչ դատարանը, ըստ էության, խախտել է ապացույցների թույլատրելիության պահանջը:

Բացի այդ, վճռի պատճառաբանական մասում վերաքննիչ դատարանը չի անդրադարձել Ձոյա Գրիգորյանի և վերջինիս ներկայացուցչի կողմից սույն գործի դատաքննության ժամանակ տրված բացատրությանն այն մասին, որ Սամսոն Շահվերդյանը կտակի մասին իմացել է դեռևս 2004 թվականի ամռանը, ինչպես նաև չի նշել այն փաստարկները, որոնցով մերժել է տվյալ ապացույցը:

3) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված՝ դատաքննությանը մասնակից դարձվելու անձի իրավունքը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանը, անվավեր ճանաչելով սեփականության իրավունքի գրանցման վկայականը, ըստ էության վճիռ է կայացրել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) իրավունքների և պարտականությունների վերաբերյալ՝ առանց վերջինիս գործի քննությանը մասնակից դարձնելու:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջը դատական քննության ենթակա չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 18.06.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները.

Անհիմն է վճռաբեկ բողոքի փաստարկն այն մասին, որ Սամսոն Շահվերդյանն իմացել է կտակի մասին և բաց է թողել նոտարական մարմիններին դիմելու՝ օրենքով սահմանված ժամկետը: Այն հանգամանքը, որ Սամսոն Շահվերդյանը չի իմացել կտակի մասին, հիմնավորվել է դատաքննության ընթացքում: Կտակի մասին չեն իմացել նաև պատասխանողները, քանի որ վերջիններս դիմել են նոտարական գրասենյակ և ստացել են ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայական, ինչը հակառակ դեպքում չէին անի, այլապես կստացվեր, որ նրանք Սամսոն Շահվերդյանին ժառանգությունից զրկելու դիտավորություն են ունեցել:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունից բացակայելու ժամանակ Սամսոն Շահվերդյանի նկատմամբ հարուցված էր քրեական գործ, ինչը վերջինիս զրկել է հյուպատոսական մարմիններին ներկայանալու հնարավորությունից:

Անհիմն է նաև վճռաբեկ բողոքի այն պնդումը, որ Սերգեյ Շահվերդյանի մահից հետո Սամսոն Շահվերդյանը, լինելով ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգ, չի դիմել ժառանգությունն ընդունելու համար, քանի որ կտակի առկայության պայմաններում ըստ օրենքի ժառանգության մասին խոսք չի կարող լինել: Սույն գործով ժառանգատուն կտակով որոշել է իր ունեցվածքի ճակատագիրը՝ այն կտակելով Սամսոն Շահվերդյանին:

Հետևաբար, սույն վեճի նկատմամբ կիրառելի չեն վճռաբեկ բողոքում հիշատակված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 3-2305 (ՎԴ) քաղաքացիական գործով կայացված որոշմամբ արված դատողությունները, քանի որ տվյալ որոշման մեջ խոսքը գնում է ըստ օրենքի ժառանգության իրավունքին, իսկ սույն գործով առկա է ըստ կտակի ժառանգություն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 10.07.2004 թվականին կազմված կտակի համաձայն՝ Սերգեյ Շահվերդյանը մահվան պահին իրեն պատկանող ողջ գույքը կտակել է որդուն՝ Սամսոն Շահվերդյանին:

2) Սերգեյ Շահվերդյանը մահացել է 07.03.2005 թվականին:

3) 13.01.2006 թվականին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տրվել Ջոյա Գրիգորյանին, Սոննա և Մարգարիտա Շահվերդյաններին, որից ծագող վերջիններիս իրավունքները պետական գրանցում են ստացել:

4) Սամսոն Շահվերդյանը իսկական զինվորական ծառայությունից խուսափելու պատճառով գտնվել է հետախուզման մեջ և Սերգեյ Շահվերդյանի մահից հետո մինչև 2006 թվականի սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում բացակայել է Հայաստանի Հանրապետությունից:

5) Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների դատախազության 2006 թվականի սեպտեմբերի 12-ի որոշման համաձայն՝ Սամսոն Շահվերդյանի կողմից ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափելու փաստի առթիվ հարուցված թիվ 14203300 քրեական գործի վարույթը կարճվել է:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո, 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում, իսկ նույն օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա

դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր, և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան:

Այսինքն, ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետի բաց թողնելու պատճառը պետք է հիմնավոր լինի: Այն կարող է դատարանի կողմից հարգելի ճանաչվել, եթե ժառանգության բացման, կտակի առկայության մասին ժառանգը տեղյակ չի եղել, կամ ժառանգության ընդունման համար օրենքով սահմանված ժամկետը բաց է թողել այլ հարգելի պատճառներով (ժառանգի անչափահաս լինելը, ժառանգի ծանր հիվանդությունը, նրա անօգնական վիճակում գտնվելը, անգրագիտությունը, իրավաբանական գործողություններ կատարելու հնարավորությունը բացառող կամ սահմանափակող պայմաններում երկարատև գործուղման մեջ գտնվելը և այլն):

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի է համարել՝ պատճառաբանելով, որ Սամսոն Շահվերդյանի նկատմամբ հարուցված է եղել քրեական գործ, որը գտնվել է քննության փուլում, ինքը գտնվել է հետախուզման մեջ, իսկ քրեական գործի վարույթի կարճումից հետո անմիջապես վերջինս եկել է Հայաստանի Հանրապետություն և վեցամսյա ժամկետում դիմել է դատարան՝ ժամկետի բացթողման պատճառը հարգելի ճանաչելու պահանջով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական հետախուզման մեջ գտնվելը չի կարող դիտվել որպես ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողման հարգելի պատճառ:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկն այն պատճառաբանությամբ, որ վճռաբեկ

բողոքում կոնկրետ չի նշվել, թե վերաքննիչ դատարանն ո՞ր ապացույցը չի հետազոտել բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ և որ ենթադրյալ խախտումն արդյո՞ք հանգեցրել է գործի սխալ լուծման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Բողոք բերած անձի պատճառաբանությունը վերոհիշյալ հոդվածի խախտման կապակցությամբ անհիմն է, քանի որ բացակայում է սույն իրավահարաբերության նկատմամբ կիրառելի որևէ օրենք կամ այլ իրավական ակտ, որով սահմանված է ժառանգի կողմից կտակի առկայության մասին իմանալու հանգամանքը միայն որոշակի ապացույցներով ապացուցման ենթակա լինելու պահանջը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Հակառակ դեպքում դատարանի վճիռը չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաև հեղինակավոր:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում արդեն իսկ անդրադարձել և գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանի վճիռը հիմնավորված չէ (իրավական հիմնավորումները տե՛ս ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ընդդեմ «Քնար-88» ՍՊԸ, 21.12.2006

թվական, քաղաքացիական գործ թիվ 3-2504 (ՏԴ) (գումար բռնագանձելու պահանջի մասին):

3) Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկը, քանի որ դատաքննությանը մասնակից չդարձվելու հիմքով բողոք կարող է ներկայացնել միայն այն անձը, որի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վճիռ է կայացվել: Մինչդեռ, կադաստրի ենթադրյալ խախտման հիմքով բողոքը ներկայացրել է սույն գործով պատասխանողը:

Վերը նշված հիմնավորումներով Վճռաբեկ դատարանը սույն վճռաբեկ բողոքի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի և 1228-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները սխալ մեկնաբանելու վերաբերյալ հիմքերը հիմնավոր համարելով՝ դրանց առկայությունը բավարար է գտնում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի ուժով ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 18.06.2007 թվականի վճիռը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման առաջին հիմքի պատճառաբանությունները,

ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի վարույթը՝ Ջոյա Գրիգորյանի, Մարգարիտա և Մոննա Շահվերդյանների անվամբ տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մասով ենթակա է կարճման այն պատճառաբանությամբ, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջը դատական քննության ենթակա չէ, քանի որ վարչական ակտ է հանդիսանում Կադաստրի պետական գրանցամատյանի գրառումը, իսկ վկայականն անվավեր ճանաչելու դեպքում միևնույնն է՝ իրավունքի գրանցումը պահպանվում է:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է սույն հիմքով առաջադրված այն իրավական հարցին, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջը դատական քննության ենթակա չէ և սույն գործով նպատակահարմար չի գտնում կրկին անդրադառնալ դրան (իրավական հիմնավորումները տե՛ս օրինակ՝ Սիսիանի քաղաքապետարան ընդդեմ Շահեն Սարգսյան, երրորդ անձինք ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Սիսիանի ստորաբաժանում, Կորյուն Օհանյան, 26.10.2006 թվական, քաղաքացիական գործ թիվ 3-1920/ՎԴ (2002 թվականի օգոստոսի 26-ին կնքված պայմանագիրը լուծելու, Շահեն Սարգսյանի և Կորյուն Օհանյանի միջև 11.09.2002 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, ինչպես նաև Կորյուն Օհանյանին տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջներով):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 18.06.2007 թվականի վճիռը՝ հայցը բավարարելու մասով բեկանել և այն փոփոխել: ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի կողմից 13.01.2006 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության վկայագիրն անվավեր ճանաչելու, ժառանգու-

թյունն ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու, Սամսոն Շահվերդյանին ժառանգությունն ընդունած ժառանգ համարելու և պատասխանողներին Երևանի Ծովակալ Իսակովի փողոցի 52/1 շենքի թիվ 28 բնակարանից վտարելու պահանջների մասով, հայցը մերժել:

2. Մեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճել:

3. Վճիռը՝ հայցը մերժելու մասով թողնել օրինական ուժի մեջ:

4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Հ. Մանուկյան
Դատավորներ՝ Ա. Մկրտումյան

Վ. Աբելյան
Է. Հայրիյան
Ս. Գյուրջյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական գործերով Քաղաքացիական գործ թիվ 3-1621 (ՎԴ)
վերաքննիչ դատարան 2007 թ.
Քաղաքացիական գործ թիվ 07-1574
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
դատավոր՝ Դ. Խաչատրյան
Վ. Ավանեսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ա. Մկրտումյանի
մասնակցությամբ դատավորներ՝ Ս. Անտոնյանի
Ս. Գյուրջյանի
Է. Հայրիյանի
Ս. Մարգարյանի

2007 թվականի նոյեմբերի 9-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Արմինե Հակոբյանի և Սամվել Հակոբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 14.05.2007 թվականի վճռի դեմ, ըստ հայցի՝ Արմինե Հակոբյանի և Սամվել Հակոբյանի ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի, Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով Դատարան՝ հայցվորները պահանջել են ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգներ՝ Երևանի Ա. Վշտունու 65 տան և հողամասի նկատմամբ, տունը և հողամասը բաժանել իրենց և պատասխանողների միջև՝ հավասար բաժիններով, ինչպես նաև մասնակի անվավեր ճանաչել ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը:

Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 19.02.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.05.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Արմինե և Սամվել Հակոբյանները:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ, 305-րդ, 1215-րդ, 1216-րդ, 1225-րդ, 1226-րդ, 1234-րդ, 1237-րդ և 1246-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ և 1228-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերող անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Հայցվորներ Արմինե և Սամվել Հակոբյանները վիճելի անշարժ գույքի նախկին համասեփականատերեր Աղաբեկ Հակոբյանի և Մալաքսիմ Կարապետյանի ժառանգության 1/2-րդ մասն ընդունած ժառանգ Արմեն Հակոբյանի երեխաներն են, հետևաբար, առաջին հերթի ժառանգներ են:

Այսինքն, Դատարանը հաշվի չի առել հայցվորների հոր՝ Արմեն Հակոբյանի կողմից Աղաբեկ Հակոբյանի և Մալաքսիմ Կարապետյանի ժառանգությունը փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ընդունած լինելու և Արմեն Հակոբյանի ժառանգության բացման պահին՝

27.04.2006 թվականին վիճելի անշարժ գույքի 1/2-րդ մասը վերջինիս պատկանած լինելու հանգամանքները:

Նույն եղանակով ժառանգությունը ընդունել են նաև Արմինե և Սամվել Հակոբյանները: Մասնավորապես, նրանք Արմեն Հակոբյանի ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում դիմել են նոտարին, այնուհետև, իրենց ժառանգական իրավունքները հաստատելու պահանջով 28.09.2006 թվականին դիմել են դատարան և գործի դատաքննության ժամանակ վիճարկվող ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի գոյության մասին տեղեկանալով, 01.08.2006 թվականին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու պահանջով դիմել են դատարան: Վերոնշյալ գործողություններով հաստատվում է, որ Արմինե և Սամվել Հակոբյանները միջոցներ են ձեռնարկել ժառանգական գույքը պահպանելու և այն երրորդ անձանց՝ Մարգարիտ և Քնարիկ Հակոբյանների ոսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար:

Վիճարկվող ժառանգության իրավունքի վկայագրերը պատասխանողներին տրվել են Արմեն Հակոբյանի ժառանգության բացման օրվանից՝ 27.04.2006 թվականից հետո օրենքով սահմանված վեց ամիսը դեռևս չլրացած՝ չունենալով ստույգ տվյալներ վկայագիր ստանալու համար դիմած անձանցից բացի ժառանգության նկատմամբ այլ ժառանգներ չլինելու վերաբերյալ:

Բացի այդ, ժառանգը կարող է առանց դատարան դիմելու ժառանգությունն ընդունել այն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը: Հետևաբար, Մարգարիտ և Քնարիկ Հակոբյանների կողմից ժառանգության ընդունման համար անհրաժեշտ էր մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը, որը բացակայում է:

2) Գործով առկա է նոր երևան եկած հանգամանք

Արմինե Մխիթարյանի 06.06.2006 թվականի, և Հայկուհի Եղիազարյանի 18.07.2006 թվականի ստացականների համաձայն՝ Արմեն Հակոբյանի ժառանգներ Արմինե և Սամվել Հակոբյանները վճարել են իրենց հոր՝ Արմեն Հակոբյանի ունեցած պարտքերը: Վերոնշյալ հանգամանքը Արմինե և Սամվել Հակոբյաններին հայտնի է եղել, բայց նրանցից անկախ պատճառներով չի ներկայացվել դատարան և, հետևաբար, որպես նոր երևան եկած հանգամանք բողոքարկվող վճռի վերանայման հիմք է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ վերաքննիչ դատարանի՝ 14.05.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան այլ կազմով նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Գործում առկա անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանման 07.09.2006 թվականի տեղեկանքի համաձայն՝ Երևանի Ա. Վշտունու թիվ 65 հասցեում գտնվող անշարժ գույքը (բնակելի տուն և տնամերձ հողամաս) սեփականության իրավունքով պատկանում է Աղաբեկ Հակոբյանին:

2) Մալաքսիմ Սողոմոնի Կարապետյանը և Աղաբեկ Ստեփանի Հակոբյանը եղել են ամուսիններ, որոնց ամուսնությունը գրանցված է եղել ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում:

Վերջիններս եղել են պատասխանողներ Անահիտ, Մարգարիտ և Քնարիկ Հակոբյանների և հայցվորների հոր՝ Արմեն Հակոբյանի ծնողները:

3) Թիվ 056318 մահվան վկայականի համաձայն՝ Աղաբեկ Հակոբյանը մահացել է 13.03.1997 թվականին, իսկ թիվ 163905 մահվան վկայականի համաձայն՝ Մալաքսիմ Կարապետյանը մահացել է 08.06.2001 թվականին:

4) Երևանի Աջափնյակ համայնքի թաղապետարանի 30.08.2006 թվականի տեղեկանքի համաձայն՝ Արմեն Հակոբյանը մինչև մահը՝ 27.04.2006 թվականը բնակվել է Երևանի Ա. Վշտունու թիվ 65 տանը:

5) Երևանի Աջափնյակ համայնքի թաղապետարանի 29.08.2006 թվականի տեղեկանքի համաձայն Անահիտ Հակոբյանը բնակվում է Ա. Վշտունու թիվ 65 տանը:

6) 08.31.2006 թվականին տրված թիվ 066145 մահվան վկայականի համաձայն՝ Արմեն Հակոբյանը մահացել է 27.04.2006 թվականին:

7) 01.08.2006 թվականին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերում որպես ժառանգատուների ժառանգներ նոտարի կողմից

նշվել են Անահիտ Հակոբյանը, ինչպես նաև վերջինիս համաձայնությամբ՝ Մարգարիտ և Քնարիկ Հակոբյանները:

8) Արմինե և Մամվել Հակոբյանները Արմեն Հակոբյանի ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ 28.09.2006 թվականին դիմել են դատարան՝ իրենց ժառանգական իրավունքները հաստատելու պահանջով և գործի դատաքննության ժամանակ, տեղեկանալով 01.08.2006 թվականի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի գոյության և դրանցով իսկ ժառանգական գույքի նկատմամբ Մարգարիտ և Քնարիկ Հակոբյանների հավակնությունների մասին, դիմել են դատարան՝ 01.08.2006 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու պահանջով:

9) Արմինե Մխիթարյանի 06.06.2006 թվականի, և Հայկունի Եղիագարյանի 18.07.2006 թվականի ստացականների համաձայն՝ Արմեն Հակոբյանի ժառանգներ Արմինե և Մամվել Հակոբյանները վճարել են իրենց հոր՝ Արմեն Հակոբյանի ունեցած պարտքերը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով: Եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը:

Նույն օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգու-

թյունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման:

Սույն քաղաքացիական գործում առկա Երևանի Աջափնյակ համայնքի թաղապետարանի 30.08.2006 թվականի տեղեկանքի համաձայն՝ Արմեն Հակոբյանը մինչև մահը՝ 27.04.2006 թվականը, բնակվել է Երևանի Ա. Վշտունու թիվ 65 տանը: Այսինքն, վեճի առարկա գույքը փաստացի տիրապետման ուժով ընդունել է ժառանգությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

Հիմք ընդունելով վերոնշյալը Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ վեճի առարկա գույքը Արմեն Հակոբյանի մահից հետո ներառված է եղել նրա ժառանգության զանգվածի կազմում:

Հետևաբար, անհիմն է հայցի մերժման հիմքում դրված Վերաքննիչ դատարանի վճռի պատճառաբանությունն այն մասին, որ Արմեն Հակոբյանը Աղաբեկ Հակոբյանի և Մալաքսիմ Կարապետյանի մահից հետո բնակվելով վեճի առարկա տանը նոտարական գրասենյակ չի դիմել և օրենքով սահմանված կարգով ժառանգությունը չի ձևակերպել, հետևաբար, վեճի առարկա գույքը նրան չի պատկանել:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ և 1246-րդ հոդվածների չկիրառմանը, ինչպես նաև հայցվորների կողմից Արմեն Հակոբյանի ժառանգությունն ընդունած լինելուն, ապա Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում այդ փաստարկների գնահատմանը, քանի որ դրանք Վերաքննիչ դատարանում քննության առարկա չեն դարձել (իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածը չի կիրառվել) վեճի առարկա գույքը ժառանգության զանգվածի կազմում ներառված չլինելու պատճառաբանությամբ:

2) բողոքի երկրորդ հիմքը Վճռաբեկ դատարանը գնահատման առարկա չի դարձնում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտի վերանայման համար հիմք են գործի համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան:

Մինչդեռ, բողոք բերած անձը, Արմեն Հակոբյանի պարտքերը Արմինե և Սամվել Հակոբյանների կողմից վճարված լինելու հանգամանքը ներկայացնելով որպես նոր երևան եկած հանգամանք, չի հիմնավորել դրանք դատարան ներկայացնելու իրական արգելքի առկայությունը:

Այսպիսով, բողոքի առաջին հիմքի հիմնավոր լինելը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ վճարել բողոքը բավարարելու և Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները թույլ են տալիս սույն գործով կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը, քանի որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 14.05.2007 թվականի վճիռը և փոփոխել այն:

2. Արմինե և Սամվել Հակոբյանների հայցը բավարարել՝ մասնակի անվավեր ճանաչել ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը՝ Մարգարիտ և Քնարիկ Հակոբյանների մատով: Արմինե և Սամվել Հակոբյաններին ճանաչել Արմեն Հակոբյանի ժառանգությունն ընդունած

Ժառանգներ և ճանաչել նրանց սեփականության իրավունքը Երևանի Ա. Վշտունու 65 տան և հողամասի 1/2 մասի նկատմամբ:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ա. Մկրտումյան
Դատավորներ՝ Ս. Անտոնյան

Ս. Գյուրջյան
Է. Հայրիյան
Ս. Սարգսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ Քաղաքացիական գործ թիվ 3-1416 (ՎԴ)
 դատարանի վճիռ 2007 թ.
 քաղաքացիական գործ թիվ 07-1975, 07-2007/2007 թ.
 Նախագահող դատավոր՝ Վ. Ավանեսյան
 Դատավորներ՝ Գ. Մատինյան
 Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
 Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ. Մանուկյանի
 մասնակցությամբ դատավորներ՝ Ս. Սարգսյանի
 Վ. Աբելյանի
 Ս. Անտոնյանի
 Ս. Գյուրջյանի

2007 թվականի նոյեմբերի 9-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռիչարդ Հակոբյանի օրինա-
 կան ներկայացուցիչ Աննա Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղա-
 քացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)
 25.06.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Ռիչարդ Հակոբյանի օրինա-
 կան ներկայացուցիչ Աննա Բաղդասարյանի ընդդեմ Լուան Ավետիս-
 յանի, Արթուր Հակոբյանի և երրորդ անձ Արաբկիրի տարածքային նոտա-
 րական գրասենյակի՝ ժառանգական գույքում 1/2-րդ բաժնի նկատմամբ
 սեփականության իրավունքը ճանաչելու և կտակն անվավեր ճանաչելու
 պահանջների մասին և ըստ հայցի Տիգրան Հակոբյանի ընդդեմ Լուան
 Ավետիսյանի, Արթուր Հակոբյանի, Ռիչարդ Հակոբյանի (օրինական
 ներկայացուցիչ Աննա Բաղդասարյանի)՝ ժառանգությունն ընդունելու
 համար նախատեսված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի
 ճանաչելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և ժառան-

գական գույքի մասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ռիչարդ Հակոբյանի օրինական ներկայացուցիչը պահանջել է Լևոն Հակոբյանի ժառանգական գույքի 1/2-րդ բաժնի նկատմամբ ճանաչել Ռիչարդ Հակոբյանի սեփականության իրավունքը և անվավեր ճանաչել Լևոն Հակոբյանի 19.01.2004 թվականի կտակը:

Դիմելով դատարան՝ Տիգրան Հակոբյանը պահանջել է հարգելի համարել ժառանգությունն ընդունելու համար նախատեսված ժամկետի բացթողման պատճառները, որպես պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգի ժառանգությունն ընդունած ճանաչել և ճանաչել իր սեփականության իրավունքը Լևոն Հակոբյանի ժառանգական գույքի՝ օրենքով իրեն հասանելիք բաժնի նկատմամբ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 03.08.2006 թվականի վճռով Ռիչարդ Հակոբյանի օրինական ներկայացուցչի հայցը՝ ժառանգական գույքում 1/2-րդ բաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին բավարարվել է մասնակի, Տիգրան Հակոբյանի հայցը՝ մերժվել:

Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 30.03.2007 թվականի վճռով Ռիչարդ Հակոբյանի օրինական ներկայացուցչի հայցը՝ կտակն անվավեր ճանաչելու պահանջի մասին բավարարվել է:

Վերաքննիչ դատարանի 07.06.2007 թվականի որոշմամբ նշված երկու քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

Վերաքննիչ դատարանի 25.06.2007 թվականի վճռով Ռիչարդ Հակոբյանի օրինական ներկայացուցչի հայցը բավարարվել է մասնակի՝ ճանաչվել է Ռիչարդ Հակոբյանի սեփականության իրավունքը ժառանգական գույքի 1/8-րդ բաժնի նկատմամբ, իսկ կտակն անվավեր ճանաչելու պահանջը մերժվել է: Տիգրան Հակոբյանի հայցը բավարարվել է՝ ճանաչվել է նրա սեփականության իրավունքը ժառանգական գույքի 1/8-րդ բաժնի նկատմամբ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռիչարդ Հակոբյանի օրինական ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածը, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 1211-րդ հոդվածի 3-րդ մասը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 6-րդ և 1230-րդ հոդվածի 3-րդ մասերը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1211-րդ հոդվածի 4-րդ մասը, 1211-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, չնայած հաստատված է համարել այն հանգամանքը, որ կտակում փոփոխությունները կատարվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածի, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, այնուամենայնիվ, հայցը մերժելով, դա կտակն անվավեր ճանաչելու հիմք չի համարել՝ նշելով, որ կտակը կազմված է օրենքին համապատասխան՝ դրանով իսկ հնարավոր համարելով կտակի փոփոխումը նոտարի կողմից՝ նախկին կտակի վրա նշում կատարելու և նշման տակ ստորագրելու միջոցով:

Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքը, որ կտակում կատարված ուղղումը (ինչը, ըստ ՀՀ օրենսդրության, կոչվում է «կտակը փոփոխել») կատարվել է օրենքների պահանջների խախտումներով, չի կիրառել կտակի ձևը չպահպանելու հետևանքով այն անվավեր ճանաչելու մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1211-րդ հոդվածի 3-րդ մասի նորմը, ինչպես նաև գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելու հետևանքով դրա անվավերության ընդհանուր կանոններ սահմանող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Վիճարկվող կտակում թույլ է տրվել ոչ թե վրիպակ կամ այն կազմելու, ստորագրելու կամ վավերացնելու կարգի այլ աննշան խախտում, այլ կտակարարը (ըստ նոտարի) իր կամքով Լուան Ավետիսյանին «գրկել է» բնակարանի 1/2-ի նկատմամբ բաժին ձեռք

բերելու հնարավորությունից: Վերը նշվածը ծննդյան տարեթվի կամ իրեն պատկանող գույքի հասցեում կատարված տառասխալի կամ թվասխալի ուղղում չէ, որպեսզի համարվի վրիպակի ուղղում:

Բացի այդ, վերաքննիչ դատարանը, փաստելով, որ կտակում նշված Լուան Ավետիսյանը և Արթուր Հակոբյանը չեն վիճարկում կտակը, սխալ է մեկնաբանել օրենքը, քանի որ կտակն անվավեր ճանաչելու պահանջ կարող են ներկայացնել ոչ միայն ըստ կտակի ժառանգները, այլ բոլոր այն անձինք, ում իրավունքը խախտվել է այդ կտակով:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, թույլ տալով դատավարական իրավունքի նորմի խախտում, այն է՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չհետազոտելով գործով ձեռք բերված ապացույցները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 6-րդ և 1230-րդ հոդվածի 3-րդ մասերը, որոնք պետք է կիրառեր:

2) Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1194-րդ հոդվածի 2-րդ մասը, որը չպետք է կիրառվեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, Տիգրան Հակոբյանին ճանաչելով պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգ, թույլ է տվել նյութական իրավունքի նորմի խախտում, քանի որ պարտադիր բաժնի իրավունք ձեռք բերելու հիմք է հանդիսանում ժառանգի՝ ժառանգության բացման պահին հաշմանդամ կամ անգործունակ լինելը: Մինչդեռ ինչպես երևում է գործով ձեռք բերված ապացույցներից, Տիգրան Հակոբյանն օրենքով սահմանված կարգով սահմանափակ գործունակ է ճանաչվել միայն 18.02.2005 թվականին, այսինքն՝ ժառանգության բացման պահից մեկ տարի անց:

3) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև 48-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել Լուան Ավետիսյանի կողմից 29.07.2004 թվականին կազմած և 02.08.2004 թվականին ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում ապոստիլով վավերացված լիազորագիրը, Լուան Ավետիսյանի և Արթուր Հակոբյանի կողմից ժառանգությունը 02.08.2004 թվականին ընդունելու մասին փաստաբան Արթուր Գրիգորյանի 12.08.2004 թվականի հարցման վերաբերյալ նոտար Է. Շաբոյանի

պատասխանը, որի համաձայն՝ Լևոն Հակոբյանի ժառանգության ընդունման համար դիմել են Աննա Բաղդասարյանը և Աշոտ Հակոբյանը, ինչպես նաև նոտարի կողմից Արթուր Հակոբյանին և Լուան Ավետիսյանին ուղարկված գրությունը, որով նրանք հրավիրվել են Լևոն Հակոբյանի մահից հետո մնացած ժառանգության ընդունմանը:

Նշված փաստական տեղեկություններով հաստատվում է այն հանգամանքը, որ Լուան Ավետիսյանը և Արթուր Հակոբյանը չէին կարող 02.08.2004 թվականին դիմել նոտարական գրասենյակ՝ Լևոն Հակոբյանից հետո մնացած ժառանգությունն ընդունելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 25.06.2007 թվականի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 19.01.2004 թվականի կտակով Լևոն Հակոբյանը Երևանի Վ. Համբարձումյանի փողոցի 8/1 շենքի թիվ 44 բնակարանը և այդ բնակարանում գտնվող գույքը կտակել է Արթուր Հակոբյանին և Լուան Ալեքսանի Ավետիսյանին: Կտակում «և Լուան Ալեքսանի Ավետիսյանին ծնված մեկը մարտի, հազար ինը հարյուր քսանհինգ թ.» բառերը գրիչով ջնջված են:

2) Լևոն Հակոբյանը մահացել է 06.02.2004 թվականին:

3) Ռիչարդ Հակոբյանի կողմից Լևոն Հակոբյանի ժառանգական գույքն ընդունելու մասին Ռիչարդ Հակոբյանի օրինական ներկայացուցիչ Աննա Բաղդասարյանը նոտարական գրասենյակին հայտարարություն է տվել 26.07.2004 թվականին, իսկ Արթուր Հակոբյանը՝ 02.08.2004 թվականին:

4) Նոտար Է. Շաբոյանի 14.09.2004 թվականի գրության համաձայն՝ Լևոն Հակոբյանի մահից հետո մնացած ժառանգական գույքն ընդունելու համար 02.08.2004 թվականին հայտարարություն է ներկայացրել նաև Լուան Ավետիսյանը:

5) Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 18.02.2005 թվականի վճռով Տիգրան Լևոնի Հակոբյանը ճանաչվել է սահմանափակ գործունակ: Վճռով հաստատվել է, որ դատաբժշկական եզրակացության համաձայն՝ Տիգրան Հակոբյանը 1999

թվականից ստացիոնար հետազոտման է ենթարկվել, և ախտորոշվել է Օլիգոֆրենիա չափավոր արտահայտված դեբիլություն, որի հետևանքով համարվել է զինձառայության համար ոչ պիտանի: 20.04.1999 թվականին նա հաշվառման է վերցվել, և նրան տրվել է հաշմանդամության երրորդ խումբ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կտակարարն իրավունք ունի կտակ կազմելուց հետո ցանկացած ժամանակ վերացնել, փոփոխել կամ լրացնել իր կտակը, ընդ որում նա պարտավոր չէ նշել կտակը վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու պատճառները: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կտակը վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու մասին հայտարարությունը պետք է արվի կտակ կազմելու համար՝ նույն օրենսգրքով սահմանված ձևով: «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կտակը կարող է վերացվել կամ փոփոխվել կտակարարի կողմից՝ համապատասխան դիմում տալու կամ նոր կտակ կազմելու ձևով:

ՀՀ արդարադատության նախարարի «Հայաստանի Հանրապետության պետական նոտարական գրասենյակների կողմից նոտարական գործողություններ կատարելու կարգի մասին հրահանգը հաստատելու մասին» 14.08.2000 թվականի թիվ 523 հրամանի 68-րդ կետի 4-րդ պարբերության համաձայն՝ եթե վավերացվող կամ հաստատվող գործարքի կամ այլ փաստաթղթի նախագծում կատարվել են փոփոխություններ, լրացումներ կամ ուղղումներ, ապա կողմերի ստորագրություններից առաջ նոտարն իր ձեռքով նշում է կատարում կատարված փոփոխությունների, լրացումների կամ ուղղումների քանակի և տեղի (վերնագիր, նախաբան, կետ, ենթակետ, պարբերություն) մասին: Սույն նշումը չպարունակող փաստաթղթում կատարված փոփոխությունները, լրացումները կամ ուղղումներն անվավեր են:

Սույն քաղաքացիական գործով 19.01.2004 թվականի կտակով Երևանի Վ. Համբարձումյան փողոցի 8/1 շենքի թիվ 44 բնակարանը և այդ բնակարանում գտնվող գույքը կտակվել են Արթուր Հակոբյանին և Լուան Ավետիսյանին: Կտակում «և Լուան Ալեքսանի Ավետիսյանին.....» բառերը գրիչով ջնջված են:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 19.01.2004 թվականին կազմված կտակում արված ջնջումը (փոփոխությունը) կատարվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածի, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի «Հայաստանի Հանրապետության պետական նոտարական գրասենյակների կողմից նոտարական գործողություններ կատարելու կարգի մասին հրահանգը հաստատելու մասին» 14.08.2000 թվականի թիվ 523 հրամանի 68-րդ կետի խախտմամբ, քանի որ գործում բացակայում է կտակը փոփոխելու վերաբերյալ կտակարարի դիմումը, իսկ կտակում կողմերի ստորագրություններից առաջ այդ փոփոխության մասին նոտարի կողմից կատարված նշումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1211-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կտակն անվավեր է ճանաչվում կտակի ձևի մասին կանոնները և գործարքների անվավերության մասին՝ նույն օրենսգրքի այլ դրույթները խախտելու հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1211-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անվավեր կարող են ճանաչվել ինչպես կտակն ամբողջությամբ, այնպես էլ՝ դրանում պարունակվող առանձին կտակային կարգադրությունները: Առանձին կտակային կարգադրության անվավերությունը չի հանգեցնում կտակի մնացած մասի անվավերությանը:

Սույն քաղաքացիական գործով ներկայացվել է ամբողջ կտակը անվավեր ճանաչելու պահանջ՝ պահանջի հիմքում դնելով կտակում առկա ջնջումը: Այսինքն, վիճարկվում է կտակային կարգադրություններից մեկը՝ Երևանի Վ. Համբարձումյան փողոցի 8/1 շենքի թիվ 44 բնակարանը Լուան Ավետիսյանին կտակված լինելը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անվավեր է վեճի առարկա կտակում կատարված փոփոխությունը: Այսինքն՝ կտակում առկա փոփոխության անվավերությունը չի հանգեցնում ամբողջ կտակի անվավերության:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ կտակը չի կարող նաև մասնակի (կատարված փոփոխության մասով) անվավեր ճանաչել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1211-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կտակը կարող է դատարանով անվավեր ճանաչվել այն անձի հայցով, ում իրավունքները կամ շահերը խախտվել են այդ կտակով:

Սույն գործով Ռիչարդ Հակոբյանը կտակում կատարված փոփոխությունն անվավեր ճանաչելու հարցում չունի որևէ շահագրգռվածություն, ուստի և չի կարող այդ կտակային կարգադրությունն անվավեր ճանաչելու պահանջով պատշաճ հայցվոր լինել:

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում այն հանգամանքը, որ վերոհիշյալ կտակային կարգադրության անվավեր ճանաչումն անվավեր չի դարձնում ամբողջ կտակը, ինչի արդյունքում չի բացվում ըստ օրենքի ժառանգություն, և այս դեպքերում պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգ հանդիսացող Ռիչարդ Հակոբյանը չի կարող որպես ըստ օրենքի ժառանգ ընդունել ժառանգությունը:

2) բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1194-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակ պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Տիգրան Հակոբյանը 20.04.1999 թվականին ճանաչվել է հաշմանդամ, որը վերահաստատվել է:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում վճռաբեկ բողոքում առկա պատճառաբանությունն այն մասին, որ ժառանգության բացման պահին Տիգրան Հակոբյանի մոտ բացակայել են պարտադիր բաժնի իրավունքի ձեռքբերման հիմքերը, քանի որ նա սահմանափակ գործունակ է ճանաչվել ժառանգության բացումից հետո: Այսինքն՝ Տիգրան Հակոբյանը հաշմանդամության հիմքով ձեռք է բերել ժառանգության պարտադիր բաժնի իրավունք:

3) բողոքը երրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ բողոքում տեղ գտած պատճառաբանությունն այն մասին, որ Լուան Ավետիսյանի կողմից 29.07.2004 թվականին կազմած լիազորագիրը 02.08.2004 թվականին ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում ապոս-

տիլով վավերացված լինելու պարագայում Լուան Ավետիսյանը և Արթուր Հակոբյանը չէին կարող 02.08.2004 թվականին դիմել նոտարական գրասենյակ, և հետևաբար նրան չեն ընդունել ժառանգությունը, անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Լուան Ավետիսյանի և Արթուր Հակոբյանի կողմից ժառանգությունն ընդունած լինելու հանգամանքը չի հանդիսանում սույն գործով ապացուցման ենթակա հանգամանք, քանի որ ներկայացված հայցապահանջի ապացուցման առարկայի շրջանակներից դուրս է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 25.06.2007 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ա. Մկրտումյան
Դատավորներ՝ Ս. Սարգսյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Ս. Գյուրջյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ տնտեսական ֆաղաքացիական գործ թիվ 3-1792 (ՏԴ)
 դատարանի վճիռ 2007թ.
 Քաղաքացիական գործ թիվ Տ-1-55
 Նախագահող դատավոր՝ Էդ. Նահապետյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
 Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
 մասնակցությամբ դատավորներ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ
 Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
 Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
 Է. ՀԱՅԲԻՅԱՆԻ

2007 թվականի դեկտեմբերի 12-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 13.07.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (այսուհետ՝ Վարչություն) ընդդեմ «Արշո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)՝ գույքը վերադարձնելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի՝ օրենքով նախատեսված իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վարչությունը պահանջել է վերադարձնել Ընկերությունից Արթիկ քաղաքի Աբովյան 3 հասցեում գտնվող թիվ 3 բաղնիքի տարածքը:

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է ճանաչել գույքի նկատմամբ օրենքով նախատեսված իրավունքը:

ՀՀ տնտեսական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 13.07.2007 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Դատարանը սխալ է մեկնաբանել «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «գ» կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասը, 1186-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքը, որը չպետք է կիրառվեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, վճիռ կայացնելիս, չի անդրադարձել Ընկերության կողմից տվյալ դեպքում նման պահանջ ներկայացնելու իրավունքի հանգամանքին, ինչպես նաև սկզբնական հայցը մերժելիս և հակընդդեմ հայցը բավարարելիս, վճռի պատճառաբանական մասում չի նշել օրենքով սահմանված այն դեպքերը, որոնց հիման վրա Ընկերությունն իրավունք կունենար Ընկերության նախկին տնօրեն Արշալույս Սարգսյանի մահից հետո օգտվել նրան վերապահված՝ հաշմանդամների համար սահմանված, սեփականաշնորհված գույքի արժեքը գեղջով վճարելու իրավունքից: Նման արտոնություն օրենքը վերապահել է միայն աշխատավորական կոլեկտիվի անդամին, այլ ոչ թե իրավաբանական անձին: Գույքի արժեքը գեղջով վճարելու արտոնությունից չեն կարող օգտվել ոչ Արշալույս Սարգսյանի ժառանգները, ոչ էլ Ընկերության մյուս մասնակիցները:

Դատարանն անտեսել է նաև, որ գործի քննության ժամանակ գործել է «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքը, որով «փոքր» օբյեկտի գնահատված արժեքը 13 միլիոնից մինչև 14 միլիոն ՀՀ դրամ լինելու դեպքում սահմանվել է 15 տարվա ընթացքում 16 անգամ վճարելու մասնավորեցման սուբյեկտի իրավունք: Մինչդեռ Ընկերության կողմից կատարվել է երկու վճարում, մնացորդ գումարը կարող էր բաժանվել միայն 14 տարիների միջև և ոչ թե 15, ինչպես Դատարանն է ընդունել:

2) Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասը, 56-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, «ՀՀ քաղաքացիական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ և 130-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը նախատեսում է մինչև օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 01.01.1999 թվականը, ստեղծված և օրենսգրքի 5-րդ գլխով նախատեսված կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց հիմնադիր փաստաթղթերի օրենսգրքի նշված գլխի նորմերի պահանջներին համապատասխանեցնելու և վերագրանցելու ժամկետ մինչև 01.01.2001 թվականը: Նշված ժամկետում չհամապատասխանեցված և չվերագրանցված հիմնադիր փաստաթղթերը համարվում են անվավեր:

Ընկերությունը պետական գրանցում է ստացել 10.10.1997 թվականին: Հակընդդեմ հայցը ներկայացնելու պահին Ընկերությունը վերագրանցված չի եղել (ՄՊԸ-ի հակընդդեմ հայցում ուղղակի նշված է եղել այդ հանգամանքի մասին), իսկ Դատարանը չի անդրադարձել Ընկերության իրավունակության հարցին, որի արդյունքում սխալ է մեկնաբանել «Պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասը, նույնացրել է պետական բաժնեմաս և «փոքր» օբյեկտ (նախկին թիվ 3 բաղնիք, անշարժ և շարժական գույք) հասկացությունները:

Դատարանի վճիռը պետք է լինի հիմնավորված և օրինական: Դատարանը վճիռը հիմնավորում է միայն դատական նիստում հետա-

գոտված ապացույցներով: Հետևաբար, Դատարանն Ընկերության հակընդդեմ հայցը չպետք է վարույթ ընդուներ, իսկ վարույթ ընդունելու դեպքում էլ պետք է այն մերժեր:

3) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը:

Սկզբնական հայցի մերժման համար Դատարանը հիմք է ընդունել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի դրույթները, որոնց կիրառումը անհիմն հակընդդեմ հայցի անհիմն լինելու պատճառով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 13.07.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1) 16.09.1997 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչությունն «Արթիկի կոմունալ տնտեսություն» պետական ձեռնարկության կողմնակալին առաջարկել է 13.050.621 (տասներեք միլիոն հիսուն հազար վեց հարյուր քսանմեկ) ՀՀ դրամով գնելու Արթիկ քաղաքի Աբովյան թիվ 3 հասցեում գտնվող ձեռնարկության թիվ 3 բաղնիքը, որպես կանխավճար 5 տոկոսը՝ 652.531 (վեց հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամը մուծելու պայմանով:

2) «Արթիկի կոմունալ տնտեսություն» պետական ձեռնարկության թիվ 3 բաղնիքի սեփականաշնորհման հիման վրա ստեղծվել է Ընկերությունը, որը ՀՀ պետական ռեզիստրի Արթիկի տարածքային բաժնում գրանցվել է 10.10.1997 թվականին, տրվել է թիվ 01Ա-037964 վկայականը:

3) Ընկերության մասնակիցներն «Արթիկի կոմունալ տնտեսություն» պետական ձեռնարկության աշխատավորական կողմնակալին անդամներն են:

4) 26.01.1998 թվականի թիվ 6088 սեփականաշնորհման պայմանագրով «Արթիկի կոմունալ տնտեսություն» պետական ձեռնարկության Արթիկ քաղաքի Աբովյան թիվ 3 հասցեում գտնվող թիվ 3 բաղնիքը 13.050.621 (տասներեք միլիոն հիսուն հազար վեց հարյուր քսանմեկ) ՀՀ դրամով վաճառվել է Ընկերությանը: Պայմանագրով սահմանվել է օբյեկտի արժեքի տարածամկետ վճարման կարգ:

5) Ընկերության 89 տոկոսի բաժնետեր Արշալույս Սարգսյանը մահացել է 16.04.2001 թվականին:

6) Նոտարական կարգով վավերացված 09.03.2007 թվականի սեփականության իրավունքի և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի համաձայն՝ Ագապի Սարգսյանը 16.04.2001 թվականին մահացած Արշալույս Սարգսյանի Ընկերությունում ունեցած 89 տոկոս բաժնեմասի 1/2-ի սեփականատերն է, մյուս 1/2-ի նկատմամբ ստացվել է ժառանգության իրավունքի վկայագիր:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականաշնորհման (պետական գույքի ձեռք բերման) սուբյեկտներ են նաև ՀՀ քաղաքացիները և քաղաքացիների խմբերը, այդ թվում՝ սեփականաշնորհվող ձեռնարկության աշխատավորական կոլեկտիվի անդամները: Նույն օրենքի 9-րդ հոդվածով աշխատավորական կոլեկտիվի անդամների համար, ելնելով նրանց անձնական (ֆիզիկական) առանձնահատկություններից, նախատեսվել է որոշակի արտոնություններ, այն է՝ աշխատավորական կոլեկտիվի անդամների համար սահմանվել է իրենց հասանելիք բաժնեմասի վճարման զեղչեր՝ պատերազմների մասնակիցների և երրորդ կարգի հաշմանդամների համար արժեքի 40 տոկոսի չափով, երկրորդ կարգի հաշմանդամների համար՝ 50 տոկոսի չափով, առաջին կարգի հաշմանդամների համար 60 տոկոսի չափով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները, մասնավորապես՝ անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները, այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում սույն օրենսգրքով և այլ օրենքներով:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված արտոնություններն իրենց էությամբ ֆիզիկական անձի հետ անխզելիորեն կապված իրավունք է և չի կարող փոխանցվել ժառանգությամբ: Սույն գործով Ընկերության 89 տոկոս բաժնեմասի սեփականատեր Արշալույս Սարգսյանը մահացել է 16.04.2001 թվականին: Արշալույս Սարգսյանի կինը՝ Ագապի Սարգսյանը, Ընկերության 89 տոկոս բաժնեմասի 1/2-ն ընդունել է որպես սեփականություն, մյուս 1/2-ը ժառանգություն: Գործի քննության պահին Ընկերությունը ունեցել է չվճարված պարտավորություն, սակայն դրա հետ կապված Արշալույս Սարգսյանի արտոնություններն անօտարելի և անփոխանցելի են:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արշալույս Սարգսյանի ունեցած արտոնությունները չեն կարող մտնել ժառանգական զանգվածի մեջ, իսկ նրա մահից հետո նրա բաժնեմասը և պարտավորությունը ժառանգած ամուսինը չի կարող օգտվել այդ արտոնությունից: Հետևաբար, Ագապի Սարգսյանն Ընկերությունում ժառանգությամբ ստացած բաժնեմասի պարտք գումարը պետք է վճարի ամբողջությամբ:

«Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական գույքի մասնավորեցման տարածամկետ վճարումների սանդղակը կիրառվում է «փոքր» օբյեկտների ու վարձակալած գույքի մասնավորեցման դեպքում և մասնավորեցման նախորդ ծրագրերով տարածամկետ վճարման իրավունք ստացած սուբյեկտների նկատմամբ: 13 միլիոնից մինչև 14 միլիոն ՀՀ դրամ գնահատված «փոքր» օբյեկտների համար սահմանվել է տարածամկետ վճարման հետևյալ կարգը՝ առաջին վճարի չափը գնահատված արժեքի 20 տոկոսի չափով, մնացած գումարը 15 տարվա ընթացքում 16 անգամ վճարելու եղանակով: Նշված օրենքն ուժի մեջ է մտել 08.07.2006 թվականին (ՀՀՊՏ 07.07.2006 թ. թիվ 36), այսինքն՝ սույն գործի քննության ժամանակ գործել է «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքը, մինչդեռ Դատարանը կիրառել է «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

2) Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի հիման վրա, ՀՀ տնտեսական դատարանի 13.07.2007

թվականի վճռի՝ Ընկերության հակընդդեմ հայցի մասը բեկանելու համար, Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին չի անդրադառնում:

3) բողոքը երրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հակընդդեմ հայցն ընդունվում է, եթե՝ հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը, հակընդդեմ հայցի բավարարումը լրիվ կամ մասամբ բացառում է սկզբնական հայցի բավարարումը, հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի առավել արագ և ճիշտ լուծումը:

Որպես վճռաբեկ բողոքի սույն հիմքի հիմնավորում վճռաբեկ բողոքում նշվել է այն փաստարկը, որ հայցը ենթակա է բավարարման հակընդդեմ հայցի անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում վճռաբեկ բողոքի վերոնշյալ փաստարկը, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված են հակընդդեմ հայցի ընդունելության հիմքերը, իսկ սույն քաղաքացիական գործով ներկայացված հակընդդեմ հայցի անհիմն լինելը չի կարող բավարար հիմք հանդիսանալ հայցը հիմնավոր ճանաչելու համար, քանի որ հակընդդեմ հայցով վեճի առարկա է սեփականաշնորհման պայմանագրով նախատեսված գումարի չափը, իսկ հայցը վերաբերում է գույքը վերադարձնելուն: Այսինքն՝ վճարման այլ գումարի չափ սահմանելու վերաբերյալ հակընդդեմ հայցի մերժումը հիմք չէ գույքը վերադարձնելու վերաբերյալ հայցի բավարարման համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույլալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով նախատեսված՝ գործն ըստ էության ճիշտ լուծած, սակայն թերի պատճառաբանված դատական ակտը պատճառաբանելու լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Սույն քաղաքացիական գործով հայցի հիմքում դրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 507-րդ հոդվածը:

Վերոնշյալ հոդվածի առաջին մասի համաձայն՝ գնորդը դառնում է ապրանքի սեփականատեր ապրանքի համար վճարելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Նույն հոդվածի 3-րդ մասի

համաձայն՝ այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված ժամկետում հանձնված ապրանքի համար չի վճարվել, վաճառողն իրավունք ունի գնորդից պահանջել վերադարձնելու ապրանքը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 507-րդ հոդվածը վերաբերում է այն դեպքերին, երբ վաճառողի կողմից գույքը հանձնվել է գնորդին, սակայն վաճառողը դեռևս պահպանում է դրա նկատմամբ իր սեփականության իրավունքը: Մինչդեռ սույն քաղաքացիական գործով կնքված սեփականաշնորհման պայմանագրով սեփականության իրավունքն արդեն իսկ անցել է Ընկերությանը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացիական օրենսգրքի 507-րդ հոդվածը սույն քաղաքացիական գործով կիրառելի չէ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի հիման վրա, վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ տնտեսական դատարանի 13.07.2007 թվականի վճռի՝ Ընկերության հակընդդեմ հայցի մասը և գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռի՝ Վարչության հայցի մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ, Վ. ԱԲԵԼՅԱՆ, Ս. ԱՆՏՈՆՅԱՆ, Է. ՀԱՅՐԻՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ Քաղաքացիական գործ թիվ 3-1778 (ՎԴ)
 դատարանի վճիռ 2007 թ.
 Քաղաքացիական գործ թիվ 07-3151
 Նախագահող դատավոր՝ Ա. Ավանեսյան
 Դատավորներ՝ Գ. Մատինյան
 Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
 Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ա. Մկրտումյանի
 մասնակցությամբ դատավորներ՝ Ս. Սարգսյանի
 Վ. Աբելյանի
 Ս. Անտոնյանի
 Ս. Գյուրջյանի
 Է. Հայրիյանի

2007 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սեդա Սոնյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 05.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Սեդա Սոնյանի ընդդեմ Իդա Էբզիմյանի՝ Երևանի Նոր Արեշ 42 փողոցի թիվ 22 տան նկատմամբ օգտագործման իրավունքն առանց փոխհատուցման դադարեցնելու և վտարելու պահանջի մասին, ըստ հայցի և հակընդդեմ հայցի Իդա Էբզիմյանի ընդդեմ Սեդա Սոնյանի՝ գումարի բռնագանձման, սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու, սեփականության իրավունքը ճանաչելու և փաստացի տիրապետմամբ Երևանի Նոր Արեշ 42 փողոցի թիվ 22 հասցեում գտնվող ժառանգական գույքի բաժինն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Սեդա Սոնյանը պահանջել է առանց փոխհատուցման դադարեցնել Իդա Էբզիմյանի բնակելի տարածության օգտագործման իրավունքը Երևանի Նոր Արեշ 42 փողոցի թիվ 22 տան նկատմամբ և վտարել նշված տնից:

Դիմելով դատարան՝ Իդա Էբզիմյանը պահանջել է բռնագանձել Սեդա Սոնյանից 4.750.090 ՀՀ դրամ՝ որպես համապարտ պարտավորությունը կատարելու հետադարձ պահանջի գումար, իսկ հակընդդեմ հայցով պահանջել է անվավեր ճանաչել 03.07.1997 թվականին Երևանի Նոր Արեշ 42 փողոցի թիվ 22 տան նկատմամբ Սեդա Սոնյանի անվամբ տրված թիվ 2186 սեփականության իրավունքի վկայականը, ճանաչել Հարություն Էբզիմյանի սեփականության իրավունքը նշված տան նկատմամբ և փաստացի տիրապետման ուժով իրեն՝ որպես առաջին հերթի ժառանգի, ճանաչել Հարություն Էբզիմյանի ժառանգությունն ընդունած ժառանգ և ճանաչել սեփականության իրավունքը նշված տան 3/4-րդ մասի նկատմամբ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 27.07.2007 թվականի վճռով Սեդա Սոնյանի հայցը մերժվել է, Իդա Էբզիմյանի հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակի:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.10.2007 թվականի վճռով Սեդա Սոնյանի հայցը մերժվել է, Իդա Էբզիմյանի հայցը բավարարվել է, հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակի:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սեդա Սոնյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել Իդա Էբզիմյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 53-րդ և 132-րդ հոդվածների պահանջները, չի

կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 172-րդ, 225-րդ, 296-րդ, 1186-րդ, 1243-րդ և 1244-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Երևանի Նոր Արեշ 42 փողոցի թիվ 22 տան սեփականատերն է Սեդա Սոնյանը, որն այդ տունը ձեռք է բերել 17.09.1990 թվականին առուվաճառքի պայմանագրով: Պայմանագիրը վիճարկված չէ: Հարույթյուն էբզիմյանի կողմից տունը գնելու մասին Հռիփսիմե Տատուրյանի հայտարարությունը չի կարող սեփականության վիճարկման գործի համար ապացույց հանդիսանալ, քանի որ նա հանդես չի եկել որպես վաճառող:

ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի կողմից 27.03.2007 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա՝ 03.05.2006 թվականին մահացած Հարություն էբզիմյանի ժառանգական միակ գույքի՝ «Մերսեդես-Բենց E200» մակնիշի ավտոմեքենայի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներն են Սեդա Սոնյանը և Իդա էբզիմյանը: Ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո ժառանգներն իրենց ստացած գույքի արժեքի սահմաններում միայն պետք է հատուցեն ժառանգության հետ կապված ծախսերը: Ժառանգատուի պարտքերով պահանջները պարտատերերն իրավունք ունեն ներկայացնել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված կարգով՝ պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին, այսինքն՝ այդ պահանջները պետք է ներկայացվեին մինչև 27.03.2007 թվականը, մինչև Կենտրոն նոտարական տարածքի նոտարի կողմից 27.03.2007 թվականին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի տալը: Իսկ հետագայում ավտոմեքենայի վաճառքից հետո գումարը ծախսվել է հուղարկավորության և գերեզմանի վրա կատարվող աշխատանքների վրա:

Իդա էբզիմյանի կողմից չեն ապացուցվել իր կողմից ներկայացված պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Եվ գործի հանգամանքները, որոնք պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ապացույցների թույլատրելիության նորմը և որպես ապացույց է դիտել երրորդ անձանց՝ գործի համար ապացուցողական նշանակություն չունեցող վկայությունները:

Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել գործում առկա տան առուվաճառքի պայմանագիրը, որպես ժառանգություն ստացված ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը, այն փաստը, որ Իդա Էբզիմյանի օգտագործման իրավունքը պետական գրանցման չի ենթարկվել, ինչի արդյունքում հանգել է գործի սխալ լուծման:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.10.2007 թվականի վճիռը և այն փոփոխել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանը.

Ամուսիններ Հարություն Էբզիմյանը և Ռուզաննա Պողոսյանն ունեցել են զգալի ֆինանսական խնայողություններ և 1990 թվականին որոշել են Երևանում գնել բնակելի տուն: Գնման հետ կապված պայմանավորվածություններ են ձեռք բերել վիճելի տան նախկին սեփականատերեր Ստամբոլյանների հետ և կնքվել է պայմանագիր, որով որպես գնորդ հանդես է եկել Հարություն Էբզիմյանի մայրը՝ Սեդա Սոնյանը, որի անունով էլ կատարվել է սեփականության իրավունքի պետական գրանցում:

Գնված տան ամբողջ արժեքը վճարել է Հարություն Էբզիմյանը և նրա ընտանիքը բնակություն է հաստատել այդ տանը՝ վերանորոգելով և վերակառուցելով այն:

Սեդա Սոնյանը գործարքի կնքման պահին եղել է 59 տարեկան, չի աշխատել, կենսաթոշակից բացի այլ եկամուտ չի ունեցել:

Բողոքի այն փաստարկը, թե Հռիփսիմե Տատուրյանն առնչություն չունի բնակելի տան վաճառողների հետ՝ անհիմն է, քանի որ նա բնակարանը վաճառող Հարություն Ստամբոլյանի կինն է:

Սեփականության իրավունքի վկայականը՝ առանց դրա հիմքում ընկած պայմանագրի անվավեր ճանաչելու պահանջը հիմնավոր է, քանի որ գործով հաստատված հանգամանք է, որ տան իրական գնորդ է հանդիսացել Հարություն Էբզիմյանը, հետևաբար տան նկատմամբ սեփականության իրավունքը պետք է գրանցվեր վերջինիս անվամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգության բացումից վեցամսյա ժամկետում ժառանգատուի պարտքերով պահանջների ներկայացումը պարտատերերի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, իսկ նույն օրենսգրքի 11-րդ հոդվածի համա-

ձայն՝ անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները իրականացնում են իրենց հայեցողությամբ:

Բողոքի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել հայցապահանջների շրջանակներից, անվավեր է ճանաչել Սեդա Սոնյանի սեփականության իրավունքի վկայականը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի հիմքով այն ճանաչել հանգուցյալ ամուսիններ Հարություն Էրզիմյանի և Ռուզաննա Պողոսյանի համատեղ ամուսնական գույք և Իդա Էրզիմյանին ճանաչել նաև մոր ժառանգությունն ընդունած ժառանգ, անհիմն է, քանի որ Վերաքննիչ դատարանը, վիճելի տան նկատմամբ ճանաչելով Հարություն Էրզիմյանի և Ռուզաննա Պողոսյանի ընդհանուր սեփականության իրավունքը և փաստացի տիրապետման հիմքով՝ որպես առաջին հերթի ժառանգ Իդա Էրզիմյանին ճանաչելով ժառանգությունն ընդունած ժառանգ, լուծել է նաև դրանից բխող ժառանգական գույքի նկատմամբ մյուս ժառանգների իրավունքներին վերաբերող հարցերը:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Եղիսաբեթ և Հարություն Ստամբոլյանների և Սեդա Սոնյանի միջև 17.09.1990 թվականին կնքվել է բնակելի տան առուվաճառքի պայմանագիր, որի համաձայն՝ Երևանի Նոր Արեշ 42 փողոցի թիվ 22 տան 7/16-րդ մասը վաճառվել է Սեդա Սոնյանին: Նշված տան նկատմամբ 03.04.1997 թվականին Սեդա Սոնյանին տրվել է սեփականության իրավունքի վկայական:

2) Իդա Էրզիմյանը Հարություն Էրզիմյանի և Ռուզաննա Պողոսյանի դուստրն է:

3) Հարություն Էրզիմյանը և Ռուզաննա Պողոսյանը մահացել են 03.05.2006 թվականին:

4) ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի կողմից 27.03.2007 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ 03.05.2006 թվականին մահացած Հարություն Էրզիմյանի գույքի նկատմամբ ժառանգներ են հավասար բաժիններով դուստրը՝ Իդա Էրզիմյանը և մայրը՝ Սեդա Սոնյանը: Ժառանգական գույքը բաղկացած է «Մերսեդես Բենց E200» մակնիշի ավտոմեքենայից:

5) Իդա Էբզիմյանի և Սեդա Սոնյանի կողմից նշված ավտոմեքենան վաճառվել է 4.500.000 ՀՀ դրամով:

6) Հարություն Էբզիմյանի պարտքերով պարտատերերի կողմից օրենքով սահմանված կարգով Սեդա Սոնյանին պահանջ չի ներկայացվել:

7) Իդա Էբզիմյանը հաշվառված բնակվում է Երևանի Նոր Արեշ 42 փողոցի թիվ 22 տանը: Նրա բնակելի տարածության օգտագործման իրավունքը նշված տան նկատմամբ պետական գրանցում չի ստացել:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը դադարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում այդ իրավունքը կարող է սեփականատիրոջ պահանջով դադարեցվել դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից փոխհատուցում տրամադրելու միջոցով:

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 04.10.2005 թվականի օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմումը ներկայացվում է դատարան 01.01.2007 թվականից հետո, ապա սույն կետով սահմանված պաշտպանությունից օգտվում են միայն այն անձինք, որոնց բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունքը գրանցված է սահմանված կարգով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Իդա Էբզիմյանի բնակելի տարածության օգտագործման իրավունքը Երևանի Նոր Արեշի 42 փողոցի թիվ 22 տան նկատմամբ պետական գրանցում չի ստացել: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նրա բնակելի տարածության օգտագործման իրավունքը սեփականատիրոջ պահանջով ենթակա է դադարեցման առանց փոխհատուցման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մասով սույն քաղաքացիա-

կան գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի համաձայն՝ դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանը կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը, եթե գործի վարույթը կարճելու հիմքերն ի հայտ են եկել ստորադաս դատարանում գործի քննության ժամանակ:

Սեդա Սոնյանի անվամբ 03.07.1997 թվականին տրված թիվ 2186 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջով հայցը ենթակա չէ դատարանում քննության, քանի որ անշարժ գույքի սեփականության կամ օգտագործման իրավունքի գրանցման վկայականը չի հանդիսանում իրավունք առաջացնող վարչական ակտ: Վճռաբեկ դատարանն այս հարցի վերաբերյալ իր մանրամասն դիրքորոշումն արտահայտել է 2006 թվականի թիվ 3-1920 (ՎԴ) որոշմամբ (տես քաղաքացիական գործն ըստ Միսիանի քաղաքապետարանի հայցի ընդդեմ Շահեն Սարգսյանի, երրորդ անձինք ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Միսիանի ստորաբաժանման, Կորյուն Օհանյանի՝ պայմանագիրը լուծելու, Շահեն Սարգսյանի և Կորյուն Օհանյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին):

Քաղաքացիական գործի վարույթը սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու մասով կարճման ենթակա լինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում անդրադառնալ վճռաբեկ բողոքի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ և 172-րդ հոդվածների խախտման հիմքի հիմնավորվածության հարցին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ և 1244-րդ հոդվածների խախտում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները: Պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստա-

նալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում նշված ծախսերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հարություն Էրզիմյանի գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են հանդիսացել Սեդա Սոնյանը և Իդա Էրզիմյանը, որոնց 27.03.2007 թվականին տրված ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ ժառանգական գույքը բաղկացած էր «Մերսեդես Բենց E200» մակնիշի (4.500.000 ՀՀ դրամ արժեքով) ավտոմեքենայից: Հարություն Էրզիմյանի պարտատերերը Սեդա Սոնյանին, որպես ժառանգ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված կարգով պահանջ չեն ներկայացրել: Նման պահանջ ներկայացվել է միայն ժառանգ Իդա Էրզիմյանին, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածով սահմանված կարգով կրել է պարտատերերի պահանջներն իրեն անցած գույքի արժեքի սահմաններում հատուցելու պարտավորություն, սակայն սույն գործի փաստերի համաձայն՝ իր կամքով հատուցել է ավելին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալուց հետո ժառանգը ժառանգատուի պարտքերով պարտատերերի առջև իրեն անցած գույքի սահմաններում կարող է կրել պարտավորություններ, եթե ժառանգության բացումից վեցամսյա ժամկետում (կամ մինչև ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը) պարտատերերի կողմից իրեն պահանջ է ներկայացվել: Պահանջների ներկայացման համար սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո ներկայացված պահանջները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով, ենթակա չեն բավարարման, քանի որ մինչև ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը պահանջի ներկայացման դեպքում միայն ժառանգը կարող էր որոշել ժառանգությունն ընդունելու նպատակահարմարությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Իդա Էրզիմյանի կողմից, առանց ժառանգատուի պարտքերով պարտատերերի կողմից Սեդա Սոնյանին օրենքով սահմանված կարգով պահանջ ներկայացնելու, ժառանգական գույքի արժեքի սահմաններից դուրս բավարարելը, նրա համար մյուս ժառանգ Սեդա Սոնյանի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունք չի

կարող առաջացնել: Հետևաբար, Հարություն Էրզրմյանի պարտքերով Բոյա Էրզրմյանի կողմից Սեդա Սոնյանի դեմ ներկայացված պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածների խախտում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝

- 1) գրավոր և իրեղեն ապացույցներով.
- 2) փորձագետների եզրակացություններով.
- 3) վկաների ցուցմունքներով.
- 4) գործին մասնակցող անձանց բացատրություններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության 48-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Նույն օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերաքննիչ դատարանը ի խախտումն նշված հոդվածների, հիմք ընդունելով Հ. Տատուրյանի հայտարարությունն այն մասին, որ տունը վաճառվել է Հարություն Էրզրմյանին և որ տան վաճառքի գումարն ամբողջությամբ իրեն վճարել է վերջինս, դիտել է որպես վիճելի բնակելի տան սեփականության իրավունքի վկայականի անվավերության ապացույց: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված ապացույցը տան նկատմամբ սեփականության իրավունքի վկայականի անվավերության թույլատրելի և վերաբերելի ապացույց չի կարող հանդիսանալ, քանի որ

գործում առկա 1990 թվականին Հարություն և Եղիսաբեթ Մտամբոյանների և Սեդա Սոնյանի միջև կնքված բնակելի տան առուվաճառքի պայմանագրով Սեդա Սոնյանը գնել է Երևանի Նոր Արեշ 42 փողոցի թիվ 22 բնակելի տան 53,55 քմ մակերեսով 7/16-րդ մասը, որը գտնվում է 525 քմ մակերեսով ընդհանուր հողամասի վրա: Առուվաճառքի պայմանագրի 4-րդ կետի համաձայն՝ բնակելի տունը վաճառվել է 7554 ռուբլի գումարով, որպիսի գումարը վաճառողները ստացել են գնորդ Սեդա Սոնյանից: Պայմանագիրը նոտարական կարգով վավերացվել է և դրանից ծագող Սեդա Սոնյանի իրավունքները պետական գրանցում են ստացել: Այսինքն՝ Սեդա Սոնյանը նշված բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերել օրենքով սահմանված կարգին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, գտնում է, որ Վերաքննիչ դատարանը գործում առկա բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատության չի ենթարկել: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել գործում առկա բնակելի տան առուվաճառքի պայմանագիրը, որն օրենքի համաձայն՝ տան ձեռքբերման փաստը հաստատող միակ ապացույցն է:

Վերաքննիչ դատարանի կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ Սեդա Սոնյանի սեփականության և արդար դատաքննության իրավունքը և այդ խախտումները հանգեցրել են գործի սխալ լուծման:

Վճռաբեկ բողոքի պատասխանում առկա փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը սույն վճռաբեկ բողոքի հիմքը հիմնավոր համարելով, դրա առկայությունը բավարար հիմք է դիտում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Սիսթեմային, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ: ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվեն-

ցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի նույն հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ինչ վերաբերում է Սեդա Սոնյանի վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարման հարցին, ապա «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի հիմքով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սեդա Սոնյանին պետք է ազատել վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումից, քանի որ նա 76 տարեկան է, թոշակառու, սոցիալապես անապահով է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատա-վարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղա-քացիական վերաքննիչ դատարանի 05.10.2007 թվականի վճիռը և այն փոփոխել:

2. Սեդա Սոնյանի հայցը բավարարել:

3. Իդա Էբզիմյանի հակընդդեմ հայցի մասով՝ սեփականության ի-րավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղա-քացիական գործի վարույթը կարճել:

4. Իդա Էբզիմյանի հայցը և հակընդդեմ հայցը՝ մնացած մասով մեր-ժել:

5. Սեդա Սոնյանին ազատել վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումից:

6. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ա. Մկրտումյան

Դատավորներ՝ Ս. Սարգսյան, Վ. Աբելյան, Ս. Անտոնյան, Ս. Գյուրջյան,

Է. Հայրիյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵՎ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական քաղաքացիական գործ թիվ 3-1843 (ՎԴ)
վերաքննիչ դատարանի վճիռ 2007 թ.
Քաղաքացիական գործ թիվ 07-1050
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավորներ՝ Դ. Խաչատրյան
Լ. Գրիգորյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝
Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Ա. Մկրտումյանի
մասնակցությամբ դատավորներ՝ Ս. Սարգսյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Ս. Գյուրջյանի
Է. Հայրիյանի

2007 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Անժելա Ղազարյանի, Արփիկ
և Արմինե Գասպարյանների վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերա-
քննիչ դատարանի 04.05.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Անժելա
Ղազարյանի, Արփիկ և Արմինե Գասպարյանների ընդդեմ Շուշանիկ
Սարգսյանի, երրորդ անձինք Ոսկեհատ, Նունե, Հրանուշ Գասպար-
յանների՝ ժառանգական գույքը ժառանգների միջև բաժանելու պահանջի
մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Անժելա Ղազարյանի, Արփիկ և Արմինե Գասպարյանները պահանջել են բաժանել ժառանգական գույքը՝ Երևանի Տիգրանյան փողոցի 20 շենքի թիվ 43 բնակարանը, ժառանգների բաժիններին համապատասխան:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 20.04.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 09.06.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի 14.07.2006 թվականի որոշմամբ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 09.06.2006 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նոր քննության:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.05.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է Անժելա Ղազարյանին, Արփիկ և Արմինե Գասպարյաններին ճանաչել Հովհաննես Գասպարյանի ժառանգներ՝ յուրաքանչյուրին ժառանգական գույքի 1/7-ական բաժնով:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Անժելա Ղազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյանները:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ, 53-րդ և 132-րդ (իրականում 218-րդ) հոդվածների պահանջները, որոնց արդյունքում խախտվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ, 1225-րդ և 1226-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, այդ թվում՝ Երևանի Կենտրոն նոտարական գրասենյակի 2005 թվականի թիվ 1 ժառանգական գործի

մուտքի մատյանի գրանցումները, որոնց համաձայն՝ պատասխանողները օրենքով սահմանված կարգով չեն դիմել նոտարական գրասենյակ և բաց են թողել օրենքով սահմանված ժառանգության ընդունման վեցամսյա ժամկետը:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ և 1226-րդ հոդվածների պահանջները, հիմք է ընդունել նոտարի գրությունն այն մասին, որ պատասխանողը և երրորդ անձինք դիմել են նոտարին, սակայն գործում առկա չէ պատասխանողի և երրորդ անձանց դիմումը, որը հանձնվել է նոտարին և գրանցվել գրանցամատյանում կամ նոտարի կողմից վավերացված դիմում, որը հանձնվել է խորհրդատուին: Տվյալ դեպքում, նոտարի գրությունը հակասում է Երևանի Կենտրոն նոտարական գրասենյակի 2005 թվականի թիվ 1 ժառանգական գործի մուտքի մատյանի քաղվածքին: Վերաքննիչ դատարանը նշված քաղվածքը որպես ապացույց չի գնահատել և չի պատճառաբանել գործում առկա ապացույցները մերժելու փաստարկները:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը, անտեսելով սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի 14.07.2006 թվականի որոշման պատճառաբանություններն այն մասին, որ Հովհաննես Գասպարյանի սեփականության իրավունքը Երևանի Տիգրանյան փողոցի 20 շենքի թիվ 43 բնակարանի նկատմամբ գրանցվել է Անժելա Ղազարյանի հետ համատեղ կյանքի ընթացքում, Երբաղխորհրդի գործկումի 04.09.1991 թվականի թիվ 16/3 որոշման հիման վրա, սույն գործի քննությամբ կրկին վիճելի գույքը չի համարել համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված: Տվյալ դեպքում Երևանի Տիգրանյան փողոցի 20 շենքի թիվ 43 բնակարանը պետք է ճանաչվեր Անժելա Ղազարյանի և Հովհաննես Գասպարյանի համատեղ սեփականությունը, և այդ գույքի Հովհաննես Գասպարյանի 1/2-րդ բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ պետք է ճանաչվեին միայն Անժելա Ղազարյանը, Արփիկ և Արմինե Գասպարյաններն ու Շուշանիկ Սարգսյանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 04.05.2007 թվականի վճիռը և փոփոխել այն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Անժելա Ղազարյանը և Հովհաննես Գասպարյանը փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ են գտնվել 1982 թվականից: Նրանց ամուսնությունը ՔԿԱԳ մարմնում գրանցվել է 15.04.1987 թվականին:

2) Երբաղխորհրդի գործկոմի 04.09.1991 թվականի թիվ 16/3 որոշման հիման վրա՝ 16.12.2002 թվականին Երևանի Ա. Տիգրանյան փողոցի թիվ 20 կոտպերատիվ շենքի թիվ 43 բնակարանը գրանցվել է Հովհաննես Գասպարյանի անվամբ:

3) Հովհաննես Գասպարյանը մահացել է 04.01.2005 թվականին:

4) Երևանի Կենտրոն նոտարական գրասենյակի 2005 թվականի ժառանգական գործի գրանցման մուտքի թիվ 1 մատյանի քաղվածքի համաձայն՝ 04.01.2005 թվականին մահացած Հովհաննես Գասպարյանի ժառանգությունն ընդունելու մասին Անժելա Ղազարյանի դիմումը գրանցվել է նոտար Ե. Սարգսյանի մոտ:

5) Շուշանիկ Հովհաննեսի Սարգսյանին հասցեագրված 22.07.2005 թվականի գրությամբ նոտար Ն. Սարգսյանը հայտնել է, որ Հովհաննես Գասպարյանի «մահից հետո ժառանգության իրավունքի վկայագիր չենք կարող տալ, քանի որ ժառանգների մեջ կա վիճաբանության խնդիր», իսկ Ոսկեհատ, Հրանուշ և Նունե Հովհաննեսի Գասպարյաններին հասցեագրված 15.03.2006 թվականի գրությամբ հայտնել է, որ Հովհաննես Գասպարյանի մահվան օրից՝ 04.01.2005 թվականից հետո մինչև վեց ամիսը լրանալը դիմել են ժառանգական գործի գրանցման պահանջով, սակայն նոր գործ չի գրանցվել, քանի որ այն արդեն գրանցված է եղել Անժելա Ղազարյանի ներկայացրած փաստաթղթերով: Գասպարյաններին խորհուրդ է տրվել ներկայանալ նոտարական գրասենյակ 04.07.2005 թվականից հետո, երբ կլրանա իրենց հոր մահվան վեցամսյա ժամկետը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռի մեջ պետք է նշվեն վերաքննիչ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դեկլարվել է վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումները:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը (տես՝ ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ընդդեմ «Քնար-88» սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերության, քաղ. գործ թիվ 3-2504(ՏԴ) (գումար բռնագանձելու պահանջով):

Սույն գործում առկա են Երևանի Կենտրոն նոտարական գրասենյակի 2005 թվականի ժառանգական գործի գրանցման մուտքի թիվ 1 մատյանի քաղվածքը՝ մեկ թերթից, ինչպես նաև նոտար Ն. Սարգսյանի Շուշանիկ Հովհաննեսի Սարգսյանին հասցեագրված 22.07.2005 թվականի և Ոսկեհատ, Հրանուշ ու Նունե Հովհաննեսի Գասպարյաններին հասցեագրված 15.03.2006 թվականի գրությունները: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, գնահատելով նոտար Ն. Սարգսյանի 22.07.2005 թվականի և 15.03.2006 թվականի գրությունները, վճռում չի անդրադարձել 2005 թվականի ժառանգական գործի գրանցման մուտքի թիվ 1 մատյանի քաղվածքին, ժառանգությունն ընդունելու համար միայն Անժելա Ղազարյանի դիմումը գրանցված լինելու ապացույցը մերժելուն և դրա հիմնավորումներին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է նրան հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Նույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածը ենթադրում է գործի հանգամանքները որոշակի ապացույցներով հաստատելու պահանջ: Նման պահանջ ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ ժառանգությունն ընդունված է համարվում, երբ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգը դիմում է հանձնում ժառանգության բացման վայրի նոտարին: Նշված օրինադրույթը ենթադրում է, որ ժառանգությունն ընդունելու հանգամանքը պետք է հաստատվի դիմումը նոտարին հանձնելու փաստը հաստատող ապացույցի առկայությամբ:

Սույն գործով, նոտարի 15.03.2006 թվականի գրության հիման վրա, հաստատվել է Ոսկեհատ, Հրանուշ և Նունե Գասպարյանների դիմումը նոտարին հանձնելու հանգամանքը, սակայն բացակայում են համապատասխան դիմումները և դրանց ժառանգական գործի գրանցման մուտքի մատյանում գրանցման վերաբերյալ ապացույցները: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը չի գնահատել վերը նշված ապացույցները և հանգամանքները, որի արդյունքում հանգել է հետևության, որ Շուշանիկ Սարգսյանը, Ոսկեհատ, Հրանուշ ու Նունե Գասպարյանները ժառանգությունն ընդունած ժառանգներ են, ինչպես նաև չի նշել այն օրենքները և այլ իրավական ակտերը, որոնցով դեկավարվել է նշված մասով վճիռ կայացնելիս:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում նշված հարցի մեկնաբանմանը, քանի որ նշված հոդվածի խախտման վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտել է սույն քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի 14.07.2006 թվականի թիվ 3-1551(ՎԴ) որոշմամբ (գ.թ. 111-113): Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը կրկին անգամ խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի պահանջները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և դեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 04.05.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ա. Մկրտումյան
Դատավորներ՝ Ս. Սարգսյան, Վ. Աբելյան, Ս. Անտոնյան, Ս. Գյուրջյան,
Է. Հայրիյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵՎ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ Քաղաքացիական գործ թիվ 3-23 (ՎԴ)
 դատարանի վճիռ 2008 թ.
 Քաղաքացիական գործ թիվ 07-3582/3072
 Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան
 դատավորներ՝ Վ. Ավանեսյան
 Գ. Մատինյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ. Մանուկյանի
 մասնակցությամբ դատավորներ՝ Ա. Մկրտումյանի
 Վ. Աբելյանի
 Ս. Սարգսյանի
 Դ. Ավետիսյանի
 Հ. Ղուկասյանի
 Ս. Օհանյանի

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հասմիկ Ճշմարիտյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.11.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Սիբրանուշ և Սաթենիկ Ճշմարիտյանների օրինական ներկայացուցիչ Անահիտ Ալեքսանյանի դիմումի՝ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու, ինչպես նաև ըստ Հասմիկ Ճշմարիտյանի դիմումի՝ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Անահիտ Ալեքսանյանը պահանջել է հարգելի համարել անչափահասներ Սիրանուշ և Մաթենիկ Ճշմարիտյանների կողմից Տիգրան Ճշմարիտյանի ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը և նրանց ճանաչել Երևանի Սևաբեգի Մաքոյի փողոցի թիվ 16 տան՝ Սիրանուշ Ղազարյանին պատկանող բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ:

Դիմելով դատարան՝ Հասմիկ Ճշմարիտյանը պահանջել է հարգելի համարել ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը և ճանաչել Երևանի Սևաբեգի Մաքոյի փողոցի թիվ 16 տան՝ Սիրանուշ Ղազարյանին պատկանող բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.09.2007 թվականի որոշմամբ վերոնշյալ քաղաքացիական գործերը միացվել են մեկ վարույթում:

Վերաքննիչ դատարանի 07.11.2007 թվականի վճռով Անահիտ Ալեքսանյանի դիմումը բավարարվել է, իսկ Հասմիկ Ճշմարիտյանի դիմումը՝ մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հասմիկ Ճշմարիտյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված՝ ապացույցների գնահատման կանոնները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1226-րդ և 1228-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել վիճելի տան միակ բնակիչ Հասմիկ Ճշմարիտյանի կողմից ներկայացված՝ կոմունալ վճարումները հիմնավորող անդորրագրերը, ինչի արդյունքում չի փաստել Հասմիկ Ճշմարիտյանի՝

ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետում ժառանգական զանգվածի փաստացի տիրապետմանն ու կառավարմանն անցած լինելը:

2) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը, խախտել է 42-րդ հոդվածը:

Հասմիկ Ճշմարիտյանը լինելով ըստ օրենքի առաջին հերթի ժառանգ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ և 1226-րդ հոդվածների ուժով համարվում է ժառանգությունն ընդունած ժառանգ, ինչի պայմաններում ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու պահանջի մասով գործի վարույթը ենթակա էր կարճման:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը խախտել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածը, քանի որ Անահիտ Ալեքսանյանը չի ներկայացրել լիազորագիր չափահաս դստեր՝ Սիրանուշ Ճշմարիտյանի անունից՝ դատաքննությանը նրա շահերը ներկայացնելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.11.2007 թվականի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հասմիկ և Տիգրան Ճշմարիտյանները՝ գրանցված ամուսնության մեջ գտնված Կառլեն Լևոնի Ճշմարիտյանի (մահացած՝ 01.03.2003 թվականին) և Սիրանուշ Մուրադի Ղազարյանի (մահացած՝ 08.12.1994 թվականին) ըստ օրենքի առաջին հերթի ժառանգներն են.

2) Տիգրան Ճշմարիտյանը մահացել է 08.11.2005 թվականին.

3) Սիրանուշ և Սաթենիկ Ճշմարիտյանները Տիգրան Ճշմարիտյանի ըստ օրենքի առաջին հերթի ժառանգներն են.

4) Հասմիկ Ճշմարիտյանը 1976 թվականից հաշվառված է Երևանի Սևքարեցի Սաքոյի փողոցի թիվ 16 փողոցի հասցեում գտնվող տանը.

5) Գործում առկա են Հասմիկ Ճշմարիտյանի կողմից ներկայացված՝ վեճի առարկա տան կոմունալ և այլ անհրաժեշտ վճարումները հավաստող անդորրագրերը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսերը, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուի հասանելիք գումարները:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ժառանգության փաստացի տիրապետումը կամ կառավարումը, որպես ժառանգության ընդունման եղանակ, կարող է դրսևորվել ժառանգի կողմից ժառանգական գույքի պահպանման ծախսերը կատարելով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել քննվող քաղաքացիական գործում առկա բոլոր ապացույցները, որի արդյունքում անտեսել է վեճի առարկա տան միակ բնակիչ Հասմիկ Ճշմարիտյանի կողմից ներկայացված՝ ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետում կոմունալ և տան տիրապետման և շահագործման համար անհրաժեշտ այլ վճարումներ կատարված լինելու մասին ապացույցները, որոնցով հիմնավորվում է Հասմիկ Ճշմարիտյանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով ժառանգությունը ընդունելու հանգամանքը:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որի համաձայն՝

Հասմիկ Ճշմարիտյանը ժառանգական գույքը փաստացի տիրապետելու վերաբերյալ որևէ հիմնավոր ապացույց դատարանին չի ներկայացրել:

Վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 218-րդ հոդվածների ճիշտ և միատեսակ կիրառման խնդրին (տե՛ս, օրինակ՝ «Քնար-88» ՄՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն, 21.12.2006 թ., քաղաքացիական գործ թիվ 3-2504/ՏԴ (գումար բռնագանձելու պահանջով)) և սույն քաղաքացիական գործով նպատակահարմար չի գտնում կրկին անդրադառնալ այդ հարցի մեկնաբանմանը:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատճառաբանությունը, քանի որ ժառանգությունն ընդունելու բաց թողած ժամկետը հարգելի համարելու պահանջը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով, ենթակա է դատարանում քննության:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածների խախտման մասին վճռաբեկ բողոքի պատճառաբանությունը հիմնավոր է, քանի որ գործի քննության ժամանակ 31.07.1989 թվականին ծնված Սիրանուշ Ճշմարիտյանը 31.07.2007 թվականին ձեռք է բերել լրիվ գործունակություն, հետևաբար, նրա շահերը դատարանում կարող էին ներկայացվել միայն վերջինիս կողմից տրված համապատասխան լիազորագրի հիման վրա, ինչը սույն քաղաքացիական գործում բացակայում է:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ փաստը Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու հիմք չէ, քանի որ հայցա-

պահանջի ներկայացման պահին Սիրանուշ Ճշմարիտյանն անչափահաս էր, հետևաբար, Անահիտ Ալեքսանյանն իրավասու էր Սիրանուշ Ճշմարիտյանի անունից ներկայացնելու հայց, իսկ 31.07.2007 թվականին վերջինիս չափահաս դառնալը ինքնին չի կարող խոչընդոտ հանդիսանալ դատարանի կողմից գործի քննությունը շարունակելու և վճիռ կայացնելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Սույն քաղաքացիական գործով հաստատված փաստական հանգամանքները Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.11.2007 թվականի վճիռը փոփոխելու համար, որը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.11.2007 թվականի վճիռը և այն փոփոխել:

2. Անահիտ Կամոյի Ալեքսանյանի դիմումը բավարարել մասնակիորեն՝ ժառանգությունն ընդունելու սահմանված ժամկետի բացթողումը համարել հարգելի: Սիրանուշ Տիգրանի և Սաթենիկ Տիգրանի Ճշմարիտյաններին ճանաչել ք. Երևան, Սևքարեցի Սաքոյի փող. թիվ 16 հասցեում գտնվող՝ Սիրանուշ Մուրադի Ղազարյանին պատկանող տան և հողամասի կես մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ:

3. Հասմիկ Կառլենի Ճշմարիտյանի դիմումը բավարարել մասնակիորեն՝ ժառանգությունն ընդունելու սահմանված ժամկետի բացթողումը համարել հարգելի: Հասմիկ Ճշմարիտյանին ճանաչել ք. Երևան, Սևքարեցի Սաքոյի փող. թիվ 16 հասցեում գտնվող՝ Սիրանուշ Մուրադի Ղազարյանին պատկանող տան և հողամասի կես մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Հ. Մանուկյան
Դատավորներ՝ Ա. Մկրտումյան

Վ. Աբելյան
Ս. Սարգսյան
Դ. Ավետիսյան
Հ. Ղուկասյան
Ս. Օհանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ 3-29 (ՎԴ)
 դատարանի վճիռ 2008 թ.
 Քաղաքացիական գործ թիվ 07-3307
 Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան
 Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
 Մ. Ասատրյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ. Մանուկյանի
 մասնակցությամբ դատավորներ՝ Ա. Մկրտումյանի
 Վ. Աբելյանի
 Մ. Սարգսյանի
 Դ. Ավետիսյանի
 Հ. Ղուկասյանի
 Մ. Օհանյանի

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմենուհի Խաչատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 31.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Նշան Ղազարյանի ընդդեմ Արմենուհի Խաչատրյանի, Երևանի առաջին նոտարական գրասենյակի նոտար Ե. Սարգսյանի, երրորդ անձինք Աշոտ Խաչատրյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանման՝ կտակը, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու և տիրապետման փաստով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Նշան Ղազարյանը պահանջել է անվավեր ճանաչել Հակոբ Ղազարյանի 27.08.2002 թվականի կտակը, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա՝ Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9ա հասցեի նկատմամբ Արմենուհի Խաչատրյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը և տիրապետման փաստով իրեն ճանաչել նշված հասցեի Արմենուհի Խաչատրյանին պատկանող մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.08.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.10.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արմենուհի Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նշան Ղազարյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերը, 304-րդ և 311-րդ հոդվածները, 1203-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 1204-րդ հոդվածը, 1205-րդ հոդվածի 2-րդ կետը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել 1211-րդ հոդվածի 4-րդ կետը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Սույն քաղաքացիական գործով կտակը կազմվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի, 1203-րդ հոդվածի 1-ին մասի, 1204-րդ հոդվածի և 1205-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների պահպանմամբ՝ այն կազմվել է գրավոր, կտակում նշվել են այն կազմելու վայրը և ժամանակը, կտակն ստորագրել են անձամբ կտակարարը և վկան, այն վավերացված է նոտարի կողմից: Բացի այդ, գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ կտակը կազմելիս

կտակարարը չի հասկացել իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք:

Նոտարը կտակը վավերացնելիս ստուգել է կտակարարի և վկայի ինքնությունը, գործունակությունը, հաստատել է ստորագրության իսկությունը: Թեև կտակում վկայի բնակության հասցեն չի նշել, սակայն կտակին կցել է նրա անձնագրի՝ բնակության հասցեի նշումով պատճենը: Տվյալ դեպքում վկայի հասցեն չնշելը պետք է դիտել կտակը կազմելու կարգի աննշան խախտում, որը չի ազդել կտակարարի կամքի արտահայտության ըմբռնման վրա և կտակն անվավեր ճանաչելու հիմք չէ:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում կիրառել է նույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա բոլոր ապացույցները, որի արդյունքում անտեսել է այն հանգամանքը, որ վիճելի տան ժառանգատուին պատկանող 1/2-րդ մասը և նրա կնոջը՝ Մարգարիտ Ղազարյանին պատկանող տան մյուս մասը փաստացի տիրապետել և կառավարել են Արմենուհի Խաչատրյանը և երրորդ անձ Աշոտ Խաչատրյանը, կատարել են տան պահպանման և այլ ծախսերը, դիմել են նոտարական գրասենյակ, ստացել սեփականության իրավունքի վկայականներ:

Սույն գործով կտակարարը հայցվորին վտարել էր վիճելի տանից և դատարանի վճռով է ճանաչվել հայցվորի՝ նշված տան նկատմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունքը, իսկ այդ տան միայն մեկ սենյակում հայցվորը փաստացի բնակվել է միայն կտակարարի մահից հետո, կտակառու Ա. Խաչատրյանի հետ կնքված հաշտության համաձայնությամբ:

3) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ և 335-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դեռևս 2002 թվականին կտակարարի մահից հետո Արմենուհի Խաչատրյանի հետ հաշտության համաձայնություն կնքելիս Նշան Ղազարյանը գիտեր կտակի առկայության մասին, սակայն դատական պաշտ-

պանության է դիմել միայն 2007 թվականին, որով բաց է թողել օրենքով նախատեսված հայցային վաղեմության ժամկետը, որը հայցը մերժելու հիմք է:

Վերոգրյալի հիման վրա վճարելի բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.10.2007 թվականի վճիռը, կիրառել հայցային վաղեմություն, հայցը մերժել և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.08.2007 թվականի վճռին:

2.1. Վճարելի բողոքի պատասխանը.

Կտակարարը կտակը կազմելով՝ առանց պատճառների և բացատրության, ըստ օրենքի ժառանգներին զրկել է ժառանգությունից: Կտակը կազմվել է կտակարարի բնակության վայրում, կտակը կազմելիս օգտագործվել է համակարգիչ, այն դեպքում, երբ նշված հասցեում համակարգիչ չի եղել: Հակոբ Ղազարյանը կտակն անձամբ իր ձեռքով չի գրել, այն նրա բառերով նոտարը գրի չի առել, կտակը համակարգչով կազմվել է անհայտ վայրում և նոտարը վավերացրել է ընդամենը տպագրված տեքստը: Կտակում չի նշվել և առկա չէ որևէ ապացույց, որ կտակարարը անձամբ ընթերցել է կտակի բովանդակությունը, կամ նրա համար այն ընթերցվել է նոտարի կողմից: Կտակում առկա չէ նաև կտակը ստորագրած վկայի անձնագրային տվյալները և բնակության վայրը: Կտակում առկա խախտումները չեն կարող աննշան դիտվել և գործով ապացուցված չէ, որ այդ խախտումները չէին կարող ազդել կտակարարի կամքի արտահայտության վրա:

Արմենուհի Խաչատրյանի կողմից առաջին ատյանի դատարանում բանավոր միջնորդություն է արվել հայցային վաղեմություն կիրառելու մասին՝ պարտավորվելով այն ներկայացնել գրավոր, սակայն այդպես էլ գրավոր հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ոչ առաջին ատյանի և ոչ էլ Վերաքննիչ դատարաններում չեն ներկայացվել:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1) ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության 18.03.2002 թվականի արձանագրության համաձայն՝ դատարանի վճռի հիման վրա Նշան Ղազարյանին և նրա ընտանիքի անդամներին Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9ա

տան սեփականատեր Հակոբ Ղազարյանի ընտանիքի անդամ ճանաչելու, այդ բնակարանից օգտվելու նրանց իրավունքը ճանաչելու և նրանց այդտեղ բնակեցնելու ՀՀ ԱՆ ԴԱՀԿԱ ծառայության աշխատակիցների գործողության ժամանակ Հակոբ Ղազարյանը խոչընդոտել է, որդուն սպառնացել, արգելել է նրանց իր տանը բնակեցնելուն:

2) 27.08.2002 թվականին նոտարական կարգով վավերացված կտակով Հակոբ Ղազարյանը իրեն պատկանող ամբողջ գույքը, այդ թվում Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9ա հասցեում գտնվող, անձնական սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի տունը կից հողամասի հետ միասին ամբողջությամբ կտակել է Արմենուհի Խաչատրյանին: Կտակարար Հակոբ Ղազարյանի հիվանդության պատճառով կտակը վավերացվել է տանը: Կտակը ստորագրված է Համլետ Ստեփանյանի կողմից, սակայն կտակում վկայի բնակության վայրը չի նշվել: Նոտարի կողմից արձանագրվել է, որ Համլետ Ստեփանյանը «ստորագրել է Հակոբ Ղազարյանի հանձնարարությամբ, ձեռքի թուլության պատճառով»: (գ.թ.5)

3) Հակոբ Ղազարյանի կտակը վավերացնելիս նոտարական գործին կցվել է ինչպես Հակոբ Ղազարյանի, այնպես էլ վկա Համլետ Ստեփանյանի անձնագրերի՝ բնակության վայրի նշումով պատճենները:

4) 03.09.2002 թվականին Հակոբ Ղազարյանը մահացել է:

5) 12.03.2003 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի, Երևանի քաղաքապետի 09.07.2004 թվականի թիվ 1245-Ա որոշման և 19.01.2005 թվականի անշարժ գույքի մասի նվիրատվության պայմանագրի հիման վրա՝ Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9ա հասցեի 1/2-ական մասերի նկատմամբ գրանցվել է Արմենուհի Խաչատրյանի և Աշոտ Խաչատրյանի սեփականության իրավունքը (գ.թ.6, 18-21):

6) Թիվ 20 պոլիկլինիկայի 09.04.2007 թվականի գրության համաձայն՝ Հակոբ Ղազարյանը 2002 թվականի ընթացքում տնային կանչով և ակտիվ այցերի ձևով դիմել է թաղամասային թերապևտին, որոնց արդյունքում ախտորոշվել է սիրտ-թոքային անբավարարություն, աթերոսկլերոզ, խրոնիկ բրոնխիտ և նշանակվել է համապատասխան բուժում:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1203-րդ հոդվածի համաձայն՝ կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով այն կազմելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի և վավերացվի նոտարի կողմից: Նշված կանոնները չպահպանելը հանգեցնում է կտակի անվավերության: Նույն օրենսգրքի 1204-րդ հոդվածի համաձայն՝ էթե կտակարարը ֆիզիկական թերությունների, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող անձամբ ստորագրել կտակը, ապա նրա խնդրանքով, նոտարի կամ օրենքին համապատասխան կտակը վավերացնող այլ անձի ներկայությամբ, կտակը կարող է ստորագրվել այլ քաղաքացու կողմից՝ կտակում նշելով այն պատճառները, որոնց ուժով կտակարարը չի կարողացել անձամբ ստորագրել կտակը: Կտակում պետք է նշվեն այդ քաղաքացու անունը և նրա բնակության վայրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոտարի վավերացրած կտակը պետք է գրած լինի կտակարարը կամ կտակարարի բառերով գրի առնի նոտարը: Կտակ գրելիս կամ գրի առնելիս կարող են օգտագործվել տեխնիկական միջոցներ (համակարգիչ, գրամեքենա և այլն): Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կտակը կազմելիս և նոտարի կողմից վավերացնելիս կտակարարի ցանկությամբ կարող է ներկա գտնվել վկա: Եթե կտակարարն ի վիճակի չէ անձամբ կարդալ կտակը, վկայի ներկայությունը պարտադիր է: Եթե կտակը կազմվում և վավերացվում է վկայի ներկայությամբ, ապա այն պետք է ստորագրի վկան: Կտակում պետք է նշվեն վկայի անունն ու նրա բնակության վայրը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 27.08.2002 թվականին Հակոբ Ղազարյանի կտակը կազմվել է գրավոր, Հ. Ղազարյանը կտակով արտահայտել է գործարքի բովանդակությունը՝ կտակել է իր գույքը, հիվանդության պատճառով կտակարարի հանձնարարությամբ այն ստորագրել է վկան՝ Համլետ Ստեփանյանը և, այն վավերացվել է նրա տանը: Կտակում նշվել է այն կազմելու վայրը և ժամանակը: Նոտարի կողմից գործարքը վավերացնելիս նշվել է վկայի անունը, հայրանունը և

ազգանունը, այն, որ նա ստորագրել է կտակարար Հակոբ Ղազարյանի հանձնարարությամբ: Կտակը վավերացնելիս նոտարի կողմից ստուգվել է վկայի և կտակարարի ինքնությունը և գործունակությունը, որից հետո վավերացվել է վկայի ստորագրության իսկությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն այն մասին, որ կտակը կազմվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ, 304-րդ, 311-րդ, 1203-րդ, 1204-րդ և 1205-րդ հոդվածների խախտմամբ:

Բացի այդ անհիմն է Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ կտակը կազմելու կամ նոտարի կողմից վավերացնելու ժամանակ Հակոբ Ղազարյանն ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք, քանի որ գործում բացակայում է այդ հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց: Ավելին, թիվ 20 պոլիկլինիկայի 09.04.2007 թվականի գրությամբ ախտորոշված հիվանդությունների առկայությունն ինքնին բավարար չէ փաստելու համար անձի կողմից իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ ղեկավարելու անհնարիությունը:

Ինչ վերաբերում է այն հարցին, որ կտակում վկայի բնակության վայրը նշված չէ, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կտակում վկայի բնակության վայրի չնշելը սույն քաղաքացիական գործով կտակը կազմելու աննշան խախտում է և չէր կարող ազդել կտակարարի կամքի արտահայտության վրա: Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում այն հանգամանքը, որ նոտարական գործում առկա է վկայի անձնագրի պատճենը, որը հնարավորություն է տալիս պարզելու վկայի բնակության վայրի հասցեն: Հետևաբար, կտակում վկայի բնակության վայրի մասին նշում չկատարելը կտակն անվավեր ճանաչելու հիմք չէ:

2) Բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Նույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի

տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ուսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Նշան Ղազարյանը և նրա ընտանիքի անդամները Հակոբ Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9ա հասցեի տանը բնակեցվել են դատարանի վճռի հիման վրա՝ 2001 թվականի նոյեմբերին, սակայն նույն օրը Հակոբ Ղազարյանը նրանց դուրս է հանել տանից: 18.03.2002 թվականի արձանագրության համաձայն՝ դատարանի վճռի հիման վրա Նշան Ղազարյանին և նրա ընտանիքի անդամներին Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9ա տան սեփականատեր Հակոբ Ղազարյանի ընտանիքի անդամ ճանաչելու, այդ բնակարանից օգտվելու նրանց իրավունքը ճանաչելու և նրանց այդտեղ բնակեցնելու ՀՀ ԱՆ ԴԱՀԿԱ ծառայության աշխատակիցների գործողության ժամանակ Հակոբ Ղազարյանը խոչընդոտել է, որդուն սպառնացել, արգելել է նրանց իր տանը բնակեցնելուն (գ.թ.8-9):

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Հակոբ Ղազարյանի մահից հետո նրա գույքը փաստացի տիրապետել կամ կառավարել է Նշան Ղազարյանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006 թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Սակայն կարևորելով սույն բողոքի հիմքում ընկած իրավական հարցադրումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործի քննության ժամանակ գործող 218-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համա-

ձայն՝ վճռում պետք է նշվեն վերաքննիչ դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, ՀՀ միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ Հակոբ Ղազարյանի մահից հետո Երևանի Դավթաշեն 7-րդ փողոցի թիվ 9ա հասցեի Հ. Ղազարյանին պատկանող 1/2-րդ մասում բնակվել է Նշան Ղազարյանը և փաստացի տիրապետմամբ ընդունել է հոր ժառանգությունը, առանց այդ հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց նշելու:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանի վճիռը զուրկ է իրավական հիմնավորումից, և այս առումով այն չի կարող լինել օրինական, համոզիչ, ինչպես նաև հեղինակավոր:

3) Բողոքը երրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետը երեք տարի է, իսկ նույն օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության

ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

Մինչդեռ սույն գործով Վերաքննիչ դատարանում դատաքննության ընթացքում Արմենուհի Խաչատրյանի կամ նրա ներկայացուցչի կողմից հայցային վաղեմություն կիրառելու և այդ հիմքով հայցը մերժելու վերաբերյալ միջնորդություն չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի պատասխանում առկա փաստարկները մասնակիորեն հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին և երկրորդ հիմքերի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերը նշված հոդվածներով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Սույն քաղաքացիական գործով հաստատված փաստական հանգամանքները Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.08.2007 թվականի թիվ 2-813 վճիռն օրինական ուժ տալու համար, որը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 31.10.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 08.08.2007 թվականի թիվ 2-813 վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Հ. Մանուկյան
Դատավորներ՝ Ա. Մկրտումյան

Վ. Աբելյան
Ս. Սարգսյան
Դ. Ավետիսյան
Հ. Ղուկասյան
Ս. Օհանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական ֆաղաքացիական գործ թիվ 3-148 (ՎԴ)
 դատարանի վճիռ 2008 թ.
 Քաղաքացիական գործ թիվ 07-3298/2007 թ.
 Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
 Դատավորներ՝ Կ. Հակոբյան
 Լ. Սոսյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ. Մանուկյանի
 մասնակցությամբ դատավորներ՝ Ա. Մկրտումյանի
 Վ. Աբելյանի
 Ս. Սարգսյանի
 Դ. Ավետիսյանի
 Հ. Ղուկասյանի
 Ս. Օհանյանի

2008 թվականի փետրվարի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արմեն Ալլահվերդյանի և Բաբկեն Տեր-Մանվելյանի բերած վճռաբեկ բողոքները Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Արմեն Ալլահվերդյանի ընդդեմ Բաբկեն Տեր-Մանվելյանի, «Կենտրոն» նոտարական գրասենյակի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է մասնակի անվավեր ճանաչել Բաբկեն Տեր-Մանվելյանի անվամբ 31.10.2001 թվականին և 10.11.2004 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը և ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևան Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 24.04.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.02.2007 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է Բաբկեն Տեր-Մանվելյանին 31.10.2001 թվականին և 10.11.2004 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակիորեն՝ 1/4 մասով, ճանաչել անվավեր և հայցվոր Արմեն Ալլահվերդյանին ճանաչել իր հոր՝ Նորայր Ալլահվերդյանի ժառանգությունն ընդունած ժառանգ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Բաբկեն Տեր-Մանվելյանը և Արմեն Ալլահվերդյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ Բ. Տեր-Մանվելյանի վճռաբեկ բողոքի՝

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ և 280-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 17-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Նորայր Ալլահվերդյանը դիմել է դատարան՝ Բաբկեն Տեր-Մանվելյանին 31.10.2001 թվականին և 10.11.2004 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու և իրեն ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջով: Հետագայում հայցից հրաժարվել է:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայցից հրաժարվելու դեպքում կրկին նույն հայցով դատարան դիմելու իրավունքը վերապահված է միայն նույն հայցվորին, այսինքն՝ Նորայր Ալլահվերդյանին, այլ ոչ թե Արմեն Ալլահվերդյանին: Բացի այդ, հայցից հրաժարումը նշանակում է հրաժարում ոչ թե ժառանգությունից, այլ արդեն իսկ ընդունած ժառանգական գույքից:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը չի պարզել, թե արդյոք սույն իրավահարաբերություններում առկա է հայցվորի որևէ սուբյեկտիվ իրավունքի, նյութաիրավական կամ օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունն այն դեպքում, երբ նման իրավունքից օգտվելու ցանկություն չի ունեցել այն անձը, որի իրավունքների պաշտպանությամբ հանդես են գալիս նրա մահվանից հետո:

Վերոգրյալի հիման վրա, վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ վերաքննիչ դատարանի 02.10.2007 թվականի վճիռը և այն փոփոխել, հայցը մերժել:

Ըստ Ա. Ալլահվերդյանի վճռաբեկ բողոքի՝

Դատարանը ճիշտ չի կիրառել քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ, 1216-րդ, 1225-րդ, 1226-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաստատված համարելով Ն. Ալլահվերդյանի կողմից ժառանգական գույքի 1/2-րդ մասը ընդունելու փաստը, այնուամենայնիվ Բաբկեն Տեր-Մանվելյանին 31.10.2001 և 10.11.2004 թվականներին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը անվավեր է ճանաչել մասնակի՝ 1/4-ի մասով:

Վերոգրյալի հիման վրա, վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.10.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավիթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 27.04.2007 թվականի վճիռն:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Նորայր Ալլահվերդյանը ժառանգատուի (Քնարիկ Ալլահվերդյանի) հայրն է, իսկ Բաբկեն Տեր-Մանվելյանը՝ որդին:

2) Արմեն Ալլահվերդյանը Նորայր Ալլահվերդյանի որդին է և առաջին հերթի ժառանգը:

3) Քնարիկ Ալլահվերդյանի մահվան պահից Երևանի Ալիխանյան եղբայրներ փողոցի 3-րդ շենքի թիվ 324 բնակարանում մշտապես հաշվառված է եղել և բնակվել Նորայր Ալլահվերդյանը:

4) Բաբկեն Տեր-Մանվելյանը 31.10.2001 թվականին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայական է ստացել Երևանի Բուզանդի փողոցի թիվ 38 բնակելի տան, իսկ 10.11.2004 թվականին՝ Ալիխանյան փողոցի 3-րդ շենքի 324-րդ բնակարանի նկատմամբ:

5) Նորայր Ալլահվերդյանը դիմել է դատարան՝ Բաբկեն Տեր-Մանվելյանին 31.10.2001 թվականին և 10.11.2004 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու և իրեն ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջով: Հետագայում հայցից հրաժարվել է:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքները նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

Բաբկեն Տեր-Մանվելյանի վճռաբեկ բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ իրավական հարցը.

Արդյո՞ք հայցից հրաժարումը կարող է դիտվել որպես հայցվող գույքի նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ

նա արդեն ընդունել է ժառանգությունը: Ժառանգությունից հրաժարվելն իրականացվում է ժառանգի կողմից ժառանգության բացման վայրի նոտարին դիմում տալու միջոցով:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ժառանգը կարող է հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման վայրի նոտարին ժառանգությունից հրաժարվելու վերաբերյալ դիմում տալու միջոցով: Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Նորայր Ալլահվերդյանը նման եղանակով իրեն հասանելիք ժառանգությունից չի հրաժարվել:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում ներկայացված պատճառաբանությանն այն մասին, որ հայցից հրաժարումը անհրաժեշտ է որակել որպես ժառանգությունից հրաժարում, ապա Վճռաբեկ դատարանը այն անհիմն է համարում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը փոխել հայցի հիմքը կամ առարկան, ավելացնել կամ նվազեցնել հայցային պահանջների չափը կամ հրաժարվել հայցից:

Վերոնշյալից հետևում է, որ հայցից հրաժարումը հայցվորի դատավարական իրավունքն է: Հայցից հրաժարվելով, հայցվորն ըստ էության հրաժարվում է ոչ թե պատասխանողի նկատմամբ ունեցած պահանջից, այլ քաղաքացիական դատավարության կանոններով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցից:

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում նաև դատավարական օրենքի այն կարգավորումը, համաձայն որի՝ հայցից հրաժարումը հայցվորին չի զրկում նույն հայցով կրկին անգամ դատարան դիմելու իրավունքից: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից: Նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան, բացառությամբ սույն օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքի:

Այսինքն՝ Նորայր Ալլահվերդյանը, հրաժարվելով Բաբկեն Տեր-Մանվելյանի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու և իրեն ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջով ներկայացված

հայցադիմումից, չի գրկվել նույն հայցով կրկին անգամ դատարան դիմելու իրավունքից:

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև վճռաբեկ բողոքի այն հիմնավորումը, համաձայն որի Արմեն Ալլահվերդյանը պատշաճ հայցվոր չէ, քանի որ Նորայր Ալլահվերդյանը չի օգտվել իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հնարավորությունից, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն), եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքի կանոններով:

Նույն օրենսգրքի 1186-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմեն Ալլահվերդյանը Նորայր Ալլահվերդյանի որդին է և առաջին հերթի ժառանգը, հետևաբար, Արմեն Ալլահվերդյանին է անցնում Նորայր Ալլահվերդյանին պատկանող գույքային բոլոր իրավունքները, այդ թվում՝ Նորայր Ալլահվերդյանի կողմից արդեն իսկ ընդունած վեճի առարկա ժառանգական գույքի նկատմամբ սեփականության իրավունքը:

Հետևաբար, վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ Նորայր Ալլահվերդյանի դատարան դիմելու իրավունքը ծագել է ժառանգության ընդունման փաստերով, ինչը բխում է նյութական իրավահաջորդի դատավարական իրավագործությունից:

Արմեն Ալլահվերդյանի վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի առաջին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել, իսկ նույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է

տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև հայրը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հաստատված համարելով այն հանգամանքը, որ Նորայր Ալլավերդյանը ընդունել է ժառանգական գույքի 1/2 մասը, այնուհանդերձ վճռել է Բարկեն Տեր-Մանվելյանին 31.10.2001 թվականին և 10.11.2004 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը անվավեր ճանաչել 1/4-ի մասով: Այսինքն՝ առկա է անհամապատասխանություն Վերաքննիչ դատարանի վճռի պատճառաբանական և եզրափակիչ մասերում:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական խախտումը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արմեն Ալլահ-վերդյանի վճռաբեկ բողոքի հիմնավոր լինելը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 02.10.2007 թվականի վճիռը բեկանելու հիմք է:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Արմեն Ալլահվերդյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.10.2007 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 27.04.2007 թվականի վճռին:

2. Բաբկեն Տեր-Մանվելյանի վճռաբեկ բողոքը մերժել:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Հ. Մանուկյան
Դատավորներ՝ Ա. Մկրտումյան

Վ. Աբելյան
Ս. Սարգսյան
Դ. Ավետիսյան
Հ. Ղուկասյան
Ս. Օհանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական ֆաղաքացիական գործ թիվ 3-183 (ՎԴ)
 դատարանի վճիռ 2008 թ.
 Քաղաքացիական գործ թիվ 07-3273
 Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան
 Դատավորներ՝ Ն. Հովսեփյան
 Մ. Ասատրյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Հ. Մանուկյանի
 մասնակցությամբ դատավորներ՝ Ա. Մկրտումյանի
 Վ. Աբելյանի
 Ս. Սարգսյանի
 Դ. Ավետիսյանի
 Հ. Ղուկասյանի
 Ս. Օհանյանի

2008 թվականի մարտի 27-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Կարինե Սերոպյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.10.2007 թվականի վճռի դեմ՝ ըստ Վլադիմիր Բալասանյանի հայցի ընդդեմ Կարինե Սերոպյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրամադրելու, Սերոպյան Բալասանյանի 01.02.1994 թվականի կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մասից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և

Այգեստանի 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ Կարինե Մերոսյանի սեփականության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու, ինչպես նաև ըստ Կարինե Մերոսյանի հայցի ընդդեմ Վլադիմիր Բալասանյանի՝ բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը կողմերից յուրաքանչյուրի բաժնին համաչափ բաշխելու կամ ըստ սեփականության վկայականի 1/2 բաժնի դիմաց փոխհատուցելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վլադիմիր Բալասանյանը պահանջել է անվավեր ճանաչել ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայականը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականները, մասնակիորեն անվավեր ճանաչել Մերյոթա Բալասանյանի 01.02.1994 թվականի կտակը, ճանաչել Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ, ինչպես նաև փոխհատուցմամբ դադարեցնել Կարինե Մերոսյանի սեփականության իրավունքն Այգեստանի 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ:

Դիմելով դատարան՝ Կարինե Մերոսյանը պահանջել է Այգեստանի 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանը վաճառել հրապարակային սակարկություններով և ստացված գումարը բաշխել կողմերից յուրաքանչյուրի բաժնին համաչափ կամ ըստ սեփականության վկայականի 1/2 բաժնի դիմաց փոխհատուցել:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 20.07.2006 թվականի որոշմամբ վերը նշված քաղաքացիական գործեր միացվել են մեկ վարույթում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 04.07.2007 թվականի վճռով Վլադիմիր Բալասանյանի և Կարինե Մերոսյանի հայցերը բավարարվել են մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.10.2007 թվականի վճռով Վլադիմիր Բալասանյանի հայցը բավարարվել է, իսկ Կարինե Մերոսյանի հայցը՝ բավարարվել մասնակիորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կարինե Սերոպյանը:
Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացվել Վլադիմիր Բալասանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի, 53-րդ հոդվածի 1-ին մասը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա գրավոր ապացույցները, որն էլ հանգեցրել է գործի սխալ լուծման: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել Երևանի պետական համալսարանի կողմից տրված թիվ 194 արխիվային տեղեկանքը, Երևանի պետական համալսարանի թիվ 18 տեղեկանքը, «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲ ընկերության 26.09.2003 թվականի և 06.10.2006 թվականի գրությունները, «Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրված թիվ ԿՂ-81 տեղեկանքը:

Վլադիմիր Բալասանյանը չի ներկայացրել որևէ ապացույց, որպես Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ:

Վերը նշված ապացույցներն անտեսելու արդյունքում Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, դրանց կիրառմամբ Թամարա Բալասանյանի ժառանգությունը փաստացի ընդունած ժառանգ Սերոյոժա Բալասանյանի փոխարեն ճանաչելով Վլադիմիր Բալասանյանին:

2) Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Կարինե Մերոսյանը պնդել է բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու իր պահանջը և նշել, որ չի ցանկանում ստանալ որևէ փոխհատուցում Վլադիմիր Բալասանյանից:

3) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը:

Կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելով, Վերաքննիչ դատարանը չի վկայակոչել որևէ իրավական նորմ, որով խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.10.2007 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները.

Անհիմն են վճռաբեկ բողոքում նշված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները, քանի որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ գնահատել է բոլոր ներկայացված ապացույցները, որի արդյունքում ճիշտ են մեկնաբանել նյութական իրավունքի նորմերը և կայացվել է արդարացի վճիռ:

Բողոքի պատասխան ներկայացրած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Սերյոժա Բալասանյանը չի ընդունել Թամարա Բալասանյանի մահից հետո թողնված ժառանգությունը, քանի որ 1996 թվականից գրանցված է ք. Մոսկվա, Սվետլագորսկիյ նրբանցք, տուն 5, բնակարան 53 հասցեում:

Սերյոժա Բալասանյանը մահացել է 2003 թվականին և չէր կարող 2004 թվականին «Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի բաժանորդ լինել: Հետևաբար, անհիմն է բողոք բերած անձի այն պատճառաբանությունը, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը և դրա արդյունքում սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Անհիմն է նաև այն պնդումը, որ Վլադիմիր Բալասանյանի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել Երևանի Այգեստանի 10-րդ փողոցի, 2-րդ շենքի 58-րդ բնակարանը փաստացի տիրապետելու վերաբերյալ, քանի որ գործում առկա է տեղեկանք «Կենտրոն» համատիրության

կողմից, որի համաձայն՝ Վլադիմիր Բալասանյանը բնակվել է այդ բնակարանում:

Վերոգրյալի հիման վրա խնդրել է մերժել Կարինե Սերոբյանի կողմից բերված վճռաբեկ բողոքը՝ Վերաքննիչ դատարանի 19.10.2007 թվականի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի Այգեստանի 10-րդ փողոցի, 2-րդ շենքի 58-րդ բնակարանի և 19.84 քմ ավտոտնակի սեփականատերը Սերյոժա Իշխանի Բալասանյանն է (գ.թ. 7, 9, 10): Թամարա (մահացած 01.05.1999 թվականին (գ.թ. 18)) և Սերյոժա (մահացած 03.10.2003 թվականին (գ.թ. 104)) Բալասանյաններն օրինական ամուսնության մեջ գտնվող անձինք են (գ.թ. 8):

2. 01.02.1994 թվականի կտակի համաձայն Սերյոժա Բալասանյանն իր գույքը հավասար բաժիններով կտակել է որդուն՝ Վլադիմիր Բալասանյանին և դստերը՝ Կարինե Սերոբյանին (գ.թ. 11):

3. 01.12.1994 թվականի նվիրատվության պայմանագրով Սերյոժա Բալասանյանը նվիրել է Վլադիմիր Բալասանյանին Երևանի, Այգեստանի 10-րդ փողոցի 2-րդ շենքի 58-րդ բնակարանի 15.5 քմ բնակելի սենյակը և 4.42 քմ օժանդակ տարածքը, որի համար Թամարա Բալասանյանը 26.11.1994 թվականին սվել է գրավոր համաձայնություն (գ.թ. 12-13, 132): 15.12.1994 թվականին Վլադիմիր Բալասանյանն ստացել է սեփականության իրավունքի վկայական (գ.թ. 13):

4. Մոսկվայի թիվ 3 թաղային համայնքի 18.03.2004 թվականի տեղեկանքի համաձայն՝ Սերյոժա Իշխանի Բալասանյանը մինչև մահը՝ 03.10.2003 թվականը, ապրել և հաշվառված էր Մոսկվա, Սվետլագորսկի նրբանցք, տուն 5, բնակարան 53 հասցեում (գ.թ. 123):

5. Երևանի «Կենտրոն» թաղային համայնքի «Կենտրոն» համատիրության 01.09.2006 թվականի տեղեկանքի համաձայն՝ Վլադիմիր Բալասանյանի հայրը՝ Սերյոժա Բալասանյանը, մինչև մահը բնակվել է Երևանի Այգեստանի 10-րդ փողոցի 2-րդ շենքի 58-րդ բնակարանում (գ.թ. 88) և նույն մարմնի 05.03.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ Սերյոժա

Բալասանյանը չի բնակվել Երևանի Այգեստանի 10-րդ փողոցի 2-րդ շենքի 58-րդ բնակարանում (գ.թ. 192):

6. Երևանի պետական համալսարանի 28.08.2006 թվականի թիվ 18 տեղեկանքի համաձայն՝ Սերյոժա Բալասանյանն աշխատել է Երևանի պետական համալսարանում 1953 թվականից մինչև 2003 թվականի հոկտեմբեր ամիսը, որպես ամբիոնի պատվավոր վարիչ (գ.թ. 89, 92):

7. «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի 26.09.2006 թվականի թիվ 09/173 գրության համաձայն՝ «մինչև 20.07.2004 թվականն Այգեստանի 10-րդ փողոցի 2-րդ շենքի 58 բնակարան հասցեում գործող 556817 հեռախոսահամարի բաժանորդ է հանդիսացել Սերյոժա Բալասանյանը» (գ.թ. 190) և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 12.09.2006 թվականի տեղեկանքի համաձայն՝ «բաժանորդական N 9802058-ով 15.07.1998 թվականից մինչև 01.07.2004 թվականը էլեկտրացանցի բաժանորդ է հանդիսացել Սերգեյ Բալասանյանը, իսկ 01.07.2004 թվականից առ այսօր՝ Վլադիմիր Բալասանյանը» (գ.թ. 193):

8. Երևանի «Կենտրոն» թաղային համայնքի «Կենտրոն» համատիրության 05.03.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ Վլադիմիր Բալասանյանը բնակվել է Երևանի Այգեստանի 10-րդ փողոցի 2-րդ շենքի 58-րդ բնակարանում (գ.թ. 192):

9. ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի Մարաշ տարածքային ստորաբաժանման 15.05.2006 թվականի գրության համաձայն՝ վիճելի բնակարանը հավասար բաժիններով հնարավոր չէ բաժանել երկուսի միջև, քանի որ բնակելի սենյակներն անհամաչափ են դասավորված, իսկ կոմունալ և օժանդակ մակերեսները, ինչպես նաև մուտքը տեխնիկապես անբաժանելի են (գ.թ. 53):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձնի հետևյալ իրավական հարցը.

Արդյո՞ք Սերյոժա Բալասանյանը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է Թամարա Բալասանյանի ժառանգությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Նույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սերյոժա Իշխանի Բալասանյանը դեռևս 03.05.1996 թվականից դուրս է գրվել Երևանի Այգեստանի 10-րդ փողոցի 2-րդ շենքի 58-րդ բնակարանի հասցեից և հաշվառվել Մոսկվա, Սվետլագորսկիյ նրբանցք, տուն 5, բնակարան 53 հասցեում: Գործում առկա 18.03.2004 թվականի տեղեկանքով հաստատվել է, որ Թամարա Բալասանյանի մահից հետո Սերյոժա Բալասանյանը չի բնակվել Երևանի Այգեստանի 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ հասցեում գտնվող բնակարանում, որը վկայում է, որ նա փաստացի չի տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, հետևաբար, այն չի ընդունել:

ԻՆչ վերաբերում է «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի 26.09.2006 թվականի թիվ 09/173 գրությանը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 12.09.2006 թվականի տեղեկանքին, որոնք վկայում են Սերյոժա Բալասանյանի բաժանորդ լինելու մասին, ինչպես նաև Երևանի պետական համալսարանում աշխատելու վերաբերյալ տեղեկանքներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանցով չի կարող հիմնավորել Սերյոժա Բալասանյանի կողմից վեճի առարկա գույքը փաստացի տիրապետելու փաստը:

Իսկ ինչ վերաբերում է Երևանի «Կենտրոն» թաղային համայնքի «Կենտրոն» համատիրության 01.09.2006 թվականի տեղեկանքին, ապա այն հերքվում է նույն մարմնի կողմից տրված մեկ այլ 05.03.2007 թվականի տեղեկանքով, հետևաբար, Վճռաբեկ դատարանն այն չի

համարում Մերյոժա Բալասանյանի կողմից փաստացի տիրապետման ուժով ժառանգության ընդունումը հիմնավորող ապացույց:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վլադիմիր Բալասանյանը հաշվառված լինելով շարունակել է բնակվել Երևանի Այգեստանի 10-րդ փողոցի, 2-րդ շենքի, թիվ 58-րդ հասցեում գտնվող բնակարանում, հաստատված է համարել, որ Վլադիմիր Բալասանյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ փաստացի տիրապետման եղանակով ընդունել է ժառանգությունը:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից սույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժինն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Վերոնշյալ հոդվածով ընդհանուր գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու համար սահմանվել են պարտադիր նախապայմաններ, այն է՝ ընդհանուր գույքը բաժանելու, կամ նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժինն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու դատարանի իրավունքը կարող է կիրառվել միայն բացառիկ, այսինքն՝ վերը նշված պարտադիր պայմանների առկայության դեպքում:

Սույն քաղաքացիական գործի փաստերի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատաքննության ընթացքում չի հիմնավորվել վեճի առարկա բնակարանից Կարինե Մերոպյանի բաժինը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետի կիրառելիության վերաբերյալ վճռաբեկ բողոքի հիմնավորումները:

3) Վճռաբեկ բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1211-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կտակն անվավեր է ճանաչվում կտակի ձևի մասին կանոնները և գործարքների անվավերության մասին՝ սույն օրենսգրքի այլ դրույթները խախտելու հետևանքով:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին (տես օրինակ՝ «Քնար-88» ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության, 21.12.2006 թ. Քաղ. գործ թիվ 3-2504/ՏԴ, (գումար բռնագանձելու պահանջով)):

Սակայն կարևորելով սույն բողոքի հիմքում ընկած իրավական հարցադրումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցին:

Վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վճռի մեջ պետք է նշվեն վերաքննիչ դատարանի կողմից պարզված հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են վերաքննիչ դատարանի հետևություններն այդ հանգամանքների մասին, և փաստարկները, որոնցով վերաքննիչ դատարանը մերժում է այս կամ այն ապացույցները, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է դատարանը վճիռ կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե՛ փաստական և թե՛ իրավական հիմնավորումը:

Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը մասնակիորեն անվավեր ճանաչելով կտակը՝ չի նշել ոչ մի օրենք կամ այլ իրավական ակտ, որոնցով ղեկավարվել է դատարանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ վեճի առարկա տունը և ավտոտնակը Սերյոժա և Թամարա Բալասանյանները ձեռք են բերել համատեղ կյանքի ընթացքում: Բացի այդ, Սերյոժա Բալասանյանը 01.02.1994 թվականի կտակը կազմելուց հետո՝ 01.12.1994 թվականի նվիրատվության պայմանագրով, իր գույքը՝ Երևանի Այգեստանի 10-րդ փողոցի 2-րդ շենքի 58-րդ բնակարանի 15.5 քմ բնակելի սենյակը և 4.42 քմ օժանդակ տարածքը, նվիրել է Վլադիմիր Բալասանյանին: Հետևաբար, ժառանգության բացման օրն այն չի պատկանել Սերյոժա Բալասանյանին և չի մտել ժառանգության զանգվածի մեջ:

Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճելի անշարժ գույքի մի մասը ժառանգության բացման ժամանակ չի մտել ժառանգության զանգվածի մեջ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կտակն անվավեր ճանաչելու հիմքերը սույն քաղաքացիական գործով բացակայում են:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի 3-րդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում 01.02.1994 թվականին կազմած կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու հայցի մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն Քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն

հողվածով ամրագրված անձի արդար դատաքնության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.10.2007 թվականի վճիռը և այն փոփոխել՝ Վլադիմիր Բալասանյանի հայցը բավարարել մասնակիորեն: Սերյոժա Բալասանյանի կողմից 01.02.1994 թվականին կազմված կտակն անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցը՝ մերժել:

2. Վճիռը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Հ. Մանուկյան
Դատավորներ՝ Ա. Մկրտումյան

Վ. Աբելյան
Ս. Սարգսյան
Դ. Ավետիսյան
Հ. Ղուկասյան
Ս. Օհանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական քաղաքացիական գործ թիվ 3-446 (ՎԴ)
 դատարանի վճիռ 2008 թ.
 Քաղաքացիական գործ թիվ 07-4291
 Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
 Դատավորներ՝ Տ. Սահակյան
 Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝
 Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա. Մկրտումյանի
 մասնակցությամբ դատավորներ՝ Վ. Աբելյանի
 Ս. Սարգսյանի
 Դ. Ավետիսյանի
 Հ. Ղուկասյանի
 Ս. Օհանյանի

2008 թվականի հուլիսի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի «Կենտրոն» և «Արաբ-կիր» թաղային համայնքների ներկայացուցչի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2008 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Իրինա Շահումյանի ընդդեմ Երևանի Կենտրոն և Արաբկիր թաղային համայնքների՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Իրինա Շահումյանը պահանջել է բռնագանձել պատասխանողներից 5.180 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ինչպես նաև

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսները:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 01.11.2007 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.01.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Արաբկիր թաղային համայնքները:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Իրինա Շահումյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ, 1243-րդ և 1244-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, մասնավորապես՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2006 թվականի թիվ 06-941, 06-2576/2006 թ. վճիռը, որով դատարանը հաստատված համարելով, որ «Կ. Քարամյանը չունի ժառանգներ, վերջինիս մահից հետո նրա գույքի նկատմամբ չի բացվել ոչ ըստ օրենքի և ոչ էլ ըստ կտակի ժառանգություն և վեճի առարկա բնակարանը առանց որևէ հիմքի զբաղեցվել էր պատասխանող Պավել Մովսեսի Մովսիսյանի կողմից», վճռել է «Հանգուցյալ Կարինե Քարամյանին սեփականությամբ պատկանող՝ ք. Երևան, Պարոնյան փողոցի 28 շենքի 65 բնակարանը ճանաչել անժառանգ գույք և դրա նկատմամբ ճանաչել Կենտրոն թաղային համայնքի սեփականության իրավունքը»:

Թաղապետարանը ժառանգ չի կարող լինել, հետևաբար, չի կարող կրել այնպիսի պատասխանատվություն, որպիսին ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանվել է բացառապես ժառանգների համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.01.2008 թվականի վճիռը և օրինական ուժ

տալ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին աստյանի դատարանի 01.11.2007 թվականի թիվ 2-473/2007 թ. վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և փաստարկները.

Վճռաբեկ բողոքի դեմ ներկայացված պատասխանում պատճառաբանվել է, որ թաղապետարանները հանդիսանում են ըստ օրենքի ժառանգների համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլխի կանոնների, այսինքն՝ տվյալ դեպքում տեղի է ունեցել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժառանգության իրավունքի փոխանցում:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Կարինե Քարամյանին սեփականության իրավունքով պատկանել են Երևանի Պարոնյան փողոցի 28 շենքի թիվ 65 և Գրիբոյեդովի փողոցի 44 շենքի թիվ 28 բնակարանները:

2) Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2006 թվականի վճռով հաստատված է համարվել, որ Կ. Քարամյանը չունի ժառանգներ, վերջինիս մահից հետո գույքի նկատմամբ չի բացվել ոչ ըստ օրենքի և ոչ էլ ըստ կտակի ժառանգություն, որի արդյունքում դատարանը Երևանի Պարոնյան փողոցի 28 շենքի թիվ 65 բնակարանը ճանաչել է անժառանգ գույք և դրա նկատմամբ ճանաչել Կենտրոն թաղային համայնքի սեփականությունը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ըստ օրենքի ժառանգները ժառանգման են հրավիրվում սույն օրենսգրքի 1216-1219 հոդվածներով սահմանված հերթականությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Նույն օրենսգրքի 1243-րդ հոդվածի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի համաձայն՝ եթե չկան ոչ ըստ կտակի և ոչ էլ ըստ օրենքի ժառանգներ կամ դրանք հրաժարվել կամ մեկուսացվել են ժառանգությունից, ապա ժառանգվող գույքը ճանաչվում է անժառանգ: Անժառանգ գույքն անցնում է ժառանգության բացման վայրի համայնքի սեփականությանը:

Վերոգրյալ հոդվածներից հետևում է, որ օրենսդիրը սահմանելով ժառանգների ցանկը, որոնք իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընդունել ժառանգությունը, միաժամանակ նույն ժամկետը նախատեսել է ժառանգատուի պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման համար: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ ժառանգներ չկան կամ նրանք հրաժարվել են ժառանգությունից, ժառանգության ընդունման կամ պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման համար օրենքով նախատեսված ժամկետի լրացման փաստի ուժով ժառանգական գույքը ձեռք է բերում մի կարգավիճակ, որով փաստորեն համարվում է որևէ մեկի իրավունքով չձանրաբեռնված գույք՝ անժառանգ գույք:

Այսինքն համայնքը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի ուժով ոչ թե ձեռք է բերում ժառանգի կարգավիճակ, այլ ժառանգների բացակայության, ինչպես նաև ժառանգատուի պարտատերերի կողմից օրենքով սահմանված ժամկետում որևէ պահանջ չներկայացնելու ուժով ձեռք է բերում սեփականության իրավունք ժառանգական զանգվածի նկատմամբ:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ հանգուցյալ Կարինե Քարամյանին սեփականության իրավունքով պատկանել են Երևանի Պարոնյան փողոցի 28 շենքի թիվ 65 և Գրիբոյեդովի փողոցի 44 շենքի թիվ 28 բնակարանները: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած 05.12.2006 թվականի վճռով հաստատվել է այն հանգամանքը, որ Կարինե Քարամյանը ժառանգներ չունի և վերջինիս մահից հետո ժառանգական գույքի՝ Երևանի Պարոնյան փողոցի 28 շենքի թիվ 65 բնակարանի նկատմամբ սահմանված ժամկետում ժառանգություն չի բացվել: Նշվածի հիման վրա հանգուցյալ Կ. Քարամյանի

գույքը համարվել է անժառանգ գույք և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, անցել է ժառանգության բացման վայրի համայնքի սեփականությանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ի. Շահումյանը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Կարինե Քարամյանի նկատմամբ ունեցած իր պահանջը չի ներկայացրել ժառանգության բացման վայրի նոտարին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կարինե Քարամյանի ամբողջ գույքը ճանաչվել է անժառանգ գույք և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան, անցել է ժառանգության բացման վայրի համայնքների սեփականությանը:

Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում նաև վճռաբեկ բողոքի պատճառաբանությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի խախտման մասին, քանի որ նշված հոդվածը վերաբերում է ժառանգների պատասխանատվությանը, մինչդեռ սույն դեպքում վերը նշված հիմնավորումներով արդեն իսկ հերքվել է թաղապետարանների՝ ժառանգ հանդիսանալու փաստը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված հիմնավորումները հերքվում են վերոգրյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքը հիմնավոր համարելով Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում,

Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2008 թվականի վճիռը և օրինական ուժ տալ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 01.11.2007 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ա. Մկրտումյան
Դատավորներ՝ Վ. Աբելյան

Ս. Սարգսյան
Դ. Ավետիսյան
Հ. Ղուկասյան
Ս. Օհանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական քաղաքացիական գործ թիվ 3-502 (ՎԴ)
 դատարանի որոշում 2008 թ.
 Քաղաքացիական գործ թիվ 08-557
 Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
 Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
 Ս. Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝
 Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ. Մանուկյանի
 մասնակցությամբ դատավորներ Ա. Մկրտումյանի
 Վ. Աբելյանի
 Հ. Ղուկասյանի
 Ս. Օհանյանի

2008 թվականի սեպտեմբերի 26-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով Վիլեն Հայրապետյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.03.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Արամ Հայրապետյանի հայցի ընդդեմ Նորիկ Գզիբյանի, Լիլյա և Վիլեն Հայրապետյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու, ինչպես նաև ըստ Վիլեն Հայրապետյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Արամ Հայրապետյանի՝ գումարի բռնագանձելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Արամ Հայրապետյանը պահանջել է ճանաչել Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 բնակարանի բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ, բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառել և ստացված գումարը բաշխել կողմերից յուրաքանչյուր բաժնին համաչափ:

Դիմելով դատարան՝ Վիլեն Հայրապետյանը պահանջել է բռնագանձել հաշտության պայմանագրով վճարված 1.020.000 ՀՀ դրամ գումարը և այդ գումարին հաշվարկվող տոկոսները:

Ավան և Նոր Նորք առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.11.2007 թվականի վճռով հայրը և հակընդդեմ հայրը բավարարվել են մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.03.2008 թվականի որոշմամբ Դատարանի վճիռը՝ բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը կողմերից յուրաքանչյուրի բաժնին համաչափ բաշխելու պահանջով Արամ Հայրապետյանի հայցի մասը բեկանվել է և գործն այդ մասով ուղարկվել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության, դատական ակտի մնացած մասը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վիլեն Հայրապետյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածը, 1226-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները և հաշվի չի առել, որ Արամ

Հայրապետյանը ժառանգատու Օնիկ Հայրապետյանի ժառանգությունն ընդունելու հանգամանքը հավաստող որևէ ապացույց չի ներկայացրել: Ավելին, Վերաքննիչ դատարանն անդրադառնալով «Ավան-4» համատիրության կողմից տրված 19.05.2007 թվականի տեղեկանքին, որի համաձայն՝ Արամ Հայրապետյանը 1989 թվականից չի բնակվում Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանում, հաստատված է համարել, որ Արամ Հայրապետյանը, որպես վիճելի բնակարանի համասեփականատեր, փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել նույն օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Արամ Հայրապետյանը դատաքննության ընթացքում չի հիմնավորել վեճի առարկա բնակարանից իր բաժինը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարությունը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արամ Հայրապետյանը վերաքննիչ բողոքին կից նոր ապացույց ներկայացնելով «Էքսպերտ Լաբորատորիա» ապրանքագիտական փորձաքննության բյուրո ՍՊԸ-ի 13.12.2007 թվականի եզրակացությունը, չի հիմնավորել այն առաջին ատյանի դատարանում իր կամքից անկախ պատճառներով չներկայացնելու հանգամանքները:

3) Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկով.

Արամ Հայրապետյանի, Վիլեն և Լիլյա Հայրապետյանների միջև 09.07.2007 թվականին կնքված հաշտության համաձայնությամբ Վիլեն Հայրապետյանը 16.07.2007 թվականին 9000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարից Արամ Հայրապետյանին վճարել է 1020000 ՀՀ դրամ գումար, որպես Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանի Արամ Հայրապետյանի բաժնի դիմաց փոխհատուցում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ առաջին ատյանի դատարանի կողմից կողմերի միջև կնքած հաշտության համաձայնությունը չհաստատելու պահից, Արամ Հայրապետյանը պետք է հետ վերադարձներ վերը նշված գումարը, որը սակայն չի արել, դրանով իսկ ուրիշի դրամական միջոցները պահել է ապօրինի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.03.2008 թվականի որոշումը մասնակիորեն և դատական ակտը փոփոխել՝ Արամ Հայրապետյանի հայցը ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասով՝ մերժել, Վիլեն Հայրապետյանի հակընդդեմ հայցը բռնագանձվող գումարին հաշվարկվող տոկոսներ բռնագանձելու մասով՝ բավարարել:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Նոր Նորք տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր) 02.02.2007 թվականի գրությամբ Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 բնակարանը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գրանցված է Նորիկ Գզիրյանի, Օնիկ, Արամ, Լիլյա և Վիլեն Հայրապետյանների անվամբ:

2. Օնիկ Հայրապետյանը մահացել է 17.02.1999 թվականին:

3. Նորիկ Գզիրյանը, Արամ, Լիլյա և Վիլեն Հայրապետյանները Օնիկ Հայրապետյանի ըստ օրենքի առաջին հերթի ժառանգներն են:

4. Ավան համայնքի «Ավան-4» համատիրության 19.05.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ Արամ Հայրապետյանը 1989 թվականից Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանում չի բնակվում:

5. 09.07.2007 թվականի հաշտության համաձայնությամբ Վիլեն և Լիլյա Հայրապետյանները պարտավորվել են Արամ Հայրապետյանին վճարել 9000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար, որպես Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանի Արամ Հայրապետյանի բաժնի դիմաց փոխհատուցում:

4. 16.07.2007 թվականի ստացականի համաձայն՝ Արամ Հայրապետյանը Վիլեն Հայրապետյանից ստացել է 1.020.000 ՀՀ դրամ գումար

որպես 09.07.2007 թվականի հաշտության համաձայնագրով սահմանված գումարի առաջին վճարում:

5. Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանը մերժել է հաշտության համաձայնության հաստատման միջնորդությունը:

6. «Էքսպերտ Լաբորատորիա» ՍՊԸ-ի 30.04.2007 թվականի գրությամբ՝ Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 բնակարանի դուռը մշտապես չի բացվել և փորձագետին հնարավորություն չի ընձեռվել կատարել տեղագնություն՝ արդյունքում վերոհիշյալ փորձաքնությունը, կապված բաժնի առանձնացման հետ, չի կատարվել՝ բնակարանում տեղագնություն չկատարելու հետևանքով:

7. «Էքսպերտ Լաբորատորիա» ապրանքագիտական բյուրո ՍՊԸ-ի 13.12.2007 թվականի թիվ 12-07 փորձագետի եզրակացության (այսուհետ՝ Փորձագիտական եզրակացություն) համաձայն՝ Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանի մակերեսից համասեփականատեր Արամ Հայրապետյանի բաժինը բնեղենով առանձնացնել՝ ստեղծելով առանձին կոմունալ հարմարություններ, հնարավոր չէ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսերը, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ժառանգության փաստացի տիրապետումը կամ կառավարումը, որպես ժառանգության ընդունման եղանակ, կարող է դրսևորվել ժառանգի կողմից ժառանգական գույքը պահպանելով՝ այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, ժառանգական գույքի պահպանման ծախսերը կատարելով, իր հաշվից ժառանգատուի պարտքերը վճարելով կամ ժառանգատուին հասանելիք գումարները երրորդ անձանցից ստանալով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել քննվող քաղաքացիական գործում առկա բոլոր ապացույցները: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել Ավան համայնքի «Ավան-4» համատիրության 19.05.2007 թվականի տեղեկանքը, համաձայն որի Արամ Հայրապետյանը 1989 թվականից Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 հասցեում գտնվող բնակարանում չի բնակվում:

Բացի այդ, գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհիմնավորվեր Արամ Հայրապետյանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որևէ եղանակով ժառանգությունն ընդունելու հանգամանքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Արամ Հայրապետյանը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ՝

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ Երևանի Ավան Քուչակ թաղամասի 18 շենքի թիվ 10 բնակարանի դուռը մշտապես չի բացվել և փորձագետին հնարավորություն չի ընձեռվել կատարել տեղազննություն՝ արդյունքում վերոհիշյալ փորձաքննությունը, կապված բաժնեմասի առանձնացման հետ, չի կատարվել՝ բնակարանում տեղազննություն չկատարելու հետևանքով:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա է Արամ Հայրապետյանի կողմից իրենից անկախ պատճառներով 13.12.2007 թվականի փորձագիտական եզրակացությունը առաջին ատյանի դատարանում չներկայացնելու հանգամանքը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա դարձնելով 13.12.2007 թվականի փորձագիտական եզրակացությունը չէր կարող հաստատված համարել ընդհանուր գույքի հրապարակային սակարկություններով վաճառելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված նախապայմանների առկայության կամ բացակայության հարցը, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Վերը նշված հոդվածից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը պետք է քննի միայն հիմնվելով գործում առկա ապացույցների վրա, իսկ նոր ապացույց ներկայացվելու դեպքում, գտնելով, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար և այն չի ներկայացվել առաջին ատյանի դատարան կողմերից անկախ պատճառներով, դատական ակտը պետք է բեկանի և գործն ուղարկի համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, Արամ Հայրապետյանի կողմից ներկայացված 13.12.2007 թվականի փորձագիտական եզրակացությունը դիտելով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույց, հաստատված համարելով կողմերի կամքից անկախ առաջին ատյանի դատարանում այն չներկայացնելու հանգամանքը և մասնա-

կիրեն բեկանելով դատական ակտը, հաստատված է համարել նաև, որ առկա են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված նախապայմանները՝ ընդհանուր գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու համար:

3) Վճռաբեկ բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Վերը նշված հոդվածից հետևում է, որ դրամական պարտավորության չկատարման համար գումարին տոկոսներ վճարելու պարտավորության ծագման հիմք է ուրիշի դրամական միջոցները ապօրինի պահելը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 09.07.2007 թվականի հաշտության համաձայնությամբ Վիլեն և Լիլյա Հայրապետյանները պարտավորվել են Արամ Հայրապետյանին վճարել 9000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար, որպես վիճելի բնակարանի Արամ Հայրապետյանի բաժնի դիմաց փոխհատուցում և 16.07.2007 թվականի ստացականի համաձայն՝ Արամ Հայրապետյանը Վիլեն Հայրապետյանից ստացել է 1.020.000 ՀՀ դրամ գումար, որպես 09.07.2007 թվականի հաշտության համաձայնագրով սահմանված գումարի առաջին վճարում: Մինչդեռ, Դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատման միջնորդությունը մերժվել է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաշտության համաձայնության հաստատման միջնորդությունը մերժվելու պահից, Արամ Հայրապետյանը պետք է վերադարձներ Վիլեն Հայրապետյանին 1.020.000 ՀՀ դրամ գումարը, որի չկատարման պարագայում այն պահվել է ապօրինի:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի վերը նշված հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով՝ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.03.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Հ. Մանուկյան
Դատավորներ՝ Ա. Մկրտումյան

Վ. Աբելյան
Հ. Ղուկասյան
Ս. Օհանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական քաղաքացիական գործ թիվ 3-509 (ՎԴ)
 դատարանի որոշում 2008 թ.
 Քաղաքացիական գործ թիվ 08-621
 Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան
 Դատավորներ՝ Ս. Միքայելյան
 Ն. Տավարացյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետ՝
 Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա. Մկրտումյանի
 մասնակցությամբ դատավորներ Ս. Սարգսյանի
 Վ. Աբելյանի
 Դ. Ավետիսյանի
 Հ. Ղուկասյանի
 Ս. Օհանյանի

2008 թվականի հոկտեմբերի 31-ին,

դռնբաց դատական նիստում, քննելով Ռոզա Գրիգորյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Մամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանների հայցի ընդդեմ Ռոզա Գրիգորյանի, Նիկոլայ և Հասմիկ Սողոմոնյանների՝ իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելության և ժառանգությունն ընդունելու փաստերը հաստատելու պահանջների մասին, և ըստ Ռոզա Գրիգորյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Մամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանների՝ սեփականության իրավունքի գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և բնակելի տան ու հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր ճանաչելու պահանջների մասին,

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանները պահանջել են ճանաչել Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 բնակելի տան նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ և հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստերը, որ Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 բնակելի տան 25.04.1996 թվականի սեփականության իրավունքի վկայականում, Նիկոլայ Հովհաննիսյանի մահվան վկայականում, Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանների, Առնոլդ Սողոմոնյանի ծննդյան վկայականների «Օտեց» կամ «Հայրը» տողում կատարված նշումները վերաբերում են միևնույն անձին՝ Նիկոլայ Հովհաննիսյանին, իսկ Ադունիկ Դանիելյանի մահվան վկայականում, Առնոլդ Սողոմոնյանի, Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանների ծննդյան վկայականների «Մատ» կամ «Մայրը» տողում կատարված նշումները վերաբերում են միևնույն անձին՝ Ադունիկ Դանիելյանին:

Դիմելով դատարան՝ Ռոզա Գրիգորյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 բնակելի տան սեփականության իրավունքի գրանցումը և նշված հասցեի բնակելի տան և հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր և Վալերի Սողոմոնյանի սեփականության իրավունքը:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 12.12.2007 թվականի վճռով Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանների հայցը և Ռոզա Գրիգորյանի հակընդդեմ հայցը բավարարվել են մասնակիորեն:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.02.2008 թվականի որոշմամբ բեկանվել է Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի 12.12.2007 թվականի վճռի՝ Ռոզա Գրիգորյանի հակընդդեմ հայցի մասը, և այն փոփոխվել է՝ հակընդդեմ հայցը մերժվել է, դատական ակտը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռոզա Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածը, 1226-րդ հոդվածի 3-րդ մասը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դեզի և Սամվել Հովհաննիսյանները մինչև իրենց հոր՝ Ժառանգատու Նիկոլայ Հովհաննիսյանի մահը, այնպես էլ նրա մահից հետո բնակվել են իրենց մոր՝ Ադունիկ Դանիելյանի հետ և Ժառանգական գույք կազմող՝ Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 բնակելի տունը փաստացի տիրապետման հիմքով չեն ընդունել:

Վերաքննիչ դատարանը հաստատված համարելով Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 բնակելի տան նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով Սամվել և Դեզի Հովհաննիսյանների ժառանգություն ընդունելու հանգամանքը՝ որոշման մեջ չի նշել գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, որոնցով ղեկավարվել է որոշում կայացնելիս:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ, 280-րդ, 187-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա պատգամավորների Երևան քաղաքի խորհրդային շրջխորհրդի գործադիր կոմիտեի նախագահի 29.02.1991 թվականի գրությունը, համաձայն որի՝ Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 հասցեում 299,27 քմ մակերեսով կառույցը կառուցվել է 1989 թվականին, պատկանում է Վալերի Սողոմոնյանին, որտեղ բնակվում են 4 անձ, Քանաքեռ-Զեյթուն համայնքների թաղապետարանի կողմից հաստատված Վալերի Սողոմոնյանի հարևանների 15.10.2007 թվականի հայտարարությունը, համաձայն որի՝ Երևանի Քանաքեռ 19 փողոցի թիվ 49 բնակելի տան բնակիչ հանգուցյալ Վալերի Սողոմոնյանը վերը նշված

հասցեում գտնվող մեկհարկանի խարխլված վթարային վիճակում գտնվող տունը 1988-1989 թվականներին քանդել է և փոխարենն իր միջոցներով վերակառուցել է երկհարկանի բնակելի տուն:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն քաղաքացիական գործում առկա է միայն վիճելի տան նկատմամբ Կոլյա Հովհաննիսյանի անվամբ տրված 25.04.1996 թվականի սեփականության վկայականը, իսկ 1955 թվականի գույքաթերթը և հատակագիծը գործում առկա չեն, հետևաբար, Վերաքննիչ դատարանը չէր կարող հաստատված համարել, որ վերը նշված փաստաթղթերում առկա մակերեսները համընկնում են:

Ռոզա Գրիգորյանը իր ամուսնու հետ միասին բնակվելով վիճելի հասցեում 1988-1989 թվականներին քանդել են տարիների ընթացքում խարխլված և վթարային վիճակում գտնվող Նիկոլայ Հովհաննիսյանի մեկհարկանի տունը և բոլոր հարևանների, հարազատների, այդ թվում՝ հայցվորների գիտությամբ կառուցել նոր երկհարկանի բնակելի տուն, որը վկայում է, որ վիճելի անշարժ գույքը Ռոզա Գրիգորյանը ավելի քան տասը տարի բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ փաստացի տիրապետում է որպես սեփական գույք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.02.2008 թվականի որոշումը մասնակիորեն և դատական ակտը փոփոխել՝ Սամվել և Դեզի Հովհաննիսյանների հայցը՝ ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու մասով մերժել, Ռոզա Գրիգորյանի հակընդդեմ հայցը՝ սեփականության իրավունքի գրանցումը անվավեր ճանաչելու և բնակելի տան ու հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր ճանաչելու պահանջների մասով՝ բավարարել:

2.1. Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանների վճռաբեկ բողոքի պատասխաններում բերված փաստարկները

Վճռաբեկ բողոքում նշված այն փաստարկը, որ Սամվել, Դոլորես և Դեզի Հովհաննիսյանները փաստացի տիրապետման հիմքով չեն ընդունել իրենց հոր՝ Նիկոլայ Հովհաննիսյանի ժառանգությունը, հիմնավոր չէ, քանի որ իրենց հոր մահվան ժամանակ՝ 1968 թվականին, հայցվորները անչափահաս էին և մինչև հոր մահը, այնպես էլ մահվանից հետո բնակվել և շարունակել են բնակվել իրենց հայրական տանը, որը գտնվում է Երևանի Քանաքեռ 19 փողոցի թիվ 49 վիճելի հասցեում:

Նշված հանգամանքը վկայում է, որ փաստացի տիրապետման հիմքով հայցվորները ընդունել են իրենց հասանելիք ժառանգությունը:

Ինչ վերաբերում է վիճելի անշարժ գույքը ամբողջովին քանդելուն և նոր բնակելի տուն կառուցելուն, ապա այն չի համապատասխանում իրականությանը, քանի որ դատաքննության ընթացքում կադաստրային գործի ուսումնասիրությունից և հատակագծերի համադրումից պարզվեց, որ Նիկոլայ Հովհաննիսյանի օրոք առկա և նրա անվամբ 1996 թվականին տրված սեփականության վկայականում նշված տարածքների մակերեսները համընկնում են: Հայրական տունը հիմնովին երբևէ չի քանդվել, այլ Երևանի Քանաքեռ 19 փողոցի թիվ 49ա հասցեում գտնվող մյուս տան շինարարական աշխատանքներից հետո ավելացված շինանյութի հաշվին 1990-ական թվականների սկզբներին կառուցվել է ընդամենը 2-րդ հարկ, որն այս պահին ինքնական շինություն է: Այդ հանգամանքը հիմնավորվում է շինարարական աշխատանքները կատարած վարպետի՝ Աշոտ Մխիթարյանի հայտարարությամբ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 25.06.1996 թվականին տրված սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ Երևանի Քանաքեռ 13 փող. 49 հասցեում գտնվող 127,9 քմ տան և 500 քմ մակերեսով հողամասի սեփականատերն է Կոլյա Հովհաննիսյանը: Սեփականության վկայականում առկա մնացած շինություններն անօրինական կառույցներ են:

2. Նիկոլայ Հովհաննիսյանը մահացել է 30.12.1968 թվականին:

3. Վալերի Սողոմոնյանը, Սամվել և Դեզի Հովհաննիսյանները Նիկոլայ Հովհաննիսյանի ըստ օրենքի առաջին հերթի ժառանգներն են:

4. Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանի բնակ. կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի թիվ 8 լիազոր ներկայացուցչի 26.09.2007 թվականի տեղեկանքի համաձայն՝ Դեզի Հովհաննիսյանն ամուսնացել է 1975 թվականին և մինչ տեղեկանքի տրման օրը Քանաքեռ 13 փող. 49 տան հասցեում չի բնակվում, Սամվել Հովհաննիսյանը 1989 թվականից դուրս է եկել վերը նշված հասցեից և մինչ տեղեկանքի տրման օրը այնտեղ չի բնակվում:

5. Վալերի Սողոմոնյանը մահացել է 19.10.2005 թվականին:

6. ՀՀ պատգամավորների Երևան քաղաքի խորհրդային շրջխորհրդի գործադիր կոմիտեի 29.02.1996 թվականի գրության համաձայն՝ Քանաքեռ 13 փող. 49 հասցեում գտնվող 299,27 քմ մակերեսով կառույցը և 493,7 քմ հողատարածությունը սեփականության իրավունքով կամ որպես ինքնակամ շինություն գրանցելու մասին գործադիր կոմիտեի նախագահը հայտնել է, որ այն կառուցվել է 1989 թվականին ու պատկանում է Վալերի Սողոմոնյանին, որտեղ բնակվում են 4 անձ:

7. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման ղեկավար Յու. Հայրապետյանի 26.11.2007 թվականի գրության համաձայն՝ Քանաքեռ 13 փող. 49 տան կադաստրային գործի նյութերի համաձայն՝ հատկացված հողամասի մակերեսը կազմում է 500,0 քմ, բնակելի տան ներքին մակերեսը՝ 127,9 քմ, որից բնակելին՝ 59,9 քմ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար վճռաբեկ բողոքի հիմքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձվեն հետևյալ հարցադրումները.

1. Արդյո՞ք Վալերի Սողոմոնյանը, Սամվել և Դեզի Հովհաննիսյանները փաստացի տիրապետման հիմքով ընդունել են իրենց հոր՝ Նիկոլայ Հովհաննիսյանի ժառանգությունը:

2. Երևանի Քանաքեռ 13 փող. 49 հասցեում գտնվող շինություններից որո՞նք են մտնում Նիկոլայ Հովհաննիսյանի ժառանգության զանգվածի մեջ:

Նիկոլայ Հովհաննիսյանի ժառանգության բացման ժամանակ գործող՝ ՀՄՄՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է ընդունի այն, իսկ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական

գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին: Այս հող-վաճուռ նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Սույն քաղաքացիական գործի փաստերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Նիկոլայ Հովհաննիսյանի ժառանգության զանգվածը կազմել է Երևանի Քանաքեռ 13 փող. 49 հասցեում գտնվող 127,9 քմ մակերեսով տունը, որտեղ բնակվել են Դեզի Հովհաննիսյանը իր հոր՝ Նիկոլայ Հովհաննիսյանի մահից հետո մինչև 1975 թվականը, Սամվել Հովհաննիսյանը՝ մինչև 1989 թվականը, իսկ Վալերի Սողոմոնյանը՝ մինչև 2005 թվականը: Հետևաբար, ժառանգության բացման ժամանակ գործող՝ ՀՄՄՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի ուժով Դեզի և Սամվել Հովհաննիսյանները, ինչպես նաև Վալերի Սողոմոնյանը տիրապետման ուժով ընդունել են իրենց հասանելի ժառանգությունը:

Ինչ վերաբերում է 1989 թվականին Վալերի Սողոմոնյանի կողմից Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 հասցեում գտնվող տանը կատարված շինարարական աշխատանքներին, որի արդյունքում Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 հասցեում գտնվող գույքի մակերեսը զգալիորեն ավելացել է, ապա այդ շինությունների կարգավիճակը պարզված չէ, հետևաբար, դրանք ժառանգության զանգվածի մաս չեն կարող կազմել:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով Երևանի Քանաքեռ 13 փող. 49 հասցեում գտնվող ամբողջ տան նկատմամբ Սամվել և Դեզի Հովհաննիսյանների փաստացի տիրապետման հիմքով ժառանգություն ընդունելու փաստը և հաշվի չառնելով սույն գործում առկա ապացույցները, ճանաչել է նրանց ժառանգման իրավունքը նաև իրավական կարգավիճակը չպարզված շինությունների նկատմամբ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Նիկոլայ Հովհաննիսյանի ժառանգության բացման ժամանակ ժառանգության զանգվածը Երևանի Քանաքեռ 13 փողոցի թիվ 49 հասցեում գտնվող 127,9 քմ մակերեսով տունն է, որը փաստացի տիրապետման հիմքով ընդունել են Դեզի Հովհաննիսյանը, Սամվել Հովհաննիսյանը և Վալերի Սողոմոնյանը՝ յուրաքանչյուրը 1/3 մակերեսով: Իսկ Ռոզա Գրիգորյանը, որպես Վալերի Սողոմոնյանի ըստ օրենքի առաջին հերթի ժառանգ, փաստացի տիրապետման հիմքով ընդունելով իր ամուսնու բաժնի, այն է՝ Երևանի Քանաքեռ 13 փող. թիվ 49 հասցեում

գտնվող 127,9 քմ մակերեսի բնակելի տան 1/3-րդ մասը, ձեռք է բերել այդ բաժնի նկատմամբ սեփականության իրավունք:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ, ինչպես նաև այն գույքի, որի սեփականատերն անհայտ է, կամ որից սեփականատերը հրաժարվել է, կամ որի նկատմամբ սեփականության իրավունքը նա կորցրել է օրենքով նախատեսված այլ հիմքերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. Տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքն անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ

նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

2. Փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում:

3. Տիրապետումը պետք է լինի 10 տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

4. Տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (տես օրինակ՝ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ ընդդեմ Մանվել, Սոֆիկ, Մելանյա, Սամվել Սարիբեկյաններ և Քնարիկ Աղազարյան, Մանվել Սարիբեկյան և Քնարիկ Աղազարյան ընդդեմ Վոլոդյա և Միշա Նիկողոսյաններ՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1435/ՎՂ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա չէ Ռոզա Գրիգորյանի կողմից վիճելի գույքի նկատմամբ տիրապետման բարեխղճությունը հիմնավորող որևէ ապացույց, հետևաբար, հիմնավոր է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ Ռոզա Գրիգորյանը չունի բավարար հիմքեր ենթադրելու, որ ինքն այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի Քանաքեռ 13 փող. թիվ 49 հասցեում առկա են նաև կարգավիճակը չորոշված (ինքնակամ կառույցներ) շինություններ, հարկ է համարում արձանագրել, որ անհայտ կարգավիճակ ունեցող կառույցների (ինքնակամ կառույցի) նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք չի կարող ճանաչվել, իսկ նման

շինությունների նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ վեճը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի ուժով ենթակա չէ դատարանում քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2008 թվականի որոշումը բեկանել մասնակիորեն և այն փոփոխել՝ հայքը և հակընդդեմ հայքը բավարարել մասնակի՝ ճանաչել Դեզի և Մամվել Հովհաննիսյանների, ինչպես նաև Ռոզա Գրիգորյանի սեփականության իրավունքը Երևանի Քանաքեռ 13 փողոցի

թիվ 49 հասցեում գտնվող 127,9 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ՝ յուրաքանչյուրին 1/3-րդ մասով:

Ինքնակամ կառուցված շինությունների նկատմամբ Դեզի և Սամվել Հովհաննիսյաններին ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու հայցի և այդ կառույցների նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով Ռոզա Գրիգորյանին սեփականատեր ճանաչելու հակընդդեմ հայցի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճել:

2. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.02.2008 թվականի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ա. Մկրտումյան
Դատավորներ՝ Ս. Սարգսյան
Վ. Աբելյան
Դ. Ավետիսյան
Հ. Ղուկասյան
Ս. Օհանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/1823/02/09
2009 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/1823/02/08
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ե. Խունդկարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ա. Մկրտումյանի
մասնակցությամբ դատավորներ Ս. Սարգսյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Ա. Բարսեղյանի
Ս. Դրմեյանի
Է. Հայրիյանի
Ա. Մաթևոսյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2009 թվականի փետրվարի 13-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Լարիսա Հովեյանի վճռաբեկ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.10.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ Արտավազդ Հովեյանի հայցի ընդդեմ Լարիսա Հովեյանի, երրորդ անձ Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու

չելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Արտավազդ Հովեյանը պահանջել է անվավեր ճանաչել Լարիսա Հովեյանի անվամբ տրված ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի վկայականը և ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ:

Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 29.04.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.10.2008 թվականի որոշմամբ Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 29.04.2008 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել. սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է, ժառանգության իրավունքի վկայագիրը ճանաչվել է անվավեր և Արտավազդ Հովեյանը ճանաչվել է ժառանգությունն ընդունած ժառանգ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լարիսա Հովեյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Պատճառաբանելով, որ Լարիսա Հովեյանը ժառանգատու Ժենյա Հովեյանի համահայր, այսինքն՝ ոչ հարազատ քույրն է, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Լարիսա Հովեյանն ընդհանրապես ժառանգ չէ: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի իմաստով Լարիսա Հովեյանը ևս համարվում է երկրորդ հերթի ժառանգ:

Համահայր կամ համամայր լինելը բավարար է հարազատությունը կամ արյունակցական կապը հաստատված համարելու համար: Հետևաբար, Լարիսա Հովեյանը Ժենյա Հովեյանի երկրորդ հերթի ժառանգն է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.10.2008 թվականի որոշման՝ հայցը բավարարելու մասը և այն փոփոխել. մասնակիորեն՝ 1/2 մասով անվավեր ճանաչել Լարիսա Հովեյանի ժառանգության իրավունքի վկայագիրը և այդ մասով Արտավազդ Հովեյանին ճանաչել Ժենյա Հովեյանի ժառանգությունն ընդունած ժառանգ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի Սուրբովական փողոցի 21 շենքի թիվ 8 բնակարանը սեփականության իրավունքով պատկանել է Ժենյա Հովեյանին:

2. Արտավազդ Հովեյանը ժառանգատու Ժենյա Հովեյանի հանգուցյալ եղբոր որդին է և 1978 թվականից փաստացի բնակվում է ժառանգական գույք համարվող Երևանի Սուրբովական փողոցի 21 շենքի թիվ 8 բնակարանում:

3. Ժենյա Հովեյանի հայրն Արտավազդ Հովեյանն է, իսկ մայրը՝ Ռոզիկ Նահապետի Հովեյանը:

4. Լարիսա Հովեյանի հայրն Արտավազդ Հովեյանն է, իսկ մայրը՝ Արտաշամ Գևորգի Գսպոյանը:

5. Լարիսա Հովեյանին դիմումի հիման վրա տրվել է վեճի առարկա բնակարանի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է պատասխանել հետևյալ իրավական հարցին.

Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի իմաստով համահայր կամ համամայր քույր կամ եղբայրները երկրորդ հերթի ժառանգներ չեն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի համաձայն՝ երկրորդ հերթի ժառանգներ են ժառանգատուի հարազատ եղբայրները և քույրերը: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

Վերաքննիչ դատարանը, հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ժառանգատուի հետ համահայր կամ համամայր քույրը կամ եղբայրը երկրորդ հերթի ժառանգ չէ:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ արգելվում է ամուսնություն կնքել մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև:

Ամուսնական իրավահարաբերություններում, կարևորելով գենետիկական ներդաշնակության առաջնայնությունը, օրենսդիրը տարանջատել է «հարազատ եղբայրներ ու քույրեր» և «համահայր կամ համամայր եղբայրներ ու քույրեր» հասկացությունները՝ ամուսնության արգելք սահմանելով նաև համահայր կամ համամայր եղբայրների և քույրերի միջև, ինչը կապված է այս հարաբերությունների խիստ անձնական-ֆիզիոլոգական բնույթի հետ:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «ժառանգական իրավունք» բաժնում գետեղված նորմերում որևէ տարանջատում սահմանված չէ «հարազատ քույրեր և եղբայրներ» և «համահայր կամ համամայր քույրեր և եղբայրներ» հասկացողությունների միջև, քանի որ այս հարաբերությունները գույքային բնույթի հարաբերություններ են:

Այսինքն, ժառանգական իրավահարաբերություններում անձի ժառանգական իրավունքները սահմանափակված չեն ժառանգատուի հետ համահայր կամ համամայր եղբայր կամ քույր լինելու հանգամանքով: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի իմաստով ժառանգատուի «հարազատ քույրեր և եղբայրներ» հասկացությունն իր մեջ ներառում է նաև համահայր կամ համամայր քույրերին և եղբայրներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգական իրավահարաբերություններում ժառանգատուի

հարազատ եղբայրներին և քույրերին հավասարեցված են նաև ժառանգատուի հետ համահայր կամ համամայր քույրերը և եղբայրները:

Այսինքն, անձը երկրորդ հերթի ժառանգ է նաև այն դեպքում, երբ ժառանգատուի հետ համահայր կամ համամայր քույր կամ եղբայր է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արտավազդ Հովեյանը 1978 թվականից փաստացի բնակվում է ժառանգական գույք համարվող Երևանի Մուլրովական փողոցի 21 շենքի թիվ 8 բնակարանում, այսինքն՝ փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ընդունել է ժառանգությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգական գույքի նկատմամբ 1/2-ական բաժիններով ժառանգներ են Լարիսա Հովեյանը և Արտավազդ Հովեյանը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքը հիմնավոր համարելով Վճռաբեկ դատարանն այն դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մասնակիորեն բեկանել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.10.2008 թվականի որոշումը և այն փոփոխել: Արտավագո Հովեյանի հայցը բավարարել մասնակիորեն՝ 1/2 մասով անվավեր ճանաչել Լարիսա Հովեյանի ժառանգության իրավունքի վկայագիրը և այդ մասով Արտավագո Հովեյանին ճանաչել Ժենյա Հովեյանի ժառանգությունն ընդունած ժառանգ: Մնացած մասով որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ա. Մկրտումյան
Դատավորներ՝ Ս. Սարգսյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Ս. Դրմեյան
Է. Հայրիյան
Ա. Մաթևոսյան
Տ. Պետրոսյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/2201/02/08
2009 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/2201/02/08
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան
Է. Մուրադյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ս. Սարգսյանի
մասնակցությամբ դատավորներ Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Ա. Բարսեղյանի
Մ. Դրմեյանի
Ե. Խունդկարյանի
Է. Հայրիյանի
Ա. Մաթևոսյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2009 թվականի մարտի 13-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ալետա, Անահիտ, Գոհարիկ Ավետիսյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.11.2008 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ալետա, Անահիտ, Գոհարիկ Ավետիսյանների ընդդեմ Հասմիկ Դիլանյանի, Լիլիթ և Քրիստինե Ավետիսյանների, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ավան տարածքային ստորաբաժանման և Երևանի Կենտրոն նոտարական տարածքի՝ ժա-

ռանգության իրավունքի գրանցումը և վկայագիրը, սեփականության իրավունքի գրանցումը և վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և ժառանգական գույքի մի մասի սեփականատերեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ալետա, Անահիտ, Գոհարիկ Ավետիսյանները պահանջել են մասնակիորեն անվավեր ճանաչել Երևանի Ավան 6-րդ փողոցի թիվ 22 տան նկատմամբ ժառանգության իրավունքի գրանցումը և վկայականը, սեփականության իրավունքի գրանցումը և վկայականը և ժառանգական գույքի մի մասի նկատմամբ ճանաչել սեփականատերեր:

Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 14.08.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.11.2008 թվականի որոշմամբ վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ալետա, Անահիտ, Գոհարիկ Ավետիսյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Հասմիկ Դիլանյանը, Լիլիթ և Քրիստինե Ավետիսյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները, չի կիրառել իրավահարաբերության պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վեճի առարկա գույքը սեփականության իրավունքով պատկանել է Գառնիկ Ավետիսյանին, որը մահացել է 27.12.1979 թվականին: Նրա մահից հետո փաստացի տիրապետման եղանակով վեճի առարկա

ժառանգական գույքը տիրապետել են նաև Ալետա, Անահիտ, Գոհարիկ Ավետիսյանները, որը հիմնավորվում է գործում առկա Ավանի թիվ 2 տնատիրության նախագահի 08.05.2008 թվականի տեղեկանքով և հարևանների վկայություններով: Սակայն, նշված հանգամանքը Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի չի առնվել, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ ժառանգական գույքը Ալետա, Անահիտ, Գոհարիկ Ավետիսյանների կողմից չի տիրապետվել:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 19.11.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը և հիմնավորումները.

Ալետա Ավետիսյանը բնակվել է Գառնիկ Ավետիսյանի բնակության ներքո գտնվող տանը մինչև 1981 թվականը, Անահիտ Ավետիսյանը՝ մինչև 1984 թվականը, Գոհարիկ Ավետիսյանը՝ մինչև 1985 թվականը: Գառնիկ Ավետիսյանի մահվանից՝ 27.12.1979 թվականից հետո ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված վեցամսյա ժամկետում Ալետա, Անահիտ, Գոհարիկ Ավետիսյանները ժառանգությունն ընդունելու վերաբերյալ հայտարարություն չեն ներկայացրել, այսինքն՝ ժառանգությունը չեն ընդունել: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի Ավան 6-րդ փողոց թիվ 22 տունը սեփականության իրավունքով պատկանել է Գառնիկ Ավետիսյանին (գ.թ. 31):

2. Գառնիկ Ավետիսյանը մահացել է 27.12.1979 թվականին (գ.թ. 23):

3. Գառնիկ Ավետիսյանի առաջին հերթի ժառանգներ են Ալետա, Անահիտ, Գոհարիկ, Մուկուչ Ավետիսյանները, որոնք ժառանգությունն ընդունելու համար նոտարական գրասենյակ չեն դիմել:

4. Մուկուչ Ավետիսյանը մահացել է 15.08.2007 թվականին (գ.թ. 24):

5. Մուկուչ Ավետիսյանի առաջին հերթի ժառանգներն են Հասմիկ Դիլանյանը, Լիլիթ և Քրիստինե Ավետիսյանները: 17.04.2008 թվականին

Երևանի Ավան 6-րդ փողոց թիվ 22 տան նկատմամբ նրանց տրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր (գ.թ. 22):

6. Ժառանգության իրավունքի վկայագիրը ենթարկվել է պետական գրանցման և Հասմիկ Դիլանյանի, Լիլիթ և Քրիստինե Ավետիսյանների անվամբ 20.05.2008 թվականին տրվել է սեփականության իրավունքի գրանցման վկայական ամբողջ տան նկատմամբ (գ.թ. 18):

7. Ավանի թիվ 2 տնատիրության նախագահ Ա. Միմոնյանի գրության համաձայն՝ Գառնիկ Ավետիսյանի մահից հետո վեճի առարկա տանը Ալեոտա Ավետիսյանը բնակվել է մինչև 1981 թվականը (հաշվառումից դուրս է եկել և այլ հասցեում հաշվառվել է 06.03.1984 թվականին), Գոհարիկ Ավետիսյանը՝ մինչև 1984 թվականը (հաշվառումից դուրս է եկել և այլ հասցեում հաշվառվել է 23.11.1984 թվականին), Անահիտ Ավետիսյանը՝ մինչև 1985 թվականը (հաշվառումից դուրս է եկել և այլ հասցեում հաշվառվել է 17.02.1988 թվականին) (գ.թ. 43):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Գառնիկ Ավետիսյանի ժառանգության բացման ժամանակ գործող ՀՄՄՀ քաղաքացիական օրենսգրքի (1964 թվական) 549-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին: Այս հոդվածում նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Ընդունված ժառանգությունը ժառանգի սեփականությունն է համարվում ժառանգության բացման պահից:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու մասին ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին դիմելը (հայտարարելը) և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը:

Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գառնիկ Ավետիսյանի մահից հետո (27.12.1979 թվական) վիճելի տանը Մուկուչ Ավետիսյանի հետ միասին բնակվել են նաև Ալետա Ավետիսյանը մինչև 1981 թվականը, Գոհարիկ Ավետիսյանը մինչև 1984 թվականը, Անահիտ Ավետիսյանը մինչև 1985 թվականը: Այսինքն՝ Ալետա, Գոհարիկ, Անահիտ Ավետիսյանները փաստացի տիրապետել են ժառանգական գույքը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգության բացման ժամանակ բնակվելով վեճի առարկա տանը այդ պահին գործող ՀՍՍՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի ուժով, այն է՝ փաստացի տիրապետման հիմքով Ալետա, Գոհարիկ, Անահիտ Ավետիսյանները ընդունել են իրենց հասանելիք ժառանգությունը:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի հետևությունը այն մասին, որ բողոք բերած անձանց կողմից վեճի առարկա տանը միայն փաստացի բնակվելը և հետագայում ամուսնությունից հետո գույքը թողնել հեռանալը դեռևս հիմք չէ ժառանգական գույքը փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ճանաչելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մուկուչ Ավետիսյանի առաջին հերթի ժառանգներ Հասմիկ Դիլանյանին, Լիլիթ և Քրիստինե Ավետիսյաններին ժառանգության իրավունքի վկայագիր կարող էր տրվել միայն Մուկուչ Ավետիսյանի բաժնի մասով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2.-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.11.2008 թվականի որոշումը և գործն ուղարկել

Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝
նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից,
վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. Սարգսյան
Դատավորներ՝ Վ. Աբելյան

Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Մ. Դրմեյան
Ե. Խունդկարյան
Է. Հայրիյան
Ա. Մաթևոսյան
Տ. Պետրոսյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0630/02/08
2009 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0630/02/08
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Տ. Սահակյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Վ. Աբելյանի
մասնակցությամբ դատավորներ՝ Ա. Բարսեղյանի
Վ. Ավանեսյանի
Մ. Դրմեյանի
Է. Հայրիյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2009 թվականի օգոստոսի 11-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Սիրանուշ Կարապետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.04.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ռաֆայել Մկրտչյանի ընդդեմ Սիրանուշ Կարապետյանի՝ փաստացի տիրապետմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և ըստ Սիրանուշ Կարապետյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ռաֆայել Մկրտչյանի՝ ուրիշի ապօրինի տիրապետումից զուրկելու հետ պահանջելու և տնից վտարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ռաֆայել Մկրտչյանը պահանջել է ճանաչել Երևանի Ներքին Շենգավիթի 4 փողոցի թիվ 55 բնակելի տան նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սիրանուշ Կարապետյանը պահանջել է Ռաֆայել Մկրտչյանի ապօրինի տիրապետումից վերադարձնել Երևանի Ներքին Շենգավիթի 4 փողոցի թիվ 55 բնակելի տունը և Ռաֆայել Մկրտչյանին և նրա ընտանիքին վտարել այդ տնից:

Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.07.2008 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.10.2008 թվականի որոշմամբ Դատարանի 30.07.2008 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել նոր քննության:

Դատարանի 29.12.2008 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Վերաքննիչ դատարանի 03.04.2009 թվականի որոշմամբ Դատարանի 29.12.2008 թվականի վճիռը բեկանվել է և այն փոփոխվել՝ հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սիրանուշ Կարապետյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ռաֆայել Մկրտչյանը և Թագուհի Գրիգորյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածները, որի արդյունքում սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ, 1226-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ և 1228-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Ռաֆայել Մկրտչյանի կողմից մատնանշված ապացույցները՝ մոխրագույն վերարկուն, ակնոցները, փողկապը և թասակը չեն կարող համարվել թույլատրելի ապացույցներ, քանի որ դրանք չեն ներկայացվել նախապատրաստական փուլում և դատաքննության ժամանակ չեն ներկայացվել վկաներին, դրանցից հնարավոր չէ պարզել, որ դրանք պատկանել են հանգուցյալ Ղազար Մկրտչյանին, իսկ գործի քննության ընթացքում վկաները հանգուցյալի հագուստի մասին տվել են իրարամերժ ցուցմունքներ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի կողմից առանց որևէ հիմքի ապացուցված է համարվել, որ Ռաֆայել Մկրտչյանը, մինչև հոր մահվան մեկ տարին լրանալը պարբերաբար այլցելել է մորը, բնակվել նրա հետ և կատարել որոշակի աշխատանքներ: Մինչդեռ, նշված հանգամանքն ապացուցող փաստաթուղթ գործում առկա չէ:

Ավելին, գործով հիմնավորվել է, որ Ռաֆայել Մկրտչյանը միայն 2003 թվականից հետո է բնակվել Երևանի Ներքին Շենգավիթի 4 փողոցի թիվ 55 տանը, հետևաբար հոր մահից հետո վեցամսյա ժամկետում փաստացի չի տիրապետել ժառանգական գույքը:

Վերաքննիչ դատարանը որոշման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ Ռաֆայել Մկրտչյանը հոր մահից հետո պատրաստակամություն է հայտնել վերադարձնելու հոր պարտքը վկա Երվանդ Կարապետյանին, որով ակտիվ գործողություններ է ձեռնարկել՝ գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված չէ այնպիսի դրույթ, որով ժառանգը ժառանգատուի պարտքը վերադարձնելու կամք դրսևորելով՝ համարվում է ժառանգությունը փաստացի ընդունած:

2. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածը.

Վերաքննիչ դատարանը սույն գործի նկատմամբ ուներ կանխակալ կարծիք, քանի որ Վերաքննիչ դատարանը նույն կազմով իր վերաբերմունքն արդեն իսկ արտահայտել էր իր 01.10.2008 թվականի որոշմամբ: Այսինքն դատարանը նույն կազմով մասնակցել էր տվյալ գործի քննությանը և հայտնել իր կարծիքը:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանի սույն գործի քննությանը մասնակցած կազմը պարտավոր էր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով և ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածով ինքնաբացարկ հայտնել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.04.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 29.12.2008 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վերաքննիչ դատարանը չի խախտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 53-րդ հոդվածները և ճիշտ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ, 1226-րդ հոդվածները:

Հոր՝ Ղազար Մկրտչյանի մահից անմիջապես հետո Ռաֆայել Մկրտչյանը բնակվել է Երևանի Ներքին Շենգավիթի 4 փողոցի թիվ 55 տանը, ինչպես նաև, որպես ժառանգ շարունակել է կրել իր հոր վերարկուն, ակնոցները, գլխարկը, դրանով իսկ փաստացի ընդունել ժառանգությունը:

Բացի այդ, Ռաֆայել Մկրտչյանը ժառանգատուի մահից հետո վիճելի հասցեում իր հաշվին կատարել է բարելավման աշխատանքներ և բնակվելով այդտեղ՝ հոգ է տարել ժառանգության զանգվածի մեջ մտնող ամբողջ գույքի նկատմամբ, դրանով իսկ միջոցներ ձեռնարկել այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար:

4. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը՝

1. ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի Էրեբունի տարածքային ստորաբաժանման 16.04.2008 թվականի տեղեկանքի համաձայն՝ Երևանի Ներքին Շենգավիթի 4 փողոցի թիվ 55 բնակելի տան սեփականատերն է Սիրանուշ Կարապետյանը: Նշված գույքը Սիրանուշ Կարապետյանը ձեռք է բերել Ղազար Մկրտչյանի հետ ամուսնության ընթացքում (գ.թ. 8, 30, հ. 1-ին):

2. Ղազար Մկրտչյանը մահացել է 16.10.1989 թվականին (գ.թ. 18, հ. 1-ին):

3. Ռաֆայել Մկրտչյանը Ղազար Մկրտչյանի որդին է (գ.թ. 7, հ. 1-ին):

4. Երևանի Նոր-Նորք համայնքի «Նոր-Նորք» 02-40 համատիրության 16.04.2008 թվականի տեղեկանքի համաձայն՝ Ռաֆայել Մկրտչյանն ընտանիքով 1978 թվականից բնակվել է Երևանի Գայի պողոտայի 1/1 շենքի թիվ 74 բնակարանում, իսկ 2003 թվականից փաստացի բնակվում է Երևանի Ներքին Շենգավիթի 4 փողոցի թիվ 55 տանը (գ.թ. 6, հ. 1-ին):

5) Ըստ Ռաֆայել Մկրտչյանի 16.06.2008 թվականի տեղատեություն ժամանակ տրված բացատրության՝ Երևանի Ներքին Շենգավիթի 4 փողոցի թիվ 55 տան վերանորոգման աշխատանքները կատարել է շուրջ չորս տարի առաջ (հատոր 1, գ.թ. 71):

6) Վկաներ՝ Երվանդ Կարապետյանի, Լևոն Կարապետյանի, Ամալյա Հովսեփյանի, Անահիտ Ստեփանյանի, Ելենա Սուքիասյանի և Կարինե Բաղդասարյանի հայտարարության համաձայն՝ հոր՝ Ղազար Մկրտչյանի կենդանության օրոք կրած վերարկուն նրա մահից հետո կրել է որդին՝ Ռաֆայել Մկրտչյանը (գ.թ. 48, հ. 1-ին):

7) Վկաներ՝ Վերգինե Լալայանի, Էլյա Ղազարյանի, Գայանե Պողոսյանի, Աշոտ Կարապետյանի, Օֆիկ Հովսեփյանի, Ռոզա Պետրոսյանի և Եղիշե Թադևոսյանի հայտարարության համաձայն՝ այն հայտարարությունը, որ Ռաֆայել Մկրտչյանը, հոր մահից հետո հագել և օգտագործել է հոր վերարկուն՝ չի համապատասխանում իրականությանը (գ.թ. 19, հ. 3-րդ):

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

1) Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է որ,

Վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով

նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝

1. գրավոր և իրեղեն ապացույցներով,
2. փորձագետների եզրակացություններով,
3. վկաների ցուցմունքներով,
4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ իրեղեն ապացույցներ են այլ առարկաները, որոնք իրենց արտաքին տեսքով, ներքին հատկություններով, գտնվելու վայրով կամ այլ հատկանիշներով կարող են գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների հաստատման միջոց դառնալ: Իրեղեն ապացույցներ են նաև լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները:

Սույն գործով Դատարանը հաստատված համարելով, որ դատաքննության ընթացքում կողմերի միջնորդություններով, որպես վկա հարցաքննված անձինք տվել են իրարամերժ ցուցմունքներ, հանգել է այն հետևության, որ այդ անձանց կողմից տրված հայտարարությունները չպետք է ընդունվեն և գնահատվեն որպես ապացույց:

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով գործի քննության ընթացքում հարցաքննված վկաների ցուցմունքները, հաստատված է համարել, որ Ռաֆայել Մկրտչյանը հոր մահից հետո հոգ է տարել և պահպանել ժառանգության զանգվածի մեջ մտած գույքի մի մասը, մասնավորապես՝ մոխրագույն անձրևանոցը, դեղին թասակը, և հանգել է այն հետևության, որ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել արդյո՞ք գործում առկա ապացույցները հնարավորություն են տալիս հաստատված համարելու այն փաստը, որ Ռաֆայել Մկրտչյանն օրենքով սահմանված ժամկետում ընդունել է իր հոր՝ Ղազար Մկրտչյանի ժառանգությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը

պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Նույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր, իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Սույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վկաների կողմից տրված հայտարարություններն իրենց բնույթով վերաբերելի և թույլատրելի ապացույցներ են, սակայն դրանցում առկա տեղեկությունների հակասականությունը հնարավորություն չի տալիս հաստատված ճանաչելու Ռաֆայել Մկրտչյանի կողմից օրենքով սահմանված ժամկետում իր հոր՝ Ղազար Մկրտչյանի ժառանգության զանգվածի մի մասի, հետևաբար նաև ամբողջ ժառանգության ընդունման փաստը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վեճի առարկա անձրևանոցի և թասակի վերաբերյալ հայցվոր կողմի պնդումը հաստատված փաստ ճանաչելու համար անհրաժեշտ է դատարանին ներկայացնել պնդումը հիմնավորող առավել արժանահավատ ապացույցներ, օրինակ՝ անձրևանոցը, այն իր հոր՝ Ղազար Մկրտչյանի և այնուհետև իր հագին պատկերող լուսանկարներ, տեսաձայնագրություններ և այլն: Միայն այդ պայմաններում դատարանը հնարավորություն կունենար հաստատված ճանաչել Ռաֆայել Մկրտչյանի կողմից օրենքով սահմանված ժամկետում իր հոր՝ Ղազար Մկրտչյանի ժառանգության զանգվածի մի մասի, հետևաբար նաև ամբողջ ժառանգության ընդունման փաստը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Ռաֆայել Մկրտչյանը կատարել է ակտիվ գործողություններ, որոնք ուղղված են ժառանգական զանգվածի մի մասի ընդունմանը, մասնավորապես, հոր՝ Ղազար Մկրտչյանի պարտքի վճարման վերաբերյալ կամահայտնությունը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված գործողությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի

3-րդ կետի 3-րդ ենթակետի ուժով՝ ժառանգատուի պարտքը վճարելու փաստ չէ, հետևաբար նաև ժառանգի կողմից ժառանգության ընդունման հիմք չէ:

Վճարել բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանությամբ:

2) Վճարել բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 91 հոդվածով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորն ինքնաբացարկ է հայտնում իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ:

ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը ներառում են ի թիվս այլոց այն դեպքերը, երբ՝ դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, իսկ նույն հոդվածի նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ դատավորը կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) գործին մասնակցող անձ կամ մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին ատյանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ:

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ օրենսդիրն ամրագրելով յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննու-

թյան իրավունքի լիարժեք իրականացումը, սահմանել է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել:

Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի ուժով այդ հիմքերն են, երբ

1) դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ, կամ

2) դատավորը մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին աստիճանում՝ որպես դատավոր:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում արդեն իսկ անդրադարձել է նույն դատարանում նույն գործի քննությանը դատավորների մասնակցության իրավական հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված յուրաքանչյուրի՝ անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքը, արդար դատաքննության բաղկացուցիչ տարրն է:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ ցանկացած դատավոր, որի անաչառության վերաբերյալ օրինական կասկածներ կան, պետք է դուրս գա դատարանի կազմից: Նշված կասկածները պետք է ստուգվեն տարբեր ճանապարհներով: Առաջինը՝ սուբյեկտիվ մոտեցումն է, որը փորձում է պարզել տվյալ դատավորի անձնական համոզմունքները քննվող գործի կապակցությամբ և երկրորդը՝ օբյեկտիվ մոտեցումը, որը սահմանում է, թե արդյո՞ք դատավորի կողմից առաջարկվող երաշխիքները բավարար են այդ կապակցությամբ առաջացած ցանկացած օրինաչափ կասկած բացառելու համար (տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը «Պյերսակն ընդդեմ Բելգիայի» գործով 01.10.1982 թ., կետ 30):

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ այդ իրավական նորմերի ընդհանրական մոտեցումը դատարանի կամ դատավորի անաչառության կանխավարկածն է, որը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ նրա աչառությունն ապացուցված չէ (տես՝ Կարինե Հարությունյանի դիմումը՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտը

վերանայելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի թիվ ԵԱՔԴ/1137/02/08 որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը և համադրելով սույն գործի փաստերը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանում դատարանի կազմի մեջ դատավորների ընդգրկված լինելը և նույն գործի քննությանը նրանց մասնակցությունը հիմք չէ նրանց աչառությունը հաստատված համարելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.04.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 29.12.2008 թվականի վճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Վ. Աբելյան
Դատավորներ՝ Ա. Բարսեղյան

Վ. Ավանեսյան
Ս. Դրմեյան
Է. Հայրիյան
Տ. Պետրոսյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0293/02/08
2009 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0293/02/08
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ն. Տավարացյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ս. Սարգսյանի
մասնակցությամբ դատավորներ Ս. Անտոնյանի
Վ. Աբելյանի
Վ. Ավանեսյանի
Ա. Բարսեղյանի
Է. Հայրիյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2009 թվականի հոկտեմբերի 16-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Արթուր Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.03.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վանուշ Հովհաննիսյանի ընդդեմ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի, Արթուր Հովհաննիսյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունու տարածքային ստորաբաժանման՝ ըստ օրենքի ժառանգության վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Վանուշ Հովհաննիսյանը պահանջել է անվավեր ճանաչել «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Մարգարյանի կողմից 26.04.2007 թվականին Արթուր Հովհաննիսյանի անվամբ տրված Երևանի Նոր Արեշի 36 փողոցի թիվ 15 հասցեի անշարժ գույքի վերաբերյալ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 22.04.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.06.2008 թվականի որոշմամբ Դատարանի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.12.2008 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.03.2009 թվականի որոշմամբ Դատարանի 04.12.2008 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արթուր Հովհաննիսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Վանուշ Հովհաննիսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասը և 1226-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել Ազատ Հովհաննիսյանի սեփականության իրավունքի ծագման և Արթուր Հովհաննիսյանի 26.04.2007 թվականին ըստ օրենքի

Ժառանգության իրավունքի վկայագիր տալու համար հիմք ծառայած հանգամանքները, մասնավորապես՝ Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 03.05.1999 թվականի վճիռը, որով անվավեր է ճանաչվել Ազատ Հովհաննիսյանի՝ Անահիտ և Գագիկ Հովհաննիսյանների անվամբ կազմված կտակը, այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու արդյունքում կայացված ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ 23.06.1999 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռը, որով հաստատվել է վիճելի գույքը փաստացի տիրապետողների միջև բաժանելու մասին կողմերի հաշտության համաձայնությունը, դրա հիման վրա Ազատ, Վանուշ, Գայանե Հովհաննիսյանների և Միրվարդ Մարգարյանի միջև 28.10.1999 թվականին կնքած «Անշարժ գույքի բաժանման պայմանագիրը»:

Վերաքննիչ դատարանը, չկիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասը, հայցի բավարարման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ Ազատ Հովհաննիսյանը գործարքից ծագող իրավունքների պետական գրանցում չի կատարել, որը հանգեցրել է դրա անվավերությանը և եկել է սխալ եզրահանգման այն մասին, որ Ազատ Հովհաննիսյանը վիճելի տան նկատմամբ սեփականության իրավունք ձեռք չի բերել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.03.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 04.12.2008 թվականի վճռին:

2.1. Վճարեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Սույն գործով էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ Գևորգ Հովհաննիսյանը Երևանի Նոր Արեշի 36 փողոցի թիվ 15 հասցեի ողջ անշարժ գույքը կտակել է իր դստերը՝ Անահիտ Հովհաննիսյանին, և վերջինիս որդուն՝ Գագիկ Հովհաննիսյանին: Նշված կտակը դատական կարգով վիճարկել է միայն Վանուշ Հովհաննիսյանը, սակայն վեճը լուծվել է հաշտության համաձայնությամբ, որում շարադրված պայմանները Ազատ Հովհաննիսյանին չեն վերաբերել, քանի որ նա չի հանդիսացել տվյալ քաղաքացիական գործին մասնակցող անձ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 02.02.1995 թվականի սեփականության վկայագրի համաձայն՝ Երևանի Նոր Արեշի 36 փողոցի թիվ 15 տան սեփականատերն էր Գևորգ Հովհաննիսյանը (հատոր 2-րդ, գ.թ. 41):

2. 18.05.1998 թվականին տրված ԱԱ 044137 մահվան վկայականի համաձայն՝ Գևորգ Հովհաննիսյանը մահացել է 27.12.1992 թվականին (հատոր 2-րդ, գ.թ. 44):

3. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 03.05.1999 թվականի վճռով անվավեր է ճանաչվել Գևորգ Հովհաննիսյանի՝ Անահիտ և Գագիկ Հովհաննիսյանների անվամբ կազմած կտակը, իսկ այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու արդյունքում ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ 23.06.1999 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է կողմերի հաշտության համաձայնությունն այն մասին, որ յուրաքանչյուր տիրապետող իրավունք ունի իր փաստացի տիրապետման ներքո գտնվող անշարժ գույքը տնօրինելու, իսկ անօրինական կառույցները՝ օրինակա՛նացնելու:

Նշված գործով Ազատ Հովհաննիսյանը գործին մասնակցող անձ չէր (հատոր 1-ին, գ.թ. 8):

4. Ազատ, Վանուշ, Գայանե Հովհաննիսյանների և Սիրվարդ Մարգարյանի միջև 28.10.1999 թվականին կնքվել է «Անշարժ գույքի բաժանման պայմանագիր», որով Ազատ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով անցել է Երևանի Նոր Արեշի 36 փողոցի թիվ 15 հասցեում գտնվող անշարժ գույքից 67.1 քմ մակերեսով շինությունը, 81.0 քմ մակերեսով հողամասը և ընդհանուր օգտագործման իրավունքով 67.9 մակերեսով հողամասը (հատոր 2-րդ, գ.թ. 48):

5. Երևանի Էրեբունի համայնքի թիվ 14 տեղամասի լիազոր ներկայացուցչի կողմից 25.04.2007 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Գևորգ Հովհաննիսյանի մահից հետո նրա որդին՝ Ազատ Հովհաննիսյանը, մինչև իր մահը բնակվել է Երևանի Նոր Արեշի 36 փողոցի թիվ 15 հասցեում (հատոր 1-ին, գ.թ. 34):

6. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի 20.10.2006 թվականին տրված

տեղեկանքի համաձայն՝ Երևանի Նոր Արեշի 36 փողոցի թիվ 15 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ Ազատ Հովհաննիսյանի բաժնի նկատմամբ իրավունքների պետական գրանցում չի կատարվել (հատոր 2-րդ, գ.թ. 39):

7. 21.09.2000 թվականի թիվ 6319 «Մահվան վերաբերյալ ակտի գրանցման» համաձայն՝ Ազատ Հովհաննիսյանը մահացել է 18.09.2000 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 31):

8. Երևանի Էրեբունի համայնքի թիվ 14 տեղամասի լիազոր ներկայացուցչի կողմից 28.03.2007 թվականին և 25.04.2007 թվականին տրված տեղեկանքների համաձայն՝ Ազատ Հովհաննիսյանի որդին՝ Արթուր Հովհաննիսյանը փաստացի տիրապետել է Ազատ Հովհաննիսյանին պատկանող վերոնշյալ անշարժ գույքը (հատոր 1-ին, գ.թ. 34):

9. 26.04.2007 թվականին Արթուր Հովհաննիսյանին՝ որպես Ազատ Հովհաննիսյանի առաջին հերթի ժառանգի, տրվել է Երևանի Նոր Արեշի 36 փողոցի թիվ 15 հասցեում գտնվող անշարժ գույքի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր (հատոր 1-ին, գ.թ.29):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ երբ ժառանգը՝

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այդ երրորդ անձանց ոսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ մտնող և երկու կամ մի քանի ժառանգների ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը կարող է բաժանվել ժառանգների համաձայնությամբ:

Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ազատ Հովհաննիսյանը Նոր Արեշի 36 փողոցի թիվ 15 հասցեի անշարժ գույքի սեփականատերն է: Նման եզրահանգման համար Դատարանը հիմք է ընդունել՝ 23.06.1999 թվականի ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 23.06.1999 թվականի վճիռը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 28.02.2007 թվականին տրված ձև 2 տեղեկանքը, 20.10.2006 թվականին Կադաստրի տրված տեղեկանքը, 15.08.2006 թվականին Վանուշ Հովհաննիսյանին տրված թիվ 1506851 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը:

Վերաքննիչ դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 23.06.1999 թվականի վճռով հաստատված կողմերի միջև հաշտության համաձայնություն կնքելիս Ազատ Հովհաննիսյանը դատավարության կողմ չի հանդիսացել, ուստի նշված վճիռը վերջինիս համար իրավունքներ և պարտականություններ չի առաջացրել: Բացի այդ, Ազատ Հովհաննիսյանը անշարժ գույքի բաժանման պայմանագրից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցում չի կատարել, ուստի պետական գրանցման պահանջը չպահպանելը հանգեցրել է պայմանագրի անվավերության:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գևորգ Հովհաննիսյանը Երևանի Նոր Արեշի 36 փողոցի թիվ 15 ամբողջ տունը կտակել էր Անահիտ և

Գագիկ Հովհաննիսյաններին: Նշված կտակի վավերականության հարցը Վանուշ Հովհաննիսյանի կողմից վիճարկվել է, և Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 03.05.1999 թվականի վճռով այն անվավեր է ճանաչվել: Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու արդյունքում ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ 23.06.1999 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է կողմերի հաշտության համաձայնությունն այն մասին, որ վերոնշյալ հասցեի անշարժ գույքի յուրաքանչյուր տիրապետող իրավունք ունի իր փաստացի տիրապետման ներքո գտնվող անշարժ գույքը տնօրինելու, իսկ անօրինական կառույցները՝ օրինականացնելու: Այնուհետև հիշյալ վճռի հիման վրա Երևանի Նոր Արեշի 36 փողոցի թիվ 15 հասցեի անշարժ գույքի փաստացի տիրապետողների՝ Ազատ, Վանուշ, Գայանե Հովհաննիսյանների և Սիրվարդ Մարգարյանի միջև կնքվել է «Անշարժ գույքի բաժանման պայմանագիր», որով հստակեցվել է ժառանգության զանգվածից յուրաքանչյուրին պատկանելիք բաժինը:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի կողմից ճիշտ են գնահատվել գործով ձեռք բերված ապացույցները, և հայցը իրավացիորեն մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի՝ 23.06.1999 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հաշտության համաձայնությունից հետևում է, որ կողմերը ընդունել են Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 03.05.1999 թվականի վճռով կտակը անվավեր ճանաչելու հանգամանքը և համաձայնության են եկել վիճելի անշարժ գույքը ըստ օրենքի ժառանգական իրավունքով ժառանգելու մասին: Նման պարագայում վճռաբեկ դատարանը գտնում է, որ ըստ օրենքի առաջին հերթի ժառանգ է համարվել նաև Ազատ Հովհաննիսյանը, որը, փաստացի տիրապետելով վիճելի անշարժ գույքը, ընդունել է ժառանգական զանգվածի իր բաժինը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Ազատ Հովհաննիսյանը պետական գրանցման չի ենթարկել «Անշարժ գույքի բաժանման պայմանագրից» ծագող սեփականության իր իրավունքը, հետևաբար, վիճելի գույքի նկատմամբ ձեռք չի բերել սեփականության իրավունք, ապա Վճռաբեկ դատարանն այն անհիմն է համարում, քանի որ սույն գործով ժառանգության զանգվածի բաժանման վերաբերյալ ժառանգների միջև առկա է համաձայնություն: Բացի այդ,

Ազատ Հովհաննիսյանը վիճելի անշարժ գույքի փաստացի տիրապետման ուժով արդեն իսկ ձեռք է բերել դրա նկատմամբ սեփականության իրավունք՝ անկախ այդ իրավունքի պետական գրանցումից:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ազատ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Նոր Արեշի 36 փողոցի 15 հասցեում գտնվող անշարժ գույքից 67.1 քմ մակերեսով շինությունը, 81.0 քմ մակերեսով հողամասը և ընդհանուր օգտագործման իրավունքով 67.9 մակերեսով հողամասը մտնում են ժառանգության զանգվածի մեջ, հետևաբար, Ազատ Հովհաննիսյանի որդի Արթուր Հովհաննիսյանը՝ որպես ըստ օրենքի առաջին հերթի ժառանգ, փաստացի տիրապետման ուժով համարվում է այդ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատ-

ճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.03.2009 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 04.12.2008 թվականի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. Սարգսյան
Դատավորներ՝ Ս. Անտոնյան

Վ. Աբելյան
Վ. Ավանեսյան
Ա. Բարսեղյան
Է. Հայրիյան
Տ. Պետրոսյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական դատարանի վճիռ Վարչական գործ թիվ ՎԴ/5980/05/08
 Վարչական գործ թիվ ՎԴ/5980/05/08 2009 թ.
 Նախագահող դատավոր՝ Ռ. Հակոբյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ս. Սարգսյանի
 մասնակցությամբ դատավորներ Ա. Բարսեղյանի
 Վ. Աբելյանի
 Ս. Անտոնյանի
 Վ. Ավանեսյանի
 Մ. Դրմեյանի
 Ե. Խունդկարյանի
 Է. Հայրիյանի
 Տ. Պետրոսյանի
 Ե. Սողոմոնյանի

2009 թվականի դեկտեմբերի 25-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Ռոբերտ Մկրտչյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 14.04.2009 թվականի վճռի դեմ՝ ըստ հայցի Հովհաննես Պողոսյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Էրեբունի» տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր), երրորդ անձ Ռոբերտ Մկրտչյանի՝ Կադաստրի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հովհաննես Պողոսյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի Արշակունյաց պողոտայի թիվ 200 հասցեի անշարժ գույքի նկատմամբ Մնացական Մկրտչյանի սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ 04.07.1997 թվականին արված գրառումը, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի հիմքով վերացնել այն հետևանքները, որոնք առաջացել են Կադաստրի կողմից 04.07.1997 թվականի գրառումը կատարելուց հետո:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.04.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է մասնակի անվավեր ճանաչել Երևանի Արշակունյաց պողոտայի թիվ 200 հասցեի անշարժ գույքի նկատմամբ Մնացական Մկրտչյանի սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ 04.07.1997 թվականին արված գրառումը՝ Հովհաննես Պողոսյանին պատկանող 13,64 քմ սենյակի մասով, իսկ հողամասի վերաբերյալ՝ 1/2 մասով: Մնացած մասով հայցը մերժվել է: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի հիմքով ներկայացված հետևանքները վերացնելու պահանջի մասով գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռոբերտ Մկրտչյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Հովհաննես Պողոսյանը և Կադաստրը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ, 65-րդ հոդվածները և 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ հոդվածը, 279-րդ հոդվածի 1-ին մասը, 280-րդ հոդվածի 1-ին մասը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 21-րդ և 24-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանի կողմից պատշաճ չի գնահատվել այն փաստը, որ Անուշ Հովհաննիսյանի անվամբ գրանցված անշարժ գույքը 1978-1982

թվականների դրությամբ փաստացի գոյություն չի ունեցել: Նշվածը հիմնավորվել է ՀՄՄՀ Երևանի քաղխորհրդի գործկոմի Լենինյան շրջանի գործկոմի 19.10.1978 թվականի թիվ 27 արձանագրությամբ: Նշված որոշման հիման վրա Անուշ Հովհաննիսյանը հաշվառվել է Լենինյանի շրջխորհրդի գործկոմի բնակարանի կարիքավորների ցուցակում: Այն փաստը, որ Անուշ Հովհաննիսյանի գույքը գոյություն չի ունեցել, ապացուցվել է նաև Արշակունյաց պողոտայի 200 հասցեի հարևանների գրավոր և բանավոր վկայություններով: Հետևաբար, գոյություն չունեցող գույքի նկատմամբ իրավունքի գրանցում չէր կարող կատարվել:

Մնացական Մկրտչյանին 04.07.1997 թվականին տրված վիճելի սեփականության իրավունքի գրանցման վկայականում 13,64 քմ մակերեսով սենյակը փաստացի չի գույքագրվել, այլ ընդամենը նշվել է, որ այն քանդված է:

Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ 1968 թվականից մինչև 1991 թվականի դրությամբ հողը պետական սեփականություն էր, քաղաքացիաիրավական հարաբերություններում գործարքների օբյեկտ չէր, հետևաբար Անուշ Հովհաննիսյանը այն չէր կարող կտակել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 14.03.2009 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայրը մերժել:

2.1. Հովհաննես Պողոսյանի վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Դատարանի 14.04.2009 թվականի վճռով նյութական և դատավարական իրավունքի նորմերը չեն խախտվել: Վճիռը բխում է ՀՀ օրենսդրության, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի, 1991 թվականի հունվարի 29-ի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի, «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի պահանջներից:

2.2. Կադաստրի վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքի պատասխանում Կադաստրը նշել է, որ Դատարանը վճիռը կայացրել է նյութական և դատավարական նորմերի խախտումներով, որոնք ազդել են գործի ելքի վրա, և վճռաբեկ բողոքին առարկություններ չի ներկայացրել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 29.03.1965 թվականի Երքաղտվետի գործկումի հաշվետեխնիկական բյուրոյի 42 տոմարի 565 գույքային թերթի համաձայն՝ Երևանի Արշակունյաց (Օրջոնիկիձեի) փողոցի 200 տունը, որը բաղկացած է եղել 17,6 քմ, 13,6 քմ բնակելի սենյակներից, 7,9 քմ միջանցքից և գտնվել է 200 քմ հողամասի վրա, պատկանել է Անուշ Հովհաննիսյանին (գ.թ. 7):

2) 18.09.1968 թվականի թիվ 9732 կտակով Անուշ Հովհաննիսյանը Երևանի Արշակունյաց (Օրջոնիկիձեի) փողոցի 200 հասցեի անշարժ գույքն ամբողջությամբ կտակել է Հովհաննես Պողոսյանին: Անուշ Հովհաննիսյանը մահացել է 15.03.1982 թվականին: Ըստ կտակի ժառանգության իրավունքի 17.09.1982 թվականի վկայագրի Հովհաննես Պողոսյանը ընդունել է ժառանգությունը (գ.թ. 15, 17):

3) Երքաղտվետի գործկումի հաշվետեխնիկական բյուրոյի 42 տոմարի 565 գույքային թերթի «Ջետագա նշումներ և գրանցումներ» բաժնում արձանագրվել է «Համաձայն Երևան քաղաքի 1-ին պետ. նոտարի 17.09.1982 թ. թիվ 1335 ժառանգական վկայականի ըստ կտակի Ա. Մ. Հովհաննիսյանի մահից հետո նրա գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսանում Հովհաննես Ստեփանի Պողոսյանը, ժառանգաբար անցնող գույքը բաղկացած է 17,6 քմ, 13,6 քմ բնակելի մակերեսներից, 7,9 քմ միջանցքից» (գ.թ. 7):

4) Սույն գործում առկա 22.09.1982 թվականի հատակագծի համաձայն՝ (Օրջոնիկիձեի) փողոցի 200 հասցեի անշարժ գույքը պատկանում է Հովհաննես Պողոսյանին (գ.թ. 8, 16):

5) Երևանի Շենգավիթ շրջանի ժողդատարանի՝ 05.04.1996 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով վավեր է ճանաչվել 08.05.1965 թվականին Անուշ Հովհաննիսյանի և Մնացական Մկրտչյանի միջև կնքված նոտարական վավերացում չստացած առուվաճառքի պայմանագիրը, որով Ռոբերտ Մկրտչյանի հայրը՝ Մնացական Մկրտչյանը, Հովհաննես Պողոսյանի տատից՝ Անուշ Հովհաննիսյանից, 1.000 ռուբլիով գնել է Երևանի Արշակունյաց փողոցի 200 տան 18 քմ մակերեսով սենյակը՝ ընդհանուր միջանցքով: Նշված վճռի հիման վրա վրա 04.07.1997 թվականին գրանցվել է Մնացական Մկրտչյանի սեփականության իրավունքը 17,6 քմ մակերեսով բնակելի սենյակի նկատմամբ և 7,9 քմ

մակերեսով միջանցքի նկատմամբ որպես ընդհանուր, իսկ 13,6 քմ մակերեսով բնակելի սենյակը հաշվառվել է որպես քանդված (գ.թ. 21, 29):

6) Հայկական ՄՍՀ ժողովրդական դեպուտատների Երևան քաղաքի Լենինյան շրջսովետի գործադիր կոմիտեի 1978 թվականի 19/10 թիվ 27 արձանագրությամբ նշվել է. «քաղաքացուհի Անուշ Հովհաննիսյանը ներկա դրությամբ օգտագործում է մեկ բնակելի սենյակ 13, 64 քմ բնակելի մակերես առանց որևէ օժանդակ և կոմունալ հարմարությունների: Անուշ Հովհաննիսյանը հնարավորություն չի ունեցել իր սենյակը վերանորոգելու, որի պատճառով սենյակի պատերը քայքայվել են ու կորցրել իրենց տեսքը, ծածկը մասամբ փուլ է եկել և տունը դարձել բնակության համար ոչ պիտանի»: Տվյալ արձանագրությամբ միաժամանակ որոշվել է հաստատել Շրջսովետի գործկոմի դեպուտատական բնակարանային հանձնաժողովի 29/9-78 թվականի նիստի որոշումը և քաղ. Անուշ Հովհաննիսյանին /մեկ անձ/, որպես բնակարանային տան բնակչի և ծերության թոշակառուի վերցնել քաղ. ֆոնդում բնակ. հաշվառման (գ.թ. 12):

7) Մնացական Մկրտչյանը մահացել է 11.11.1999 թվականին (կադաստրային գործ, գ.թ. 42):

8) 08.05.2001 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Սվետլաննա Հակոբյանը, Ռոբերտ և Նունե Մկրտչյանները ժառանգել են Մնացական Մկրտչյանի գույքը, որը բաղկացած է եղել Երևանի Արշակունյաց փողոցի 200 բնակելի տնից և հողից, որի պատկանելիությունը ժառանգատուին հաստատվել է Կադաստրի կողմից 17.05.2001 թ. տրված 1597-0657 տեղեկանքով և բաղկացած է 25,5 քմ ընդհանուր մակերեսով տնից և 500 քմ մակերեսով հողամասից (կադաստրային գործ, գ.թ. 47):

9) 08.05.2001 թվականի թիվ 1-1682 ժառանգության իրավունքի վկայագրի և ՀՀ կառավարության 25.02.1998 թվականի թիվ 114 որոշման հիման վրա գրանցվել են Սվետլաննա Հակոբյանի, Ռոբերտ և Նունե Մկրտչյանների իրավունքները, յուրաքանչյուրը 1/3 մասով և 29.06.2001 տրվել է թիվ 401709 սեփականության իրավունքի գրանցման վկայականը (գ.թ. 30-31):

10) 19.07.2001 թվականի անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Սվետլաննա Հակոբյանը և Նունե Մկրտչյանը Երևանի Արշակունյաց փողոցի 200 բնակելի տան և հողի՝ իրենց պատկանող մասերը նվիրել են Ռոբերտ Մկրտչյանին (կադաստրային գործ, գ.թ. 47):

11) 19.07.2001 թվականի անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի, ՀՀ կառավարության 25.02.1998 թվականի թիվ 114 որոշման, ինչպես նաև 08.05.2001 թվականի թիվ 1-1682 ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա գրանցվել է Ռոբերտ Մկրտչյանի իրավունքը, և 17.08.2005 թվականին տրվել է թիվ 1510017 սեփականության իրավունքի գրանցման վկայականը (գ.թ. 18-20):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Իրավահարաբերության ծագման ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 530-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգումն իրականացվում է ըստ օրենքի և ըստ կտակի:

Ժառանգումն ըստ օրենքի տեղի է ունենում, երբ և որքանով այն չի փոփոխվել կտակով: Եթե ժառանգներ չկան ոչ ըստ օրենքի, ոչ ըստ կտակի, կամ ժառանգներից ոչ մեկը չի ընդունել ժառանգությունը, կամ կտակարարը բոլոր ժառանգներին զրկել է ժառանգությունից, ապա մեռածի գույքը ժառանգման իրավունքով անցնում է պետությանը:

Իրավահարաբերության ծագման ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 537-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի իր ամբողջ գույքը կամ նրա մի մասը (չբացառելով սովորական տնային կահավորանքի ու գործածության առարկաները) կարող է կտակով թողնել ինչպես ըստ օրենքի ժառանգների թվի մեջ մտնող, այնպես էլ դրանց թվի մեջ չմտնող մեկ կամ մի քանի անձանց, ինչպես նաև պետությանը կամ պետական, կոոպերատիվ և մյուս հասարակական առանձին կազմակերպությունների:

Նույն օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է ընդունի այն: Չի թույլատրվում ժառանգության ընդունումը պայմանով կամ վերապահումներով:

Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին:

Այս հոդվածում նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Նույն օրենսգրքի 531-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակ է համարվում ժառանգատուի մահվան օրը, իսկ նրան մեռած հայտարարելու դեպքում՝ նույն օրենսգրքի 21-րդ հոդվածում նշված օրը:

Սույն գործով Դատարանը հաստատված համարելով, որ Հովհաննես Պողոսյանը ընդունել է Անուշ Հովհաննիսյանի ժառանգությունը, մասնավորապես 13,64 քմ սենյակը, հանգել է այն հետևության, որ Հովհաննես Պողոսյանը լինելով 13,64 քմ սենյակի սեփականատերը 29.01.1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի ուժով նաև Երևանի Արշակունյաց (նախկին Օրջոնիկիձեի) փողոցի 200 հասցեում գտնվող 200 քմ մակերես ունեցող հողամասի 1/2 մասի սեփականատերն է:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Արշակունյաց (նախկին Օրջոնիկիձեի) փողոցի 200 հասցեում գտնվող 200 քմ մակերեսով հողամասի վրա գտնվող 17,6 քմ, 13,64 քմ բնակելի սենյակները, 7,9 քմ միջանցքը պատկանել է Անուշ Հովհաննիսյանին, Երևանի Շենգավիթ շրջանի ժողդատարանի 05.04.1996 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է, որ Անուշ Հովհաննիսյանը դեռևս 1965 թվականի նոտարական վավերացում չստացած առուվաճառքի պայմանագրով 17,6 քմ և 7,9 քմ միջանցքը վաճառել է Մնացական Մկրտչյանին, նշված վճռի հիման վրա վրա 04.07.1997 թվականին գրանցվել է Մնացական Մկրտչյանի սեփականության իրավունքը 17,6 քմ մակերեսով բնակելի սենյակի նկատմամբ և 7,9 քմ մակերեսով միջանցքի նկատմամբ որպես ընդհանուր, իսկ 13,64 քմ մակերեսով բնակելի սենյակը հաշվառվել է որպես քանդված: 18.09.1968 թվականի թիվ 9732 կտակով Անուշ Հովհաննիսյանն իր անշարժ գույքն ամբողջությամբ կտակել է Հովհաննես Պողոսյանին, Անուշ Հովհաննիսյանը մահացել է 15.03.1982 թվականին, Հովհաննես Պողոսյանը 17.09.1982 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի ընդունել է ժառանգությունը:

Բացի այդ, սույն գործում առկա է նաև Հայկական ՍՍՀ ժողովրդական դեպուտատների Երևան քաղաքի Լենինյան շրջսովետի գործադիր կոմիտեի 1978 թվականի 19/10 թիվ 27 արձանագրությունը, որով հաստատվել է, որ այդ պահին Անուշ Հովհաննիսյանի կողմից օգտագործվող 13,64 քմ բնակելի մակերես ունեցող մեկ բնակելի սենյակը չունի որևէ օժանդակ և կոմունալ հարմարություններ, ավելին Անուշ Հովհաննիսյանը հնարավորություն չի ունեցել իր սենյակը վերանորոգելու, որի

պատճառով սենյակի պատերը քայքայվել են ու կորցրել իրենց տեսքը, ծածկը մասամբ փուլ է եկել և տունը դարձել բնակության համար ոչ պիտանի: Տվյալ արձանագրությամբ միաժամանակ որոշվել է Անուշ Հովհաննիսյանին (մեկ անձ), որպես բնակարանային տան բնակչի և ծերության թոշակառուի վերցնել քաղ. ֆոնդում բնակ. հաշվառման:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը, դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Բացի այդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»):

Վճռաբեկ դատարան իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի ուժով վարչական դատարանի կողմից գործի փաստերի ի պաշտոնե պարզման դատավարական իրավունքին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև Դատարանի իրավունք է, սակայն Դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառա-

բանված ներքին համոզման հանգելու Դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (տես՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Աշտարակի տարածքային հարկային տեսչության ընդդեմ Ժորա Դանիելովի՝ 5.670.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին և Ժորա Դանիելովի հակընդդեմ հայցի ընդդեմ Տեսչության՝ 08.05.2008 թվականի թիվ 2326225 ակտը վերացնելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի թիվ ՎԴ3/0207/05/08 (2008 թ.) որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործով վեճի լուծման համար էական նշանակություն ունի ժառանգության բացման ժամանակ՝ 15.03.1982 թվականին, Անուշ Հովհաննիսյանին պատկանող 13,64 քմ մակերեսով սենյակը, որպես ժառանգության զանգված գոյություն ունենալու փաստը:

Մինչդեռ, սույն գործով Դատարանը չպարզելով ժառանգության բացման ժամանակ վեճի առարկա 13,64 քմ մակերեսով սենյակի առկայության փաստը, միայն հիմք ընդունելով Հովհաննես Պողոսյանի կողմից ժառանգության ընդունելու փաստը, բավարարել է հայցապահանջը:

Բացի այդ, Դատարանը հաստատված է համարել, որ Հովհաննես Պողոսյանը լինելով վիճելի 13,64 քմ սենյակի սեփականատերը 29.01.1991 թվականին ընդունված ՀՀ Հողային օրենսգրքի ուժով նաև Երևանի Արշակունյաց (նախկին Օրջոնիկիձեի) փողոցի 200 հասցեում գտնվող հողամասի սեփականատերն է:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է օրենքի ուժով հողի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքերին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն անդրադառնալով 29.01.1991 թվականին ընդունված ՀՀ Հողային օրենսգրքի 9-րդ հոդվածին, նշել է, որ նշված հոդվածի ուժով հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու համար էական նշանակություն ունի այդ հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ունենալու անձի կողմից հողամասը փաստացի առանձնացված լինելու հանգամանքը և այն տիրապետելու փաստը (տես՝ Յուրիկ Մարգարյանի հայցն ընդդեմ Արամ, Կարինե, Հրաչուհի, Կարեն Պողոսյանների, Արարատի մարզի Տափերականի գյուղապետարանի, ինքնուրույն պահանջներ չներկայաց-

նող երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Վեդու տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակիորեն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, Վճռաբեկ դատարանի 24.07.2009 թվականի թիվ ԱՎԴ1/0090/02/08 որոշումը):

Մինչդեռ, սույն վարչական գործով Դատարանը հաստատված համարելով, որ 29.01.1991 թվականին ընդունված ՀՀ Հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով հողամասի 1/2 նկատմամբ սեփականատեր է նաև Հովհաննես Պողոսյանը, չի պարզել 1991 թվականի դրությամբ տվյալ հողամասը փաստացի առանձնացված լինելու և այն տիրապետելու հանգամանքը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը, Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վարչական դատարանի վճռի՝ հայցը բավարարելու մասը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 14.04.2009 թվականի վճռի՝ հայցը բավարարելու մասը և գործն այդ մասով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վճռի մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. Սարգսյան

Դատավորներ՝ Ա. Բարսեղյան, Վ. Աբելյան, Ս. Անտոնյան, Վ.

Ավանեսյան, Ս. Դրմեյան, Ե. Խունդկարյան, Է. Հայրիյան, Տ. Պետրոսյան,

Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0937/02/08
2009 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0937/02/08
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան
Ա. Մկրտչյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ս. Սարգսյանի
մասնակցությամբ դատավորներ Մ. Դրմեյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Վ. Ավանեսյանի
Ա. Բարսեղյանի
Ե. Խունդկարյանի
Է. Հայրիյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2009 թվականի դեկտեմբերի 4-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Թադևոս, Ալբերտ և Առաքել Խաչատրյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.06.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Անուշ Խաչատրյանի ընդդեմ Թադևոս, Ալբերտ և Առաքել Խաչատրյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Անուշ Խաչատրյանը պահանջել է ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ Երևանի Գագարինի փողոցի թիվ 13 հասցեում գտնվող տան իրեն հասանելիք բաժնի նկատմամբ:

Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 26.03.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.06.2009 թվականի որոշմամբ Դատարանի 26.03.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Թադևոս, Ալբերտ և Առաքել Խաչատրյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Անուշ Խաչատրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, 220-րդ հոդվածի 2-րդ մասը, որի արդյունքում կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ և 1226-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա բոլոր ապացույցները, որոնցից հետևում է, որ Անուշ Խաչատրյանը փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունը չի ընդունել, քանի որ կոմունալ վճարումներ չի կատարել, փաստացի չի տիրապետել Երևանի Գագարինի փողոցի թիվ 13 տունը, միջոցներ չի ձեռնարկել այն պահպանելու և երրորդ անձանց ոտնձգություններից պաշտպանելու համար, այլ այցելել է նշված բնակարան որպես հյուր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 12.06.2009 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Անուշ Խաչատրյանի հայցը մերժել:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը ճիշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ և 1226-րդ հոդվածները, քանի որ Անուշ Խաչատրյանը իր երեխաների հետ 1970 թվականից բնակվել է Երևանի Գագարինի փողոցի թիվ 13 տանը, և փաստացի տիրապետում է ժառանգական գույքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի Գագարինի փողոցի թիվ 13 հասցեի բնակելի տունը գույքագրված է Բաբկեն Խաչատրյանի անվամբ (հ. 1-ին գ. թ. 30):

2. Բաբկեն Խաչատրյանը մահացել է 24.09.1971 թվականին (հ. 1-ին գ. թ. 6):

3. Անուշ Խաչատրյանը Բաբկեն Խաչատրյանի ըստ օրենքի առաջին հերթի ժառանգն է:

4. Երևանի Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի ղեկավարի 11.03.2009 թվականի գրության համաձայն՝ ըստ ուսումնասիրության արդյունքների Անուշ Խաչատրյանը համայնքի Գագարինի թիվ 13 տանը չի բնակվում, համաձայն նույն տան տնային գրքի տվյալ հասցեում հաշվառում չունի: Իսկ այն հանգամանքը, թե Անուշ Խաչատրյանը առանց հաշվառման որ հասցեում և որ թվականից է բնակվում, թաղապետարանի կողմից հնարավոր չէ պարզել (հ. 1-ին գ. թ. 132-137):

5. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Մալաթիա-Սեբաստիա սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետի 20.02.2009 թվականի թիվ 54/14-361 գրության համաձայն՝ «Անուշ Խաչատրյանի թիվ 62345 կենսաթոշակի գործը նշանակվել է 30.10.1998 թվականին կենսաթոշակային ապահովագրության Էջմիածնի տարածքային կենտրոնի կողմից: Տվյալ պահին Ա. Բ. Խաչատրյանը հաշվառված է եղել Էջմիածին քաղաքի Արագածի փողոցի 5 շենքի 39 բնակարանում: Միաժամանակ հայտնվում է, որ 22.01.2001 թվականին իր դիմումի և Մալաթիա-Սեբաստիա թաղապետարանի՝ առանց գրանցման Գագարինի փողոցի 13 տանը բնակվելու մասին տեղեկանքի հիման վրա,

կենսաթոշակի գործը պահանջվել է Էջմիածնի սոցապ բաժնից և առ այսօր շարունակվում է վճարումը Մալաթիա-Մեքստիա սոցիալական ապահովության տարածքային բաժնի կողմից» (հ. 1-ին գ. թ. 124):

6. 25.07.1972 թվականի բնակարանային օրդերի համաձայն՝ Արամ Միքայելյանի ընտանիքի 5 անձին՝ այդ թվում Անուշ Խաչատրյանին, հատկացվել է Էջմիածնի Չարենցի փողոցի 7 շենքի թիվ 2 բնակարանը:

7. ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից 29.01.2009 թվականին տրված գրության համաձայն՝ Անուշ Խաչատրյանը Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի 5 շենքի թիվ 39 բնակարանի համասեփականատեր է (հ. 1-ին գ. թ. 79, 116):

4. Վճարել նատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճարել բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել նատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Իրավահարաբերության ծագման ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է ընդունի այն: Չի թույլատրվում ժառանգության ընդունումը պայմանով կամ վերապահումներով:

Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին:

Այս հոդվածում նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Իրավահարաբերության ծագման ժամանակ գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 531-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակ է համարվում ժառանգատուի մահվան օրը, իսկ նրան մեռած հայտարարելու դեպքում՝ նույն օրենսգրքի 21 հոդվածում նշված օրը:

Վճռաբեկ դատարանը իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ժառանգի կողմից փաստացի տիրապետման եղանակով ժառանգության ընդունման հարցին և նշել, որ փաստացի տիրապետման հիմքով ժառանգի կողմից ժառանգությունն ընդունած կամ չընդունած լինելու փաստի գնահատման հարցում էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք առկա են ժառանգի կամքը և ցանկությունը՝ ընդունելու ժառանգությունը, թե ոչ, և արդյոք ժառանգությունն ընդունելու համար ժառանգը միջոցներ (ակտիվ գործողություններ) է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից և հավակնություններից պաշտպանելու համար (տես՝ Գիմա Սարգսյանի հայցն ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի թիվ 3-1224(ՎԴ) որոշումը):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ գործում առկա ապացույցներով հիմնավորվել է հայցվորի՝ որպես առաջին հերթի ժառանգի՝ վիճելի հասցեում բնակվելու, այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու հանգամանքները:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ տեղազննության ժամանակ պարզվել է, որ վիճելի տան որոշակի հատվածի դռան բանալին Անուշ Խաչատրյանի մոտ է, նշված հատվածում են գտնվել Անուշ Խաչատրյանին և նրա դստերը պատկանող իրեր, հագուստ և սննդամթերք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տես՝ Ռազմիկ Մարությանի հայցն ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտարական գրասենյակի՝ ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Ստեփան և Անահիտ Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԴ) որոշումը):

Մինչդեռ սույն գործով Վերաքննիչ դատարանը որոշման մեջ չի նշել այն ապացույցները, որոնց հիման վրա հաստատված է համարել, որ Անուշ Մկրտչյանը՝ որպես առաջին հերթի ժառանգ, ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում վիճելի հասցեում բնակվել է և պաշտպանել այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից:

Ինչ վերաբերում է տեղազնության ժամանակ պարզված այն հանգամանքին, որ վիճելի տան որոշակի հատվածի դռան բանալին Անուշ Խաչատրյանի մոտ է, նշված հատվածում են գտնվել Անուշ Խաչատրյանին և նրա դստերը պատկանող իրեր, հագուստ և

աննդամթերք, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հանգամանքն ինքնին հիմք չէ ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար (տվյալ դեպքում անհրաժեշտ է Անուշ Խաչատրյանի կողմից ժառանգության գանգվածի փաստացի տիրապետման փաստի առկայությունը օրենքով սահմանված վեց ամսվա ընթացքում՝ ժառանգատու Բարկեն Խաչատրյանի մահվան օրվանից սկսած՝ 24.09.1971 թվականից):

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.06.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. Սարգսյան
Դատավորներ՝ Մ. Դրմեյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Վ. Ավանեսյան
Ա. Բարսեղյան
Ե. Խունդկարյան
Է. Հայրիյան
Տ. Պետրոսյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0272/02/08
2010թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0272/02/08
Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ս. Սարգսյանի
մասնակցությամբ դատավորներ Է. Հայրիյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Վ. Ավանեսյանի
Ս. Դրմեյանի
Ե. Խունդկարյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2010 թվականի մարտի 12-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Հասմիկ Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.08.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ Հրիտա Հակոբյանի իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանի հայցի ընդդեմ Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների, Կենտրոն նոտարական տարածքի նոտարի՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին 07.12.2007 թվականին տրված թիվ 9038 ըստ կտակի ու Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններին 07.12.2007 թվականին տրված թիվ 9039 ըստ օրենքի ժառանգության

իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, Հրիտա Հակոբյանին փաստացի տիրապետման ուժով Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և Հասմիկ Հարությունյանին կտակով ու փաստացի տիրապետման ուժով Հրիտա Հակոբյանի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին, ինչպես նաև ըստ Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների հակընդդեմ հայցի ընդդեմ Հասմիկ Հարությունյանի՝ Հասմիկ Հարությունյանի սեփականության իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու և օրենքի ուժով Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների ժառանգությունն ընդունած ժառանգներ ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հրիտա Հակոբյանը պահանջել է անվավեր ճանաչել Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին 07.12.2007 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը, ինչպես նաև Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններին 07.12.2007 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը:

Հրիտա Հակոբյանի իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանը, ավելացնելով հայցային պահանջի չափը, պահանջել է Հրիտա Հակոբյանին ճանաչել Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգական գույքը փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ժառանգ, իսկ Հասմիկ Հարությունյանին ճանաչել Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքն ըստ կտակի և փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2008 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2008 թվականի որոշմամբ Հենրիկ Հարությունյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.11.2008 թվականի որոշմամբ բեկանվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2008 թվականի որոշումը, և գործն ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Հակընդդեմ հայցով Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները պահանջել են անվավեր ճանաչել Հասմիկ Հարությունյանի անվամբ կատարված սեփականության իրավունքների պետական գրանցումները, ճանաչել Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ և որոշել ժառանգական բաժինը, ինչպես նաև հարգելի ճանաչել ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 09.04.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է ամբողջությամբ:

Վճռվել է «Մասնակի անվավեր ճանաչել ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 07.12.2007 թվականին Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին և Սյուզաննա Հարությունյանին տրված և հմ. 9039 սեղանամատյանում գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և սեփականության ու փաստացի տիրապետման հիմքով 12.01.2006թ. մահացած Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգական գույքի՝ Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի 1-ին փողոցի, 4-րդ փակուղու, թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքի 3/4-րդ բաժնի, «ՎԱԶ-210630» մակնիշի, 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի /թողարկված 1984թ., շարժիչ-7637452, թափք-E1127416, տեխանձնագիր AY652531 տրված 15.09.1984թ. Երևանի պետավտոտեսչության կողմից/ 3/4-րդ բաժնի և Երևանի Հայինայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում պահվող ավանդի, հասանելիք տոկոսների և փոխհատուցումների 3/4-րդ բաժնի նկատմամբ Հրիտա Գարսևանի Հակոբյանին ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ: Հասմիկ Համազասպի Հարությունյանին ճանաչել 25.12.2007 թվականին մահացած Հրիտա Հակոբյանի ժառանգած՝ Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի 1-ին փողոցի, 4-րդ փակուղու, թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքի 3/4-րդ բաժնի, «ՎԱԶ-210630» մակնիշի, 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի /թողարկված 1984թ., շարժիչ-7637452, թափք-E1127416, տեխանձնագիր AY652531 տրված 15.09.1984թ. Երևանի

պետավտոտեսչության կողմից/ 3/4-րդ բաժնի և Երևանի Հայինայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում պահվող ավանդի, հասանելիք տոկոսների և փոխհատուցումների 3/4-րդ բաժնի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ: Անվավեր ճանաչել ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 07.12.2007 թվականին Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին տրված և հմ. 9038 սեղանամատյանում գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը և Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 հասցեում գտնվող ամբողջ անշարժ գույքի նկատմամբ, ըստ կտակի ժառանգությունը փաստացի տիրապետման հիմքով ժառանգ ճանաչել Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին: Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանին ճանաչել 12.01.2006 թվականին մահացած Հենրիկ Համազասպի Հարությունյանի գույքի՝ այն է Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի 1-ին փողոցի, 4-րդ փակուղու, թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/4-րդ բաժնի, «ՎԱՁ-210630» մակնիշի, 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի /թողարկված 1984թ., շարժիչ-7637452, թափք-E1127416, տեխանձնագիր AY652531 տրված 15.09.1984թ. Երևանի պետավտոտեսչության կողմից/ 1/4-րդ բաժնի և Երևանի Հայինայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում պահվող ավանդի, հասանելիք տոկոսների և փոխհատուցումների 1/4-րդ բաժնի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգներ: Անվավեր ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից Հասմիկ Հենրիկի Հարությունյանի անվամբ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 հասցեի նկատմամբ 24.07.2008 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման հմ. 2341469 վկայականը և Հասմիկ Հենրիկի Հարությունյանի անվամբ Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի 1-ին փողոցի, 4-րդ փակուղու, թիվ 4 հասցեի նկատմամբ 28.07.2008 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման հմ. 2333345 վկայականը»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.08.2009 թվականի որոշմամբ Հրիտա Հակոբյանի իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հասմիկ Հարություն-
յանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Հենրիկ և Սյուզան-
նա Հովհաննեսի Հարությունյանները:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում
ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավա-
րության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում խախտել է ՀՀ
քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասը, 1228-րդ
հոդվածի 2-րդ մասը, սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքա-
ցիական օրենսգրքի 1210-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ
փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի
գնահատել գործում առկա ապացույցները, պատշաճ իրավական գնահա-
տական չի տվել այն հանգամանքին, որ Հենրիկ և Սյուզաննա Հով-
հաննեսի Հարությունյանները ժառանգատու Հենրիկ Համազասպի Հա-
րությունյանի մահից հետո փաստացի չեն տիրապետել ու կառավարել
ժառանգական գույքը, իսկ ժառանգությունն ընդունելու համար նոտարին
են դիմել ժառանգության բացումից 13 ամիս անց՝ բաց թողնելով
ժառանգությունն ընդունելու համար սահմանված 6-ամսյա ժամկետը:
Բացի այդ, ժառանգի կողմից ժառանգության ընդունման համար
սահմանված ժամկետը բաց թողնվելու դեպքում նախ պետք է ժամկետի
բացթողումը հարգելի ճանաչվի, ապա նոր ճանաչվի ժառանգությունն
ընդունած: Բացի այդ, Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարություն-
յանները չեն ներկայացրել ժառանգական գույքը տիրապետելու կամ
կառավարելու վերաբերյալ որևէ ապացույց:

Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը պապի՝ Հենրիկ Համազասպի
Հարությունյանի կազմած կտակի մասին իմացել է վերջինիս մահվանից
առաջ, ուստի ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամ-
կետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու հիմքեր չկան:

Ի տարբերություն Հենրիկ և Սյուզաննա Հարությունյանների՝
Հրիտա Հակոբյանը փաստացի տիրապետման ուժով ընդունել է ժառան-
գատու Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգությունը:

Հրիտա Հակոբյանը մահացել է 25.12.2007 թվականին: Մինչ մահը Հրիտա Հակոբյանն իր ամբողջ գույքը կտակել է դստերը՝ Հասմիկ Հարությունյանին: Հրիտա Հակոբյանի մահվանից հետո նրա ժառանգությունը փաստացի տիրապետման ուժով ընդունել է դուստրը՝ Հասմիկ Հարությունյանը: Հասմիկ Հարությունյանը Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքն ընդունելու վերաբերյալ 12.02.2008 թվականին գրավոր հայտարարություն է տվել Երևան քաղաքի Շենգավիթ նոտարական գրասենյակ:

Ինչպես հոր՝ Հենրիկ Հարությունյանի, այնպես էլ մոր՝ Հրիտա Հակոբյանի մահվանից հետո Հասմիկ Հարությունյանը փաստացի տիրապետել և կառավարել է ժառանգատուների թողած ժառանգական գույքը, կատարել է դրանց համար սահմանված պետական վճարումները, հոգացել է դրանց պահպանման խնդիրները, ինչի վերաբերյալ դատարանին են ներկայացվել բազմաթիվ գրավոր հայտարարություններ և վճարման անդորրագրեր:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել սույն քաղաքացիական գործում առկա Հենրիկ և Սյուզաննա Հարությունյանների կողմից տրված գրավոր համաձայնությանը, որով Հենրիկ և Սյուզաննա Հարությունյանները հրաժարվել են ժառանգությամբ իրենց անցած «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայից հոգուտ Հասմիկ Հարությունյանի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.08.2009 թվականի որոշումը և փոփոխել: Այն է՝ «Հրիտա Հակոբյանի իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանի հայցն ընդդեմ Հենրիկ և Սյուզաննա Հարությունյանների, Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ վերջինիս կողմից Հենրիկ Հարությունյանի անվամբ տրված 07.12.2007թ. թիվ 9038 ըստ կտակի և Հենրիկ ու Սյուզաննա Հարությունյաններին տրված 07.12.2007թ. թիվ 9039 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու պահանջի մասին բավարարել: Հայցվոր Հրիտա Հակոբյանին ճանաչել 62.0քմ բնակելի տան ընդհանուր համատեղ սեփականատեր և նրա իրավահաջորդ Հասմիկ Հարությունյանին որպես հանգուցյալ Հրիտա Հակոբյանի առաջին հերթի ժառանգի, ժառանգման իրավունքով ճանաչել ժառանգ»:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա:

Բողոք բերած անձն անտեսել է այն հանգամանքը, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանի կողմից ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը հարգելի են համարել այն հիմքով, որ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը կտակի մասին տեղեկացվել է պապի մահվան մեկ տարվա արարողության ժամանակ, որից հետո Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանն անմիջապես դիմել է նոտարական գրասենյակ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար: Բացի այդ, Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները պապի մահից հետո փաստացի տիրապետման և կառավարման միջոցով ներկայացման իրավունքով ժառանգել են ժառանգական գույքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հենրիկ Համազասպի Հարությունյանի և Հրիտա Հակոբյանի ամուսնությունը ՔԿԱԳ մարմնում գրանցվել է 15.02.1964 թվականին (հատոր 1-ին, գ.թ.20): Հասմիկ Հարությունյանը Հենրիկ Համազասպի Հարությունյանի և Հրիտա Հակոբյանի դուստրն է, իսկ Հովհաննես Հարությունյանը՝ որդին: Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները Հովհաննես Հարությունյանի զավակներն են (հատոր 1-ին, գ.թ.64, 66, 101):

2. 21.01.1996 թվականի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 տան և հողամասի սեփականատերը Հենրիկ Համազասպի Հարությունյանն է (հիմք՝ 15.12.1995 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 1-3624 վկայագիր) (հատոր 1-ին, գ.թ.27):

3. 25.02.1997 թվականի կտակի համաձայն՝ Հենրիկ Համազասպի Հարությունյանը Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 տունն ամբող-

ջությամբ կտակել է թոռանը՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին (հատոր 1-ին, գ.թ.28):

4. Հրիտա Հակոբյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 1-ին փողոցի 4-րդ փակուղու թիվ 4 հասցեում գտնվող տունը և հողամասը (հիմք՝ 27.08.2003 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1416071 վկայականը/ (հատոր 1-ին, գ.թ.25-26), ինչպես նաև Հենրիկ Համազասպի Հարությունյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՄՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենան /հիմք՝ 1984 թվականի թիվ 652531 ավտոմեքենայի տեխնիկական անձնագիր/ (հատոր 1-ին, գ.թ.34) և Երևանի Հայխնայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում հասանելիք տոկոսների և փոխհատուցման հետ միասին առկա ավանդը (հատոր 1-ին, գ.թ.33) ձեռք է բերվել Հենրիկ Համազասպի Հարությունյանի և Հրիտա Հակոբյանի ամուսնության ընթացքում:

5. Հովհաննես Հարությունյանը մահացել է 05.10.2000 թվականին (հատոր 1-ին, գ.թ.63), Հենրիկ Համազասպի Հարությունյանը՝ 12.01.2006 թվականին (հատոր 1-ին, գ.թ.21), Հրիտա Հակոբյանը՝ 25.12.2007 թվականին (հատոր 1-ին, գ.թ.95):

6. 07.12.2007 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 9038 վկայագրի համաձայն՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը ճանաչվել է ժառանգ Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգական գույքի՝ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 տան 5/6-րդ բաժնի նկատմամբ (հատոր 1-ին, գ.թ.24):

7. 07.12.2007 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 9039 վկայագրի համաձայն՝ Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները ճանաչվել են ժառանգ Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգական գույքի՝ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 1-ին փողոցի 4-րդ փակուղու թիվ 4 տան, Երևանի Հայխնայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում հասանելիք տոկոսների և փոխհատուցման հետ միասին առկա ավանդի 1/6-րդ բաժնի նկատմամբ (հատոր 1-ին, գ.թ.23):

8. 24.07.2008 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2341469 վկայականի համաձայն՝ Էրեբունի համայնքում գտնվող Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 տան և հողամասի նկատմամբ գրանցվել է Հասմիկ Հարությունյանի սեփականության իրավունքը (հիմք՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2008 թվականի վճիռը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական

դատարանի 07.05.2008 թվականի որոշումը, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության որոշակի գործողություններ կատարելու մասին 10.07.2008 թվականի որոշումը) (հատոր 2-րդ, գ.թ.32-34):

9. 28.07.2008 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2333345 վկայականի համաձայն՝ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 4-րդ փակուղու 1-ին փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան և հողամասի նկատմամբ գրանցվել է Հասմիկ Հարությունյանի սեփականության իրավունքը (հիմք՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.02.2008 թվականի վճիռը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.05.2008 թվականի որոշումը) (հատոր 2-րդ, գ.թ.29-31):

10. Նոտարական կարգով վավերացված «ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ» վերնագրված փաստաթղթով Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները 07.12.2007 թվականին համաձայնվել են, որպեսզի «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի նկատմամբ գրանցվի Հասմիկ Հարությունյանի սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ.83):

11. 21.12.2007 թվականի կտակի համաձայն՝ Հրիտա Հակոբյանն իրեն պատկանող գույքը կտակել է Հասմիկ Հարությունյանին (հատոր 1-ին, գ.թ.96), որը 12.02.2008 թվականին դիմել է Շենգավիթի նոտարական գրասենյակ ժառանգությունն ընդունելու համար (հատոր 1-ին, գ.թ.97):

12. 15.05.2008 թվականին Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները դիմել են Կենտրոն նոտարական գրասենյակ Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունելու համար (հատոր 3-ին, գ.թ.37):

13. Երևանի Լիսինյան փողոցի հասցեում բնակվող հարևանների հայտարարությունների համաձայն՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը պապի՝ Հենրիկ Համազասպի Հարությունյանի մահից հետո հաճախակի գիշերել է պապի տանը և խնամել տատին (հատոր 3-րդ, գ.թ.78, 81-82, 87):

14. Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի 1-ին փողոցի 4-րդ փակուղու հասցեում գտնվող հարևանների հայտարարությունների համաձայն՝ նշված հասցեի թիվ 4 տունը կառուցվել է Հրիտա Հակոբյանի որդու՝ Հովհաննես Հարությունյանի միջոցներով, իսկ Հենրիկ Համազասպի Հարությունյանի թոռանը՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին հաճախակի տեսել են նշված տան հողամասում գյուղատնտեսական

աշխատանքներ կատարելիս և խնջույքներ կազմակերպելիս (հատոր 3-րդ, գ.թ. 83, 84, 86):

15. Մարտին Մալխասյանը ցուցմունքով Դատարանին հայտնել է, որ հորեղբոր՝ Հենրիկ Համազասպի Հարությունյանի մահից հետո թոռանը՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանին հաճախակի տեսել է Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 1-ին փողոցի 4-րդ փակուղու թիվ 4 տանը, իսկ Հասմիկ Հարությունյանը «վերջերս է գալիս-գնում» (հատոր 3-րդ, գ.թ.167):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և չէր կարող իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան: Դատարանը, ժառանգին ճանաչելով ժառանգությունն ընդունած, լուծում է դրանից բխող ժառանգական գույքի նկատմամբ մյուս ժառանգների իրավունքներին վերաբերող հարցերը, ինչպես նաև անվավեր է ճանաչում նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը: Այս դեպքում չի պահանջվում տալ ժառանգության իրավունքի նոր վկայագիր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործով կտակարար Հենրիկ Համազասպի Հարությունյանը մահացել է 12.01.2006 թվականին: Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանն 22.02.2007 թվականին

դիմել է նոտարական գրասենյակ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար: Այսինքն՝ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պայմաններում դիմել է նոտարական գրասենյակ: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է դիմեր դատարան՝ ժառանգության ընդունման համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու պահանջով, ապա՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում դիմեր նոտարական գրասենյակ՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հենրիկ Հովհաննեսի Հարությունյանը Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգությունը չի ընդունել:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին (ներկայացման իրավունքով ժառանգություն) և նրանց միջև բաշխվում է հավասարապես:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգություն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքը պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, իսկ 3-րդ մասի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ

ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար:

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (տե՛ս Արմինե Հակոբյանը և Մամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի,

Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը (տես, օրինակ՝ Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Մերոսյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրամադրելու, Մերոսյան Բալասանյանի 01.02.1994 թվականի կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և Այգեստան 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ Կարինե Մերոսյանի սեփականության

իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջների մասին թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը): Ուստի դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգական գույքի փաստացի տիրապետելու փաստը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով (տե՛ս Գառնիկ Նազարյանն հայցի ընդդեմ Գագիկ Նազարյանի, Արտաշատի նոտարական տարածքի նոտարի՝ փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ճանաչելու և Գագիկ Նազարյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1125(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը, ինչպես նաև Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի, Արմավիրի նոտարական տարածքի նոտար Նարինե Մկրտչյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արմավիրի տարածքային ստորաբաժանման՝ Վարդան Վարդանյանի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման եղանակով Միշա Վարդանյանին ժառանգությունը ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով սույն գործում առկա հարևանների հայտարարությունները և վկաների ցուցմունքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հենրիկ Համազասպի Հարությունյանի ժառանգական գույքը փաստացի տիրապետման և կառավարման հիմքով ընդունել են կինը՝ Հրիտա Հակոբյանը, ինչպես նաև Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 հասցեում գտնվող տունը և հողամասը Հենրիկ Համազասպի Հարությունյանի անձնական սեփականությունն էր, հետևաբար, դրա նկատմամբ պետք է ճանաչել Հրիտա Հակոբյանին 1/2 բաժնով և Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններին 1/2 բաժնով, իսկ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 1-ին փողոցի 4-րդ փակուղու թիվ 4 հասցեում գտնվող տան և հողամասի, «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի, Երևանի Հայինայբանկի 6654/09 մասնաձյուղի թիվ 57433 հաշվում

հասանելիք տոկոսների և փոխհատուցման հետ միասին առկա ավանդի նկատմամբ պետք է ճանաչել Հրիտա Հակոբյանին 3/4 (1/2+1/2:2) բաժնով և Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններին 1/4 (1/2:2) բաժնով ժառանգությունն ընդունած ժառանգներ:

Բացի այդ, սույն գործի փաստերի համաձայն՝ 12.02.2008 թվականին Հասմիկ Հարությունյանը Շենգավիթի նոտարական գրասենյակում հայտարարություն է տվել մոր ժառանգությունն ըստ կտակի ընդունելու մասին: Տվյալ դեպքում Շենգավիթի նոտարական գրասենյակին ժառանգությունն ընդունելու վերաբերյալ Հասմիկ Հարությունյանի դիմումի հանձնելն ինքնին հիմք չէ վերջինիս այդ եղանակով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար, քանի որ Հրիտա Հակոբյանի ժառանգության բացման վայրը Էրեբունու նոտարական գրասենյակն է: Այսինքն՝ ժառանգությունն ընդունելու վերաբերյալ դիմումը պետք է ներկայացվեր Էրեբունու տարածքի նոտարին: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հասմիկ Հարությունյանը ժառանգությունն ընդունելու համար Շենգավիթի նոտարական գրասենյակում հայտարարություն տալով կատարել է ժառանգատուի գույքի փաստացի տիրապետմանը և կառավարմանն ուղղված կոնկրետ գործողություններ՝ կոնկրետ նպատակ ունենալով իր տիրապետման տակ վերցնել ժառանգական գույքը:

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (տե՛ս Կիմա Սարգսյանի ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հասմիկ Հարությունյանը Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի

նկատմամբ ըստ կտակի ժառանգությունը չի ընդունել, այլ ընդունել է փաստացի տիրապետման հիմքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի՝ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 հասցեում գտնվող տան և հողամասի նկատմամբ պետք է ճանաչել Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններին $1/4$ ($1/2:2$) բաժնով, Հասմիկ Հարությունյանին՝ $1/4$ ($1/2:2$) բաժնով, իսկ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 4-րդ փակուղու 1-ին փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան և հողամասի, «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի, Երևանի Հայխնայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում հասանելիք տոկոսների և փոխհատուցման հետ միասին առկա ավանդի նկատմամբ Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյաններին՝ $3/8$ ($3/4:2$) բաժնով, Հասմիկ Հարությունյանին՝ $3/8$ ($3/4:2$) բաժնով ժառանգությունն ընդունած ժառանգներ:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հենրիկ Համազասպի Հարությունյանի և Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 հասցեում գտնվող տան և հողամասի նկատմամբ Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների ժառանգական բաժինը կկազմի $3/4$ ($1/2+1/4$), Հասմիկ Հարությունյանի՝ $1/4$, իսկ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 4-րդ փակուղու 1-ին փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան և հողամասի, «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի, Երևանի Հայխնայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում հասանելիք տոկոսների և փոխհատուցման հետ միասին առկա ավանդի Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների ժառանգական բաժինը՝ $5/8$ ($3/8+1/4$), Հասմիկ Հարությունյանինը՝ $3/8$:

Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Հենրիկ Համազասպի Հարությունյանի և Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի նկատմամբ համապատասխան բաժիններով պետք է ճանաչել Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների և Հասմիկ Հարությունյանի սեփականության իրավունքը:

Ինչ վերաբերում է Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների կողմից ժառանգական գույքի՝ «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի նկատմամբ ժառանգությունից հրաժարվելու փաստը ստորադաս դատարանների կողմից անտեսվելու

մասին բողոք բերած անձի պատճառաբանությանը, ապա այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը:

Փաստորեն նշված դրույթով ժառանգը կարող է հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Մինչդեռ Հենրիկ և Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանները «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի նկատմամբ հրաժարվել են ժառանգությունից 07.12.2007 թվականին, Հենրիկ Համազասպի Հարությունյանի մահից շուրջ մեկ տարի հետո:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարու-

թյուն օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.08.2009 թվականի որոշումը բեկանել և փոփոխել՝ հայքը և հակընդդեմ հայքը բավարարել մասնակիորեն:

2. Հենրիկ Համազասպի Հարությունյանի և Հրիտա Հակոբյանի ժառանգական գույքի՝ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 հասցեում գտնվող տան և հողամասի, 3/4 բաժնի նկատմամբ ճանաչել Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների, 1/4 բաժնի նկատմամբ՝ Հասմիկ Հարությունյանի, իսկ ՀՀ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 4-րդ փակուղու 1-ին փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան և հողամասի, «ՎԱԶ-210630» մակնիշի 63 ՍՍ 249 պետհամարանիշի ավտոմեքենայի, Երևանի Հայխնայբանկի 6654/09 մասնաճյուղի թիվ 57433 հաշվում հասանելիք տոկոսների և փոխհատուցման հետ միասին առկա ավանդի 5/8 բաժնի նկատմամբ՝ Հենրիկ ու Սյուզաննա Հովհաննեսի Հարությունյանների, 3/8 բաժնի նկատմամբ՝ Հասմիկ Հարությունյանի սեփականության իրավունքը:

3. Անվավեր ճանաչել Հասմիկ Հարությունյանի անվամբ Երևանի Լիսինյան փողոցի թիվ 61 տան և հողամասի նկատմամբ 24.07.2008 թվականի սեփականության իրավունքի գրանցումը 3/4 բաժնի մասով, իսկ ՀՀ Կոտայքի մարզի գյուղ Թեղենիքի 4-րդ փակուղու 1-ին փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան և հողամասի նկատմամբ 28.07.2008 թվականի սեփականության իրավունքի գրանցումը 5/8 բաժնի մասով:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. Սարգսյան

Դատավորներ՝ Է. Հայրիյան, Վ. Աբելյան, Ս. Անտոնյան, Վ. Ավանեսյան,

Ս. Դրմեյան, Ե. Խունդկարյան, Տ. Պետրոսյան, Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵՎ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0462/02/08
2010թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0462/02/08
Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան
Դատավորներ՝ Ն. Տավարացյան
Ս. Միքայելյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ս. Սարգսյանի
մասնակցությամբ դատավորներ Տ. Պետրոսյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Վ. Ավանեսյանի
Մ. Դրմեյանի
Ե. Խունդկարյանի
Է. Հայրիյանի
Ե. Սողոմոնյանի

2010 թվականի մարտի 12-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Յուրիկ և Ադունիկ Փիլոյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.10.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Յուրիկ և Ադունիկ Փիլոյանների ընդդեմ Սիրանուշ Փիլոյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին և Սիրանուշ Փիլոյանի հայցի ընդդեմ Յուրիկ և Ադունիկ Փիլոյանների՝ բնակարանից բաժինը բնեղենով առանձնացնելու, դրա անհնարիության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարն ընդհանուր

սեփականության մասնակիցների միջև բաժիններին համաչափ բաշխելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Յուրիկ և Ադունիկ Փիլոյանները պահանջել են Միրանուշ Փիլոյանից բռնագանձել 23.300 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի և 790.520 ՀՀ դրամի 1/3 մասը՝ որպես ժառանգության հետ կապված ծախսերի հատուցում:

Դիմելով դատարան՝ Միրանուշ Փիլոյանը պահանջել է Երևանի Կիլիկիա 1-ին փողոցի 51 շենքի թիվ 2 հասցեում գտնվող բնակարաններից բնեղենով առանձնացնել իրեն պատկանող 1/3 մասը, դրա անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառել և ստացված գումարը բաշխել ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 02.04.2008 թվականի որոշմամբ նշված գործերը միացվել են մեկ վարույթում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.07.2009 թվականի վճռով Յուրիկ և Ադունիկ Փիլոյանների հայցը մերժվել է, իսկ Միրանուշ Փիլոյանի հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.10.2009 թվականի որոշմամբ Յուրիկ և Ադունիկ Փիլոյանների վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 30.07.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Յուրիկ և Ադունիկ Փիլոյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասը, 1234-րդ հոդվածի 2-րդ մասը, 1235-րդ հոդվածի 3-րդ մասը, 1242-րդ հոդվածի 1-ին մասը, 1244-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 24.08.2005 թվականի վճռով Յուրիկ և Աղունիկ Փիլոյաններից հոգուտ այլ անձի բռնագանձվել են ժառանգատու Գևորգ Փիլոյանի հուղարկավորության, ինչպես նաև ժառանգական գույքի ձեռքբերման և վերանորոգման հետ կապված գումարները, որոնք անխզելիորեն կապված են ժառանգական գույքի հետ: Հետևաբար, անկախ այն հանգամանքից, թե նշված վճռով Սիրանուշ Փիլոյանի դեմ գումարի բռնագանձման պահանջ ներկայացվել է, թե ոչ, վերջինս պարտավոր է ժառանգական գույքի՝ իրեն անցած 1/3 մասի արժեքի սահմաններում հատուցել մյուս ժառանգների կատարած ծախսերը և նրանց հետ հավասարապես ու իր բաժնին համաչափորեն մասնակցել վիճելի գույքի պահպանման և շահագործման հետ կապված ծախսերին:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Սիրանուշ Փիլոյանը պարտավոր է հատուցել Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների կողմից կատարված ժառանգական գույքի հետ կապված այլ ծախսեր, մասնավորապես՝ Գևորգ Փիլոյանի գերեզմանաքարի համար վճարված 851.600 ՀՀ դրամը, որը հուղարկավորության հետ կապված ծախս է, վիճելի գույքի փորձաքննությունների, սեփականության իրավունքի վկայական ստանալու, ինչպես նաև փաստաբանական ծառայությունների, դիմումների և այլ փաստաթղթերի կազմման համար վճարված գումարները, վիճելի գույքի ձեռքբերման համար ներդրված 6.500 ԱՄՆ և 4.500 ԱՄՆ դոլարը, Գևորգ Փիլոյանի 2.000 ԱՄՆ դոլար մարված պարտքը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել նշված ծախսերը կատարելու հանգամանքը հիմնավորող գործում առկա ապացույցները:

2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջը, ինչի արդյունքում

կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ մասերը, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գործում առկա փորձագիտական եզրակացության համաձայն՝ որոշակի շինարարական աշխատանքներ իրականացնելուց հետո վիճելի գույքի 1/3 բաժինը հնարավոր է առանձնացնել, որի ուղղությամբ Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների կողմից կատարվել են որոշակի աշխատանքներ:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը նախապատվությունը տվել է Միրանուշ Փիլոյանի օրինական ներկայացուցչի հայտարարությանը, որին չի հետաքրքրել վիճելի գույքից բաժինը բնեղենով առանձնացնելու տարբերակը, այլ միայն մտահոգել է այդ բաժնի արժեքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 30.10.2009 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների հայցը բավարարել, իսկ Միրանուշ Փիլոյանի հայցը բավարարել մասնակիորեն՝ միայն բնակարանից 1/3 մասը բնեղենով առանձնացնելու մասով:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 20.12.2001 թվականի բնակարանի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Գևորգ Փիլոյանը գնել է Երևանի Կիլիկիա 1-ին փողոցի 51 շենքի թիվ 2 հասցեում գտնվող երկու բնակարանները (հ. 1, գ.թ. 41):

2) 03.09.2003 թվականի ԱԱ թիվ 220740 վկայականի համաձայն՝ Գևորգ Փիլոյանը 24.05.2003 թվականին մահացել է (հ. 2, գ.թ. 43):

3) 01.03.2004 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Գևորգ Փիլոյանի գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են՝ Յուրիկ, Աղունիկ և Միրանուշ Փիլոյանները: Ժառանգական գույքը, որի համար տրված է վկայագիրը, բաղկացած է Երևանի Կիլիկիա 1-ին փողոցի 51 շենքի թիվ 2 հասցեում գտնվող երկու բնակարաններից (հ. 2, գ.թ. 46):

4) 20.03.2006 թվականի թիվ 2011385 և 31.10.2006 թվականի թիվ 2237092 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկա-

յականների համաձայն՝ Երևանի Կիլիկիա 1-ին փողոցի 51 շենքի թիվ 2 հասցեում գտնվող 59.0 քմ և 40.0 քմ մակերեսներով բնակարանների նկատմամբ գրանցվել է Յուրիկ, Ադունիկ և Սիրանուշ Փիլոյանների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը՝ յուրաքանչյուրին 1/3 բաժին (հ. 2, գ.թ. 12-18):

5) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 24.08.2005 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած թիվ 05-2240 վճռի համաձայն՝ Յուրիկ և Ադունիկ Փիլոյաններից հոգուտ Քնարիկ Հակոբյանի բռնագանձվել է 733.140 ՀՀ դրամ՝ որպես Երևանի Կիլիկիա 1-ին փողոցի 51 շենքի թիվ 2 բնակարանի վերանորոգման գումար, 1.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես նշված բնակարանի գնման համար ներդրված գումար, 1.000 ԱՄՆ դոլար՝ որպես Գևորգ Փիլոյանի հուղարկավորության ծախսեր (հ. 2, գ.թ. 8-10):

6) 15.03.2006 թվականի կատարողական վարույթը կարճելու մասին որոշման համաձայն՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 24.08.2005 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա տրված կատարողական թերթի պահանջը փաստացի կատարվել է (հ. 2, գ.թ. 87):

7) ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից 30.09.2008 թվականին տրվել է թիվ Հմ. 31420807 եզրակացությունն այն մասին, որ Երևանի Կիլիկիա 1-ին փողոցի 51 շենքի թիվ 2 հասցեում գտնվող բնակարանների 1/3 բաժինը բնեղենով առանձնացնել հնարավոր չէ՝ պահպանելով տարածքների ըստ նշանակության օգտագործումը, ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող նորմատիվ ակտերի պահանջները, ինչպես նաև բաժանվող գույքին առանց անհամաչափ վնաս պատճառելու պայմանով (հ. 4, գ.թ. 4-13):

8) «Կառուցագետ» ՍՊԸ-ի 29.10.2008 թվականի թիվ Կ-08/194-01 հաշվետվության և գրության համաձայն՝ Երևանի Կիլիկիա 1-ին փողոցի 51 շենքի թիվ 2 հասցեում գտնվող 59.0 քմ մակերեսով բնակարանի 1/3 մասի առանձնացումն առաջարկվել է իրականացնել՝ բացելով շենքի ընդհանուր մուտքում գոյություն ունեցող՝ ներկայումս լցաշարված մուտքի դուռը, ըստ հատակագծի թիվ 3 և 4 տարածքները բաժանող պատի վրա գոյություն ունեցող պատուհաններից մեկը վերածելով դռան, թիվ 4 տարածքի մի մասը միջնորմով առանձնացնել նախամուտքից և թիվ 4 տարածքում կառուցելով սանհանգույց (հ. 4, գ.թ. 24-36):

9) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.11.2008 թվականի որոշման համաձայն՝

ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի 30.09.2008 թվականի թիվ Հմ. 31420807 եզրակացության և «Կառուցագետ» ՍՊԸ-ի 29.10.2008 թվականի թիվ Կ-08/194-01 հաշվետվության միջև առկա էական հակասությունների պատճառով նշանակվել է դատատեխնիկական փորձաքննություն (հ. 4, գ.թ. 179-180):

10) ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 24.02.2009 թվականին տրվել է թիվ Հմ. 08-1616 եզրակացությունն այն մասին, որ Երևանի Կիլիկիա 1-ին փողոցի 51 շենքի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/3 բաժինը տեխնիկապես հնարավոր չէ առանձնացնել այնպես, որպեսզի չխախտվեն կողմերի իրավունքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված բնակարանը հնարավոր չէ բնեղենով առանձնացնել, և շինությունը որպես բնակատարածություն ենթակա չէ առանձնացման, ըստ հարցադրման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված կանոններով բաժին առանձնացնելը, առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, նպատակահարմար չէ (հ. 5, գ.թ. 3-24):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցվում են հետևյալ հերթականությամբ՝

առաջին հերթին հատուցվում են մինչև ժառանգատուի մահը նրա հիվանդության հետևանքով առաջացած և ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը.

երկրորդ հերթին հատուցվում են ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքը պահպանելու և կառավարելու, ինչպես նաև կտակը կատարելու հետ կապված ծախսերը.

երրորդ հերթին բավարարվում են ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները.

չորրորդ հերթին բավարարվում են պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների պահանջները.

հինգերորդ հերթին հատուցվում են կտակային հանձնարարությունը կատարելու հետ կապված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում նշված ծախսերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրենց անցած ժառանգության արժեքի սահմաններում ժառանգները կրում են համապարտ պատասխանատվություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համապարտ պարտականությունը (պատասխանատվությունը) կամ համիրավ պահանջը ծագում է, եթե պարտականության համապարտությունը կամ պահանջի համիրավությունը նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես, եթե անբաժանելի է պարտավորության առարկան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապաններից մեկի կողմից համապարտ պարտականությունը լրիվ կատարելը մնացած պարտապաններին ազատում է պարտատիրոջ հանդեպ պարտականությունը կատարելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե այլ բան չի բխում համապարտ պարտապանների հարաբերություններից, ապա համապարտ պարտականությունը կատարած պարտապանը մնացած պարտապանների նկատմամբ ունի հավասար բաժիններով հետադարձ պահանջի իրավունք՝ հանելով իր բաժինը:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ժառանգները ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո իրենց անցած գույքի արժեքի սահմաններում, ի թիվս այլ ծախսերի, համապարտ պատասխանատվություն են կրում ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը հատուցելու և ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները բավարարելու հարցում: Ընդ որում՝ եթե այլ բան չի բխում համապարտ պարտապանների հարաբերություններից, ապա համապարտ պարտականությունը կատարած պարտապանը մյուս պարտապանների նկատմամբ ձեռք է բերում հետադարձ պահանջի իրավունք, անկախ այն հանգամանքից, թե պարտատերը մնացած պարտապաններից պահանջել է կատարելու պարտավորությունը, թե ոչ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի վճիռը, պատճառաբանել է, որ թիվ 05-2240 քաղաքացիական գործով ծախսերը հատուցելու պահանջ է ներկայացվել նաև Միրանուշ Փիլոյանի դեմ, իսկ Յուրիկ և Ադունիկ Փիլոյանները նշված գործով կայացված ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 24.08.2005 թվականի վճիռը չեն բողոքարկել այն հիմքով, որ Միրանուշ Փիլոյանը, լինելով վիճելի բնակարանի բաժնային սեփականատեր, պարտավոր էր հատուցել ժառանգատու Գևորգ Փիլոյանի հուղարկավորության և ժառանգական գույքի ձեռքբերման և վերանորոգման հետ կապված ծախսերը:

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ Գևորգ Փիլոյանի գույքի նկատմամբ հավասար բաժիններով ժառանգներ են Յուրիկ, Ադունիկ և Միրանուշ Փիլոյանները, իսկ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 24.08.2005 թվականի թիվ 05-2240 վճռով միայն Յուրիկ և Ադունիկ Փիլոյաններից որպես վիճելի բնակարանի վերանորոգման գումար բռնագանձվել է 733.140 ՀՀ դրամ, ինչպես նաև նշված բնակարանի գնման համար ներդրված 1.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և Գևորգ Փիլոյանի հուղարկավորության համար ծախսված 1.000 ԱՄՆ դոլար: Յուրիկ և Ադունիկ Փիլոյանները օրինական ուժի մեջ մտած դատական ակտով բռնագանձված գումարները փաստացի վճարել են պահանջատիրոջը:

Հիմք ընդունելով վերագրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգատուի հուղարկավորության ծախսերը և նրա բնակարանի գնման և վերանորոգման համար ներդրված գումարները պահանջատիրոջը հատուցելուց հետո Յուրիկ և

Աղունիկ Փիլոյանների մոտ ծագել է հետադարձ պահանջի իրավունք նշված ծախսերը հատուցելու համապարտ պարտականություն ունեցող Միրանուշ Փիլոյանի նկատմամբ: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 24.08.2005 թվականի վճռով բռնագանձված գումարի 1/3 մասը Միրանուշ Փիլոյանից բռնագանձելու մասին Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների պահանջը հիմնավոր է:

Ինչ վերաբերում է Յուրիկ և Աղունիկ Փիլոյանների ներկայացրած այլ գումարների բռնագանձման պահանջին, ապա Վճռաբեկ դատարանն այն հիմնավոր չի համարում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաժնային սեփականության յուրաքանչյուր մասնակից պարտավոր է իր բաժնին համաչափ մասնակցել ընդհանուր գույքից գանձվող հարկերին, տուրքերին և մյուս վճարներին, ինչպես նաև գույքի պահպանման այլ ծախսերին:

Սույն գործով Յուրիկ և Աղունիկ Փիլոյանները ներկայացրել են նաև Գևորգ Փիլոյանի գերեզմանաքարի, վիճելի գույքի փորձաքննությունների, սեփականության իրավունքի վկայական ստանալու, փաստաբանական ծառայությունների, դիմումների և այլ փաստաթղթերի կազմման, վիճելի գույքի ձեռքբերման և Գևորգ Փիլոյանի ունեցած պարտքը մարելու համար վճարված գումարների բռնագանձման պահանջ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 194-րդ և 1242-րդ հոդվածների ուժով բաժնային սեփականության մասնակիցը պարտավոր է մասնակցել ընդհանուր գույքից գանձվող հարկերին, տուրքերին և մյուս վճարներին, ինչպես նաև գույքի պահպանման այլ ծախսերին, իսկ ժառանգության իրավունքի վկայագիր ստացած ժառանգը պարտավոր է հատուցել ժառանգության հետ կապված ծախսերը:

Մինչդեռ սույն գործով ներկայացված վիճելի գույքի փորձաքննությունների, սեփականության իրավունքի վկայական ստանալու, փաստաբանական ծառայությունների, դիմումների և այլ փաստաթղթերի

կազմման գումարները չեն վերաբերում նշված ծախսերին, հետևաբար այդ կապակցությամբ ներկայացված պահանջը ենթակա է մերժման:

Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում նաև Գևորգ Փիլոյանի գերեզմանաքարի համար վճարված գումարը բռնագանձելու պահանջը, քանի որ «Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների ու դիակլիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ հուղարկավորությունը՝ մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) հողին հանձնելու կամ դիակլիզելու արարողությունն է: Հետևաբար նշված նորմի իմաստով հուղարկավորությունից հետո կատարված ծախսերը, այդ թվում՝ գերեզմանաքար տեղադրելու գումարը, չեն մտնում հուղարկավորության ծախսերի մեջ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը նշված գումարների բռնագանձման մասով իրավացիորեն վերաքննիչ բողոքը մերժել է:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի քննության ընթացքում ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ դատարանի որոշմամբ փորձաքննություն կարող է նշանակվել հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման անհրաժեշտության դեպքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը:

Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի համաձայն, բաժնային սեփականության մասնակցին բնեղենով առանձնացվող գույքի անհամաչափությունը բաժնային սեփականության իրավունքում նրա բաժնին վերացվում է նրան համապատասխան դրամական գումար վճարելով կամ այլ փոխհատուցումով:

Բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը կարող են այդ մասնակցի համաձայնությամբ նրան փոխհատուցում վճարել: Այն դեպքերում, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի, դատարանը կարող է նաև այդ սեփականատիրոջ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մյուս մասնակիցներին թույլատրել վճարելու փոխհատուցում:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածին համապատասխան՝ փոխհատուցումն ստանալու պահից սեփականատերը կորցնում է ընդհանուր գույքում բաժնի նկատմամբ իրավունքը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժնեկցու կամ դրանից սույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Վերջին դրույթի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն ընդհանուր գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու նախապայման է համարել դրա բաժանման աննպատակահարմարության ակնհայտությունը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ փորձաքննությունների եզրակացություններով հիմնավորվել է, որ ընդհանուր գույքից Միրանուշ Փիլոյանի բաժինը բնեղենով առանձնացնել հնարավոր չէ, իսկ կողմերը նյութական հնարավորություն չունեն իրենց բաժինների դիմաց միմյանց փոխհատուցում վճարելու, հանգել է

այն հետևության, որ Դատարանը գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարն ընդհանուր սեփականության մասնակիցների միջև նրանց բաժիններին համաչափ բաշխելու առումով ճիշտ վճիռ է կայացրել:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի 30.09.2008 թվականի թիվ Հմ. 31420807 եզրակացության և «Կառուցագետ» ՍՊԸ-ի 29.10.2008 թվականի թիվ Կ-08/194-01 հաշվետվության միջև առկա էական հակասությունների պատճառով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 27.11.2008 թվականի որոշմամբ նշանակված դատատեխնիկական փորձաքննության հիման վրա ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 24.02.2009 թվականին տրվել է թիվ Հմ. 08-1616 եզրակացությունն այն մասին, որ Երևանի Կիլիկիա 1-ին փողոցի 51 շենքի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/3 բաժինը տեխնիկապես հնարավոր չէ առանձնացնել այնպես, որպեսզի չխախտվեն կողմերի իրավունքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված բնակարանը հնարավոր չէ բնեղենով առանձնացնել, և շինությունը որպես բնակտարածություն ենթակա չէ առանձնացման, ըստ հարցադրման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված կանոններով բաժին առանձնացնելը, առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, նպատակահարմար չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 24.02.2009 թվականի եզրակացությունը՝ այն դնելով որոշման հիմքում: Մասնավորապես՝ այդ եզրակացության ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ դրանով չի հիմնավորվել վիճելի գույքից կողմերի բաժիններն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարությունը:

Բացի այդ, նշված եզրակացությամբ վիճելի բնակարանի բաժանման աննպատակահարմարության վերաբերյալ հետևության հիմքում դրվել է այն հանգամանքը, որ բնակարանի բնակելի 13,63 քմ մակերեսի տարանջատումը տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել այնպես, որ չխախտվեն կողմերի իրավունքները: Մինչդեռ նույն եզրակացությամբ նշվել է, որ ընդհանուր բնակարանի բնակելի տարածքի 1/3 բաժինը 13,63

քմ է, իսկ ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող նորմատիվ ակտերով սահմանված է, որ բնակելի սենյակի մակերեսը պետք է մեծ լինի նվազագույնը 8 քմ-ից: Այսինքն՝ փորձագիտական եզրակացությամբ չի հիմնավորվել, թե 13,63 քմ մակերեսի բաժանման անհրաժեշտությունն ինչով է պայմանավորված, երբ այդ մակերեսն արդեն կազմում է ընդհանուր բնակարանի 1/3 մասը:

Ավելին, փորձագետները, դուրս գալով իրենց իրավասության սահմաններից, տեխնիկական հարցերից զատ պատասխանել են նաև իրավական հարցադրումների: Մասնավորապես՝ փորձագիտական եզրակացությունից պարզ չէ, թե ինչ է նշանակում «որպեսզի չխախտվեն կողմերի իրավունքները» արտահայտությունը: Եզրակացության մեջ նշվել է «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված կանոններով բաժին առանձնացնելը» արտահայտությունը, ինչն իրավական բնույթ ունի: Բացի այդ, նշված եզրակացությամբ պատճառաբանվել է, որ «Բնակելի տներ» ՄՆԻՊ 2.08.01-89 նորմի 2.7 կետով սահմանվում է, որ համատեղված սանհանգույցի խորությունը և լայնությունը պետք է հավասար լինեն կամ գերազանցեն համապատասխանաբար 2,2 մ-ը և 0,8 մ-ը, իսկ նախասրահի լայնությունը՝ 0,85 մ-ը, որոնք հնարավոր չէ ապահովել հետազոտվող բնակարանում: Մինչդեռ փորձագիտական եզրակացությամբ սահմանված է, որ միջանցքի ընդհանուր մակերեսը 6,1 քմ է, իսկ 1/3 մասը՝ 2,0 քմ, այսինքն՝ չի հիմնավորվել, թե հատկապես ինչ պատճառներով հնարավոր չէ վիճելի բնակարանում ապահովել նշված տարածքների բաժանումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ եթե դատարանի կամ դատավարության մասնակիցների մեջ կասկածներ են առաջանում փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ, կամ առկա են հակասություններ մի քանի փորձագետների եզրակացություններում, ապա դատարանը միևնույն հարցի վերաբերյալ կարող է նշանակել կրկնակի փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվում է մեկ այլ փորձագետի (փորձագետների, մասնագիտացված փորձագիտական հաստատության):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 24.02.2009 թվականի թիվ Հմ. 08-1616 եզրակացության արժանահավատության և հիմնա-

վորվածության վերաբերյալ կասկածներ են առաջանում, ավելին, այդ եզրակացությամբ չեն վերացել ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի 30.09.2008 թվականի թիվ Հմ. 31420807 եզրակացության և «Կառուցագետ» ՍՊԸ-ի 29.10.2008 թվականի թիվ Կ-08/194-01 հաշվետվության միջև առկա էական հակասությունները, ինչը բավարար հիմք է դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 5-րդ կետի ուժով հայեցողական լիազորությունն իրականացնելու և կրկնակի փորձաքննություն նշանակելու՝ վիճելի բնակարանից 1/3 բաժինն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության հարցը պարզելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար է համարում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.10.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. Սարգսյան
Դատավորներ՝ Տ. Պետրոսյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Վ. Ավանեսյան
Մ. Դրմեյան
Ե. Խունդկարյան
Է. Հայրիյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0638/02/08
2010թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0638/02/08
Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ս. Սարգսյանի
մասնակցությամբ դատավորներ Ս. Անտոնյանի
Վ. Աբելյանի
Մ. Դրմեյանի
Է. Հայրիյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2010 թվականի մարտի 12-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մերուժան և Մերոբ Մարտիրոսյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.04.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մերուժան և Մերոբ Մարտիրոսյանների ընդդեմ Ոսկեհատ Ումուրշատյանի և Աննա Մարտիրոսյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և ժառանգական գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, ինչպես նաև Ոսկեհատ Ումուրշատյանի և Աննա Մարտիրոսյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Մերուժան և Մերոբ Մարտիրոսյանների՝ ներկայացման իրավունքով Աննա Մարտիրոսյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և Ոսկեհատ

ՌԻմուրշատյանի օգտագործման իրավունքը ճանաչելու պահանջների մասին, երրորդ անձինք Շուշան Հովհաննիսյանի, Անահիտ, Կորյուն և Կարեն Մարտիրոսյանների հայցի ընդդեմ Ոսկեհատ ՌԻմուրշատյանի և Աննա Մարտիրոսյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մերուժան և Սերոբ Մարտիրոսյանները պահանջել են հայրական տան և հողամասի նկատմամբ ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգներ և ժառանգական գույքի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Աննա Մարտիրոսյանը և Ոսկեհատ ՌԻմուրշատյանը պահանջել են ներկայացման իրավունքով Աննա Մարտիրոսյանին ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ և ճանաչել Ոսկեհատ ՌԻմուրշատյանի օգտագործման իրավունքը:

Դիմելով դատարան՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձինք Շուշան Հովհաննիսյանը, Անահիտ Մարտիրոսյանի օրինական ներկայացուցիչ Շուշան Հովհաննիսյանը, Կորյուն Մարտիրոսյանը և Կարեն Մարտիրոսյանը պահանջել են ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգներ և ժառանգական գույքի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.12.2008 թվականի վճռով Սերոբ Մարտիրոսյանի պահանջը՝ Միսակ Մարտիրոսյանի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու վերաբերյալ, բավարարվել է, ճանաչվել է Սերոբ Մարտիրոսյանի սեփականության իրավունքը Երևանի Սիլիկյան թաղամասի 5-րդ փողոցի 14 հասցեում գտնվող օրինական հողամասի 1/6 մասի նկատմամբ:

Մերուժան Մարտիրոսյանի պահանջը՝ Միսակ Մարտիրոսյանի ժառանգության 1/3 մասի (Երևանի Սիլիկյան թաղամասի 5-րդ փողոցի 14 հասցեում գտնվող օրինական հողամասի 1/6 մասի) ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու վերաբերյալ, բավարարվել է:

Շուշան Հովհաննիսյանի, Աննա, Կորյուն և Կարեն Մարտիրոսյանների պահանջը՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու

վերաբերյալ, բավարարվել է և ճանաչվել է Շուշան Հովհաննիսյանի, Աննա, Կորյուն և Կարեն Մարտիրոսյանների սեփականության իրավունքը Երևանի Սիլիկյան թաղամասի 5-րդ փողոցի 14 հասցեում գտնվող օրինական հողամասի 5/12 մասի նկատմամբ:

Աննա Մարտիրոսյանի պահանջը՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու վերաբերյալ, բավարարվել է և ճանաչվել է Աննա Մարտիրոսյանի սեփականության իրավունքը Երևանի Սիլիկյան թաղամասի 5-րդ փողոցի 14 հասցեում գտնվող օրինական հողամասի 1/4 մասի նկատմամբ:

Ոսկեհատ Ումուրշատյանի պահանջը՝ օգտագործման իրավունքը ճանաչելու մասին, մերժվել է:

Հայցապահանջները մնացած մասով մերժվել են:

Քաղաքացիական գործի վարույթը Երևանի Սիլիկյան թաղամասի 5-րդ փողոցի 14 հասցեում գտնվող ինքնակամ շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասով կարճվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.04.2009 թվականի որոշմամբ Դատարանի 30.12.2008 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Մերուժան և Մերոբ Մարտիրոսյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 131-րդ և 132-րդ հոդվածները, սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածը և 1226-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ այն փաստը, որ վեճի առարկա գույքի նկատմամբ ժառանգությունը բացվելու ժամանակ՝ 2000 թվականին՝ Միսակ Մարտիրոսյանի մահից հետո, վերջինիս ժառանգական գույքը փաստացի տիրապետել և կառավարել

են Անահիտ Մարտիրոսյանը, Մերուժան, Քերոբ և Սերոբ Մարտիրոսյանները, իսկ 2003 թվականին՝ Անահիտ Մարտիրոսյանի մահից հետո, ժառանգությունն ընդունել են Մերուժան, Սերոբ և Քերոբ Մարտիրոսյանները, ինչպես նաև ներկայացման իրավունքով Աննա Մարտիրոսյանը: Դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ՝ առանց պատճառաբանելու, թե ինչու են ժառանգական զանգվածի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչվել միայն Քերոբ Մարտիրոսյանը և ներկայացման իրավունքով նրա կինն ու զավակները, իսկ Մերուժան և Սերոբ Մարտիրոսյանները ժառանգ են ճանաչվել միայն հոր՝ Միսակ Մարտիրոսյանի ժառանգական գույքի մասով:

Բացի այդ, Դատարանը, ընդունելով, որ ժառանգական զանգվածի մեջ է մտնում նաև 54.72 քմ մակերեսով վիճելի տունը, դրա վերաբերյալ վճիռ չի կայացրել, թեև Մերուժան և Սերոբ Մարտիրոսյանները նման պահանջ ներկայացրել են:

2) Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը և ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Դատարանը, Աննա Մարտիրոսյանի՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի լինելու հանգամանքն արձանագրելով հանդերձ, նրան ճանաչել է ժառանգությունն ընդունած ժառանգ, ինչպես նաև ճանաչել է նրա սեփականության իրավունքը Երևանի Սիլիկյան թաղամասի 5-րդ փողոցի 14 հասցեի օրինական հողամասի 1/4 մասի նկատմամբ՝ անտեսելով այն հանգամանքը, որ այլ պետության քաղաքացին հողի նկատմամբ ժառանգություն ընդունել և հողի սեփականատեր դառնալ չի կարող:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ այն փոփոխել՝ Մերուժան և Սերոբ Մարտիրոսյաններին ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ և ճանաչել նրանցից յուրաքանչյուրի սեփականության իրավունքը ժառանգական զանգվածի՝ 1410 քմ հողամասի 1/3 մասի նկատմամբ և տան օրինական մասի 1/4 մասի նկատմամբ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանման 06.02.2008 թվականի թիվ ԿՂ-637 տեղեկանքի համաձայն՝ Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի 5-րդ փողոցի 14 տունը և հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Միսակ Մարտիրոսյանին (հատոր 1-ին, գ.թ. 25):

2. 20.09.1954 թվականի ՁԺ թիվ 222067 ամուսնության վկայականի համաձայն՝ 20.09.1954 թվականին Միսակ Մարտիրոսյանն ամուսնացել է Անահիտ Մարտիրոսյանի (մինչամուսնական ազգանունը՝ Հովհաննիսյան) հետ (հատոր 2-րդ, գ.թ.99):

3. Միսակ Մարտիրոսյանը մահացել է 22.05.2000 թվականին (հատոր 2-րդ, գ.թ. 26):

4. Անահիտ Մարտիրոսյանը մահացել է 05.11.2003 թվականին (հատոր 2-րդ, գ.թ. 100):

5. Մերուժան, Սերոբ, Քերոբ և Վարդգես Մարտիրոսյանները Միսակ Մարտիրոսյանի և Անահիտ Մարտիրոսյանի երեխաներն են:

6. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանման 25.07.2008 թվականի թիվ ԿՂ-4475 գրության համաձայն՝ Երևանի Սիլիկյան թաղամասի 5 փողոցի 14 հասցեի 54.72 քմ օրինական շինությունները սեփականության իրավունքով պատկանում են Միսակ Մարտիրոսյանին:

Երևանի Սիլիկյան թաղամասի 5 փողոցի 14 հասցեի հողամասի փաստացի մակերեսը կազմում է 1517.7 քմ, իսկ շինությունների մակերեսը՝ 728.6: Սերոբ Մարտիրոսյանի բանավոր հայտարարությամբ և ըստ չափագրման արդյունքների՝ նրա կողմից փաստացի օգտագործվում է 411.7 քմ հողատարածք, որից 105.8 քմ՝ շինության տակ: 105.8 քմ մակերեսից 8.3 քմ օգտագործվում է Մերուժան Մարտիրոսյանի հետ համատեղ: Շուշան Հովհաննիսյանի, Անահիտ, Կորյուն և Կարեն Մարտիրոսյանների բանավոր հայտարարությամբ և ըստ չափագրման արդյունքների՝ նրանց կողմից փաստացի օգտագործվում է 540.9 քմ հողամաս, որից 254.1 քմ շինության տակ: Մնացած 565.1 քմ հողա-

տարածքը օգտագործվում է Մերուժան Մարտիրոսյանի և Ոսկեհատ Ումուրշատյանի կողմից՝ ըստ իրենց հայտարարության, որից 107.7 քմ անորոշ կարգավիճակ ունեցող հողատարածք է: Շուշան Հովհաննիսյանը, Անահիտ, Կորյուն և Կարեն Մարտիրոսյանները օգտագործում են 250.1 քմ շինություն, որից 69.8 քմ՝ համատեղ Ոսկեհատ Ումուրշատյանի հետ, 8.3 քմ՝ համատեղ Մերոբ Մարտիրոսյանի հետ: Ոսկեհատ Ումուրշատյանը օգտագործում է 118.6 քմ շինություն, որից 69.8 քմ՝ համատեղ Մերուժան Մարտիրոսյանի հետ: 1517.7 քմ հողամասից 107.7 քմ անորոշ կարգավիճակ ունեցող հողատարածք է (հատոր 2-րդ, գ.թ. 39):

7. 06.11.1980 թվականին Քերոբ Մարտիրոսյանը ամուսնացել է Շուշան Մարտիրոսյանի հետ (հատոր 2-րդ, գ.թ. 83):

8. Կարեն, Կորյուն, Անահիտ Մարտիրոսյանները Քերոբ Մարտիրոսյանի և Շուշան Հովհաննիսյանի երեխաներն են:

9. Քերոբ Մարտիրոսյանը մահացել է 03.10.2007 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 40):

10. 05.03.1976 թվականի թիվ 1-01 ամուսնության վկայականի համաձայն՝ Վարդգես Մարտիրոսյանը և Ոսկեհատ Ումուրշատյանը ամուսիններ են:

11. Աննա Մարտիրոսյանը Ոսկեհատ Ումուրշատյանի և Վարդգես Մարտիրոսյանի երեխան է:

12. 1985 թվականին Վարդգես Մարտիրոսյանը Ոսկեհատ Ումուրշատյանի և Աննա Մարտիրոսյանի հետ տեղափոխվել են Ռուսաստանի Դաշնություն (հատոր 1-ին, գ.թ. 94):

13. Վարդգես Մարտիրոսյանը մահացել է 22.10.1997 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 24):

14. Աննա Մարտիրոսյանը վերադարձել է Հայաստան 2003 թվականի նոյեմբերի 14-ին և մինչ օրս բնակվում է Երևանի Սիլիկյան թաղամասի 5-րդ փողոցի 14 հասցեում գտնվող Վարդգես Մարտիրոսյանի կողմից նախկինում օգտագործվող բաժնում (հատոր 2-րդ, գ.թ. 29):

15. Մերոբ և Մերուժան Մարտիրոսյանների՝ 14.04.2008 թվականին Դատարան մուտք եղած հայցադիմումի համաձայն՝ վերջիններս խնդրել են ճանաչել իրենց հայրական տան և հողամասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ (հատոր 1-ին, գ.թ. 2):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա, իսկ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Այսինքն վերը նշված հոդվածների իմաստով դատարանը պարտավոր է՝

- քաղաքացիական գործը հարուցել միմիայն համապատասխան հայցի կամ դիմումի հիման վրա,

- քաղաքացիական գործը քննել միմիայն այդ գործով ներկայացված հայցապահանջների շրջանակում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն՝ գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառնությոթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության

մասին (տե՛ս Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների, Քանաքեռավանի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանման՝ Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և համասեփականատեր ճանաչելու պահանջների մասին, և Արմեն Խաչատրյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Թեհմինե Խաչատրյանի՝ բնակության իրավունքը դադարեցնելու և բնակելի տարածությունից վտարելու պահանջների մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշում, քաղաքացիական գործ թիվ ԿԴ03/0026/02/08):

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ 2000 թվականին Միսակ Մարտիրոսյանի մահից հետո վիճելի գույքը փաստացի տիրապետել են Անահիտ Մարտիրոսյանը, Մերուժան, Քերոբ և Սերոբ Մարտիրոսյանները, իսկ 2003 թվականին Անահիտ Մարտիրոսյանի մահից հետո՝ Մերուժան, Սերոբ և Քերոբ Մարտիրոսյանները, ինչպես նաև վերջիններիս հանգուցյալ եղբոր դուստրը՝ Աննա Մարտիրոսյանը:

Դատարանի վճռի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ վեճի առարկա գույքի նկատմամբ ժառանգությունը բացվել է երկու անգամ՝ 2000 թվականին Միսակ Մարտիրոսյանի և 2003 թվականին Անահիտ Մարտիրոսյանի մահվան հետևանքով, հանգուցյալ Քերոբ Մարտիրոսյանի կինը՝ Շուշան Հովհաննիսյանը, և երեխաները՝ Կարեն, Կորյուն, Անահիտ Մարտիրոսյանները, ճանաչվել են և՛ Միսակ Մարտիրոսյանի, և՛ Անահիտ Մարտիրոսյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ, Աննա Մարտիրոսյանը՝ ներկայացման իրավունքով Անահիտ Մարտիրոսյանի, իսկ Մերուժան և Սերոբ Մարտիրոսյանները՝ միայն Միսակ Մարտիրոսյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ:

Սույն գործով Սերոբ և Մերուժան Մարտիրոսյանների՝ 14.04.2008 թվականին Դատարան մուտք եղած հայցադիմումի համաձայն՝ վերջիններս խնդրել են ճանաչել իրենց հայրական տան և հողամասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ:

Մինչդեռ Դատարանը, ժառանգությունը բացված համարելով Միսակ Մարտիրոսյանի և Անահիտ Մարտիրոսյանի մասով, Մերուժան և Սերոբ Մարտիրոսյաններին ճանաչել է միայն Միսակ Մարտիրոսյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած անձանց պնդումն այն մասին, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ Դատարանն անհիմն կերպով իրենց ճանաչել է միայն Միսակ Մարտիրոսյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ, քանի որ վերջիններս Անահիտ Մարտիրոսյանի մահից հետո նրա ժառանգությունը փաստացի տիրապետելու ուժով արդեն իսկ ընդունել են այն և դրա նկատմամբ ձեռք են բերել սեփականության իրավունք՝ անկախ նշված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային ստորաբաժանման 25.07.2008 թվականի թիվ ԿԴ-4475 գրությամբ հաստատվում է, որ Երևանի Միլիկյան թաղամասի 5-րդ փողոցի 14 հասցեում գտնվող 54.72 քմ մակերեսով շինությունը օրինական է, ուստի այն ևս մտնում է Միսակ Մարտիրոսյանի և Անահիտ Մարտիրոսյանի ժառանգական զանգվածի մեջ, որպիսի փաստը Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվելու պայմաններում որոշմամբ դրան անդրադարձ չի կատարվել:

2) Վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե օրենքով թույլատրվող հիմքերով անձին որպես սեփականություն անցել է այնպիսի գույք, որն օրենքի ուժով չի կարող նրան պատկանել, սեփականատերն այդ գույքը պետք է օտարի դրա նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահից մեկ տարվա ընթացքում, եթե այլ ժամկետ նախատեսված չէ օրենքով:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ օրենքով թույլատրվող հիմքերով, տվյալ դեպքում՝ ժառանգական իրավունքով, հողը՝ որպես սեփականություն, կարող է անցնել օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, սակայն մեկ տարվա ընթացքում օտարելու պայմանով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի

բաժինն անցնում է նրա երեխաներին (ներկայացման իրավունքով ժառանգություն) և նրանց միջև բաշխվում է հավասարապես:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձանց պնդումն այն մասին, որ Աննա Մարտիրոսյանը, լինելով Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, չի կարող ճանաչվել ժառանգությունն ընդունած ժառանգ և դառնալ հողի նկատմամբ սեփականատեր, անհիմն է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.04.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. Սարգսյան

Դատավորներ՝ Ս. Անտոնյան

Վ. Աբելյան
Մ. Դրմեյան
Է. Հայրիյան
Տ. Պետրոսյան
Ե. Սողոմոնյան

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Անահիտ Եսայանը, Ալվարո, Շոդեր և Սադաֆ Ջորաբյանները պահանջել են անվավեր ճանաչել Ալվարո Գրիգորյանի անվամբ 27.12.2005 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա Ալվարո Գրիգորյանի անվամբ ՀՀ Արմավիրի Սահմանապահների փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 21 տան նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի 08.12.2009 թվականի (այսուհետ՝ Դատարան) վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Անահիտ Եսայանը, Ալվարո, Շոդեր և Սադաֆ Ջորաբյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ալվարո Գրիգորյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը, որի արդյունքում չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 1-ին մասը, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, որոնք չպետք է կիրառեր, ինչպես նաև սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Ալվարո Գրիգորյանն ամուսնու՝ ժառանգատու Խորեն Ջորաբյանի (Ջոհրաբյան) մահից հետո ժառանգությունն ընդունելու համար նոտարին է դիմել ժառանգության բացումից շուրջ 9 տարի անց՝ բաց թողնելով ժառանգությունն ընդունելու համար սահմանված 6-ամսյա ժամկետը: Բացի այդ, ժառանգի կողմից ժառանգության ընդունման համար սահմանված ժամկետը բաց թողնվելու դեպքում կարող է

ընդունել ժառանգությունը մյուս ժառանգների գրավոր համաձայնության պայմաններում: Մինչդեռ տվյալ դեպքում բացակայում է մյուս ժառանգների գրավոր համաձայնությունն Ալվարդ Գրիգորյանի կողմից ժառանգությունն ընդունելու կապակցությամբ: Փաստորեն, Ալվարդ Գրիգորյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը տրվել է օրենքի պահանջների խախտմամբ:

Ավելին, Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ժառանգատու Խորեն Զորաբյանի (Զոհրաբյան) մահից հետո ժառանգական գույքը փաստացի տիրապետման ուժով ընդունել է որդին՝ Դանիել Զորաբյանը:

Բացի այդ, Դանիել Զորաբյանի մահվանից հետո Անահիտ Եսայանը, Ալվարդ, Շողեր և Մադաֆ Զորաբյանները փաստացի տիրապետել և կառավարել են ժառանգատուի թողած ժառանգական գույքը, ինչով ընդունել են Դանիել Զորաբյանի ժառանգությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել ՀՀ վարչական դատարանի 08.12.2009 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Դատարանի կողմից վճիռը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, իսկ վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Խորեն Զորաբյանի (Զոհրաբյան) և Ալվարդ Գրիգորյանի ամուսնությունը ՔԿԱԳ մարմնում գրանցվել է 02.01.1960 թվականին (գ.թ. 93):

2. Դանիել Զորաբյանը Խորեն Զորաբյանի և Ալվարդ Գրիգորյանի որդին է (գ.թ.22):

3. Խորեն Զորաբյանը (Զոհրաբյան) մահացել է 27.04.1996 թվականին (գ.թ.23):

4. Դանիել Զորաբյանի և Անահիտ Եսայանի ամուսնությունը ՔԿԱԳ մարմնում գրանցվել է 19.09.1984 թվականին (գ.թ.12): Ալվարդ, Շողեր և Մադաֆ Զորաբյանները Դանիել Զորաբյանի զավակներն են (գ.թ.13-20):

5. 27.12.2005 թվականին ՀՀ Արմավիրի նոտարական տարածքի նոտարի կողմից հաստատված և սեղանամատյանում թիվ 5729 համարի տակ գրանցված սեփականության իրավունքի վկայագրի համաձայն՝ ՀՀ Արմավիրի Սահմանապահների փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 21 տունը և հողամասը համատեղ սեփականության իրավունքով պատկանել է 27.04.1996 թվականին մահացած Խորեն Դանիելի Ջորաբյանին (Ջոհրաբյան) և կնոջը՝ Ալվարդ Գրիգորյանին (գ.թ.31):

6. 27.12.2005 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5730 վկայագրի համաձայն՝ 27.04.1996 թվականին մահացած Խորեն Ջորաբյանի (Ջոհրաբյան) ժառանգական գույքի՝ ՀՀ Արմավիրի Սահմանապահների փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 21 տան և հողամասի 1/2 բաժնի նկատմամբ ժառանգ է ճանաչվել կինը՝ Ալվարդ Գրիգորյանը (գ.թ.30):

7. 23.01.2006 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2115409 վկայականի համաձայն՝ ՀՀ Արմավիրի Սահմանապահների փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 21 տան և հողամասի նկատմամբ գրանցվել է Ալվարդ Գրիգորյանի սեփականության իրավունքը (հիմք՝ 27.12.2005 թվականի սեփականության իրավունքի թիվ 5729 վկայագիրը և 27.12.2005 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5730 վկայագիրը)(գ.թ.24-26):

8. Դանիել Ջորաբյանը մահացել է 02.04.2006 թվականին (գ.թ.21):

9. Արմավիրի թիվ 23 թաղային լիազորի և Արմավիրի թիվ 6 թաղային կոմիտեի կողմից 18.05.2009 թվականին տրված տեղեկանքների համաձայն՝ Խորեն Դանիելի Ջորաբյանի մահից հետո կինը՝ Ալվարդ Գրիգորյանը և որդին՝ Դանիել Խորենի Ջորաբյանն իր ընտանիքի հետ բնակվել են ՀՀ Արմավիրի Սահմանապահների փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 21 տանը, իսկ Դանիել Խորենի Ջորաբյանի մահից հետո նշված տանը շարունակել են բնակվել մայրը՝ Ալվարդ Գրիգորյանը և կինը՝ Անահիտ Եսայանը զավակների հետ (գ.թ.27-29):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված

ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգը կարող է առանց դատարան դիմելու ժառանգությունն ընդունել այն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը: Նման համաձայնություն պարունակող փաստաթղթերի վրա ժառանգների դրած ստորագրությունները պետք է վավերացվեն նույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված կարգով: Ժառանգների նման համաձայնությունը հիմք է նոտարի կողմից նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը չեղյալ համարելու և նոր վկայագիր տալու համար:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգության իրավունքի վկայագիրը ժառանգներին տրվում է ժառանգության բացման վայրի նոտարին ներկայացված գրավոր դիմումի հիման վրա՝ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետում: Ժառանգության ընդունման ժամկետը բաց թողած ժառանգը կարող է ժառանգությունն ընդունել ժառանգությունն ընդունած մյուս բոլոր ժառանգների համաձայնությամբ, որը պետք է ներկայացվի գրավոր: Ժառանգների նման համաձայնությունը հիմք է նոտարի՝ նախկինում տրված ժառանգության վկայագիրը չեղյալ համարելու և նոր վկայագիր տալու համար:

Դատարանը հայցը մերժելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Ալվարդ Գրիգորյանն ամուսնու որպես օրենքով առաջին հերթի ժառանգ փաստացի տիրապետել և կառավարել է վիճելի գույքը, իսկ հայցվորները օրենքով սահմանված կարգով և ժամկետում չեն դիմել վիճելի գույքի ժառանգությունն ընդունելու համար, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով ժառանգությունն ընդունած ժառանգ է համարվել Ալվարդ Գրիգորյանը, թեև նա նույնպես ժամանակին չի դիմել ժառանգությունն ընդունելու համար, այսինքն՝ ՀՀ Արմավիրի նոտարական տարածքի նոտարը գործել է օրենքով, և Ալվարդ Գրիգորյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրվել է օրենքին համապատասխան:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը վճիռ կայացնելիս անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործով ժառանգատու Խորեն Զորաբյանը (Զոհրաբյան) մահացել է 27.04.1996 թվականին, իսկ Ալվարդ Գրիգորյանն ըստ օրենքի ժառանգությունն ընդունելու համար դիմել է նոտարական գրասենյակ միայն 2005 թվականին: Այսինքն՝ ամուսնու՝ Խորեն Զորաբյանի (Զոհրաբյան) ժառանգությունն ընդունելու համար Ալվարդ Գրիգորյանը դիմել է նոտարական գրասենյակ ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պայմաններում՝ առանց մյուս ժառանգների գրավոր համաձայնության: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է դիմեր նոտարին մյուս ժառանգների գրավոր համաձայնության դեպքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ալվարդ Գրիգորյանին 27.12.2005 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5730 վկայագիրը տրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածով և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով սահմանված կարգի խախտմամբ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Դատարանի վճիռը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 08.12.2009 թվականի վճիռը և այն փոփոխել: Անահիտ Եսայանի, Ալվարդ Շողեր և Սադաֆ Զորաբյանների հայցը բավարարել՝ անվավեր ճանաչել Ալվարդ Գրիգորյանի անվամբ 27.12.2005 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա Ալվարդ Գրիգորյանի անվամբ ՀՀ Արմավիրի Սահմանապահների փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 21 տան նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. Սարգսյան

Դատավորներ՝ Է. Հայրիյան, Վ. Աբելյան, Ս. Անտոնյան, Վ. Ավանեսյան, Ա. Բարսեղյան, Մ. Դրմեյան, Ե. Խունդկարյան, Տ. Պետրոսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ/0279/02/08
2010 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ/0279/02/08
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան
Կ. Չիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ս. Սարգսյանի
մասնակցությամբ դատավորներ Է. Հայրիյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Վ. Ավանեսյանի
Ա. Բարսեղյանի
Մ. Դրմեյանի
Ե. Խունդկարյանի
Ե. Սողոմոնյանի

2010 թվականի հունիսի 25-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Արեն Տեպանոսյանի և «Միջազգային բիզնես կենտրոն» Հ/Ձ ՓԲ ընկերության վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.12.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ Սերգեյ Թաիրյանի հայցի ընդդեմ Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտարի՝ Ժառանգական գույքը պարտքի դիմաց պարտադրողը հանձնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. **Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Սերգեյ Թաիրյանը պահանջել է Էդուարդ Արաբխանյանից բռնագանձել 16.000.000 ՀՀ դրամ:

Էդուարդ Արաբխանյանը մահացել է 11.08.2007 թվականին (հատոր 1-ին, գ.թ.24):

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 17.09.2007 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է մինչև Էդուարդ Արաբխանյանի մահից հետո իրավահաջորդության հարցի լուծումը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 14.02.2008 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է և քաղաքացիական գործն առարկայական և տարածքային ընդդատության կանոններով ուղարկվել է Երևանի քաղաքացիական դատարան:

Սերգեյ Թաիրյանը, փոփոխելով հայցի հիմքը և առարկան, ինչպես նաև որպես պատասխանող ընդգրկելով Էդուարդ Արաբխանյանի կնոջը՝ Միլենա Աղամալյանին և դստերը՝ Դանիելա Արաբխանյանին, պահանջել է Էդուարդ Արաբխանյանին պատկանող «Հայնեբարտբանկ» ՓԲ ընկերությունում (ներկայիս «Ամերիա Բանկ») 302 հատ 40.000 անվանական արժեքով բաժնետոմսերը հանձնել պարտքի դիմաց որպես սեփականություն:

Սերգեյ Թաիրյանը, հետագայում միայն որպես պատասխանող ընդգրկելով Էդուարդ Արաբխանյանի ժառանգության բացման վայրի նոտարին, պահանջել է Էդուարդ Արաբխանյանին պատկանող «Հայնեբարտբանկ» ՓԲ ընկերությունում (ներկայիս «Ամերիա Բանկ») 302 հատ 40.000 անվանական արժեքով բաժնետոմսերը հանձնել պարտքի դիմաց որպես սեփականություն:

Երևանի քաղաքացիական դատարանի 27.02.2009 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ տարածքային ընդդատության կանոններով ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 10.04.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է «Էդուարդ Արաբխանյանին պատկանող՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում հաշվառված, նախկին «Հայնեբարտբանկ» ՓԲԸ, ներկայիս «Ամերիա Բանկ» ՓԲԸ կողմ

մից թողարկված թվով 302 հատ (40.000 ՀՀ դրամ անվանական արժեքով) հասարակ անվանական բաժնետոմսերը պարտքի դիմաց որպես սեփականություն հանձնել հայցվոր Սերգեյ Թաիրյանին»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.12.2009 թվականի որոշմամբ գործին մասնակից չդարձված անձանց Արեն Տեպանոսյանի և «Միջազգային բիզնես կենտրոն» Հ/Ձ ՓԲ ընկերության վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 10.04.2009 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ՝ օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Արեն Տեպանոսյանը և «Միջազգային բիզնես կենտրոն» Հ/Ձ ՓԲ ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սերգեյ Թաիրյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, ինչպես նաև անտեսել է այն հանգամանքը, որ Արեն Տեպանոսյանը և «Միջազգային բիզնես կենտրոն» Հ/Ձ ՓԲ ընկերությունը որպես պարտատերեր օրենքով սահմանված ժամկետում իրենց պահանջները ներկայացրել են ժառանգատու Էդուարդ Արաբխանյանի ժառանգության բացման վայրի նոտարին, մինչդեռ Դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձված անձանց՝ պարտատերերի իրավունքների վերաբերյալ՝ խախտելով վերջիններիս արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածով ամրագրված ժառանգության հաշվին ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները բավարարելու պարտատերերի իրավունքը:

2. Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 3-րդ մասը, որը չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին մասը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Էդուարդ Արաբխանյանի և Սերգեյ Թաիրյանի միջև կնքված փոխառության պայմանագրով Էդուարդ Արաբխանյանի կողմից ստանձնած պարտավորությունը չկատարելու պայմաններում Սերգեյ Թաիրյանը իրավունք է ունեցել պահանջելու փոխառության գումարը, մինչդեռ դրամական պարտավորությունը փոխվել է գույք հանձնելու պարտավորությամբ՝ Դատարանի կողմից չնշվելով դրավերաբերյալ որևէ հիմնավորում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 14.12.2009 թվականի որոշումը և փոփոխել՝ հայցը մերժել:

2.1. Վճարելի բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, հետևաբար վճարելի բողոքը ենթակա է մերժման:

Բողոք բերած անձինք անտեսել են այն հանգամանքը, որ Սերգեյ Թաիրյանը օրենքով սահմանված ժամկետում իր պահանջը ներկայացրել է ժառանգատու Էդուարդ Արաբխանյանի ժառանգության բացման վայրի նոտարին, ինչպես նաև դատաքննության ընթացքում հիմնավորվել է, որ Էդուարդ Արաբխանյանի ժառանգությունը ժառանգները չեն ընդունել, ավելին հրաժարվել են այն ընդունել:

3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 28.12.2005 թվականի փոխառության պայմանագրով «Միջազգային բիզնես կենտրոն» ՀՁ ՓԲ ընկերությունը տրամադրել է Էդուարդ Արաբխանյանին 50.000.000 ՀՀ դրամ մեկ տարվա ընթացքում վերադարձնելու պայմանով (հատոր 3-րդ, գ.թ.56-57):

2. 19.12.2006 թվականի փոխառության պայմանագրով Արեն Տեպանոսյանը տրամադրել է Էդուարդ Արաբխանյանին 9.000 ԱՄՆ դոլար 19.03.2007 թվականին վերադարձնելու պայմանով (հատոր 3-րդ, գ.թ.91-93):

3. Նոտարական կարգով վավերացված 29.03.2007 թվականի փոխառության պայմանագրով Սերգեյ Թաիրյանը տրամադրել է Էդուարդ Արաբխանյանին 16.000.000 ՀՀ դրամ 29.06.2007 թվականին վերադարձնելու պայմանով (հատոր 1-ին, գ.թ.5):

4. Էդուարդ Արաբխանյանի և Միլենա Աղամալյանի ամուսնությունը ՔԿԱԳ մարմնում գրանցվել է 17.03.1990 թվականին (հատոր 1-ին, գ.թ.23):

5. Էդուարդ Արաբխանյանը մահացել է 11.08.2007 թվականին (հատոր 1-ին, գ.թ.24):

6. «Հայներարտբանկ» ՓԲ ընկերության 16.04.2007 թվականի թիվ 08-235 տեղեկանքի համաձայն՝ Էդուարդ Արաբխանյանն ընկերության բաժնետեր է և նրան պատկանում է 24.160.000 ՀՀ դրամ անվանական արժեք ունեցող սովորական քվեարկվող 604 հատ բաժնետոմս (հատոր 1-ին, գ.թ.7):

7. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 13.12.2007 թվականի վճռով բավարարվել է Միլենա Աղամալյանի դիմումը Էդուարդ Արաբխանյանին պատկանող «Հայներարտբանկ» ՓԲ ընկերությունում 604 հատ սովորական քվեարկվող բաժնետոմսերից 302 հատի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին (հատոր 1-ին, գ.թ.66-67):

8. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանին հասցեագրված 17.01.2008 թվականի դիմումով Սերգեյ Թաիրյանը պահանջ է ներկայացրել ժառանգատու Էդուարդ Արաբխանյանի ժառանգության բացման վայրի նոտարին (հատոր 2-րդ, գ.թ.18):

9. Էդուարդ Արաբխանյանի ժառանգներին հասցեագրված 20.10.2007 թվականի և 20.11.2007 թվականի դիմումներով, ինչպես նաև ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանին հասցեագրված 11.02.2008 թվականի դիմումով Արեն Տեպանոսյանը պահանջ է ներկայացրել ժառանգատու Էդուարդ Արաբխանյանի ժառանգության բաց-

ման վայրի նոտարին և ժառանգներին՝ Միլենա Աղամալյանին, Ջուլիետա Աբրահամյանին, Միխայել և Դանիել Արաբխանյաններին (հատոր 3-րդ, գ.թ. 78,82,85):

10. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանին և Էդուարդ Արաբխանյանի ժառանգներին հասցեագրված 04.02.2008 թվականի դիմումով «Միջազգային բիզնես կենտրոն» ՀՁ ՓԲ ընկերությունը պահանջ է ներկայացրել ժառանգատու Էդուարդ Արաբխանյանի ժառանգության բացման վայրի նոտարին և ժառանգներին՝ Միլենա Աղամալյանին, Ջուլիետա Աբրահամյանին, Միխայել և Դանիել Արաբխանյաններին (հատոր 3-րդ, գ.թ.60):

11. ՀՀ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 29.09.2008 թվականի վճռով բավարարվել է Միլենա Աղամալյանի հայցն ընդդեմ Երևանի Կենտրոն նոտարական գրասենյակի նոտարի, երրորդ անձանց «Միջազգային բիզնես կենտրոն» ՀՁ ՓԲ ընկերության, Սերգեյ Թաիրյանի՝ նոտարական գործողությունների վիճարկման պահանջի մասին: Վճռվել է «վերացնել Երևանի Կենտրոն նոտարական գրասենյակի նոտար Էմմա Շաբոյանի կողմից Միլենա Աղամալյանին որպես հանգուցյալ Էդուարդ Արաբխանյանի ժառանգությունը ընդունած ժառանգ ճանաչելու հետևանքները: Հաստատել, որ պատասխանող Երևանի Կենտրոն նոտարական գրասենյակի նոտար Էմմա Շաբոյանի կողմից հայցվորի 2007 թ. հոկտեմբերի 31-ին ներկայացված դիմումի մուտքագրումը 5430 համարի տակ՝ չի հանգեցնում հայցվոր Միլենա Աղամալյանին ճանաչել Էդուարդ Արաբխանյանի ժառանգությունն ընդունած ժառանգ դիտելուն» (հատոր 1-ին, գ.թ.122-128):

12. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի 25.12.2008 թվականի գրության համաձայն՝ ժառանգատու Էդուարդ Արաբխանյանի մայրը հրաժարվել է ընդունել ժառանգությունը (հատոր 2-րդ, գ.թ.22):

13. ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի 12.02.2009 թվականի գրության համաձայն՝ ժառանգատու Էդուարդ Արաբխանյանի հայրը՝ Միշիկ Արաբխանյանը, 12.02.2009 թվականի հայտարարությամբ հրաժարվել է ընդունել ժառանգությունը (հատոր 1-ին, գ.թ.179):

14. «Ռասկո» ապահովագրական ՍՊ ընկերության 23.06.2009 թվականի թիվ Ռ/ՊԿ-335 գրությամբ հայտնվել է, որ «Ռասկո» ապահովագրական ՍՊ ընկերության կանոնադրության համաձայն՝ 50.000.000 ՀՀ

դրամ անվանական արժեք ունեցող 10% բաժնեմասը պատկանում է Էդուարդ Արաբխանյանին (հատոր 3-րդ, գ.թ.19):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցվում են հետևյալ հերթականությամբ՝ երրորդ հերթին բավարարվում են ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները, իսկ 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքն անբավարար լինելու դեպքում այն համապատասխան հերթի պարտատերերի միջև բաշխվում է բավարարման ենթակա պահանջների գումարներին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները: Պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին:

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգատուի պարտատերերին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը ներկայացնել իրենց պահանջները նախ հետևյալ անձանց՝

- ժառանգությունն ընդունած ժառանգին, կամ
- կտակակատարին:

Այս միայն նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածով նախատեսվել է ժառանգության հետ կապված ծախսերի հատուցման հերթականություն՝ սահմանելով յուրաքանչյուր հերթի պահանջների բավարարումը նա-

խորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Ընդ որում, ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքն անբավարար լինելու դեպքում այն համապատասխան հերթի պարտատերերի միջև բաշխվում է բավարարման ենթակա պահանջների գումարներին համամասնորեն:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում արդեն իսկ անդրադարձել է գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի հավասարության և մրցակցային դատավարության սկզբունքների խախտում և բեկանել է դատական ակտը (տե՛ս, ըստ հայցի Լաուրա Մկրտչյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության՝ պետական մարմնի անգործությունը վիճարկելու պահանջի մասին թիվ ՎԴ/4107/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.08.2009 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արեն Տեպանոսյանը և «Միջազգային բիզնես կենտրոն» ՀՁ ՓԲ ընկերությունը որպես պարտատերեր օրենքով սահմանված ժամկետում իրենց պահանջները ներկայացրել են ժառանգատու Էդուարդ Արաբխանյանի ժառանգության բացման վայրի նոտարին:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Դատարանի վճռով խախտվել է պարտատերեր Արեն Տեպանոսյանի և «Միջազգային բիզնես կենտրոն» Հ/Ձ ՓԲ ընկերության իրավունքները, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածով ամրագրված ժառանգության հաշվին պարտատերերի պահանջները բաշխելու կարգը և եղանակը:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի դատական ակտով պարտատերեր Արեն Տեպանոսյանը և «Միջազգային բիզնես կենտրոն» Հ/Ձ ՓԲ ընկերությունը գրկվել են ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքից:

Նկատի ունենալով, որ սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքը Վճռաբեկ դատարանը համարում է հիմնավոր և դրա առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, հետևաբար Վճռաբեկ դատարանը բողոքի երկրորդ հիմքի քննարկմանը չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.12.2009 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. Սարգսյան
Դատավորներ՝ Է. Հայրիյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Վ. Ավանեսյան
Ա. Բարսեղյան
Ս. Դրմեյան
Ե. Խունդկարյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1400/02/09
2010 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1400/02/09
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ս. Սարգսյանի
մասնակցությամբ դատավորներ Մ. Դրմեյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Վ. Ավանեսյանի
Ա. Բարսեղյանի
Ե. Խունդկարյանի
Է. Հայրիյանի
Ե. Սողոմոնյանի

2010 թվականի հունիսի 25-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Գայանե և Աիդա Եփրեմյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.10.2009 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Տուֆարիկ Եփրեմյանի ընդդեմ Աիդա, Գայանե և Սամվել Եփրեմյանների՝ ժառանգական գույքով ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին և Աիդա, Գայանե Եփրեմյանների հակընդդեմ հայցի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և ժառանգական զանգվածի մեջ մտնող ընդհանուր գույքից

ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տուֆարիկ Եփրեմյանը պահանջել է ժառանգական գույքով հատուցել ժառանգության հետ կապված ծախսերը և մնացյալ ժառանգության նկատմամբ ճանաչել իր սեփականության իրավունքը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Աիդա և Գայանե Եփրեմյանները պահանջել են ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ և հատուցել ժառանգական զանգվածի մեջ մտնող ընդհանուր գույքից ժառանգության հետ կապված ծախսերը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.05.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակի. վճռվել է Տուֆարիկ և Ռոման Եփրեմյանների կողմից համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված 28.870.000 (քսանութ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ արժողությամբ գույքի 1/2 մասը՝ 14.435.000 (տասնչորս միլիոն չորս հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամի արժողությամբ գույքը հատկացնել Տուֆարիկ Եփրեմյանին, մնացած 14.435.000 (տասնչորս միլիոն չորս հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամի արժողությամբ ժառանգական զանգվածից 10.056.600 (տասը միլիոն հիսունվեց հազար վեց հարյուր) դրամի արժողությամբ գույքը հատկացնել Տուֆարիկ Եփրեմյանին՝ որպես հայցվոր Տուֆարիկ Եփրեմյանի կողմից կատարված ծախսերի փոխհատուցում, իսկ ժառանգական զանգվածի մնացած 4.378.400 (չորս միլիոն երեք հարյուր յոթանասունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ արժողությամբ գույքի նկատմամբ Ռոման Եփրեմյանի առաջին հերթի չորս ժառանգներ Տուֆարիկ Եփրեմյանին և Աիդա, Գայանե և Սամվել Եփրեմյաններին 1/4 մասերով ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ, հակընդդեմ հայցի մնացած մասը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.10.2009 թվականի որոշմամբ Դատարանի 27.05.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Գայանե և Աիդա Եփրեմյանները:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը, 53-րդ հոդվածի 1-ին մասը, որի արդյունքում սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Տուֆարիկ Եփրեմյանը չի ապացուցել իր վկայակոչած փաստերը, մասնավորապես, Ռիմա Մինասյանին 7300 ԱՄՆ դոլար պարտքի մասին հայտարարությունը հիմք չէ կատարված ծախսը ապացուցված համարելու համար, քանի որ այն կազմվել է 02.10.2008 թվականին՝ ժառանգատուի մահից հետո:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Տուֆարիկ Եփրեմյանը Ռոման Եփրեմյանի դին և մեքենան տեղափոխելու համար ծախսել է 1.488.000 ռուսական ռուբլի, մինչդեռ դատարանը հիմք է ընդունել 1.488.000 ՀՀ դրամը: Կողմերն ընդունել են հուղարկավորության համար կատարված 666.400 ՀՀ դրամ ծախսը, սակայն չեն ընդունել Տուֆարիկ Եփրեմյանի ներկայացված ծախսը կապված բեռնատար մեքենայի տեխնիկական գննության և կոտրված ապակու, 03.09.2007 թվականի թիվ 8Ա վարկային պայմանագրով սահմանված և բանկին չվճարված գումարի չափերը, մեքենայի վերանորոգման համար ծախսված գումարը:

Վերաքննիչ դատարանը չի հաշվարկել սոցիալական ապահովության տրամադրված միանվագ 170.000 ՀՀ դրամ գումարը: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը սխալ է հաշվարկել ժառանգության հետ կապված ծախսերը:

Մասնավորապես, կատարված ծախսերի ընդհանուր հանրագումարը կազմում է 3.432.491 ՀՀ դրամ, այլ ոչ՝ թե 10.056.600 ՀՀ դրամ: Հետևաբար, հաշվի առնելով, որ ժառանգական գույքի արժեքը կազմում է 28.870.000 ՀՀ դրամ, որի կեսը՝ 14.435.000 ՀՀ դրամը, Տուֆարիկ Եփրեմյանին է, ապա մյուս կեսից եթե հանվի 3.432.491 ՀՀ դրամը, մնացած

գումարին ավելանա 170.000 դրամը, ապա կստացվի 11.172.509 ՀՀ դրամ, որը պետք է բաժանվի չորս ժառանգների միջև, յուրաքանչյուրին՝ 2.793.127 ՀՀ դրամ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ կատարված բոլոր ծախսերը պետք է բաժանել չորս ժառանգների միջև:

Ավելին, Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե ինչու չի ընդունում բողոք բերած անձանց ներկայացված ապացույցները, չի հիմնավորել դրանց մերժման պատճառը, ինչպես նաև անտեսել է ներկայացված բազմաթիվ միջնորդությունները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 02.10.2009 թվականի որոշումը և այն փոփոխել՝ յուրաքանչյուր ժառանգին հատկացնել 2.273.127 ՀՀ դրամ գումար:

2.1 Վճարեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Բողոք բերող անձինք վճարեկ բողոքում պատճառաբանել են, որ սկզբնական հայցում ներկայացվել է 8.521.600 ՀՀ դրամ ծախսի գումար, սակայն դատական ակտում նշվել է 10.056.600 ՀՀ դրամ, մինչդեռ դա արդյունք է ԱՄՆ դոլարի և ՀՀ դրամի փոխանակվող կուրսի փոփոխության: Պատճառաբանելով, որ Դատարանի կողմից հաշվարկված գումարների մեջ ներառված են փաստացի կատարված բոլոր ծախսերը, գտնում է, որ ինչպես Դատարանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանը չեն խախտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածների պահանջները:

3. Վճարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 23.03.2009 թվականի թիվ 04430910 եզրակացության համաձայն՝ Ռոման Եփրեմյանին պատկանող Երևան քաղաքի Ավանեսովի փողոցի 1-ին շենքի թիվ 20 հասցեում գտնվող գնահատման ենթակա բնակարանի շուկայական արժեքը փորձաքննության կատարման ժամանակաշրջանում և առկա ապրան-

քային վիճակով գնահատվում է 20.270.000 (քսան միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) դրամ:

«MERSEDES BENZ 1844 LS» մակնիշի 10 UO 638 պետհամարանիշով ավտոմեքենան փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ գործող շուկայական գներով կարող է կազմել 7.000.000 (յոթ միլիոն) դրամ:

«MERSEDES BENZ 190 E 2.0» մակնիշի 03 LU 578 պետհամարանիշով ավտոմեքենան փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ գործող շուկայական գներով կարող է կազմել 1.050.000 (մեկ միլիոն հիսուն հազար) դրամ:

«ԳԱԶ-24» մակնիշի 62 LO 049 պետհամարանիշով ավտոմեքենան փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ գործող շուկայական գներով կարող է կազմել 550.000 (հինգ հարյուր հիսուն հազար) դրամ (հ. 1-ին գ. թ. 156-162):

2. 20.04.1988 թվականին տրված թիվ 383 ամուսնության վկայականի համաձայն՝ Ռոման Եփրեմյանի և Տուֆարիկ Եփրեմյանի ամուսնությունը 20.04.1985 թվականին ստացել է պետական գրանցում (հ. 1-ին գ.թ. 14):

3. Ռոման Եփրեմյանը մահացել է 05.08.2008 թվականին (հ. 1-ին գ. թ. 16):

4. Տուֆարիկ, Աիդա, Գայանե և Սամվել Եփրեմյանները Ռոման Եփրեմյանի ըստ օրենքի առաջին հերթի ժառանգներն են:

5. 03.09.2007 թվականի թիվ 8Ա վարկային պայմանագրով «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն Հակոբ և Ռոման Եփրեմյաններին տրամադրել է 3.300.000 ՀՀ դրամ սպառողական վարկ, իսկ Հակոբ և Ռոման Եփրեմյանները պարտավորվել են վերադարձնել ստացված վարկը 03.09.2009 թվականին և վարկի օգտագործման համար վճարել տարեկան 24% գումար (հ. 1-ին գ.թ. 31):

6. Տուֆարիկ Եփրեմյանին տրված «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի 25.11.2008 թվականի տեղեկանքի համաձայն՝ Ռոման Եփրեմյանի կողմից անշարժ գույքի վարկի մարումը կատարված է նոյեմբեր ամիսը ներառյալ (հ. 1-ին գ.թ. 43):

7. Սույն գործով կողմերն ընդունել են, որ հուղարկավորության համար ծախսված գումարը 666.400 ՀՀ դրամ է (հ. 1-ին գ.թ. 36):

8. Ռիմա Մինասյանի 02.10.2008 թվականի հայտարարության համաձայն՝ Տուֆարիկ Եփրեմյանը պարտք է 7300 ԱՄՆ դոլար, որը վերցրել է բռնատար ավտոմեքենա ձեռք բերելու համար (հ. 1-ին գ.թ. 37):

9. Հարություն Ավետիսյանի 02.10.2008 թվականի հայտարարության համաձայն՝ Տուֆարիկ Եփրեմյանը պարտք է 7800 ԱՄՆ դոլար Ռոման Եփրեմյանի դիակը Ռուսաստանի Դաշնությունից բերելու համար և վթարի ենթարկված ավտոմեքենան վերանորոգելու համար (հ. 1-ին գ.թ. 40):

10. Ըստ ուղեկցական անդորրագրի՝ Ռոման Եփրեմյանի դին տեղափոխելու համար վճարվել է 1.488.000 ռուսական ռուբլի (հ. 1-ին գ.թ. 30):

11. Ըստ մեքենայի տեղափոխման հաշիվ-ապրանքագրի՝ «MERSEDES BENZ 1844 LS» մակնիշի 10 ՍՕ 638 ավտոմեքենան տեղափոխելու համար վճարվել է 1840 եվրո (հ. 1-ին գ.թ. 29):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության հետ կապված ծախսերը հատուցվում են հետևյալ հերթականությամբ՝

առաջին հերթին հատուցվում են մինչև ժառանգատուի մահը նրա հիվանդության հետևանքով առաջացած և ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը.

երկրորդ հերթին հատուցվում են ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքը պահպանելու և կառավարելու, ինչպես նաև կտակը կատարելու հետ կապված ծախսերը.

երրորդ հերթին բավարարվում են ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները.

չորրորդ հերթին բավարարվում են պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների պահանջները.

հինգերորդ հերթին հատուցվում են կտակային հանձնարարությունը կատարելու հետ կապված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում նշված ծախսերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրենց անցած ժառանգության արժեքի սահմաններում ժառանգները կրում են համապարտ պատասխանատվություն:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ժառանգները իրենց անցած գույքի արժեքի սահմաններում, ի թիվս այլ ծախսերի, համապարտ պատասխանատվություն են կրում ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը հատուցելու և ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները բավարարելու հարցում:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, հաստատված է համարել, որ գործում առկա ապացույցներով հիմնավորվում է նշված ծավալով ժառանգության հաշվին հատուցման ենթակա ծախսերի առկայությունը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը դատական ակտն ուժի մեջ թողնելով, հիմք է ընդունել նաև ՌԻմա Մինասյանի 02.10.2008 թվականի և Հարություն Ավետիսյանի 02.10.2008 թվականի հայտարարությունները:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ

պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառնությունը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս Արտակ Մուրադյանի, Հովհաննես Դերձակյանի, Սրբուհի Հարությունյանի, Սուրեն Թադևոսյանի, Եվգենիա Մանուկյանի հայցն ընդդեմ «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամի՝ հրամաններն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու պահանջների մասին Վճռաբեկ դատարանի 04.12.2009 թվականի թիվ ԵԿԴ/3613/02/08 որոշումը, Սամվել Հարությունյանի, ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Նինա Փանոյանի հայցն ընդդեմ Վահագն Սաքանյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 22.04.2010 թվականի թիվ ՀՅՔԴ2/0106/02/08 որոշումը):

Մինչդեռ սույն գործով Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ Տուֆարիկ Եփրեմյանի կողմից Ռոման Եփրեմյանի հուղարկավորության և պարտքերը հատուցելու 10.056.600 ՀՀ դրամ գումարի չափով ծախսերի կատարած լինելու պահանջը բխում է գործում առկա ապացույցներից, չի նշել, թե հատկապես, որ ապացույցների հիման վրա է հանգել նման եզրահանգման:

Ինչ վերաբերում է գործում առկա Ռիմա Մինասյանի 02.10.2008 թվականի և Հարություն Ավետիսյանի 02.10.2008 թվականի հայտարարություններին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի ուժով դրանք բավարար ապացույցներ չեն Տուֆարիկ Եփրեմյանի կողմից Ռոման Եփրեմյանի պարտքերը հատուցած համարելու համար:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ Ռոման Եփրեմյանը վարկ է վերցրել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ից և այն չի վերադարձրել, նրա մահից հետո վճարումները կատարել է Տուֆարիկ Եփրեմյանը:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը անտեսել է, որ 03.09.2007 թվականի թիվ 8Ա վարկային պայմանագրով համավարկառու է նաև Հակոբ Եփրեմյանը, ինչպես նաև «Արդշինինվեստֆանկ» ՓԲԸ-ի 25.11.2008 թվականին տրված տեղեկանքը, որի համաձայն՝ Ռոման Եփրեմյանի կողմից անշարժ գույքի վարկի մարումը կատարված է նոյեմբեր ամիսը ներառյալ:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.10.2009 թվականի որոշման՝ 14.435.000 (տասնչորս միլիոն չորս հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամի արժողությամբ ժառանգական գանգվածից 10.056.600 (տասը միլիոն հիսունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ արժողությամբ գույքը Տուֆարիկ Եփրեմյանին հատկացնելու, 4.378.400 (չորս միլիոն երեք հարյուր յոթանասունույթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ արժողությամբ գույքի նկատմամբ Տուֆարիկ Եփրեմյանին, Աիդա, Գայանե և Սամվել Եփրեմյաններին 1/4 մասերով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասը և գործն այդ մասով ուղարկել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ս. Սարգսյան

Դատավորներ՝ Մ. Դրամեյան, Վ. Աբելյան, Ս. Անտոնյան, Վ. Ավանեսյան,
Ա. Բարսեղյան, Ե. Խունդկարյան, Է. Հայրիկյան, Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/2478/02/09
2010 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/2478/02/09
Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Մ. Դրմեյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Վ. Ավանեսյանի
Ա. Բարսեղյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2010 թվականի հոկտեմբերի 01-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Փարավոն Ղազանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.04.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Լիլիթ և Կարինե Ղազանյանների, երրորդ անձ Փարավոն Ղազանյանի՝ ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Լիլիթ և Կարինե Ղազանյանները պահանջել են հարգելի համարել ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը:

Դատարանի 18.11.2009 թվականի որոշմամբ երրորդ անձ է ներգրավվել Փարավոն Ղազանյանը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 19.02.2010 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.04.2010 թվականի որոշմամբ Դատարանի 19.02.2010 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ դիմումը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Փարավոն Ղազանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, որի արդյունքում սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածը, 1188-րդ հոդվածի 1-ին մասը, 1227-րդ հոդվածի 1-ին մասը, 1228-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, անտեսելով վկաների կողմից տրված ցուցմունքները, որոնց համաձայն՝ Կարինե Ղազանյանը մասնակցել է Սեպուհ Ղազանյանի հոգեհացի արարողությանը, վճռի բեկանման հիմք է ընդունել Կարինե Ղազանյանի հայտարարությունը, որի համաձայն՝ վերջինս Սեպուհ Ղազանյանի մահվան մասին տեղեկացել է 2009 թվականի մարտ ամսին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործի շրջանակներում Կարինե և Լիլիթ Ղազանյանների կողմից, ինչպես 2002 թվականից չիմանալու, այնպես էլ 2009 թվականի մարտ-ապրիլ ամիս-

ներին իմանալու վերաբերյալ որևէ հիմնավոր ապացույց չի ներկայացվել, հետևաբար ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հիմք առկա չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.04.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 19.02.2010 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Սեպուհ Ղազանյանը մահացել է 02.12.2002 թվականին (գ. թ. 25):

2. Կարինե և Լիլիթ Ղազանյանները Սեպուհ Ղազանյանի ըստ օրենքի առաջին հերթի ժառանգներն են (գ. թ. 11, 13):

3. Վկաներ Գրիշա Ղազանյանի, Արմինե Նուրբեկյանի, Մարգարիտա Շեկոյանի ցուցմունքների համաձայն՝ Կարինե Ղազանյանը մասնակցել է Սեպուհ Ղազանյանի հոգեհացի արարողությանը (գ. թ. 86):

4. Կարինե և Լիլիթ Ղազանյանները ժառանգության ընդունման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու պահանջով դատարան են դիմել 12.10.2009 թվականին (գ.թ. 65):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող

անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (տես՝ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի հայցն ընդդեմ Սեդա Մարգարյանի՝ գրավադրված գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, և Սեդա Մարգարյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջների մասին, Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 որոշումը):

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն իրավական հարցադրումը, թե ո՞րն է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, և որ կողմը պետք է կրի այդ փաստի ապացուցման դատավարական բեռը:

Սույն գործով Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ վկաներ Գրիշա Ղազանյանի, Արմինե Նուրբեկյանի, Մարգարիտա Շեկոյանի ցուցմունքներով հաստատվել է, որ Կարինե Ղազանյանը հոր՝ Սեպուհ Ղազանյանի մահվան մասին իմացել է մահվանից անմիջապես հետո և մասնակցել է Սեպուհ Ղազանյանի հոգեհացի արարողությանը: Դատարանը հանգել է այն հետևության, որ Կարինե և Լիլիթ Ղազանյանները դատարան են դիմել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածով սահմանված վեցամսյա ժամկետը ավարտվելուց հետո:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի դատական ակտը բեկանելով, պատճառաբանել է, որ վկաների ցուցմունքները հիմք չեն հաստատված համարելու այն փաստը, որ Կարինե Ղազանյանը մասնակցել է իր հոր՝ Սեպուհ Ղազանյանի հոգեհացի արարողությանը, քանի որ վկաներիցս Գրիշա Ղազանյանը նրա հորեղբայրն է, որը շահագրգիռ է սույն վեճի լուծման մեջ, իսկ մյուս վկաներին Կարինե Ղազանյանը չի ճանաչում:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ Կարինե Ղազանյանի մասնակցության փաստը Դատարանը հաստատված համարելով վկաների ցուցմունքների հիման վրա, դրանք չի համադրել մյուս ապացույցների հետ, մասնավորապես՝ Լիլիթ և Կարինե Ղազանյանների այն ցուցմունքի հետ, ըստ որոնց՝ Սեպուհ Ղազանյանի հետ կապը խզվել է 1990-ական թվականներից: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Կարինե և Լիլիթ Ղազանյանները Սեպուհ Ղազանյանի մահվան վկայականը ստացել են 24.06.2009 թվականին, ուստի բաց չեն թողել օրենքով սահմանված վեցամսյա ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը, ժառանգին ճանաչելով ժառանգությունն ընդունած, լուծում է դրանից բխող ժառանգական գույքի նկատմամբ մյուս ժառանգների իրավունքներին վերաբերող հարցերը, ինչպես նաև անվավեր է ճանաչում նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը: Այս դեպքում չի պահանջվում տալ ժառանգության իրավունքի նոր վկայագիր:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ժառանգի կողմից ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի է՝

. եթե ժառանգն ապացուցում է, որ նա տեղյակ չէր և պարտավոր չէր իմանալու ժառանգության բացման մասին, այսինքն՝ ժառանգատուի մահվան օրվա մասին, և

. եթե ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու պահանջով ժառանգը դատարան է դիմել այդ ժամկետը բաց թողնելու պատճառը վերանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Ընդ որում, միաժամանակ միայն նշված պայմանների առկայության դեպքում է օրենսդիրն իրավունք վերապահել դատարաններին հարգելի ճանաչել ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառը և անվավեր ճանաչել նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի հետևյալ փաստի առկայությունը, այն է՝ արդյոք Լիլիթ և Կարինե Ղազանյանները տեղյակ չէին և պարտավոր չէին իմանալու իրենց հոր՝ Սեպուհ Ղազանյանի ժառանգության բացման մասին, հետևաբար այդ փաստի ապացուցման դատավարական բեռը տվյալ դեպքում պետք է կրեն Լիլիթ և Կարինե Ղազանյանները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1. գրավոր ապացույցներով, 2. փորձագետների եզրակացություններով, 3. վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

Սույն գործի փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վկաների կողմից տրված ցուցմունքներն իրենց բնույթով վերաբերելի և թույլատրելի ապացույցներ են, սակայն դրանցում առկա տեղեկությունների և Լիլիթ և Կարինե Ղազանյանների դատաքննության ընթացքում տրված ցուցմունքների (մասնավորապես՝ տվյալ դեպքում դիմումատու կողմը հերքել էր այն հանգամանքը, որ Կա-

րինե Ղազանյանը մասնակցել է հոր հոգեհացի արարողությանը) հակասականությունը հնարավորություն չի տալիս հաստատված համարելու, որ Լիլիթ և Կարինե Ղազանյանները տեղյակ չէին և պարտավոր չէին իմանալու իրենց հոր՝ Սեպուհ Ղազանյանի ժառանգության բացման մասին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Լիլիթ և Կարինե Ղազանյանները իրենց հոր՝ ժառանգատու Սեպուհ Ղազանյանի մահվան մասին չգիտեին և իմանալուց հետո վեց ամսվա ընթացքում դիմել են դատարան (մի դեպքում՝ 12.10.2009 թվականի դիմումով, Լիլիթ և Կարինե Ղազանյանները նշել են, որ իրենց հոր մահվան մասին իմացել են 2009 թվականի ապրիլ ամսին, մեկ այլ դեպքում՝ դատարանության ընթացքում՝ 2009 թվականի մարտ ամսին):

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Կարինե և Լիլիթ Ղազանյանները Սեպուհ Ղազանյանի մահվան վկայականը ստացել են 24.06.2009 թվականին, ուստի բաց չեն թողել օրենքով սահմանված վեցամսյա ժամկետը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր չէ, քանի որ Սեպուհ Ղազանյանի մահվան վկայականը 24.06.2009 թվականին ստանալը բավարար հիմք չէ հաստատված համարելու ժառանգության բացման փաստի մասին այդ պահից տեղեկացված լինելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կարինե և Լիլիթ Ղազանյանները չեն ապացուցել ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի լինելը, ուստի սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու հիմքեր չկան:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սլյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.04.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 19.02.2010 թվականի վճռին:

2. Լիլիթ և Կարինե Ղազանյաններից համապարտության կարգով հոգուտ Փարավոն Ղազանյանի բռնազանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան
Դատավորներ՝ Մ. Դրմեյան, Վ. Աբելյան, Ս. Անտոնյան, Վ. Ավանեսյան,
Ա. Բարսեղյան, Տ. Պետրոսյան, Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական դատարանի վճիռ Վարչական գործ թիվ ՎԴ/5269/05/09
Վարչական գործ թիվ ՎԴ/5269/05/09 2011 թ.
Նախագահող դատավոր՝ Ք. Մկոյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

- նախագահությամբ Ե. Խունդկարյանի
- մասնակցությամբ դատավորներ Ե. Սողոմոնյանի
- Վ. Աբելյանի
- Ս. Անտոնյանի
- Վ. Ավանեսյանի
- Ա. Բարսեղյանի
- Մ. Դրմեյանի
- Գ. Հակոբյանի
- Է. Հայրիյանի
- Տ. Պետրոսյանի

2011 թվականի ապրիլի 1-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Շողեր Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 11.05.2010 թվականի վճռի դեմ՝ ըստ Շողեր Գրիգորյանի հայցի ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի (այսուհետ՝ Նոտար)՝ ժառանգության իրավունքի վկայագիր տալուն պարտավորեցնելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Շողեր Գրիգորյանը պահանջել է պարտավորեցնել Նոտարին ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք գյուղում գտնվող, Գնել Գրիգորյանին պատկանող հողամասի և տան նկատմամբ տալ ժառանգության իրավունքի վկայագիր:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 11.05.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Շողեր Գրիգորյանը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը չի կիրառել ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածը, 1186-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանն անտեսել է, որ գործում առկա արխիվային տեղեկանքում նշված տնտեսությունների գրքի գրառումն իրականացվել է օրենսդրությամբ սահմանված կարգով, և նշված փաստաթղթով հաստատվում է, որ Գնել Գրիգորյանը, հոր՝ Ստեփան Գրիգորյանի մահից հետո՝ 1987 թվականին, անվանափոխելով վերջինիս պատկանող բնակելի տունը և հողամասը, արդեն իսկ 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի ուժով դրանց նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք:

Ինչ վերաբերում է Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ և 1186-րդ հոդվածների կիրառմանը, ապա նշված հոդվածները կիրառելիս Դատարանը դրանք պետք է մեկնաբաներ ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի պահանջների հաշվառմամբ: Այսինքն՝ հաշվի առնելով, որ հողամասի և տան նկատմամբ Գնել Գրիգորյանի սեփականության իրավունքի առկայությունը, հետևաբար նաև դրանք վերջինիս պատկանելու հանգամանքները հաստատվում են գործում առկա արխիվային տեղեկանքով և գյուղապետի տված տեղեկանքներով, ապա ըստ էության պահպանված է նաև ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 135-րդ հոդվածի պահանջը, ինչից հետևում է, որ առկա է նաև նույն օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժառանգատուին պատկանող գույքը:

Այսպիսով, Դատարանը, անհիմն կերպով մերժելով հայցը, Շողեր Գրիգորյանին ըստ էության զրկել է իր կողմից փաստացի տիրապետման հիմքով ընդունած ժառանգությունը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքից: Արդյունքում, ոչ միայն լուծում չի ստացել բնակելի տան և հողամասի նկատմամբ Շողեր Գրիգորյանի իրավունքներն օրենքով սահմանված կարգով ձևակերպելու հարցը, այլ նաև վերջինս զրկվել է հետագայում դրա լուծման ամեն մի հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Դատարանի 11.05.2010 թվականի վճիռը բեկանել և փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 04.09.2009 թվականին տրված թիվ 003991 մահվան վկայականի համաձայն՝ Գնել Գրիգորյանը մահացել է 04.10.2008 թվականին (գ.թ. 16):

2) ՀՀ Ազգային արխիվի Արովյանի տարածքային ներկայացուցչության 30.10.2009 թվականի «ՀՀ Կոտայքի շրջանի Կոտայքի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 1991-1995 թվականների թիվ 1 տնտեսությունների գրքից» թիվ 01-1/1160 արխիվային տեղեկանքի համաձայն՝ ընտանիքի գլխավոր Գնել Գրիգորյանի տնտեսության անձնական սեփականություն հանդիսացող բնակելի տունը կառուցված է 1962 թվականին, որի մակերեսը կազմում է 100 քմ, այդ թվում՝ բնակելի՝ 50 քմ, իսկ նրա տնտեսության անձնական օգտագործման տակ գտնվող հողի մակերեսը կազմում է 0,07 հա (700 քմ), այդ թվում՝ շինությունների տակ (գ.թ. 19):

3) ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք համայնքի ղեկավարի 30.11.2009 թվականի թիվ 687 և թիվ 688 տեղեկանքների համաձայն՝ Գնել Գրիգորյանին ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք գյուղում սեփականության իրավունքով պատկանում է 700 քմ մակերեսով տնամերձ հողամաս և

բնակելի տուն, որը տիրապետում, օգտագործում է և դրա մասով վճարումները կատարում է դուստրը՝ Շողեր Գրիգորյանը (գ.թ. 17-18):

4) 21.04.2009 թվականին տրված «Ըստ օրենքի ժառանգության իրավունքի» վկայագրի համաձայն՝ Գնել Գրիգորյանի՝ մահացած 04.10.2008 թվականին, գույքի նկատմամբ ժառանգներ են հավասար բաժիններով կինը՝ Գոհարիկ Խաչատրյանը, դուստրերը՝ Շողեր Գրիգորյանը և Մարիամ Գրիգորյանը: Ժառանգական գույքը, որի համար տրվել է նույն վկայագիրը, բաղկացած է Երևանի 16-րդ թաղամասի 45-րդ շենքի թիվ 66 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/2 բաժնից (գ.թ. 21):

5) Նոտարի 10.12.2009 թվականի՝ Շողեր Գրիգորյանին ուղղված գրության համաձայն՝ Գնել Գրիգորյանի՝ մահացած 04.10.2008 թվականին, մահից հետո ժառանգության իրավունքի վկայագիր չի կարող տրվել, քանի որ անշարժ գույքի պետական գրանցումը չի կատարվել և ներկայացված փաստաթղթերը բավարար չեն ժառանգություն ձևակերպելու համար (գ.թ. 20):

6) 22.03.2010 թվականի համաձայնության համաձայն՝ Գոհարիկ Խաչատրյանը և Մարիամ Գրիգորյանը համաձայն են, որ Գնել Գրիգորյանի մահից հետո մնացած՝ ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք գյուղում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիրը տրվի Շողեր Գրիգորյանի անվամբ (գ.թ.39):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Նախկինում գործող ՀՀ հողային օրենսգրքի (ուժը կորցրել է 02.05.2001 թվականի թիվ ՀՕ-185 օրենքով) 18-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ հողի սեփականության և մշտական օգտագործման իրավունքը հաստատվում է համապատասխան պետական ակտով, որը տրվում է պատգամավորների համապատասխան տեղական խորհրդի գործադիր կոմիտեի կողմից:

«Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.1999 թվականին՝ 17.06.1998 թվականի թիվ ՀՕ-229 օրենքով) 13-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ գյուղացիական տնտեսությունը որպես սեփականություն կարող է ունենալ բնակելի տներ, տնտեսական շինություններ, հողամասեր և տունկեր, մթերատու և բանող անասուններ, թռչուններ, գյուղատնտեսական տեխնիկա և գործիքներ, փոխադրամիջոցներ և այլ գույք՝ գյուղատնտեսական արտադրությունն ինքնուրույն վարելու, արտադրանքը վերամշակելու և իրացնելու համար:

Նույն հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ գյուղացիական տնտեսությունը ձևակերպվում է գյուղացիական ընտանիքի գլխի անունով: Գյուղացիական տնտեսության իրավունքները ճանաչվում են վերջինիս անվամբ ձևակերպվող և պատգամավորների գյուղական, ավանային, քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեների կողմից տրվող պետական ակտի հիման վրա:

Նույն հոդվածի 5-րդ պարբերության համաձայն՝ նույն հոդվածի կանոնները կիրառվում են նաև քաղաքացիների օժանդակ տնտեսության և գյուղացիական ծխի սեփականության նկատմամբ:

«Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 28.11.2006 թվականի թիվ ՀՕ-199-Ն օրենքով) 2-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ գյուղացիական տնտեսությունը ձևակերպվում է ընտանիքի գլխավորի անունով: Գյուղացիական տնտեսության իրավունքները ճանաչվում են ընտանիքի գլխավորի անվամբ ձևակերպվող և պատգամավորների համապատասխան տեղական (գյուղական, ավանային, քաղաքային, քաղաքի շրջանային) խորհրդի գործադիր կոմիտեի կողմից տրվող պետական ակտի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը:

ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև 1999 թվականի մայիսի 6-ը հողամասերի նկատմամբ իրա-

վունքների վերաբերյալ սահմանված կարգով տրված, ձեռք բերված փաստաթղթերն ունեն իրավաբանական ուժ, վերագրանցման ենթակա չեն և հիմք են հանդիսանում անշարժ գույքի նկատմամբ գործարքներ կատարելու համար:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված՝ պետական գրանցման համար նախատեսված ժամկետը չի տարածվում մինչև նույն օրենքի ընդունումը Հայաստանի Հանրապետության տարածքում առկա գույքի և դրա նկատմամբ իրավունքներ և սահմանափակումներ հաստատող փաստաթղթերի վրա: Նշված փաստաթղթերը, անկախ կնքման կամ հաստատման ժամկետից, հիմք են համարվում անշարժ գույքի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումներում գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար՝ սեփականատերերի և օգտագործողների կողմից սահմանված կարգով ներկայացնելու դեպքում:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ըստ օրենքի կամ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրեր տալու դեպքում նոտարն ստուգում է ժառանգատուի մահվան փաստը, ժառանգության բացման ժամանակը և վայրը, ազգակցական հարաբերությունները կամ կտակի առկայությունը, ժառանգության զանգվածի կազմը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ժառանգության իրավունքի վկայագիր տալու ժամանակ նոտարը պետք է որոշի նաև ժառանգության զանգվածի կազմը, որի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը: Միաժամանակ, ժառանգության զանգվածի որոշման գործընթացում նոտարը պետք է հաշվի առնի Հայաստանի Հանրապետության՝ նախկինում և ներկայումս գործող օրենսդրական կանոնակարգումների առանձնահատկությունները: Մասնավորապես՝ նախկինում գործող կանոնակարգումների համաձայն՝ հողի սեփականության և մշտական օգտագործման իրավունքը հաստատվում էր պետական ակտով, որը տրվում էր պատգամավորների տեղական խորհրդի գործադիր կոմիտեի կողմից, իսկ գյուղացիական տնտեսությունը որպես սեփականություն կարող էր ունենալ նաև բնակելի տներ և հողամասեր, որոնց նկատմամբ իրավունքներն իրենց հերթին ձևակերպվում էին գյուղացիական ընտանիքի գլխի անունով և նույնպես ճանաչվում էին նրա անվամբ ձևակերպվող պատգամավորների գյուղական, ավանային, քաղաքային խորհուրդների գործադիր կո-

միտենների կողմից տրվող պետական ակտի հիման վրա: Հաշվի առնելով նշված կանոնակարգումները, ինչպես նաև սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը՝ ներկայումս գործող կանոնակարգումների համաձայն՝ մինչև 06.05.1999 թվականը հողամասերի նկատմամբ իրավունքների վերաբերյալ սահմանված կարգով տրված կամ ձեռք բերված փաստաթղթերը պահպանել են իրենց իրավաբանական ուժը, դրանք վերագրանցման ենթակա չեն և հիմք են հանդիսանում անշարժ գույքի նկատմամբ գործարքներ կատարելու համար:

Այսինքն՝ ժառանգության իրավունքի վկայագիր տալու ժամանակ ժառանգության զանգվածի որոշման գործընթացում նոտարը պետք է հաշվի առնի, որ նախկինում տրված պետական ակտը դա գույքի նկատմամբ իրավունքը հաստատող և դրա պատկանելիության հարցը որոշող պետության կողմից տրված և ճանաչված պաշտոնական փաստաթուղթ է: Հետևաբար, նոտարը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածը պետք է մեկնաբանի՝ հաշվի առնելով ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները, ինչպես նաև իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրական կանոնակարգումները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ կարգավորումը գործում է նաև պետական գրանցման ենթակա գույքի այլ տեսակների նկատմամբ: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի կարգավորումը, որի համաձայն՝ մինչև այդ օրենքի ընդունումը Հայաստանի Հանրապետության տարածքում առկա գույքի և դրա նկատմամբ իրավունքներ և սահմանափակումներ հաստատող փաստաթղթերի վրա պետական գրանցման համար սահմանված ժամկետը չի տարածվում, և այդ փաստաթղթերը, անկախ դրանց կնքման կամ հաստատման ժամկետից, սեփականատերերի և օգտագործողների կողմից սահմանված կարգով ներկայացվելու դեպքում հիմք են գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար: Ի դեպ, նշվածը գույքի սեփականատիրոջ մահվան դեպքում հնարավոր է իրականացնել միայն նրա ժառանգության ընդունման պայմաններում:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասը վերաբերում է հողամասերի նկատմամբ իրավունքների վերաբերյալ սահմանված կարգով տրված, ձեռք բերված փաստաթղթերին, ինչպիսին

Շողեր Գրիգորյանի ներկայացրած՝ ՀՀ Ազգային արխիվի Աբովյանի տարածքային ներկայացուցչության 30.10.2009 թվականի թիվ 01-1/1160 արխիվային տեղեկանքում նշված ՀՀ Կոտայքի շրջանի Կոտայքի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 1991-1995 թվականների թիվ 1 տնտեսությունների գրքի գրառումը չի կարող համարվել:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ ՀՀ Կոտայքի շրջանի Կոտայքի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 1991-1995 թվականների թիվ 1 տնտեսությունների գրքի գրառմամբ հիմնավորվում է ՀՀ Կոտայքի շրջանի Կոտայք գյուղում գտնվող 1962 թվականին կառուցված 100 քմ մակերեսով բնակելի տան և 0,07 հա (700 քմ) մակերեսով հողամասի նկատմամբ Գնել Գրիգորյանի իրավունքները հաստատող և ճանաչող պետական ակտի առկայությունը, իսկ նախկինում գործող կանոնակարգման համաձայն՝ պետական ակտը դա գույքի նկատմամբ իրավունքը հաստատող և դրա պատկանելիության հարցը որոշող պետության կողմից տրված և ճանաչված պաշտոնական փաստաթուղթ է:

Քննվող վարչական գործի փաստերով հաստատվում է, որ ՀՀ Ազգային արխիվի Աբովյանի տարածքային ներկայացուցչության 30.10.2009 թվականի «ՀՀ Կոտայքի շրջանի Կոտայքի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 1991-1995 թվականների թիվ 1 տնտեսությունների գրքից» թիվ 01-1/1160 արխիվային տեղեկանքի համաձայն՝ ընտանիքի գլխավոր Գնել Գրիգորյանի տնտեսության անձնական սեփականություն հանդիսացող բնակելի տունը կառուցված է 1962 թվականին, որի մակերեսը կազմում է 100 քմ, այդ թվում՝ բնակելի՝ 50 քմ, իսկ նրա տնտեսության անձնական օգտագործման տակ գտնվող հողի մակերեսը կազմում է 0,07 հա (700 քմ), այդ թվում՝ շինությունների տակ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք գյուղում գտնվող, Գնել Գրիգորյանին պատկանող գույքի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր տալու գործընթացում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածը մեկնաբանվել է՝ հաշվի չառնելով ՀՀ հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները, ինչպես նաև նախկինում գործող օրենսդրական կանոնակարգումները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ «Հայաստանի Հանրապետության

վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական դատարանի 11.05.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան
Դատավորներ՝ Ե. Սողոմոնյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Վ. Ավանեսյան
Ա. Բարսեղյան
Մ. Դրմեյան
Գ. Հակոբյան
Է. Հայրիյան
Տ. Պետրոսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0235/02/09
2011 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0235/02/09
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան
Ա. Մկրտչյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Ե. Սողոմոնյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Վ. Ավանեսյանի
Ա. Բարսեղյանի
Մ. Դրմեյանի
Գ. Հակոբյանի
Է. Հայրիյանի

2011 թվականի մայիսի 27-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Գագիկ Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Հարություն Հաբեշյանի հայցի ընդդեմ Ռախսա, Իգնատ և Մանուկ Հաբեշյանների, Հովսեփ Կալեմդարյանի, Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, երրորդ անձինք ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր), Գագիկ Սարգսյանի՝ ժառանգության իրավունքի վկայագրերը

մասնակի անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման հիմքով ժառանգության ընդունման, ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու և բաժնեմասը բնեղենով առանձնացնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Հարություն Հաբեշյանը պահանջել է «Մասնակի անվավեր ճանաչել Զաքար Տիգրանի Հաբեշյանի անվամբ տրված պետ. նոտարի 16.12.1988թ. հ-3-3615 ժառանգության իրավունքի վկայագիրը: Մասնակի անվավեր ճանաչել պատասխանողներ Ռաիսա, Մանուկ և Իգնատ Հաբեշյանների անվամբ տրված պետ. նոտարի 02.03.2001թ. հ-3-551 ժառանգության իրավունքի վկայագիրը՝ 305,5քմ մակերեսով օրինական հատկացված հողամասի և այդ հողամասի վրա առկա շենք-շինությունների մասով: Բնեղենով առանձնացնել Հարություն Հաբեշյանի և Ռաիսա, Մանուկ, Իգնատ Հաբեշյանների կողմից փաստացի տիրապետվող ժառանգական գույքը՝ ճանաչելով Հարություն Հաբեշյանի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Շահումյան 16 փողոցի թիվ 54 հասցեում գտնվող 336,8քմ մակերեսով շենք-շինությունների և 305,5քմ մակերեսով հողամասի նկատմամբ: Ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել Հարություն Հաբեշյանի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Շահումյան 16 փողոցի թիվ 54 հասցեում Հարություն Հաբեշյանի կողմից տիրապետվող 305,5քմ մակերեսով օրինական հատկացված հողամասին կից գտնվող 15,2քմ մակերեսով կարգավիճակը չորոշված հողամասի նկատմամբ»:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2009 թվականի վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է «Մասնակի անվավեր ճանաչել Զաքար Տիգրանի Հաբեշյանի անվամբ 16.12.1988 թվականին տրված 3-3615 համարի տակ սեղանամատյանում գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, Ռաիսա, Մանուկ ու Իգնատ Հաբեշյանների անվամբ 02.03.2001 թվականին տրված 3-551 համարի տակ սեղանամատյանում գրանցված ժառանգության իրավունքի վկայագիրը և 02.03.2001 թվականին տրված 3-550 համարի տակ սեղանամատյանում գրանցված սեփականության իրավունքի վկայագիրը՝ 305,5քմ մակերեսով օրինական

հատկացված հողամասի և այդ հողամասի վրա առկա շենք-շինությունների մասով: Բնեղենով առանձնացնել Հարություն Հաբեշյանի և Ռաիսա, Մանուկ, Իզնատ Հաբեշյանների կողմից փաստացի տիրապետվող ժառանգական գույքը և Երևան քաղաքի Շահումյան 16 փողոցի թիվ 54 հասցեում գտնվող, Հարություն Հաբեշյանի կողմից փաստացի օգտագործվող օրինական 305,5քմ մակերեսով հողամասի և դրա վրա առկա օրինական շինությունների նկատմամբ Հարություն Հաբեշյանին ճանաչել Տիգրան Զաքարի Հաբեշյանի ժառանգությունն ընդունած ժառանգ՝ այդ մակերեսների նկատմամբ ճանաչելով նաև նրա սեփականության իրավունքը: Երևան քաղաքի Շահումյան 16 փողոցի թիվ 54 հասցեում օրինական հատկացված 305,5քմ մակերեսով հողամասին կից գտնվող, Հարություն Հաբեշյանի կողմից Շահումյան 16 փողոցի թիվ 52 հասցեի հողամասից փաստացի օգտագործվող 15,2քմ մակերեսով հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել Հարություն Հաբեշյանի սեփականության իրավունքը: Երևան քաղաքի Շահումյան 16 փողոցի թիվ 54 հասցեում գտնվող 336,8քմ մակերեսով շենք-շինությունների նկատմամբ Հարություն Հաբեշյանի սեփականության իրավունքը ճանաչելու հայցապահանջի մասով գործի վարույթը կարճել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.03.2010 թվականի որոշմամբ Գազիկ Սարգսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ որոշվել է Երևանի Մալաթիա-Մեքաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2009 թվականի վճիռը բեկանել և գործն ուղարկել նոր քննության:

Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 27.07.2010 թվականի վճռով հայրը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.01.2011 թվականի որոշմամբ Հարություն Հաբեշյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ որոշվել է Դատարանի 27.07.2010 թվականի վճիռը բեկանել և գործն ուղարկել նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գազիկ Սարգսյանը:
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածի 1-ին կետը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 48-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածները, սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Հարություն Հաբեշյանը, տիրապետելով վիճելի գույքը, ընդունել է դրա նկատմամբ ժառանգությունը՝ վկայակոչելով Կադաստրի 19.02.2009 թվականի գրությունը: Մինչդեռ, նշված գրությունում բացակայում է ապացույց այն մասին, որ Հարություն Հաբեշյանը ժառանգության բացման պահից վեցամսյա ժամկետում կատարել է այնպիսի գործողություններ, որոնք կհաստատեն ժառանգությունն ընդունելու փաստը:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության չի ենթարկել գործում եղած ապացույցները, մասնավորապես՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.03.2010 թվականի որոշմամբ հաստատված այն հանգամանքը, որ Հարություն Հաբեշյանը չի ընդունել Տիգրան Հաբեշյանի ժառանգությունը: Միաժամանակ, նույն որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը գտել է, որ ժառանգության բացման ժամանակ տնամերձ հողամասը հանդիսացել է պետության սեփականությունը և ժառանգության զանգվածի մեջ մտնել չէր կարող, իսկ ժառանգության զանգվածի մեջ մտած անշարժ գույքն ամբողջությամբ (70,15քմ մակերեսով տուն) տիրապետել է Ջաքար Հաբեշյանը: Հետևաբար, Դատարանի վճիռը հիմնավոր է և կայացվել է ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության, այն է՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վերջնական ակտով հաստատված հանգամանքների հիման վրա: Ավելին, Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով Կադաստրի 19.02.2009 թվականի գրությունը, անտեսել է այն հանգամանքը, որ նշված գրության համաձայն՝ Հարություն Հաբեշյանը տիրապետում է վիճելի հողամասը, որը խնդրահարույց գույքի մի մասն է, այլ ոչ թե ամբողջը:

Վերաքննիչ դատարանը, քննելով վերաքննիչ բողոքը, չի անդրադարձել վերաքննիչ բողոք բերած անձի ունեցած և հայտնած դիրքորոշմանն առաջին աստիճանի դատարանում: Մինչդեռ, վերաքննիչ բողոք-

քում հայտնած դիրքորոշմամբ Հարություն Հաբեշյանը դուրս է եկել վերաքննիչ բողոք բերելու սահմաններից, քանի որ ընդհանուր իրավասության դատարանում հայտնած դիրքորոշումն արտացոլված էր միայն հայցադիմումի հիմքում և առարկայում, իսկ այլ դիրքորոշում վերջինս չի հայտնել: Հետևաբար, վերաքննիչ բողոքը այլ հիմքերի մասերով Վերաքննիչ դատարանում քննության ենթակա չէր:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել հայցվորի և պատասխանողների միջև ժառանգական գույքի բաժանման համաձայնությանը և անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործով վեճի հիմքերից մեկը ժառանգության վկայականի մասնակի անվավեր ճանաչումն է և դրանից ածանցվող ժառանգական գույքի բաժանումը, իսկ դատական կարգով ժառանգական գույքի բաժանումը հնարավոր է միայն կողմերի միջև համաձայնության բացակայության՝ վեճի առկայության դեպքում, որը սովյալ դեպքում բացակայում է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.01.2011 թվականի որոշումը:

3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կադաստրի 19.02.2009 թվականի թիվ 710 գրության համաձայն՝ Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 54 հասցեի 70,15քմ ընդհանուր մակերեսով բնակելի տունը 08.02.1961 թվականին գույքագրվել է Տիգրան Զաքարի Հաբեշյանի անվամբ, հողամասը՝ 17քմ x 30քմ = 510քմ մակերես (հիմք՝ գույքային թերթ թիվ 40 տոմար, 102 թերթ): Պետական նոտարի 16.12.1988 թվականի ժառանգության իրավունքի թիվ 3-3615 վկայագրի համաձայն՝ Տիգրան Զաքարի Հաբեշյանի գույքի նկատմամբ ժառանգ է Զաքար Տիգրանի Հաբեշյանը, որի անվամբ 23.12.1988 թվականին գույքագրվել է 70,15քմ ընդհանուր մակերեսով բնակելի տուն, հատկացված հողամասը՝ 510քմ մակերես, փաստացի՝ 544,9քմ մակերես: Շահումյանի շրջգործկոմի 10.08.1989 թվականի թիվ 21/205 որոշման համաձայն՝ Շահումյան 16-րդ փողոցի թիվ 54 հասցեում Զաքար Տիգրանի Հաբեշյանի անվամբ գույքագրվել է 266,90քմ ընդհանուր մակերեսով բնակելի տուն, հատկացված հողամասը՝ 510քմ մակերես, փաստացի՝ 544,9քմ մակերես: Զաքար Տիգրանի Հաբեշյանի՝ մահացած

03.01.1990 թվականին, գույքի նկատմամբ (հիմք՝ պետական նոտարի 02.03.2001 թվականի սեփականության իրավունքի և ժառանգության իրավունքի թիվ 3-551 վկայագրերը) ժառանգներ են տարբեր բաժնեմասերով՝ Ռաիսա, Իզնատ և Մանուկ Հաբեշյանները, որոնց անուններով իրավունքի պետական գրանցում չի կատարվել: 13.02.2009 թվականին կատարված չափագրումից պարզվել է, որ Շահումյան 16-րդ փողոցի թիվ 54 հասցեի փաստացի օգտագործվող հողամասը կազմում է 567,5քմ մակերես, որը սահմանագատված է օգտագործողների միջև: 246,8քմ մակերեսով հողամասը, որից 42,3քմ մակերեսի կարգավիճակը որոշված չէ, օգտագործվում է Ռաիսա, Իզնատ և Մանուկ Հաբեշյանների կողմից: 567,5քմ մակերեսով հողամասից 320,7քմ մակերեսով հողամասը, որից 15,2քմ մակերեսի կարգավիճակը որոշված չէ, օգտագործվում է Հարություն Հաբեշյանի կողմից, որի վերաբերյալ արխիվային գործում իրավահաստատող փաստաթղթեր չկան: Ռաիսա, Իզնատ և Մանուկ Հաբեշյանների կողմից օգտագործվում է 156,2քմ արտաքին մակերեսով կարգավիճակը չորոշված շենք-շինություններ, որից 68,2քմ մակերեսը գտնվում է կարգավիճակը չորոշված 42,3քմ մակերեսով հողամասի վրա: Հարություն Հաբեշյանի կողմից օգտագործվում է 336,8քմ մակերեսով կարգավիճակը չորոշված շենք-շինություններ, որից 30,2քմ մակերեսը գտնվում է 15,2քմ մակերեսով կարգավիճակը չորոշված հողամասի վրա (հատոր 1, գ.թ. 11):

2) 16.12.1988 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3-3615 վկայագրի համաձայն՝ 18.08.1976 թվականին մահացած Տիգրան Զաքարի Հաբեշյանի մահից հետո նրա գույքի նկատմամբ ժառանգ է տղան՝ Զաքար Տիգրանի Հաբեշյանը: Ժառանգական գույքը, որի համար տրվել է նույն վկայագիրը, բաղկացած է բնակելի տնից, որը գտնվում է Երևանի Շահումյան 16-րդ փողոցի թիվ 54 հասցեում, որի պատկանելիությունը ժառանգատուին հաստատված է Շահումյանի շրջանի գործկոմի կողմից 13.10.1988 թվականին տրված թիվ 26/73 որոշմամբ: Ամբողջ բնակելի տունը բաղկացած է 30,15քմ բնակելի, 12քմ օժանդակ և 28քմ այլ մակերեսներից (հատոր 1, գ.թ. 40):

3) 14.02.2001 թվականի մահվան թիվ 054600 վկայականի համաձայն՝ Զաքար Տիգրանի Հաբեշյանը մահացել է 03.01.1990 թվականին (հատոր 1, գ.թ. 13):

4) 02.03.2001 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3-551 վկայագրի համաձայն՝ Զաքար Տիգրանի Հաբեշյանի՝ մահացած 03.01.1990 թվականին, գույքի նկատմամբ ժառանգներ են հանդիսանում

կինը՝ Ռախսա Հաբեշյանը, տղան՝ Իգնատ Հաբեշյանը, Մանուկ Հաբեշյանը: Ժառանգական գույքը, որի համար տրվել է նույն վկայագիրը, բաղկացած է Երևանի Շահումյան 16 փողոցի թիվ 54 բնակելի տան և հողի 1/2 բաժնից, որի պատկանելիությունը ժառանգատուին հաստատված է Երքաղխորհրդի գործկոմի հաշվետեխնիկական բյուրոյի կողմից 30.08.1989 թվականին տրված թիվ 772 տեխնիկական անձնագրով: Ամբողջ տունը բաղկացած է 266,90քմ ընդհանուր մակերեսից, որից 88,75քմ՝ բնակելի, 94,45քմ՝ օժանդակ, և 83,70քմ այլ մակերեսներ, ըստ փաստաթղթերի՝ 510քմ մակերեսով (փաստացի՝ 544,9քմ մակերես) հողամասից (հատոր 1, գ.թ. 39):

5) 02.03.2001 թվականի սեփականության իրավունքի թիվ 3-550 վկայագրի համաձայն՝ Ռախսա Հաբեշյանին, որը Ջաքար Տիգրանի Հաբեշյանի (մահացած 03.01.1990 թվականին) կինն է, սեփականության իրավունքով պատկանում է ամուսինների համատեղ գույքի 1/2 բաժինը: Ընդհանուր համատեղ գույքը բաղկացած է Երևանի Շահումյան 16 փողոցի թիվ 54 բնակելի տնից և հողից, որի պատկանելիությունը ժառանգատուին հաստատված է Երքաղխորհրդի գործկոմի հաշվետեխնիկական բյուրոյի կողմից 30.08.1989 թվականին տրված թիվ 772 տեխնիկական անձնագրով (հատոր 1, գ.թ. 41):

6) Հարություն Տիգրանի Հաբեշյանի հայրը Տիգրան Ջաքարի Հաբեշյանն է (հատոր 1, գ.թ. 15):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Իրավահարաբերության ծագման պահին գործող նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (ընդունվել է՝ 04.06.1964 թվականին) 531-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակ է համարվում ժառանգատուի մահվան օրը, իսկ նրան մեռած հայտարարելու դեպքում՝ նույն օրենսգրքի 21 հոդվածում նշված օրը:

Նույն օրենսգրքի 549-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է ընդունի այն: Չի թույլատրվում ժառանգության ընդունումը պայմանով կամ վերապահումներով:

Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ այս հոդվածում նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնակարգմամբ ժառանգության բացման ժամանակ էր համարվում ժառանգատուի մահվան օրը, իսկ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված էր համարվում այն դեպքում, երբ նա փաստորեն սկսում էր տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, որպիսի գործողությունները պետք է կատարվեին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Այսինքն՝ վեցամսյա ժամկետը բաց թողնելու հետևանքով անձը կորցնում էր ժառանգությունն ընդունելու հնարավորությունը և չէր կարող համարվել որպես այն ընդունած:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով դեկլարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը գործում եղած բոլոր ապացույցները պարտավոր է գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ տվյալ դեպքում ձեռք չի բերվել ապացույց այն մասին,

որ Հարություն Հաբեշյանն ընդունել է Տիգրան Հաբեշյանի ժառանգությունը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ Դատարանն անտեսել է, որ Կադաստրի 19.02.2009 թվականի գրության համաձայն՝ Հարություն Հաբեշյանը ևս օգտագործում է տիրապետում է վիճելի հողամասը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը ներքին համոզման է հանգել առանց գործում առկա բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու, ինչի արդյունքում չի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Տիգրան Հաբեշյանը մահացել է 18.08.1976 թվականին, սակայն այդ ժամանակից սկսած վեց ամսվա ընթացքում Հարություն Հաբեշյանի կողմից ժառանգական գույքը տիրապետելուն կամ կառավարելուն ուղղված գործողություններ կատարելու վերաբերյալ որևէ ապացույց գործի նյութերում առկա չէ, իսկ առանց այդպիսի ապացույցի առկայության Հարություն Հաբեշյանը չի կարող համարվել Տիգրան Հաբեշյանի ժառանգությունն ընդունած, քանի որ նախկինում գործող կանոնակարգմամբ ժառանգությունն ընդունելու համար սահմանված վեցամսյա ժամկետը բաց թողնելու հետևանքով անձը կորցնում էր այն ընդունելու հնարավորությունը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի վկայակոչած Կադաստրի 19.02.2009 թվականի գրությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված գրությունը չի կարող դիտվել որպես Հարություն Հաբեշյանի կողմից Տիգրան Հաբեշյանի գույքը վերջինիս մահվանից սկսած վեցամսյա ժամկետում տիրապետելու կամ կառավարելու փաստը հաստատող ապացույց, քանի որ այդ գրությունն այդպիսի փաստի վերաբերյալ որևէ տեղեկություն չի պարունակում: Ավելին, սույն գրության համաձայն՝ Հարութ Հաբեշյանի կողմից օգտագործվող հողամասի վերաբերյալ արխիվային գործում իրավահաստատող փաստաթղթեր առկա չեն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հարություն Հաբեշյանի կողմից Տիգրան Հաբեշյանի ժառանգությունն ընդունելու վերաբերյալ ապացույցի բացակայության մասով Դատարանի եզրահանգումը հիմնավոր է, իսկ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն անհիմն է և չի բխում սույն գործի փաստական տվյալներից:

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին չի անդրադառնում, քանի որ Հարություն Հաբեշյանի կողմից Տիգրան Հաբեշյանի ժառանգությունն ընդունելու վերաբերյալ ապացույցի բացակայության պայմաններում դրանք սույն գործի լուծման համար չունեն որևէ իրավական նշանակություն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2011 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 27.07.2010 թվականի վճռին:

2. Հարություն Հաբեշյանից հոգուտ Գագիկ Սարգսյանի բռնազանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան
Դատավորներ՝ Ե. Սողոմոնյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Վ. Ավանեսյան
Ա. Բարսեղյան
Ս. Դրմեյան
Գ. Հակոբյան
Է. Հայրիյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/1018/02/09
2011 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/1018/02/09
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան
Կ. Չիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Վ. Ավանեսյանի
Վ. Աբելյանի
Ա. Բարսեղյանի
Մ. Դրմեյանի
Գ. Հակոբյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2011 թվականի հուլիսի 1-ին

դոմբաց դատական նիստում, քննելով Գևորգ Բերբերյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գևորգ Բերբերյանի ընդդեմ Մարինե Բերբերյանի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի՝ հողամասը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին և հակընդդեմ հայցի՝ ժառանգությունն ընդունելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գևորգ Բերբերյանը պահանջել է հաստատել Անի Մութաֆյանի՝ Երևանի Երզնկյան փողոցի թիվ 46 հասցեի 324 քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի տիրապետման փաստը և ճանաչել մորաքրոջ՝ Անի Մութաֆյանի ժառանգությունն ընդունած ժառանգ և իր սեփականության իրավունքը Երևանի Երզնկյան փողոցի թիվ 46 տան 1/2-րդ բաժնի նկատմամբ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Մարինե Բերբերյանը պահանջել է հարգելի համարել իր կողմից ժառանգությունն ընդունելու համար բաց թողնված ժամկետը և իրեն ճանաչել Երևանի Երզնկյան փողոցի թիվ 46 հասցեի ամբողջ անշարժ գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.03.2010 թվականի (այսուհետ՝ Դատարան) վճռով Գևորգ Բերբերյանի հայցը բավարարվել է, իսկ Մարինե Բերբերյանի հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.06.2010 թվականի որոշմամբ Մարինե Բերբերյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. բեկանվել և փոփոխվել է Դատարանի վճիռը՝ Գևորգ Բերբերյանի հայցը մերժվել է, իսկ Մարինե Բերբերյանի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Մարինե Բերբերյանը ճանաչվել է Անի Մութաֆյանի ժառանգությունն ըստ կտակի ընդունած ժառանգ, իսկ մնացած մասով հակընդդեմ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գևորգ Բերբերյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Մարինե Բերբերյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 130-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ, 1227-րդ հոդվածները, 1225-րդ հոդվածի 6-րդ կետը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով՝

Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի խախտման հետևանքով յուրաքանչյուր ապացույց չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն քաղաքացիական գործով չի ապացուցվել այն հանգամանքը, որ Մարինե Բերբերյանն օրենքով սահմանված ժամկետում Անի Մուրաֆյանի մահից հետո դիմել է նոտարական գրառենյակ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար, այսինքն՝ Մարինե Բերբերյանը բաց է թողել օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում 11.08.1999 թվականին կազմված կտակի հիման վրա ժառանգության ընդունման ժամկետը, չի ընդունել ժառանգությունն ըստ կտակի, որի պայմաններում ժառանգելու իրավունք են ձեռք բերում ըստ օրենքի ժառանգները:

Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել այն հանգամանքը, որ Գևորգ Բերբերյանը վեցամսյա ժամկետում 20.10.2005 թվականին դիմում է ներկայացրել նոտարին մորաքրոջ՝ Անի Մուրաֆյանի ժառանգությունն ընդունելու վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.06.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.03.2010 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Կտակը Մարինե Բերբերյանի կողմից ընդունվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով կտակված գույքը փաստացի տիրապետելու միջոցով: Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն պնդմանը, որ Դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ և 1227-րդ հոդվածները, ապա նշված պնդումն անհիմն է, քանի որ նշված հոդվածները դրված են Դատարանի որոշման հիմքում, և Դատարանը որոշմամբ անդրադառնում է դրանց կիրառման շարժառիթներին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Անի Մութաֆյանը մահացել է 05.06.2005 թվականին, Տիրուհի Բերբերյանը մահացել է 25.10.2004 թվականին (հատոր առաջին գ.թ 7-8):

2) 11.08.1999 թվականին Անի Մութաֆյանը Երևանի Երզնկյան փողոցի 46 տունն իր գույքով կտակել է Մարինե Բերբերյանին (հատոր առաջին գ.թ 33):

3) Գևորգ Բերբերյանը 20.10.2005 թվականին հայտարարություն է ներկայացրել նոտարական գրասենյակ, որ ընդունում է հանգուցյալ Անի Մութաֆյանի մահից հետո մնացած ժառանգական գույքը (հատոր առաջին գ.թ 12):

4) Գևորգ Բերբերյանի հարևանների հայտարարության համաձայն՝ Գևորգ Բերբերյանը 1958 թվականից առ այսօր մշտապես բնակվում է Երևանի Երզնկյան փողոցի թիվ 46 տանը (հատոր առաջին գ.թ 66):

5) 12.07.2005 թվականի տեղեկանքի համաձայն՝ հանգուցյալ Անի Գևորգի Մութաֆյանը մինչ մահը՝ 06.06.2005 թվականը մշտական հաշվառված է եղել և բնակվել Երզնկյան 46 տանը: Խնամքի տակ անչափահաս և անաշխատունակ երեխաներ չի ունեցել (հատոր առաջին գ.թ 170):

6) Գևորգ Բերբերյանը և Մարինե Բերբերյանը հարազատ քույր և եղբայր են, իսկ Անի Գևորգի Մութաֆյանը նրանց մորաքույրն է:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի

կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը, ինչպես նաև սույն օրենսգրքով սահմանված այլ դեպքերում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ելնելով ժառանգական իրավահարաբերությունների բնույթից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգության ընդունումը ժառանգի կողմից իրականացվող կանխամտածված, ակտիվ գործողությունների համակցություն է, որն ուղղված է ժառանգական գույքն իր սեփականությունը դարձնելուն: Այսինքն, թե ըստ օրենքի և թե ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգը պետք է գիտակցի և նրա գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն համապատասխան ժառանգության ընդունմանը:

Հետևաբար, ըստ կտակի ժառանգության ընդունման դեպքում ժառանգի կողմից պետք է ձեռնարկվեն ակտիվ քայլեր, որը պետք է ուղղված լինի հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն: Ժառանգի գործո-

դություններից պետք է բխի, որ դրանք միտված են ոչ թե ըստ օրենքի ժառանգությունն ընդունելուն (եթե ըստ կտակի ժառանգը նաև ըստ օրենքի ժառանգ է), այլ հենց ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն, որն էլ կարող է իրականացվել միայն ժառանգության բացման վայրի նոտարին դիմում հանձնելու եղանակով:

Եթե օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ժառանգը միջոցներ չի ձեռնարկում ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար, ապա ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Անի Մուրաֆյանը Երևանի Երզնկյան փողոցի թիվ 46 տունն իր գույքով կտակել է Մարինե Բերբերյանին: Անի Մուրաֆյանը մահացել է 05.06.2005 թվականին: Մարինե Բերբերյանը, ժառանգության բացման օրվանից վեցամսյա ժամկետում փաստացի տիրապետելով ժառանգական գույքը, այնուամենայնիվ չի դիմել նոտարական գրասենյակ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու նպատակով:

Դատարանը, հայցի բավարարման, իսկ հակընդդեմ հայցի մերժման հիմքում դնելով այն հանգամանքը, որ Մարինե Բերբերյանը ժառանգության բացման օրվանից վեցամսյա ժամկետում չի դիմել նոտարական գրասենյակ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար, գտել է, որ կտակով թողնված ժառանգությունը չի ընդունվել: Բացի այդ, Դատարանն արձանագրել է նաև, որ Մարինե Բերբերյանը ևս փաստացի տիրապետել և շարունակում է կառավարել ժառանգական գույքը, ինչը չի ժխտել նաև Գևորգ Բերբերյանը:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը բեկանելիս գտել է, որ Մարինե Բերբերյանը մորաքրոջ մահից հետո փաստացի տիրապետել և կառավարել է նրա ժառանգական գույքը, հետևաբար նա ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ է: Վերաքննիչ դատարանը Մարինե Բերբերյանի հակընդդեմ հայցի՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու պահանջի մասը բավարարելը պատճառաբանել է կտակի առկայությամբ: Միաժամանակ, անհիմն և առարկայագուրկ է համարել հակընդդեմ հայցի այն մասը, որը վերաբերում է ըստ կտակի ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողումը հարգելի համարելուն՝ մերժելով հակընդդեմ հայցի այդ մասը, քանի որ Մարինե Բերբերյանն Անի Մուրաֆյանի ժառանգությունը փաստացի ընդունած ժառանգ է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգության բացման վայրի նոտարին դիմում չհանձնելու պայմաններում Մարինե Բերբեր-

յանի կողմից չի կատարվել գործողություն, որն ուղղված էր ըստ կտակի, այլ ոչ թե ըստ օրենքի ժառանգության ընդունմանը:

Ավելին, սույն գործով Մարինե Բերբերյանի կողմից ներկայացված հայցապահանջը «ժառանգությունն ընդունելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին» վկայում է, որ վերջինս գիտակցել է ըստ կտակի ժառանգությունն ընդունած չլինելու, դրա համար նախատեսված ժամկետը բաց թողած լինելու հանգամանքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով, որ Մարինե Բերբերյանն Անի Մուրաֆյանի մահից հետո՝ 05.06.2005 թվականից, վեցամսյա ժամկետում չի դիմել նոտարական գրասենյակ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար և չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր, որ վերջինս իր կամքից անկախ հանգամանքներով չի ներկայացրել ըստ կտակի ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ապացուցված չէ Մարինե Բերբերյանի կողմից ըստ կտակի ժառանգությունն ընդունելու փաստը, ինչի արդյունքում ծագել են ըստ օրենքի ժառանգման իրավահարաբերություններ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր են վճռաբեկ բողոքի պատճառաբանությունները Վերաքննիչ դատարանի կողմից նյութական իրավունքի նորմի խախտման մասին:

Վճռաբեկ բողոքի պատասխանում առկա փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վերը նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 03.06.2010 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջա-

միտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.03.2010 թվականի վճռին:

2. Մարինե Բերբերյանից հօգուտ Գևորգ Բերբերյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական սուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան

Դատավորներ՝ Վ. Ավանեսյան, Վ. Աբելյան, Ա. Բարսեղյան, Մ. Դրմեյան,
Գ. Հակոբյան, Տ. Պետրոսյան, Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0850/02/11
2012 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0850/02/11
Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ա. Մկրտչյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Է. Հայրիյանի
Ս. Անտոնյանի
Վ. Ավանեսյանի
Ա. Բարսեղյանի
Մ. Դրմեյանի
Գ. Հակոբյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2012 թվականի հոկտեմբերի 19-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Մխիթար Ասատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Մխիթար Ասատրյանի հայցի ընդդեմ Նարգիզ Ասատրյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Մարգարյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանման՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից Մարգարիտ

Գեորգիի Ասատրյանի անվամբ 01.12.1993 թվականին տրված թիվ 7858 սեփականության վկայագիրը Մարգարիտ Գրիգորի Ասատրյանին պատկանելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու, փաստացի տիրապետման հիմքով ժառանգատու Մարգարիտ Գրիգորի (Գևորգի) Ասատրյանի ժառանգական գույքի նկատմամբ ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և այդ հիմքով ժառանգական գույքի՝ 178,00 քմ մակերեսով շենք-շինության և 1.800 քմ մակերեսով հողամասի 1/2 բաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, Նարզիզ Ասատրյանին 11.10.2010 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու և որպես հետևանք 19.10.2010 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Մխիթար Ասատրյանը պահանջել է փաստացի տիրապետման հիմքով ժառանգատու Մարգարիտ Գրիգորի (Գևորգի) Ասատրյանի մահից հետո ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչել իրեն և այդ հիմքով ճանաչել իր սեփականության իրավունքը ժառանգական գույքի 178,00 քմ շենք-շինության և 1.800 քմ հողամասի 1/2 բաժնի նկատմամբ ու մասնակիորեն՝ 1/2 բաժնի մասով, անվավեր ճանաչել Նարզիզ Ասատրյանին 11.10.2010 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և 19.10.2010 թվականին տրված սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականը:

Մխիթար Ասատրյանը, փոխելով և ավելացնելով հայցապահանջը, արդյունքում պահանջել է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստը, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ 01.12.1993 թվականին տրված թիվ 7858 սեփականության վկայագիրը պատկանում է Մարգարիտ Գրիգորի Ասատրյանին, ամբողջովին անվավեր ճանաչել Նարզիզ Ասատրյանին 11.10.2010 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և որպես հետևանք ամբողջովին անվավեր

ճանաչել 19.10.2010 թվականին տրված սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ե. Ետյան) (այսուհետ՝ Դատարան) 20.03.2012 թվականին վճռել է. «Մխիթար Պետրոսի Ասատրյանի ընդդեմ Նարգիզ Բաղդասարի Ասատրյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Երևան տարածքային ստորաբաժանման՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ 01.12.1993 թ. տրված N 7858 սեփականության վկայագիրը Մարգարիտ Գրիգորի Ասատրյանին պատկանելու իրավաբանական փաստը հաստատելու, փաստացի տիրապետման հիմքով ժառանգատու Մարգարիտ Գրիգորի (Գևորգի) Ասատրյանի մահից հետո ներկայացման իրավունքով հայցվոր Մխիթար Ասատրյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և այդ հիմքով նրա սեփականության իրավունքը ժառանգական գույքի՝ 178,00 քմ շենք-շինության և 1.800 քմ հողամասի 1/2 մասի նկատմամբ ճանաչելու, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից Նարգիզ Ասատրյանին 11.10.2010 թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն (Ձև N 3) ամբողջովին անվավեր ճանաչելու պահանջների մասով հայցը մերժել: Որպես հետևանք 19.10.2010 թ. տրված թիվ 2753055 սեփականության իրավունքի վկայականն ամբողջովին անվավեր ճանաչելու պահանջի մասով թիվ ԵԷԴ0850/02/11 քաղաքացիական գործի վարույթը կարճել՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.06.2012 թվականի որոշմամբ Մխիթար Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.03.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մխիթար Ասատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերը, 1226-րդ հոդվածի 1-ին, 3-րդ կետերը, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 109-րդ հոդվածի 1-ին կետը, 189-193-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, որոնցով հիմնավորվում է, որ Մխիթար Ասատրյանը ժառանգատու տատի՝ Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի մահից հետո փաստացի տիրապետել ու կառավարել է ժառանգական գույքը, շարունակել է բնակվել ժառանգական գույք հանդիսացող Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 բնակելի տանը, ինչպես նաև ակտիվ գործողություններ է կատարել ժառանգությունն ընդունելու համար:

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ ժառանգատու Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի ժառանգական գույքի նկատմամբ Նարգիզ Ասատրյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելիս վերջինս թաքցրել է այլ ժառանգ առկա լինելու փաստը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն ուշադրություն չի դարձրել այն փաստին, որ ժառանգական գույքը տիրապետող ժառանգը չպետք է ապացուցի իր կողմից այդ գույքի տիրապետումը, այլ այն պետք է ապացուցի այդպիսի փաստը վիճարկող անձը, մինչդեռ Նարգիզ Ասատրյանը չի ներկայացրել որևէ ապացույց Մխիթար Ասատրյանի կողմից ժառանգական գույքը չտիրապետելու և չկառավարելու, ժառանգական գույք հանդիսացող տանը չբնակվելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չգնահատելով գործում առկա ապացույցները, մերժել է իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատումը, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ 01.12.1993 թվականին տրված թիվ 7858 սեփականության վկայագիրը պատկանում է Մարգարիտ Գրիգորի Ասատրյանին, որպիսի փաստի հաստատումն ուղղված

է Մխիթար Ասատրյանի կողմից ժառանգատուի ժառանգական գույքը ներկայացման իրավունքով ընդունելուն:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանն անհիմն կարճել է 19.10.2010 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականն անվավեր ճանաչելու մասին գործի վարույթը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 08.06.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Բաղդասար Ջաքարի Ասատրյանի և Մարգարիտ Գրիգորի Ստեփանյանի ամուսնությունը ՔԿԱԳ մարմնում գրանցվել է 14.01.1954 թվականին, և վերջինս կրել է Ասատրյան ազգանունը (հատոր 1-ին, գ.թ. 14): Ազգանուշ և Նարգիզ Ասատրյանները Բաղդասար և Մարգարիտ Գրիգորի Ասատրյանների դուստրերն են, իսկ Մխիթար Ասատրյանը՝ Ազգանուշ Ասատրյանի որդին (հատոր 1-ին, գ.թ. 15, 18, 60):

2. Ազգանուշ Բաղդասարի Ասատրյանը մահացել է 16.11.1976 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 19), Բաղդասար Ջաքարի Ասատրյանը մահացել է 16.02.1979 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 20), իսկ Մարգարիտ Գրիգորի Ասատրյանը մահացել է 03.05.1994 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 21):

3. 01.12.1993 թվականի սեփականության թիվ 7858 վկայագրի համաձայն՝ Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեում գտնվող 56,10 քմ բնակելի, 84,10 քմ օժանդակ մակերեսների և 1.800,0 քմ հողամասի սեփականատերը Մարգարիտ Գեորգիի Ասատրյանն է (հատոր 1-ին, գ.թ. 61):

4. 11.10.2010 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7089 վկայագրի համաձայն՝ 03.05.1994 թվականին մահացած Մարգարիտ Գրիգորի Ասատրյանի ժառանգական գույքի՝ Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեում գտնվող տան նկատմամբ ժառանգ է ճանաչվել դուստրը Նարգիզ Բաղդասարի Ասատրյանը (հատոր 1-ին, գ.թ. 22):

5. 19.10.2010 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականի համաձայն՝ Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեում գտնվող 178,0 քմ մակերեսով բնակելի տան և 0,17548 հա հողամասի սեփականատերը Նարգիզ Բաղդասարի Ասատրյանն է, հիմք՝ 11.10.2010 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7089 վկայագիրը (հատոր 1-ին, գ.թ. 238-240):

6. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Էրեբունու տարածքային ստորաբաժանման 21.10.2011 թվականի թիվ 1Կ-04/3-6158 գրության համաձայն՝ Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքը նախկինում սեփականության իրավունքով գույքագրված է եղել Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ (կադաստրային գործում առկա փաստաթղթերում՝ 01.12.1993 թ. թիվ 7858 սեփականության վկայագրում, 01.12.1993 թ. ԱԿՏ-ում Մարգարիտ Ասատրյանի հայրանունը նշված է Գեորգիի) (հատոր 1-ին, գ.թ. 159):

7. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունու անձնագրային բաժանմունքի 02.11.2010 թվականի բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին թիվ 000675 տեղեկանքի և Մխիթար Ասատրյանի 26.10.2010 թվականին 009-ի կողմից տրված թիվ AK0645474 անձնագրի համաձայն՝ 03.01.1975 թվականին ծնված Մխիթար Ասատրյանը Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեում հաշվառված է 14.04.1994 թվականից, միաժամանակ կատարվել է նշում «մշտական բնակվելու մասին» (հատոր 1-ին, գ.թ. 16, 17):

8. ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունու անձնագրային բաժանմունքի 08.11.2011 թվականի թիվ 44-ա91160 գրությամբ հայտնվել է, որ 03.01.1975 թվականին ծնված Մխիթար Ասատրյանը Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 հասցեի հաշվառումից հանվել է 16.08.2011 թվականին՝ նշված հասցեի սեփականատեր Նարգիզ Ասատրյանի դիմումի հիման վրա (հատոր 1-ին, գ.թ. 165):

9. 22.12.2010 թվականի թիվ OS 00042065 զինվորական գրքույկի և 26.02.2008 թվականի Էրեբունու զինվորական կոմիսարիատի թիվ 4/169 տեղեկանքի համաձայն՝ 03.01.1975 թվականին ծնված Մխիթար Ասատրյանը 18.06.1994 թվականին զորակոչվել է զինվորական ծառայության Երևանի Էրեբունու տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից, զորացրվել է 19.11.1995 թվականին և հաշվառված է նույն զինվորական կոմիսարիատում (հատոր 1-ին, գ.թ. 27-30, 139):

10. Թիվ 26 տեղամասի լիազոր ներկայացուցչի կնիքով դրոշմված և ստորագրությամբ հաստատված 27.05.2011 թվականի, 30.07.2011 թվականի և 11.11.2011 թվականի տեղեկանքների համաձայն՝ Մխիթար Ասատրյանին խնամել է մոր՝ Ազգանուշ Ասատրյանի մայրը՝ Մարգարիտ Ասատրյանը, և Մխիթար Ասատրյանը 1975 թվականից փաստացի բնակվել է տատին՝ Մարգարիտ Ասատրյանին պատկանող Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 տանը մինչև 1994 թվականը, որտեղից գորակոչվել է զինվորական ծառայության, և 1995 թվականի դեկտեմբերին գորացրվելուց հետո վերադարձել է տատի տուն և շարունակել բնակվել Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 տանը մինչև 1998 թվականը (հատոր 1-ին, գ.թ. 24, 99, 138):

11. Թիվ 26 տեղամասի լիազոր ներկայացուցչի կնիքով դրոշմված և ստորագրությամբ հաստատված 11.11.2011 թվականի Ալբերտ Դավթյանի հայտարարությամբ վերջինս հայտնել է, որ Մխիթար Ասատրյանին 1975 թվականից ճանաչում է որպես հարևան, 1975 թվականից մինչև 1998 թվականը բնակվել է Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 տանը, 1994 թվականին գորակոչվել է զինվորական ծառայության նշված հասցեից և 1995 թվականի դեկտեմբերին գորացրվելուց հետո վերադարձել է և շարունակել բնակվել Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 տանը, մշակել է հողամասը, իսկ 1998 թվականին նշված տանից հեռացել է ժամանակավորապես (հատոր 1-ին, գ.թ. 131):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին (ներկայացման իրավունքով ժառանգություն) և նրանց միջև բաշխվում է հավասարապես:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքը պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար:

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (տես՝ Արմինե Հակոբյանը և Սամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի, Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1621(ՎԴ)

քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը (ի թիվս այլ ակտերի տես՝ Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Մերոպյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրամադրելու, Մերոպյան Բալասանյանի 01.02.1994 թվականի կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և Այգեստան 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ Կարինե Մերոպյանի սեփականության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջների մասին թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 27-ի որոշումը): Ուստի դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգական գույքի փաստացի տիրապետելու փաստը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով, ընդ որում գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը, կամ այլ ապացույցներ, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը (տես՝ Գառնիկ Նազարյանն ընդդեմ Գագիկ Նազարյանի, Արտաշատի նոտարական տարածքի նոտարի՝ փաստացի տիրապետման

ուժով ժառանգությունն ընդունած ճանաչելու և Գագիկ Նազարյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1125(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը, ինչպես նաև Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի, Արմավիրի նոտարական տարածքի նոտար Նարինե Մկրտչյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արմավիրի տարածքային ստորաբաժանման՝ Վարդան Վարդանյանի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման եղանակով Միշա Վարդանյանին ժառանգությունը ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիս 1-ի որոշումը):

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (տես՝ Կիմա Սարգսյանն ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):

Սույն գործով, Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ, 1216-րդ, 1221-րդ հոդվածները, 1226-րդ հոդվածի 3-րդ կետը, 1227-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը, 53-րդ հոդվածի 1-ին կետը, Մխիթար Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ «Տվյալ դեպքում վերաքննիչ բողոք բերած անձի կողմից դատարանում գործի քննության ժամանակ չի ներկայացվել որևէ ապացույց, որը թույլ կտար կատարել միանշանակ հետևություն առ այն, որ բողոքաբերը փաստացի տիրապետման ուժով ընդունել է ժառանգությունը: Վերջինիս կողմից ներկայացված և գործին կցված հայտարարություններն ու

դատաքննության ժամանակ տրված վկաների ցուցմունքները, տեղամասի լիագոր ներկայացուցչի 27.05.2011 թ., 30.07.2011 թ. և 11.11.2011 թ., էրեբունու զինկոմիսարիատի 26.02.2008 թ. տեղեկանքները, ինչպես նաև Մ. Ասատրյանի զինվորական գրքույկը չեն կարող հայցը բավարարելու հիմք հանդիսանալ: Դատարանը դրանք հետազոտել է և իրավացիորեն հանգել հետևության, որ հայցվորի կողմից ներկայացված ապացույցները բավարար չեն հայցը բավարարելու համար: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործով ներկայացված չեն բավարար թույլատրելի և վերաբերելի ապացույցներ, որոնցով կարող էր հիմնավորվել հայցվոր Մխիթար Ասատրյանի կողմից փաստացի տիրապետմամբ ժառանգատու Մարգարիտ Ասատրյանի ժառանգությունն ընդունելու հանգամանքը: Հետևում է, որ ընդհանուր իրավասության դատարանն իրավացիորեն հանգել է այն հետևության, որ փաստացի տիրապետման հիմքով ժառանգատու Մարգարիտ Գրիգորի Ասատրյանի մահվանից հետո ներկայացման իրավունքով հայցվոր Մխիթար Ասատրյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և այդ հիմքով նրա սեփականության իրավունքը ժառանգական գույքի 1/2 մասի նկատմամբ ճանաչելու, ինչպես նաև Նարգիզ Ասատրյանին 11.10.2010 թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն ամբողջովին անվավեր ճանաչելու պահանջներն անհիմն են և ենթակա են մերժման»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գործին մասնակցող անձանց բացատրությունները, վկաների ցուցմունքները, Ալբերտ Դավթյանի հայտարարությունը, համատիրության կողմից տրված տեղեկանքները՝ որպես ապացույց, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել համակցության մեջ, որպիսի ապացույցները փաստական տվյալներ են պարունակում առ այն, որ Մխիթար Ասատրյանը ժառանգության բացման ժամանակ ժառանգական գույք հանդիսացող Երևանի Ջրաշեն 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 4 տանը բնակվել է և նշված հասցեից զինվորական ծառայության է գորակոչվել, ավելին վերջինս գորացրվելուց հետո վերադարձել է նշված տուն և շարունակել բնակվել այնտեղ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մխիթար Ասատրյանը փաստացի տիրապետման և կառավարման հիմքով ներկայացման իրավունքով ընդունել է ժառանգական գույքը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ 01.12.1993 թվականին տրված թիվ 7858 սեփակա-

նության վկայագիրը Մարգարիտ Գրիգորի Ասատրյանին պատկանելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջին, գտել է, որ «Մխիթար Ասատրյանի՝ իրավաբանական փաստը ճանաչելու պահանջն ըստ էության ուղղված է վերջինիս կողմից ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունելուն: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մերժմանը, արդեն իսկ փաստել է, որ ընդհանուր իրավասության դատարանի նման հետևությունն օրինական է և հիմնավոր: Նման պայմաններում անդրադառնալ ժառանգության իրավունքի վկայագրի պատկանելության հանգամանքը հիմնավորող իրավաբանական փաստի հաստատմանը, Վերաքննիչ դատարանը գտնում է անհիմն և առարկայագուրկ՝ նկատի ունենալով, որ բողոքաբերի վկայակոչած՝ 01.12.1993 թ. Մարգարիտ Ասատրյանին տրված թիվ 7858 սեփականության վկայագիրը փաստացի գոյություն չունի, քանի որ Նարգիզ Ասատրյանը ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն ընդունել է ժառանգական զանգվածի մեջ մտնող վիճելի գույքը: Ավելին, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի տարածքային ստորաբաժանման 19.10.2010 թ. թիվ 2753055 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն այն սեփականության իրավունքով գրանցվել է վերջինիս անվամբ»:

Հիմք ընդունելով վերոնշյալ պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգատու Մարգարիտ Գրիգորի Ասատրյանի ժառանգական գույքը փաստացի տիրապետման և կառավարման հիմքով Մխիթար Ասատրյանի կողմից ընդունելու պայմաններում ծագում է իրավաբանական նշանակություն ունեցող՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից Մարգարիտ Գեորգիի Ասատրյանի անվամբ 01.12.1993 թվականին տրված թիվ 7858 սեփականության վկայագիրը Մարգարիտ Գրիգորի Ասատրյանին պատկանելու փաստը հաստատելու Մխիթար Ասատրյանի պահանջի իրավունքը:

Ինչ վերաբերում է 19.10.2010 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականն անվավեր ճանաչելու մասին հայցային պահանջը կարճելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտած այն դիրքորոշումները, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականը վարչական ակտ չէ, իսկ վարչական ակտ է սեփականության իրավունքի գրանցամատյանի գրառումը,

գտել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ կետի հիմքով վարչական ակտ է հանդիսանում անշարժ գույքի գրանցամատյանի գրանցումը (գրառումը), իսկ սեփականության իրավունքի գրանցման վկայականը հանդիսանում է սեփականության իրավունքի գրանցման մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ և այդ փաստաթղթի անվավեր ճանաչելը չի հանգեցնում իրավական հետևանքների, քանի որ ուժի մեջ է մնում վարչական ակտը՝ անշարժ գույքի գրանցման մատյանի գրանցումը, հետևաբար, Դատարանն արդարացիորեն եկել է այն եզրահանգման, որ որպես հետևանք 19.10.2010 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2753055 վկայականն ամբողջովին անվավեր ճանաչելու պահանջի մասով գործը ենթակա է կարճման (տես՝ Սիսիանի քաղաքապետարանի հայցն ընդդեմ Շահեն Մարգարյանի, երրորդ անձ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Սիսիանի ստորաբաժանման, Կորյուն Օհանյանի՝ 2002 թ. օգոստոսի 26-ին կնքված պայմանագիրը լուծելու, Շահեն Մարգարյանի և Կորյուն Օհանյանի միջև 11.09.2002 թ. կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, ինչպես նաև Կորյուն Օհանյանի տրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1920(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը):

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.06.2012 թվականի որոշման՝ հայցը մերժելու մասով վճիռն անփոփոխ թողնելու մասը և գործն այդ մասով ուղարկել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջան-

ների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: Որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան
Դատավորներ՝ Է. Հայրիյան

Ս. Անտոնյան
Վ. Ավանեսյան
Ա. Բարսեղյան
Ս. Դրմեյան
Գ. Հակոբյան
Տ. Պետրոսյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2633/02/08
2012 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2633/02/08
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Վ. Ավանեսյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Ա. Բարսեղյանի
Ս. Դրմեյանի
Գ. Հակոբյանի
Է. Հայրիյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2012 թվականի դեկտեմբերի 25-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.09.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Քաղաքապետարանի ընդդեմ Մարի Զիբիլյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և

անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու, ինչպես նաև նախապես վճարված պետական տուրքը՝ 8.000 ՀՀ դրամը բռնագանձելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Քաղաքապետարանը պահանջել է անվավեր ճանաչել 02.02.2006 թվականին կնքված թիվ 293 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 14.02.2006 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը և հօգուտ Քաղաքապետարանի բռնագանձել հայց ներկայացնելու համար վճարված պետական տուրքը՝ 8.000 ՀՀ դրամը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 10.05.2012 թվականի վճռով գործի վարույթը կարճվել է՝ Մարի Զիրբիյանի մահից հետո վիճելի իրավահարաբերությամբ պայմանավորված իրավահաջորդությունը բացառվելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.09.2012 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.05.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 434-րդ և 1186-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ քաղաքացու մահից հետո իրավահաջորդությունը տեղի է ունենում ժառանգման կարգով, և

փոխանցվում են գույքային բովանդակություն ունեցող իրավունքներն ու պարտականությունները: Ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները՝ ալիմենտային պարտավորություններով իրավունքները և պարտականությունները, քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու իրավունքը, անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները, այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.09.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Մալաթիա-Սեբաստիա բաժնի 14.09.2011 թվականի գրությամբ հայտնվել է, որ հետախուզման արդյունքում պարզվել է, որ Մարի Չիբիլյանը մահացել է (հատոր 1, գ.թ. 81):

2) Կոմիտեի կողմից 14.02.2006 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Շամպայն գինիների գործարանի մոտ գտնվող շրջանցիկ թունել հասցեում գտնվող 300 քմ հողամասի նկատմամբ գրանցվել է Մարի Չիբիլյանի սեփականության իրավունքը՝ հիմքում դնելով 02.02.2006 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը (հատոր 1, գ.թ. 9-12):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի շրջանակներում ներկայացված վճռաբեկ բողոքի հիմնավորվածությունը պատճառաբանելու նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական խնդրին.

Արդյո՞ք առուվաճառքի պայմանագրի կողմ գնորդի մահից հետո նրա կողմից անշարժ գույքի վերաբերյալ կնքված առուվաճառքի պայմանագրի և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման վիճարկումը կարող է գնահատվել որպես անձնական, ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքի վիճարկում, որի դեպքում իրավահաջորդությունը բացառվում է:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, իսկ 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները, մասնավորապես, ալիմենտային պար-

տավորություններով իրավունքները և պարտականությունները, քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու իրավունքը, անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները, այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ժառանգության դեպքում տեղի է ունենում ընդհանուր իրավահաջորդություն, այսինքն՝ ժառանգին են փոխանցվում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավահաջորդության բացառման հետևյալ չորս դեպքերի.

1. ալիմենտային պարտավորություններով իրավունքների և պարտականությունների,

2. քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու իրավունքի,

3. անձնական ոչ գույքային իրավունքների և այլ ոչ նյութական բարիքների,

4. այն իրավունքների ու պարտականությունների, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

Ընդ որում, օրենսգրքի վերոնշյալ հոդվածում թվարկված դեպքերը սպառիչ են:

Դատարանը գործի վարույթի կարճման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «սույն գործով վիճարկվում է հատուցելի այն պայմանագիրը, որի կողմը մահացած է, հետևաբար պայմանագրի շուրջ ծագած վեճի առկայությամբ պայմանավորված պատասխանողի դեմ ներկայացված պահանջի մասով իրավահաջորդությունն ինքնին բացառվում է, քանի որ գործով ոչ թե վիճարկվում է պայմանագրի հիմքով ձեռք բերված պատասխանող կողմի իրավունքը, որը ժառանգաբար կարող է փոխանցվել իրավահաջորդությամբ (նման պահանջ առկա չէ), այլև առկա է պայմանագիրը վիճարկելու հայցային պահանջ՝ ուղղված կոնկրետ պայմանագրային կողմի դեմ, հայցվորի կարծիքով՝ կոնկրետ վերջինիս կողմից դրսևորված ոչ իրավաչափ վարքագծով պայմանավորված: Հետևաբար՝ այս մասով վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը, ու գործի վարույթը վերը նշված հոդվածի 4-րդ կետի պահանջով ենթակա է կարճման»:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ գործում առկա ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Մալաթիա-Մեբաստիա բաժնի կողմից 14.09.2011 թվականին տրված թիվ ԵՄ-11623/03 գրության համաձայն՝ հայտնվել է, որ պատասխանողի և նրա գույքի հետախուզման արդյունքում պարզվել է, որ Մարի Չիբիլյանը մահացել է: Պատասխանողին ուղարկված ծանուցումները նույնպես հետ են վերադարձվել ծրարի վրա «հասցեատերը մահացել է» նշումով: Գործում բացակայում է նաև առուվաճառքի պայմանագրով վաճառված՝ Երևանի Շամպայն գիինների գործարանի մոտ գտնվող շրջանցիկ թունել հասցեում գտնվող 300 քմ հողամասի նկատմամբ ժառանգություն ընդունելու վերաբերյալ ապացույցները, և գտել է, որ «Դատարանը ճիշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ կետը, քանի որ վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը՝ հաշվի առնելով, որ հայցադիմումի հիմքում ընկած և վիճարկվող պարտավորությունը պատասխանողի անձի հետ անխզելիորեն կապված պարտավորություն է»:

Հիմնվելով վերոգրյալի վրա և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 02.02.2006 թվականին կնքված թիվ 293 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի կնքման և դրա հիման վրա այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման արդյունքում գնորդի՝ Մարի Չիբիլյանի մոտ ծագել է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք՝ գույքային իրավունք, որը ներառվում է ժառանգատուի ժառանգական զանգվածում և օրենքով սահմանված կարգով փոխանցվում է ժառանգներին: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով անշարժ գույքի վերաբերյալ կնքված առուվաճառքի պայմանագրի և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցման անվավերության պահանջի ներկայացմամբ վիճարկվում է անձի սեփականության իրավունքը, որն անձնական, ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունք չէ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների այն պատճառաբանությունը, որ վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդություն, անհիմն է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.09.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան
Դատավորներ՝ Վ. Ավանեսյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Մ. Դրմեյան
Գ. Հակոբյան
Է. Հայրիյան
Տ. Պետրոսյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2472/02/08
2013 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2472/02/08
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Է. Հայրիյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Վ. Ավանեսյանի
Ա. Բարսեղյանի
Մ. Դրմեյանի
Գ. Հակոբյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սուսաննա Նեմչինովայի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.09.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Սուսաննա Նեմչինովայի հայցի ընդդեմ Կենտրոն նոտարական գրասենյակի նոտար Էմմա Շաբոյանի, Սուրեն Առաքելյանի՝ 30.05.2008 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սուսաննա Նեմչինովան պահանջել է անվավեր ճանաչել 30.05.2008 թվականին Սուրեն Առաքելյանին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 07.07.2009 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2009 թվականի որոշմամբ Սուսաննա Նեմչինովայի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 07.07.2009 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.12.2009 թվականի որոշմամբ վերադարձվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2009 թվականի որոշման դեմ Սուրեն Առաքելյանի բերած վճռաբեկ բողոքը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.12.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.04.2011 թվականի որոշմամբ Սուրեն Առաքելյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.12.2010 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Կ.Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 05.06.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.09.2012 թվականի որոշմամբ Սուսաննա Նեմչինովայի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 05.06.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սուսաննա Նեմչինովան:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 8-րդ, 14-րդ, 163-րդ, 1186-րդ, 1225-րդ, 1227-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 53-րդ, 130-րդ, 132-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, որոնցով հիմնավորվում է, որ ժառանգատու Ջեմմա Մեժլումյանի մահից հետո օրենքով սահմանված ժամկետում և կարգով ժառանգության բացման վայրի նոտարին Սուսաննա Նեմչինովան հանձնել է դիմում ժառանգական գույքի՝ Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար:

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ ժառանգատու Ջեմմա Մեժլումյանի մահից հետո օրենքով սահմանված ժամկետում և կարգով Սուրեն Առաքելյանը ժառանգական գույքի՝ Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի նկատմամբ չի ընդունել ժառանգությունը, իսկ Սուրեն Առաքելյանի անունից Հովհաննես Ղազարյանը Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանին 09.04.2007 թվականին հանձնել է դիմում ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար՝ առանց Սուրեն Առաքելյանի կողմից լիազորագիր տրամադրելու, մինչդեռ Սուրեն Առաքելյանը Հովհաննես Ղազարյանին իր անունից նոտարական գրասենյակ դիմելու նպատակով լիազորագիր տրամադրել է միայն 27.08.2007 թվականին:

Ավելին, Վերաքննիչ դատարանը, անտեսելով գործում առկա ապացույցները և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Սուսաննա Նեմչինովային Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի 1/3-րդ բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասը բեկանվել է և այդ մասով Սուսաննա Նեմչինովայի դիմումը թողնվել է առանց քննության, գտել է, որ Սուրեն Առաքելյանին տրամադրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրով չի խախտվել Սուսաննա Նեմչինովայի որևէ իրավունք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.09.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել և «օրինական ուժ տալ Թիվ ԵԿԴ/2472/02/08 քաղաքացիական գործով 07.12.2010 թվականին կայացված դատական ակտին»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Սուրեն Առաքելյանը և Սուսաննա Նեմչինովան Ջեմմա Մեծլումյանի զավակներն են (հատոր 1-ին, գ.թ.7,14-16,63,70):

2. ՀՀ Ազգային արխիվի 01.10.2007 թվականի թիվ 01-20/1802 արխիվային տեղեկանքի համաձայն՝ Սպանդարյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 11.11.1993 թվականի թիվ 45/17 որոշմամբ Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի սեփականաշնորհմանը մասնակցել են Ջեմմա Սուրենի Մեջլումյանը, Մարգո Ալեքսանի Առաքելյանը, Էմմա Առաքելի Առաքելյանը, Մարգարիտա Յուրիի Առաքելյանը, Առաքել Գարեգինի Առաքելյանը և Սուրեն Առաքելի Առաքելյանը (հատոր 1-ին, գ.թ. 67,68):

3. 08.12.1993 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 6434 վկայագրի համաձայն՝ Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի սեփականատերը Ջեմմա Մեջլումյանն է, որպիսի իրավունքի գրանցման հիմքը Սպանդարյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 11.11.1993 թվականի թիվ 45/17 որոշումն է (հատոր 1-ին, գ.թ. 71):

4. 21.02.1996 թվականի կտակի համաձայն՝ Ջեմմա Մեջլումյանն իրեն պատկանող Երևանի Տեր-Գաբրիելյան (Ե.Կողբացու) փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանը կտակել է Սուրեն Առաքելյանին (հատոր 1-ին, գ.թ.11,65):

5. 30.08.2007 թվականի թիվ 566185 վկայականի համաձայն՝ Ջեմմա Մեջլումյանը մահացել է 04.11.2006 թվականին (հատոր 1-ին, գ.թ.60):

6. Ժառանգական գործերի գրանցման մատյանի պատճենի համաձայն՝ 09.04.2007 թվականին Սուսաննա Նեմչինովան դիմել է Կենտրոն նոտարական տարածք ժառանգատու Ջեմմա Մեջլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու համար (հատոր 3-րդ, գ.թ.87-92):

7. Սուրեն Առաքելյանի անունից Հովհաննես Ղազարյանը Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանին հասցեագրված 09.04.2007 թվականի դիմումով խնդրել է 04.11.2006 թվականին մահացած ժառանգատու Ջեմմա Մեժլումյանի ժառանգական գույքի նկատմամբ տրամադրել ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր (հատոր 1-ին, գ.թ.56):

8. 27.08.2007 թվականի լիազորագրով Սուրեն Առաքելյանը լիազորել է Հովհաննես Ղազարյանին իր անունից դիմելու նոտարական գրասենյակ ժառանգատու Ջեմմա Մեժլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ստանալու «ժառանգության իրավունքի վկայագիր» (հատոր 1-ին, գ.թ.59):

9. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ 11.04.2008 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով բավարարվել է Սուրեն Առաքելյանի դիմումը՝ հաստատվել են իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստերը, որ «15.12.1994թ-ին մահացած Մարգո Ալեքսանի Առաքելյանը հանդիսանում է 19.06.1960թ-ին ծնված Սուրեն Առաքելի Առաքելյանի հարազատ տատը: Ջեմմա Սուրենի Մեջլումյանի անվամբ տրված Երևանի Ե. Կողբացու փողոցի թիվ 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի սեփականաշնորհման վերաբերյալ Երևանի Սպանդարյանի շրջխորհրդի գործկոմի 11.11.1993թ. թիվ 45/17 որոշումը, այդ որոշման հիման վրա 08.12.1993թ. տրված սեփականության իրավունքի վկայագիրը և ՀՀ ազգային արխիվի Երևանի քաղաքային մասնաճյուղի կողմից 01.10.2007թ. տրված թիվ 01-20/1802 տեղեկանքը պատկանում են 25.08.1926թ. ծնված և 04.11.2006թ. մահացած Ջեմմա Սուրենի Մեժլումյանին» (հատոր 1-ին, գ.թ.61-62):

10. 30.05.2008 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 5252 վկայագրի համաձայն՝ 04.11.2006 թվականին մահացած ժառանգատու Ջեմմա Մեժլումյանի ժառանգական գույքի՝ Երևանի Ե. Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի 1/6 բաժնի նկատմամբ ըստ կտակի ժառանգ է ճանաչվել Սուրեն Առաքելյանը (հատոր 1-ին, գ.թ.12):

11. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.04.2011 թվականի թիվ 08-1948 որոշմամբ բեկանվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 28.12.2007 թվականի թիվ 2-5121 վճռի՝ Մուսաննա Նեմչինովային (Առաքելյանին) Երևանի Ե. Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի 1/3 բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասը և այդ մասով

Մուսաննա Նեմչինովայի դիմումը թողնվել է առանց քննության, իսկ վճռի՝ իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստերի հաստատումը, որ «Առաքել Գարեգինի Առաքելյանը և Մարգո Ալեքսանի Առաքելյանը հարազատ մայր և որդի են: Առաքել Գարեգինի Առաքելյանը Մուսաննա Առաքելի Առաքելյանի (Նեմչինովայի) հարազատ հայրն է, իսկ Մարգո Ալեքսանի Առաքելյանը հարազատ տատիկն է: Մոսկվա քաղաքի Վիխինովի շրջանի ՆԳ բաժնի 772-044-ի կողմից տրված անձնագրում, 1-ՁԺ 132451 տեղեկանքում, Մոսկվա քաղաքի 20.03.07թ. թիվ 6624 նոտարական գրասենյակին ուղարկված դիմումում, Մոսկվա քաղաքից 09.10.07թ. ուղարկված թիվ 2-Լ-4977 լիազորագրում, Մոսկվա քաղաքի Վիխինովի շրջանի «Հարավ-արևմտյան վարչական տարածքի» անձնագրավարի 28.02.07թ. ա/համարի տեղեկանքում գրված Նեմչինովա Մուսաննա Առաքելի անվանումներով փաստաթղթերը պատկանում են նույն իրեն՝ Մուսաննա Առաքելի Առաքելյանին» մասերը թողնվել է օրինական ուժի մեջ (հատոր 1-ին, գ.թ.14-16, հատոր 5-րդ, գ.թ.52-54):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է ժառանգությունը ներկայացուցչի միջոցով ընդունելու իրավական կարգավորման առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը

և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, իսկ 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ ժառանգը դիմումը նոտարին չի հանձնում անձամբ, ապա նման դիմումի տակ ժառանգի ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը կամ նոտարական գործողություններ կատարելու համար լիազորված պաշտոնատար անձը: Ժառանգության ընդունումը ներկայացուցչի միջոցով հնարավոր է, եթե լիազորագրում հատուկ նախատեսված է այն ընդունելու լիազորությունը:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ժառանգության ընդունումն իրականացվում է երկու եղանակով՝ ըստ կտակի և ըստ օրենքի: Ընդ որում, ժառանգման երկու եղանակի դեպքում էլ ժառանգի կողմից ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Հատկանշական է, որ ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի, այդ թվում նաև՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգության ընդունման համար օրենսդիրը սահմանել է վեցամսյա ժամկետ, որը հաշվվում է ժառանգության բացման, այն է՝ ժառանգատուի մահվան օրվանից:

Օրենսդիրը նախատեսել է նաև ժառանգի կողմից դիմումը նոտարին անձամբ չհանձնելու դեպքում կատարել հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

- դիմումի տակ ժառանգի ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը, կամ
- նոտարական գործողություններ կատարելու համար լիազորված պաշտոնատար անձը:

Նշված պայմաններից բացի օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգին ժառանգությունն ընդունել ներկայացուցչի միջոցով, և այն էլ

մեկ պայմանով, որ լիազորագրում հատուկ նախատեսված լինի ժառանգությունն ընդունելու լիազորությունը:

Փաստորեն, օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը, հետևաբար ժառանգի կողմից ժառանգությունը ներկայացուցչի միջոցով ընդունելու դեպքում լիազորագիրը ևս պետք է ժառանգի կողմից ներկայացուցչին տրամադրված լինի ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված վեցամսյա ժամկետում:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի և 290-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով ժառանգության ընդունումը դիտվում է միակողմ գործարք՝ վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ այլ անձի անունից գործելու լիազորության բացակայությամբ կամ նման լիազորությունների սահմանազանցմամբ գործարքը կնքված է համարվում այն կնքած անձի անունից և ի շահ նրա, եթե մյուս անձը (ներկայացվողը) հետագայում ուղղակի հավանություն չի տալիս տվյալ գործարքին:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական կարգավորումը և հաշվի առնելով ժառանգական իրավահարաբերությունների առանձնահատկությունը՝ ՎՃռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ժառանգի անունից լիազորության բացակայությամբ կամ նման լիազորությունների սահմանազանցմամբ (օրինակ՝ լիազորված է ընդունելու միայն ըստ օրենքի ժառանգությունը, բայց ընդունել է ըստ կտակի ժառանգությունը) ներկայացուցչի կողմից գործելու դեպքում վերջինիս գործողությունների արդյունքում իրավական հետևանքներ չեն առաջանում ներկայացվողի՝ ժառանգի համար: Այդպիսի հետևանքներ չեն առաջանում նաև լիազորությունների բացակայությամբ դիմում ներկայացրած անձի նկատմամբ: Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված կանոնների կիրառմանը, ապա ներկայացուցչի գործողություններին ապագայում հավանություն տալը կարող է տեղի ունենալ միայն ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված վեցամսյա ժամկետի ընթացքում, ինչը հավասարազոր է ժառանգի կողմից անձամբ ժառանգությունն ընդունելուն,

այնքանով որքանով նման հավանություն տալու համար ենթակա է կիրառման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 04.11.2006 թվականին մահացած ժառանգատու Ջեմմա Մեժլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու նպատակով Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանին 09.04.2007 թվականի դիմումը հանձնել է Սուրեն Առաքելյանի անունից Հովհաննես Ղազարյանը: Մինչդեռ, Սուրեն Առաքելյանը Հովհաննես Ղազարյանին իր անունից նոտարական գրասենյակ դիմելու և ժառանգատու Ջեմմա Մեժլումյանի ժառանգական գույքի նկատմամբ «ժառանգության իրավունքի վկայագիր» ստանալու համար լիազորագիր տրամադրել է 27.08.2007 թվականին: Այսինքն՝ Սուրեն Առաքելյանը Հովհաննես Ղազարյանին իր անունից նոտարական գրասենյակ դիմելու համար լիազորագիրը տրամադրել է ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված վեցամսյա ժամկետի ավարտից հետո:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին, 1226-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերը, Սուսաննա Նեմչինովայի վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ «Տվյալ դեպքում, Սուրեն Առաքելյանի անունից հանդես եկող անձի կողմից նրա անունից 09.04.2007թ. դիմում է ներկայացվել Կենտրոն նոտարական գրասենյակ՝ ըստ կտակի ժառանգության վկայագիր տալու պահանջով, որը պատշաճ վավերացվել է նույն գրասենյակի նոտար Էմմա Շաբոյանի կնիքով: Դիմումի հիման վրա նոտարի կողմից 30.05.2008թ. տրվել է ըստ կտակի ժառանգության վկայագիր: Բացի դա, պետք է հաշվի առնել, որ ի վերջո Սուրեն Առաքելյանը կատարել է այն անհրաժեշտ և հստակ գործողությունները, որոնք ուղղված են եղել նրա կողմից ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն՝ Ջեմմա Մեժլումյանի մահվան պահից վեց ամսվա ընթացքում և նոտարի կողմից այդպիսիք չեն մերժվել և ընդունվել են ու օրենքով սահմանված կարգով դրանց ընթացք է տրվել, որպիսի հանգամանքների առկայության պայմաններում վիճելի վկայագիրն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են»:

Մինչդեռ, հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել համակցության մեջ, որպիսի ապա-

ցույցները փաստական տվյալներ են պարունակում առ այն, որ 04.11.2006 թվականին մահացած ժառանգատու Ջեմմա Մեժլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու համար Հովհաննես Ղազարյանի կողմից 09.04.2007 թվականին Սուրեն Առաքելյանի անունից դիմումը նոտարին հանձնվել է ժառանգի անունից լիազորության բացակայությամբ: Ժառանգը Հովհաննես Ղազարյանի գործողություններին ուղղակի հավանություն է տվել 27.08.2007 թվականին՝ տրամադրելով լիազորագիր նոտարական գրասենյակ դիմելու և ժառանգատու Ջեմմա Մեժլումյանի ժառանգական գույքի նկատմամբ «ժառանգության իրավունքի վկայագիր» ստանալու համար: Այսինքն՝ Սուրեն Առաքելյանի կողմից Հովհաննես Ղազարյանի գործողություններին ուղղակի հավանություն տրվել է ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված վեցամսյա ժամկետի ավարտից հետո:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սուրեն Առաքելյանին 30.05.2008 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 5252 վկայագիրը տրամադվել է վերը նշված օրենքների պահանջների խախտմամբ, հետևաբար Սուրեն Առաքելյանը ժառանգատու Ջեմմա Մեժլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգությունը չի ընդունել:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ «Վերաքննիչ դատարանի 13.04.2011թ. թիվ 08-1948 որոշմամբ մասնակիորեն բավարարվել է Սուրեն Առաքելյանի վերաքննիչ բողոքը և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 28.12.2007թ. թիվ 2-5121 վճիռը՝ «Մուսաննա Առաքելի Նեմչինովային (Առաքելյանին) ճանաչել Երևանի Ե. Կողբացու 42 շենքի թիվ 105 բնակարանի 1/3 բաժնեմասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ» մասով բեկանվել է և դիմումն այդ մասով թողնվել է առանց քննության: Հայցվորը 2008թ. սեպտեմբերին դիմել է Դատարան Սուրեն Առաքելյանին տրված վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջով, և Դատարան դիմելու պահի դրությամբ նա նշված դատական ակտով ճանաչվել է ժառանգությունն ընդունած ժառանգ, որի հիմքով և վիճելի բնակարանի համասեփականատեր: Ներկայիս իրավիճակում այն դատական ակտը, որի հիման վրա հայցվորը դարձել էր վիճելի բնակարանի համասեփականատեր և ճանաչվել էր ժառանգությունն ընդունած ժառանգ ու ձեռք էր բերել վիճելի վկայագիրը վիճարկելու հնարավորություն, բեկանվել է, և այդ մասով հայցվորի դիմումը թողնվել է

առանց քննության: Այսինքն՝ պետք է արձանագրել, որ վերացել են այն հիմքերը, որոնց առկայությամբ հայցվորը կարող էր վիճարկել պատասխանողին տրված վկայագիրը, այն է՝ հայցվորն այլևս վիճելի բնակարանի սեփականատեր չէ, ինչպես նաև դրա վերաբերյալ ժառանգության մասնակից չէ, որպիսի պայմաններում վիճելի վկայագրի առկայությամբ նրա որևէ իրավունք չի խախտվում, որի կապակցությամբ նա կարող էր դիմել դատական պաշտպանության՝ այն անվավեր ճանաչելու պահանջով»:

Հիմք ընդունելով վերոնշյալ պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սուրեն Առաքելյանի կողմից ժառանգատու Ջեմմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգությունը չընդունելու պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի ուժով ծագում է այլ ժառանգի՝ տվյալ դեպքում Սուսաննա Առաքելի Նեմչինովայի կողմից ժառանգությունն ընդունելու իրավունքը: Ընդ որում, 09.04.2007 թվականին Սուսաննա Նեմչինովան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դիմում է հանձնել Կենտրոն նոտարական տարածք ժառանգատու Ջեմմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու համար:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ պարագայում Սուսաննա Նեմչինովան շահագրգիռ անձ է, ով իրավասու է վիճարկելու ժառանգատու Ջեմմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ Սուրեն Առաքելյանին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն օրենքով սահմանված կարգով տրամադրելու հիմքով, և սույն հայցապահանջը ներկայացնելու իրավունքի ծագումը պայմանավորված չէ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.04.2011 թվականի թիվ 08-1948 որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ասյանի դատարանի 28.12.2007 թվականի թիվ 2-5121 վճռի՝ Սուսաննա Նեմչինովայի (Առաքելյանին) Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի 1/3 բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասը բեկանելու և այդ մասով Սուսաննա Նեմչինովայի դիմումն առանց քննության թողնելու հանգամանքով:

Նշված հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել են ժառանգական գույքն օրենքով սահմանված կարգով ժառանգի կողմից ժառանգելու ինստիտուտը կարգավորող նորմերի պահանջները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.09.2012 թվականի որոշումը և այն փոփոխել:

Սուսաննա Նեմչինովայի հայրը բավարարել՝ անվավեր ճանաչել 30.05.2008 թվականին Սուրեն Առաքելյանին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը:

2. Սուրեն Առաքելյանից հոգուտ Սուսաննա Նեմչինովայի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար վճարված պետական տուրք, 10.000 ՀՀ դրամ՝ 05.08.2009 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքի, 10.000 ՀՀ դրամ՝ 04.07.2012 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրք և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան
Դատավորներ՝ Է. Հայրիյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Վ. Ավանեսյան
Ա. Բարսեղյան
Մ. Դրմեյան
Գ. Հակոբյան
Տ. Պետրոսյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/0554/02/11
2013 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/0554/02/11
Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Ս. Դրմեյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Վ. Ավանեսյանի
Ա. Բարսեղյանի
Է. Հայրիյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2013 թվականի հուլիսի 4-ին

դրնբաց դատական նիստում քննելով Ռիմա Պողոսյանի և Վլադիմիր Խաչատրյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.12.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՕՖեյյա Խաչատրյանի ընդդեմ ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, Սերոբ և Հրանտ Խաչատրյանների, Ռիմա Պողոսյանի և երրորդ անձ Վլադիմիր Խաչատրյանի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, նվիրատվության պայմանագրերը և

դրանց հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները, առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու ու ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Օֆելյա Խաչատրյանը պահանջել է անվավեր ճանաչել 12.11.2003 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, 03.11.2009 թվականին Վարդան և Վլադիմիր Խաչատրյանների միջև Երևանի Ա. Տիգրանյան փողոցի թիվ 27 տան 1/2 մասի վերաբերյալ կնքված անշարժ գույքի մասի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, 19.11.2010 թվականի անշարժ գույքի բաժնի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, 06.06.2011 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, իրեն ճանաչել Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան և հողի՝ իրեն հասանելիք 1/3 բաժնի նկատմամբ իր հոր՝ Սերոբ Խաչատրյանի ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ս. Արամյան) (այսուհետ՝ Դատարան) 02.08.2012 թվականի վճռով հայրը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.12.2012 թվականի որոշմամբ Օֆելյա Խաչատրյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 02.08.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Ռիմա Պողոսյանը և Վլադիմիր Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.1. Ռիմա Պողոսյանի վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ և 1226-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ հոդվածները, 219-րդ հոդվածի 1-ին կետը և 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն ու անտեսել է, որ ՕՖեյյա Խաչատրյանը որևէ կերպ չի հիմնավորել այն փաստերը, որ իր կողմից հիշատակված գույքը պատկանել է Մերոբ Խաչատրյանին, և որ այդ գույքը նա ստացել է Մերոբ Խաչատրյանի մահվանից հետո: Դեռ ավելին, գործով որպես վկա հարցաքննված Գագիկ Գևորգյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ՕՖեյյա Խաչատրյանը հորից գույքը ստացել է նրա կենդանության օրոք:

Վերաքննիչ դատարանը, չիրականացնելով գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, անհիմն եզրակացություն է արել այն մասին, որ Դատարանը պատշաճ չի գնահատել գործով հետազոտված ապացույցները:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ ժառանգությունները բացվել են մինչև 01.01.1999 թվականը, ժառանգներն այն ընդունել են, չի կիրառել «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, որի արդյունքում անտեսել է նաև, որ մինչև 01.01.1999 թվականը գործող քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված չի եղել, որ ժառանգության մի մասի ընդունմամբ ժառանգը ճանաչվում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Վերաքննիչ դատարանը, նշելով, որ ՕՖեյյա Խաչատրյանը հանդիսանում է ժառանգությունն ընդունած ժառանգ, չի նշել այն ապա-

ցույցը՝ ցուցմունքը, որը կարող էր նման հետևություն անելու հիմք հանդիսանալ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.12.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 02.08.2012 թվականի վճռին:

2.2. Վլադիմիր Խաչատրյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ և 1226-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել իր իսկ կողմից կայացված որոշումը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հենց վկաների ցուցմունքներով հերքվել է Օֆեյա Խաչատրյանի վկայակոչյալ այն փաստը, որ հոր մահվանից հետո ընդունել է ժառանգական գույքի մի մասը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.12.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 02.08.2012 թվականի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Ա. Տիգրանյան փողոցի թիվ 27 տան 1/2 բաժինը պատկանել է Սերոբ Խաչատրյանին, իսկ մյուս 1/2 բաժինը՝ նրա եղբորը՝ Ասատուր Խաչատրյանին (հատոր 1-ին, գ.թ. 7, 58-60):

2) 03.06.1967 թվականին մահացել է Ասատուր Խաչատրյանը, իսկ 22.11.1979 թվականին՝ Սերոբ Խաչատրյանը (հատոր 1-ին, գ.թ. 7, 58-60):

3) Սերոբ Խաչատրյանի մահվանից հետո՝ 12.11.2003 թվականին, Երևանի Ա. Տիգրանյան փողոցի թիվ 27 տան 1/2 բաժնի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տրվել նրա կնոջը՝ Ռաիսա Խաչատրյանին և որդիներին՝ Սուրեն ու Վարդան Խաչատրյաններին (հատոր 1-ին, գ.թ. 7):

4) 24.03.2008 թվականին մահացել է Սուրեն Խաչատրյանը, իսկ 05.04.2008 թվականին՝ Ռաիսա Խաչատրյանը: Սուրեն Խաչատրյանի և Ռաիսա Խաչատրյանի մահվանից հետո՝ 14.10.2008 թվականին, Երևանի Ա. Տիգրանյան փողոցի թիվ 27 տան 1/6-ական բաժինների նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր են տրվել Վարդան Խաչատրյանին (հատոր 1-ին, գ.թ. 56, 57):

5) Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 20.11.2008 թվականի վճռով բավարարվել է Վարդան Խաչատրյանի դիմումը՝ հաստատվել են իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստերը, որ Վարդան Խաչատրյանը հանդիսանում է 03.06.1967 թվականին մահացած Ասատուր Խաչատրյանի հարազատ եղբոր որդին, և որ Վարդան Խաչատրյանն ընդունել է Ասատուր Խաչատրյանի ժառանգությունը (հատոր 1-ին, գ.թ. 58-60):

6) Երևանի Ա. Տիգրանյան փողոցի թիվ 27 տան նկատմամբ գրանցվել է Վարդան Խաչատրյանի սեփականության իրավունքը, և 24.12.2008 թվականին նրան տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական (հատոր 1-ին, գ.թ. 8,9):

7) 03.11.2009 թվականին Վարդան և Վլադիմիր Խաչատրյանների միջև կնքվել է անշարժ գույքի մասի նվիրատվության պայմանագիր, որի համաձայն՝ Վարդան Խաչատրյանը Վլադիմիր Խաչատրյանին է նվիրել Երևանի Ա. Տիգրանյան փողոցի թիվ 27 տան 1/2 բաժինը (հատոր 1-ին, գ.թ. 10):

8) 19.11.2010 թվականին Վարդան Խաչատրյանի (մի կողմից) և Սերոբ ու Հրանտ Խաչատրյանների (մյուս կողմից) միջև կնքվել է անշարժ գույքի բաժնի նվիրատվության պայմանագիր, որի համաձայն՝ Վարդան Խաչատրյանն իր որդիներին՝ Սերոբ և Հրանտ Խաչատրյաններին է նվիրել Երևանի Ա. Տիգրանյան փողոցի թիվ 27 տան 1/2 բաժինը: Երևանի Ա. Տիգրանյան փողոցի թիվ 27 տան 1/2 բաժնի նկատմամբ գրանցվել է Վլադիմիր Խաչատրյանի սեփականության իրավունքը, իսկ նույն տան 1/4-ական բաժինների նկատմամբ՝ Սերոբ և Հրանտ Խաչատրյանների սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ. 61):

9) 06.06.2011 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի հիմքով Երևանի Ա. Տիգրանյան փողոցի թիվ 27 տան նկատմամբ գրանցվել է Ռիմա Պողոսյանի սեփականության իրավունքը, և 17.06.2011 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական (հատոր 1-ին, գ.թ. 102-105):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն, որ Ռիմա Պողոսյանի և Վլադիմիր Խաչատրյանի վճռաբեկ բողոքները նույնաբովանդակ են, չի անդրադառնում դրանցից յուրաքանչյուրին առանձին և արձանագրում է, որ սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումները հավասարապես վերաբերում են երկու բողոքների հիմքերին և հիմնավորումներին:

Սույն բողոքներով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված են հետևյալ իրավական խնդիրները.

ա) մինչև 1999 թվականի հունվարի մեկը բացված ժառանգության դեպքում նշված հարաբերությունների նկատմամբ կիրառելի օրենսդրությունը,

բ) ժառանգական զանգվածում ներառված գույքի մի մասի փաստացի տիրապետման դեպքում ժառանգության ընդունումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախ և առաջ անհրաժեշտ է պատասխանել բարձրացված առաջին հարցին, քանի որ ժառանգության ընդունման հարցերը տարբեր կերպ են կարգավորված գործող և նախկին քաղաքացիական օրենսգրքերով:

ա) «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի տասնմեկերորդ բաժնի նորմերը կիրառվում են նաև այն ժառանգությունների նկատմամբ, որոնք բացվել են մինչև օրենսգիրքը գործողության մեջ դնելը, սակայն չեն ընդունվել ժառանգներից ոչ մեկի

կողմից և ժառանգման իրավունքով պետության կամ համայնքի սեփականությունը չեն դարձել մինչև 1999 թվականի հունվարի 1-ը:

ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժինը վերաբերում է ժառանգման իրավունքին և կարգավորում է ժառանգման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ ժառանգության ընդունումը:

Որպեսզի կիրառելի լինեն ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժնի նորմերը սույն գործով վիճելի իրավահարաբերության նկատմամբ, Օրենքը նախատեսում է մի քանի պայման: Նախ՝ ժառանգությունը պետք է բացված լինի մինչև ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի գործողության մեջ դնելը: Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ է դրվել 1999 թվականի հունվարի 1-ից:

Երկրորդ՝ ժառանգությունը չպետք է ընդունված լինի որևէ մեկի կողմից: Այսինքն պետք է բացակայի ժառանգական զանգվածում ներառված գույքի՝ իրավահաջորդության կարգով անցումը այլ անձանց՝ ժառանգներին:

Երրորդ՝ ժառանգությունը որևէ մեկի կողմից ընդունված չլինելու դեպքում այն չպետք է դարձած լինի պետության կամ համայնքի սեփականությունը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ երկրորդ և երրորդ պայմանները չպետք է տարանջատել, քանի որ դրանք գործում են միաժամանակ՝ հաշվի առնելով այն, որ ժառանգությունը չընդունվելու դեպքում այն դառնում է պետության կամ համայնքի սեփականությունը: Ընդ որում, այդ պայմանները պետք է առկա լինեն մինչև 1999 թվականի հունվարի մեկը:

Նշված իրավակարգավորումից հետևում է, որ նախկին՝ ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգիրքը ժառանգման հարաբերությունների նկատմամբ կարող է կիրառվել, եթե ժառանգությունը բացվել է մինչև 1999 թվականի հունվարի 1-ը, և բացակայում են վերոնշյալ պայմանները:

Սույն գործով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառվող օրենսդրության հարցը որոշելիս Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ստուգել վերոգրյալ պայմանների՝ սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելիությունը:

Նշված հարցի քննարկման տեսանկյունից կարևորվում են հետևյալ փաստերը. Սերոբ Խաչատրյանը մահացել է 22.11.1979 թվականին: Սերոբ Խաչատրյանի մահվանից հետո՝ 12.11.2003 թվականին, Երևանի Ա. Տիգրանյան փողոցի թիվ 27 տան 1/2 բաժնի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տրվել նրա կնոջը՝ Ռաիսա Խաչատրյանին և որդիներին՝ Սուրեն ու Վարդան Խաչատրյաններին:

Օֆելյա Խաչատրյանի պնդմամբ իր հոր՝ Սերոբ Խաչատրյանի մահից հետո իր կողմից ժառանգությունն ընդունվել է փաստացի տիրապետմամբ՝ գրադարանը և վզնոցը ժառանգատուի մահվանից հետո տիրապետելով:

Վերոնշյալից հետևում է, որ Օֆելյա Խաչատրյանի կողմից ժառանգության հավանական ընդունումը տեղի է ունեցել ժառանգատուի՝ Սերոբ Խաչատրյանի մահից հետո՝ մինչև ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի գործողության մեջ դրվելը: Նշված եզրահանգումը կատարելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն, որ ինչպես 1964 թվականի, այնպես էլ 1998 թվականի քաղաքացիական օրենսգրքերը նախատեսում են ժառանգության ընդունման վեցամսյա ժամկետ ժառանգության բացման պահից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշվածը բավարար է հանգելու հետևության, որ Օֆելյա Խաչատրյանի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունելու հարցը լուծելիս կիրառելի է ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքը, քանի որ բացակայում են Օրենքի 18-րդ հոդվածում ամրագրված պայմանները:

Ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը կիրառել են ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի դրույթները՝ այդպիսով թույլ տալով նյութական իրավունքի նորմի խախտում: Հետևաբար Վճռաբեկ դատարանին մնում է պարզել, թե արդյոք նման խախտումը հանգեցրել է գործի սխալ լուծման:

բ) Օֆելյա Խաչատրյանի պնդմամբ ինքը հոր՝ Սերոբ Խաչատրյանի մահից հետո տիրապետել է վերջինիս գրադարանը և վզնոցը, հետևաբար որպես ժառանգության մի մասի փաստացի տիրապետմամբ ընդունում, համարվում է իրեն հասանելիք ժառանգությունն ընդունած ժառանգ:

ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է ընդունի այն: Չի թույլատրվում ժառանգության ընդունումը պայմանով կամ վերապահումներով:

Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին:

Այս հոդվածում նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով պրակտիկայում նշված հոդվածի կիրառման և մեկնաբանման միասնականությունն ապահովելու անհրաժեշտությունը, արձանագրում է, որ դատարանները ժառանգման հարաբերությունների հետ կապված այնպիսի վեճեր լուծելիս, որոնց դեպքում կիրառման է ենթակա հիշատակված հոդվածը, պետք է հաշվի առնեն այն, որ ժառանգման հարաբերությունները կանոնակարգող դրույթները նպատակ են հետապնդում պահպանել անձանց սեփականության իրավունքը, որոնց օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոխանցվում է մահացած անձի գույքը (ժառանգությունը): Այս առումով ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածը ուղղակիորեն չի նախատեսում դրույթ, որն ամրագրված է ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ կետում, այն է՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Այդուհանդերձ ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի հիշատակված դրույթը ուղղակիորեն ամրագրում է «ժառանգության ընդունում», «ժառանգական գույք» եզրույթները, առանց տարանջատելու ամբողջ ժառանգության կամ դրա մասի ընդունումը: Հետևաբար, նույնիսկ այն դեպքում, երբ ժառանգի կողմից ընդունված գույքը կազմել է ժառանգական զանգվածի միայն մի մասը, այն չի դադարում ժառանգական գույք լինելուց, ժառանգը պետք է համարվի ժառանգությունն ընդունած:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգության ընդունման ընդհանուր ժամկետների վերաբերյալ նախկին և գործող օրենսդրական կարգավորումները նույնն են՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Վճռաբեկ դատարանը Հարություն Հաբեշյանն ընդդեմ Ռախսա Հաբեշյանի և մյուսների գործով անդրադարձել է ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածով նախատեսված ժառանգության ընդունման ժամկետի հաշվարկի և այդ ժամկետը բաց թողնելու

իրավական հետևանքների հարցին: Մասնավորապես, նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնակարգմամբ ժառանգության բացման ժամանակ էր համարվում ժառանգատուի մահվան օրը, իսկ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված էր համարվում այն դեպքում, երբ նա փաստորեն սկսում էր տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, որպիսի գործողությունները պետք է կատարվեին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Այսինքն՝ վեցամսյա ժամկետը բաց թողնելու հետևանքով անձը կորցնում էր ժառանգությունն ընդունելու հնարավորությունը և չէր կարող համարվել այն ընդունած (տե՛ս Հարություն Հաբեշյանն ընդդեմ Ռաիսա Հաբեշյանի և մյուսների թիվ ԵՄԴ/0235/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Կիրառելով վերոնշյալ մեկնաբանությունները սույն գործի փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի կիրառմամբ Օֆելյա Խաչատրյանին Սերոբ Խաչատրյանի ժառանգությունն ընդունած ժառանգ դիտելու համար անհրաժեշտ է հիմնավորել, որ Սերոբ Խաչատրյանի մահից հետո վեց ամսվա ընթացքում Օֆելյա Խաչատրյանը տիրապետել է վերջինիս գրադարանը և վզնոցը:

Դատարանը, գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, այդ թվում նաև վկաների ցուցմունքները, մերժել է Երևանի Ա. Տիգրանյան փողոցի թիվ 27 տան և հողի՝ իրեն հասանելիք 1/3 բաժնի նկատմամբ Սերոբ Խաչատրյանի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին Օֆելյա Խաչատրյանի պահանջը՝ պատճառաբանելով, որ դատաքննությամբ որևէ կերպ չհիմնավորվեց այն փաստը, որ նշված գրքերը կամ վզնոցը Օֆելյա Խաչատրյանը ստացել է ժառանգատուի մահվանից հետո և օրենքով նախատեսված վեցամսյա ժամկետում փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը: Դատարանը նշել է նաև, որ ըստ վկա Գագիկ Գևորգյանի ցուցմունքի՝ Օֆելյա Խաչատրյանը գրադարանը և ոսկին ստացել է հորից նրա կենդանության ժամանակ, հակասական է նաև Օֆելյա Խաչատրյանի և վկաների կողմից նշված վզնոցի տեսակը. Օֆելյա Խաչատրյանը նշել է, որ ստացել է «Յանտար» բնական քարից վզնոց, իսկ վկաներ Հարություն և Գագիկ Գևորգյանները նշել են «ոսկյա շղթա», ինչպես նաև չի ներկայացվել Օֆելյա Խաչատրյանի կողմից ստացված որևէ գիրք՝ իր տարբերակիչ նշանով, շտամպ, գրառում, ստորագրություն և այլն, որ դա պատկանել է Սերոբ Խաչատրյանին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դնելով այն հիմնավորումները, որ հոր ժառանգությունն ընդունելու փաստը ՕՖեյյա Խաչատրյանը հիմնավորել է վկաների ցուցմունքներով, որոնք Դատարանը պատշաճ չի գնահատել, գրադարանը և վզնոցը ժառանգատուի մահվանից հետո ստացված լինելու փաստը ևս կարող է հիմնավորված համարվել վկաների ցուցմունքներով, ինչը Դատարանը պատշաճ չի կատարել, եզրահանգել է, որ թույլատրելի ապացույցով հիմնավորվել է, որ իր հոր ժառանգությունից ՕՖեյյա Խաչատրյանը որոշակի իրեր ստացել և տիրապետում է որպես սեփական:

ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի վերաբերյալ վերոնշյալ հիմնավորումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն անհիմն է, քանի որ սույն գործով որևէ կերպ չի հաստատվել այն փաստը, որ ՕՖեյյա Խաչատրյանը գրադարանը և վզնոցը սկսել է տիրապետել ժառանգատուի մահից հետո վեց ամսվա ընթացքում: Հետևաբար վեցամսյա ժամկետը բաց թողնելու հետևանքով ՕՖեյյա Խաչատրյանը կորցրել է ժառանգությունն ընդունելու հնարավորությունը և չէր կարող համարվել այն փաստացի տիրապետմամբ ընդունած:

Հիմք ընդունելով վերոգրյալ հիմնավորումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները ազդել են գործի ելքի վրա: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև Դատարանը կիրառել է նյութական իրավունքի սխալ նորմ, այդուհանդերձ նշված խախտումը չի հանգեցրել գործի սխալ լուծման:

Անդրադառնալով բողոքաբեր Ռիմա Պողոսյանի կողմից բարձրացված իրավաբանական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի հիման վրա վերաքննիչ և վճռաբեկ բողոքարկման համար կատարված ծախսերի հատուցման հարցին՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման: Սյսպես՝ 05.12.2011 թվականին «Գրանդ Թորնթոն Լիգալ ընդ Թաքս» ՍՊԸ-ի և Ռիմա Պողոսյանի միջև կնքված պայմանագրով նախատեսված է եղել մատուցել իրավաբանական խորհրդատվական ծառայություններ՝ կապված դատական ներկայացուցչության հետ Դատարանում և Վերաքննիչ դատարանում: Մատուցվող ծառայության գինը պայմանագրով նախատեսվել է 200.000 ՀՀ դրամ: Երկրորդ պայմանագրով՝ կնքված 14.01.2013 թվականին «Գրանդ Թորնթոն Լիգալ ընդ Թաքս» ՍՊԸ-ի և Ռիմա Պողոսյանի միջև,

նախատեսված է եղել մատուցել իրավաբանական խորհրդատվական ծառայություններ՝ կապված վճռաբեկ բողոքի պատրաստման հետ, որի գինը պայմանագրով սահմանվել է 200.000 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանը փաստաբանի խելամիտ վարձատրության հարցը լուծելիս անհրաժեշտ է համարում վերահաստատել Ֆերդինանտ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի գործով արտահայտած դիրքորոշումն առ այն, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (տե՛ս Ֆերդինանտ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):

Հաշվի առնելով վերը նշված չափանիշները և նկատի ունենալով, որ փաստաբանը սույն գործով ի շահ հայցվորի կատարել է 05.12.2011 և 14.01.2013 թվականներին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերով սահմանված դատավարական գործողությունները, ինչպես նաև հաշվի առնելով վերաքննիչ դատարանում գործի քննության տևողությունը (շուրջ չորս ամիս), նիստերի քանակը (երեք դատական նիստ), ինչպես նաև Վճռաբեկ դատարանում իրականացված դատավարական գործողությունների ծավալը՝ Վճռաբեկ դատարանը սույն գործով փաստաբանական ծառայություններ մատուցելու դիմաց վճարման ենթակա գումարի ողջամիտ չափ է համարում 200.000 ՀՀ դրամը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝

առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով Դատարանի վճռում առկա թերի պատճառաբանությունները, հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-2412 -րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.12.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.08.2012 թվականի վճռին սույն որոշման պատճառաբանություններով:

2. Օֆելյա Խաչատրյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.09.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական սուրբ, 100.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքա-

ցիական և վարչական պալատի 06.03.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք՝ Վլադիմիր Խաչատրյանի վճռաբեկ բողոքի մասով:

3. Օֆելյա Խաչատրյանից հոգուտ Ռիմա Պողոսյանի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

4. Օֆելյա Խաչատրյանից հոգուտ Ռիմա Պողոսյանի բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան
Դատավորներ՝ Մ. Դրմեյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Վ. Ավանեսյան
Ա. Բարսեղյան
Է. Հայրիյան
Տ. Պետրոսյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ2/0420/02/11
2013 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ2/0420/02/11
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան
Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Տ. Պետրոսյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Ա. Բարսեղյանի
Ս. Դրմեյանի
Գ. Հակոբյանի
Է. Հայրիյանի
Ե. Սողոմոնյանի

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Սամվել Հովհաննիսյանի ներկայացուցիչ Տարիել Մանուկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սամվել Հովհաննիսյանի ընդդեմ Լիդա, Քնարիկ, Մանվել Հովհաննիսյանների, Գոհարիկ Մալխասյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Սամվել Հովհաննիսյանի ընդդեմ Սամվել Հովհաննիսյանի՝ ժառանգությունն ընդունելու փաստը հաստատելու պահանջի մասին,

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Սամվել Հովհաննիսյանը պահանջել է առանձնացնել հանգուցյալ մոր՝ Վարդանուշ Հովհաննիսյանի, գույքի ժառանգության իր մասնաբաժինը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սամվել Հովհաննիսյանը պահանջել է հաստատել հանգուցյալ մորը՝ Վարդանուշ Հովհաննիսյանին պատկանող գույքի ժառանգությունն ընդունելու փաստը, ինչպես նաև հայցվորից բռնագանձել փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը:

Սամվել Հովհաննիսյանը, լրացնելով հայցապահանջը, պահանջել է ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում Վարդանուշ Հովհաննիսյանին համասեփականությամբ պատկանող 30.08.2001 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 340700) բնակելի տան և 0,21 հա տնամերձ հողամասի, 12.03.2003 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 638782) 0,94 հա վարելահողի և 06.07.2008 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 1841731) 2,42 հա պտղատու այգու 1/7-րդ մասերի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով իրեն ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ և առանձնացնել իր բաժնեմասը մյուս համասեփականատերերի բաժնեմասից:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.02.2012 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.05.2012 թվականի որոշմամբ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.02.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 20.12.2012 թվականի վճռով Սամվել Հովհաննիսյանի հայցն ընդդեմ Լիդա, Քնարիկ, Սամվել Հովհաննիսյանների, Գոհարիկ Մալխասյանի՝ գույքի ժառանգության մասնաբաժինն առանձնացնելու պահանջի մասով կարճվել է՝ այդ մասով հայցից հրաժարվելու հիմքով: Սամվել Հովհաննիսյանի հայցն

ընդդեմ Լիդա, Քնարիկ, Մանվել Հովհաննիսյանների, Գոհարիկ Մալխասյանի՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում Վարդանուշ Հովհաննիսյանին համասեփականությամբ պատկանող 30.08.2001 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 340700) բնակելի տան և 0,21 հա տնամերձ հողամասի, 12.03.2003 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 638782) 0,94 հա վարելահողի և 06.07.2008 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 1841731) 2,42 հա պտղատու այգու 1/7-րդ մասերի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով իրեն ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին, մերժվել է: Հակընդդեմ հայքը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այտուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2013 թվականի որոշմամբ Սամվել Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.12.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սամվել Հովհաննիսյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերը, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 53-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, որոնցով հիմնավորվում է, որ Սամվել Հովհաննիսյանը ծնողների մահվանից առաջ նրանց համաձայնությամբ տիրապետել և կառավարել է ժառանգական գույքի մի մասը՝ 0,94 հա վարելահողը: Մոր մահվանից հետո նա բացահայտ կերպով շարունակել է տիրապետել և կառավարել այդ վարելահողը, տնկել է մրգատու ծառեր, կատարել որոշակի ծախսեր ոռոգման ջրի դիմաց:

Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի թիվ 3-1224/ՎԴ որոշումը, այն կամայականորեն մեկնաբանել է ի վնաս Սամվել Հովհաննիսյանի: Նշված նախադեպային որոշումը հիմք չի կարող հանդիսանալ Սամվել Հովհաննիսյանին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով ժառանգ չճանաչելու համար:

Վերաքննիչ դատարանը պատշաճ կերպով չի գնահատել նաև այն փաստը, որ ժառանգական գույք հանդիսացող հանգուցյալի անվամբ երեք գրքույկները գտնվել են Սամվել Հովհաննիսյանի մոտ և պահպանվել նրա կողմից: Այս փաստը Վերաքննիչ դատարանը գնահատել է մյուս ապացույցների համակցությունից դուրս և եզրահանգել է, որ դա չի կարող դիտվել ժառանգական գույքն ընդունելու կամահայտնություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում Վարդանուշ Հովհաննիսյանին համասեփականությամբ պատկանող գույքի 1/7-րդ մասի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով իրեն ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 23.06.1951 թվականին ծնված Սամվել Հովհաննիսյանի հայրը Մարգար Հովհաննիսյանն է, իսկ մայրը՝ Վարդանուշ Հովհաննիսյանը (հատոր 1-ին, գ.թ. 12):

2. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 340700, թիվ 638782 և թիվ 1841731 վկայականների համաձայն՝ Արագածավան գյուղի բնակելի տունը՝ 161,39 քմ մակերեսով, տնամերձ 0,21 հա հողամասով, 0,94 հա վարելահողը, 2,42 հա պտղատու այգին համատեղ սեփականության իրավունքով գրանցված են Մարգար, Վարդանուշ, Սամվել, Միլվա, Լիլիթ, Լիաննա, Արման Հովհաննիսյանների անուններով (հատոր 1-ին, գ.թ. 6-11):

3. Համաձայն ԱԱ թիվ 146670 մահվան վկայականի՝ սկզբնական և հակընդդեմ հայցվորների մայր Վարդանուշ Հովհաննիսյանը մահացել է 24.03.2009 թվականին, իսկ Ա՝ թիվ 046180 մահվան վկայականի համա-

ձայն՝ Մարգար Հովհաննիսյանը մահացել է 23.06.2011 թվականին (հատոր 1-ին, գ.թ.13-14):

4. Համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքների, հարևանների հայտարարությունների համաձայն՝ Մամվել Հովհաննիսյանը մոր՝ Վարդանուշ Հովհաննիսյանի մահից հետո շարունակել է տիրապետել, կառավարել մորը պատկանող գույքը (հատոր 1-ին, գ.թ. 59-63, 70-71):

5. ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի գյուղապետարանի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արագածավանի բնակիչ Մամվել Հովհաննիսյանը, ըստ տվյալ հողատարածքի հարևաններ Վարուժան Մալխասյանի, Անդրանիկ Մնացականյանի, Մամվել Պապոյանի, Սուրեն Խուրոյանի գրավոր հայտարարությունների, հողի սեփականաշնորհումից մինչ այսօր մշակում է թիվ 638782 սեփականության իրավունքի վկայականով տրված 0,94 հա վարելահողը (հատոր 3-րդ, գ.թ. 73):

6. 28.02.2012 թվականին Արմեն Հովհաննիսյանին տրվել է ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր: Ժառանգական գույքը, որի համար տրվել է վկայագիրը, բաղկացած է Մարգար Հովհաննիսյանի անվամբ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղի Բաղրամյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող 161,39 քմ մակերեսով բնակելի տան, 0,21 հա տնամերձ հողամասի, 24,05 քմ, 17,11 քմ, 24,38 քմ, 12,0 քմ, 30,0 քմ, 28,5 քմ մակերեսներով օժանդակների, 0,94 հա վարելահողի, 2,42 հա պտղատու այգու 1/7-րդ մասնաբաժնից (հատոր 3-րդ, գ.թ. 55):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. ժառանգման իրավունք ունեցող անձի կողմից մինչ ժառանգատուի մահը նրան պատկանող որևէ գույքի փաստացի տիրապետումը և կառավարումը ժառանգության բացումից հետո շարունակելը կարո՞ղ է համարվել

ժառանգությունն ընդունելու կամքի դրսևորում, թե՞ անհրաժեշտ են նաև այլ կանխամտածված, ակտիվ գործողություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր:

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (տե՛ս Արմինե Հակոբյանը և Մամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի, Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն

առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը (ի թիվս այլ ակտերի տե՛ս Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Սերոպյանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրամադրելու, Սերյոժա Բալասանյանի 01.02.1994 թվականի կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և Այգեստանի 10-րդ փողոցի 2-րդ շենքի 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ Կարինե Սերոպյանի սեփականության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջների մասին թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 27-ի որոշումը): Ուստի դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգական գույքի փաստացի տիրապետելու փաստը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով, ընդ որում, գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը, կամ այլ ապացույցներ, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառան-

գությունը (տե՛ս Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի, Արմավիրի նոտարական տարածքի նոտար Նարինե Մկրտչյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արմավիրի տարածքային ստորաբաժանման՝ Վարդան Վարդանյանի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման եղանակով Միշա Վարդանյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի որոշումը):

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (տե՛ս Կիմա Մարգարյանն ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):

Վերահաստատելով նախկին որոշումներում արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում ժառանգի կողմից ժառանգված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն արդեն իսկ գիտակցված, ակտիվ գործողություններ են, որոնք նպատակաուղղված են ժառանգության ընդունմանը: Եթե ժառանգը, գիտակցելով, որ գույքը պատկանել է ժառանգատուին, վերջինիս մահվանից հետո տիրապետում և կառավարում է այդ գույքը, ըստ էության գիտակցաբար կատարում է ակտիվ գործողություններ, իսկ նման գործողությունների կատարումն օրենսդիրը համարում է ժառանգության ընդունման եղանակներից մեկը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ գործով հիմնավորված է ժառանգատուի մահվանից հետո ժառանգված գույքի փաստացի տիրապետման և կառավարման հանգամանքը, ըստ օրենքի

Ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար այլևս անհրաժեշտություն չկա ապացուցելու այլ ակտիվ, գիտակցված գործողությունների կատարման վերաբերյալ փաստեր: Ընդ որում, ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, որ ժառանգը գույքը տիրապետել և կառավարել է նաև մինչև ժառանգատուի մահը: Ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված ժառանգության զանգվածի մեջ մտնող որևէ գույք ժառանգման իրավունք ունեցող անձի փաստացի տիրապետման և կառավարման ներքո կարող է գտնվել նաև մինչև ժառանգության բացումը: Նման պարագայում ժառանգության ընդունման համար էական է այն փաստը, որ ժառանգը ժառանգատուին պատկանող գույքի փաստացի տիրապետման և կառավարման գործողությունները շարունակի կատարել նաև ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում:

Այլ է իրավիճակն ըստ կտակի ժառանգման պարագայում, քանի որ այդ դեպքում ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար ժառանգը պետք է հիմնավորի, որ իր գործողությունները միտված են եղել հատկապես ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն (տե՛ս Գևորգ Բերբերյանն ընդդեմ Մարինե Բերբերյանի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի՝ հողամասը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին և հակընդդեմ հայցի՝ ժառանգությունն ընդունելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ ԵԱՔԴ/1018/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը): Ըստ կտակի ժառանգության դեպքում օրենքով սահմանված ժամկետում կտակված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն ինքնին չեն վկայում այն մասին, որ ժառանգն ընդունել է ըստ կտակի ժառանգությունը, այդ դեպքում գույքի փաստացի տիրապետման և կառավարման գործողությունները կարող են վկայել ըստ օրենքի ժառանգությունն ընդունելու մասին (եթե ըստ կտակի ժառանգը պատկանում է ըստ օրենքի ժառանգների թվին), իսկ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար անհրաժեշտ են գիտակցված, ակտիվ գործողություններ: Ըստ էության, դրանք հանգում են ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումն

օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելուն:

Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը

Վերաքննիչ դատարանը Սամվել Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ. «Դատարանն իրավացիորեն հաստատված չի համարել փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունելու պահանջի ապացուցման առարկա կազմող ժառանգությունն ընդունելու ժառանգի կամքի և ցանկության փաստը:

Մասնավորապես, հաշվի առնելով, որ սեփականաշնորհման իսկ օրվանից վարելահողի նկատմամբ սահմանված է եղել օգտագործման կարգ՝ այն հանձնվել է սկզբնական հայցվորին, հետևաբար նշված վարելահողի մշակումը չի կարող գնահատվել որպես ժառանգության ընդունման ուղղությամբ ժառանգի կողմից իրականացվող կանխամտածված, ակտիվ գործողությունների համակցություն, որն ուղղված է ժառանգական գույքն իր սեփականությունը դարձնելուն: Այսինքն՝ վարելահողի տիրապետումը մինչև ժառանգատուի մահը՝ որպես տարիներ առաջ իր տիրապետմանը հանձնված գույքի, հնարավորություն չի ընձեռում հաստատելու այն փաստը, որ դրա տիրապետումը նաև ժառանգատուի մահվանից հետո նպատակաուղղված է եղել ժառանգության ընդունմանը: Նշված եզրահանգումները հավասարապես վերաբերում են նաև ժառանգատուի կողմից իր կենդանության օրոք ավանդների գրքույկներն իրեն հանձնված լինելու փաստին, քանի որ այդ գրքույկների միայն սկզբնական հայցվորի մոտ գտնվելու փաստը չի կարող որակվել ժառանգական գույքը փաստացի տիրապետելուն ուղղված ակտիվ գործողություն և ժառանգական գույքն ընդունելու կամահայտնության առկայություն»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը 10.01.2012 թվականին հարևանների կողմից տրված հայտարարությունները, ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի գյուղապետարանի կողմից տրված տեղեկանքը՝ որպես ապացույց, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել համակցության մեջ, որպիսի ապացույցներն ակնհայտորեն վկայում են այն մասին, որ Սամվել Հովհաննիսյանն ինչպես մոր մահվանից առաջ, այնպես էլ դրանից հետո մինչ այսօր մշակել և մշակում է թիվ 638782 սեփականության իրավունքի վկայականով տրված 0,94 հա վարելահողը, այսինքն՝ առկա է եղել ժառանգի կամքը և ցանկությունն ընդունելու

ժառանգությունը: Մամվել Հովհաննիսյանը՝ որպես ժառանգ, միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններին և հավակնություններին պաշտպանելու համար, կատարել է դրա պահպանմանն ուղղված ծախսեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մամվել Հովհաննիսյանը փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ընդունել է մոր ժառանգության մի մասը, իսկ դա նշանակում է, որ նա ընդունել է մոր մահվանից հետո իրեն հասանելիք ամբողջ ժառանգությունը:

Նկատի ունենալով, որ գործի փաստերի համաձայն գույքի փաստացի տիրապետման և կառավարման եղանակով մոր ժառանգությունն ընդունել է նաև պատասխանող Մամվել Հովհաննիսյանը (վերջինիս կողմից ներկայացված հակընդդեմ հայցը բավարարվել է և այդ մասով Վերաքննիչ դատարանի որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ), ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգական զանգվածի՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում Վարդանուշ Հովհաննիսյանին համասեփականությամբ պատկանող 30.08.2001 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 340700) բնակելի տան և 0,21 հա տնամերձ հողամասի, 12.03.2003 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 638782) 0,94 հա վարելահողի և 06.07.2008 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ թիվ 1841731) 2,42 հա պտղատու այգու 1/7-րդ մասերի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ պետք է ճանաչել նաև Մամվել Հովհաննիսյանին:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յու-

րաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2013 թվականի որոշման՝ Սամվել Հովհաննիսյանի հայցը մերժելու մասը և այդ մասով այն փոփոխել. հայցը բավարարել՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում Վարդանուշ Հովհաննիսյանին համասեփականությամբ պատկանող 30.08.2001 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ թիվ 340700) բնակելի տան և 0,21 հա տնամերձ հողամասի, 12.03.2003 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ թիվ 638782) 0,94 հա վարելահողի և 06.07.2008 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ թիվ 1841731) 2,42 հա պտղատու այգու 1/7-րդ մասերի նկատմամբ Սամվել Հովհաննիսյանին ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ:

2. Սամվել Հովհաննիսյանից հօգուտ Սամվել Հովհաննիսյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար վճարված պետական տուրքի գումար, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Սամվել Հովհաննիսյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վերաքննիչ քաղաքա-

ցիական դատարանի 20.03.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան
Դատավորներ՝ Տ. Պետրոսյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Մ. Դրմեյան
Գ. Հակոբյան
Է. Հայրիյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԳԴ4/0191/02/11
2013 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԳԴ4/0191/02/11
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Դ. Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Ս. Անտոնյանի
Վ. Աբելյանի
Վ. Ավանեսյան
Ա. Բարսեղյանի
Մ. Դրմեյանի
Գ. Հակոբյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2013 թվականի նոյեմբերի 29-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Վաչե Մուշեղյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Տաթևիկ Մուշեղյանի ընդդեմ Վաչե Մուշեղյանի, Նինա Յագոդկինայի, Արսեն Մուշեղյանի, Արտյոմ Մուշեղյանի՝ բնակարանի ապօրինի օգտագործումը դադարեցնելու և վտարելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Վաչե Մուշեղյանի ընդդեմ Տաթևիկ Մուշեղյանի և Սևանի նոտարական տարածքի նոտար Արմեն Հարությունյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ

գույքի կադաստրի պետական կոմիտեի Սևանի տարածքային ստորաբաժանման՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու, սեփականության իրավունքի պետական գրանցումը և դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տաթևիկ Մուշեղյանը պահանջել է վտարել Վաչե Մուշեղյանին, Նինա Յագոդկինային, Արտյոմ և Արսեն Մուշեղյաններին սեփականության իրավունքով իրեն պատկանող Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող առանձնատնից և հողամասից՝ դադարեցնելով վերջիններիս ապօրինի տիրապետումը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Վաչե Մուշեղյանը պահանջել է հոր՝ Արտավազ Մուշեղյանի մահից հետո մնացած և ժառանգատուին սեփականության իրավունքով պատկանող Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող առանձնատան և հողամասի նկատմամբ իրեն ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ, անվավեր ճանաչել Տաթևիկ Մուշեղյանին 03.02.2009 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և նշված առանձնատան ու հողամասի նկատմամբ կատարված պետական գրանցումը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 2384524 վկայականը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս.Մանուկյան) (այսուհետ՝ Դատարան) 14.08.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.01.2013 թվականի որոշմամբ Վաչե Մուշեղյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.08.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վաչե Մուշեղյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Տաթևիկ Մուշեղյանը և նրա ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետը, որը պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 130-րդ, 131-րդ և 132-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, որոնցով հիմնավորվում է, որ 17.11.1980 թվականին մահացած ժառանգատու Արտավազդ Մուշեղյանի ժառանգական գույքի՝ Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունել է Վաչե Մուշեղյանը:

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Ռոբերտ Մուշեղյանը ժառանգատու Արտավազդ Մուշեղյանի մահից հետո օրենքով սահմանված ժամկետում և կարգով, ինչպես նաև փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքի՝ Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ժառանգություն չի ընդունել, հետևաբար տվյալ պարագայում նոտարն իրավասու չէր վերջինիս դատերը՝ Տաթևիկ Մուշեղյանին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածով սահմանված կարգով տրանսմիսիայի իրավունքով տրամադրելու ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Տաթևիկ Մուշեղյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը տրվել է օրենքի պահանջների խախտմամբ, հետևաբար սեփականության իրավունքը ծագել է օրենսդրության պահանջներին անհամապատասխան, որպիսի պարագայում բացառվում է վինդիկացիոն հայցի բավարարումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 31.01.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ բեկանել և փոփոխել այն՝ հայրը մերժել, իսկ հակընդդեմ հայրը բավարարել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ դատարանը գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, համապատասխան իրավական նորմերի կիրառմամբ կայացրել է որոշում, որը հիմնավոր է և օրինական, ինչը բխում է արդարադատության շահերից, հետևաբար բերված վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ռոբերտ և Վաչե Արտավազդի Մուշեղյաններն Արտավազդ Մուշեղյանի և Փունջիկ Մուշեղյանի (Պետրոսյանի) գավակներն են, իսկ Տաթևիկ Մուշեղյանը Ռոբերտ Մուշեղյանի դուստրն է (հատոր 1-ին, գ.թ. 52, 80, 84, 85, հատոր 3-րդ, գ.թ. 103):

2. Անհատական բնակելի շենքի և հողատարածության տեխնիկական անձնագրի համաձայն՝ Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող 67,0քմ մակերեսով բնակելի տունը, 39,1քմ մակերեսով օժանդակ շինությունները և 1.370,0քմ մակերեսով հողամասը պատկանել է Արտավազդ Մուշեղյանին (հատոր 5-րդ, գ.թ. 12):

3. 12.03.1981 թվականի թիվ 403908 մահվան վկայականի համաձայն՝ Արտավազդ Մուշեղյանը մահացել է 17.11.1980 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 81):

4. 11.09.1992 թվականի թիվ 415859 մահվան վկայականի համաձայն՝ Փունջիկ Մուշեղյանը մահացել է 23.07.1992 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 82):

5. 17.06.2008 թվականի թիվ 143277 մահվան վկայականի համաձայն՝ Ռոբերտ Մուշեղյանը մահացել է 13.06.2008 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 83):

6. Տաթևիկ Մուշեղյանը Սևանի նոտարական տարածքի նոտար Արմեն Հարությունյանին հասցեագրված 25.07.2008 թվականի հայտարարությամբ հայտնել է. «Հազար ինը հարյուր ութսուն թվականի նոյեմբերի տասնյոթին մահացած իմ պապ քաղ. Արտավազդ Երեմի Մուշեղյանին և երկու հազար ութ թվականի հունիսի տասներեքին մահացած իմ հայր քաղ. Ռոբերտ Արտավազդի Մուշեղյանին պատկանող գույքը ես ընդու-

նում եմ: Իմ պապ քաղ. Արտավազդ Երեմի Մուշեղյանի և իմ հայր քաղ. Ռոբերտ Արտավազդի Մուշեղյանի վերջին մշտական բնակավայրը եղել է Սևանի Կոմիսարների փողոցի տուն 21 հասցեում: Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերն իմ կողմից կուղարկվեն լրացուցիչ կարգով» (հատոր 1-ին, գ.թ. 86):

7. Տաթևիկ Մուշեղյանը Սևանի նոտարական տարածքի նոտար Արմեն Հարությունյանին հասցեագրված 03.02.2009 թվականի դիմումով հայտնել է. «Հազար ինը հարյուր ութսուն թվականի նոյեմբերի տասնյոթին մահացել է իմ պապ քաղ. Արտավազդ Երեմի Մուշեղյանը, հազար ինը հարյուր իննսուներկու թվականի հուլիսի քսաներեքին մահացել է իմ տատ քաղ-ուհի Փունջիկ Ենքի Մուշեղյանը, երկու հազար ութ թվականի հունիսի տասներեքին մահացել է իմ հայր քաղ. Ռոբերտ Արտավազդի Մուշեղյանը, ովքեր մշտական գրանցամամբ բնակվել են Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 (քսանմեկ) հասցեում: Առ իմ պապ քաղ. Արտավազդ Երեմի Մուշեղյանի մահվան օրը մնացել է հետևյալ գույքը՝ առանձնատունն ամբողջությամբ, որը գտնվում է Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 (քսանմեկ) հասցեում 1.370 (մեկ հազար երեք հարյուր յոթանասուն) քմ մակերեսով հողամասի վրա: Մույն դիմումով ընդունում եմ ժառանգությունը և խնդրում եմ ինձ տալ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր վերը նշված ամբողջ առանձնատան նկատմամբ: Հետագայում այլ ժառանգների կողմից ժառանգության պահանջի դեպքում պարտավորվում եմ նյութական պատասխանատվությունը վերցնել ինձ վրա՝ նոտարին ազատելով վերը նշված քաղ. գործով դատարանում պատասխանողի պարտականությունից» (հատոր 1-ին, գ.թ. 79):

8. 03.02.2009 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 60 վկայագրի համաձայն՝ ժառանգական գույքը՝ Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող 186,1քմ մակերեսով առանձնատունը և 1.370,0քմ մակերեսով հողամասը, որը պատկանել է 17.11.1980 թվականին մահացած ժառանգատու Արտավազդ Երեմի Մուշեղյանին, ում ժառանգն է որդին՝ 13.06.2008 թվականին մահացած Ռոբերտ Արտավազդի Մուշեղյանը, ով ընդունել է ժառանգությունը, բայց չի ձևակերպել իր ժառանգական իրավունքները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի հիմքով անցել է Տաթևիկ Ռոբերտի Մուշեղյանին (հատոր 1-ին, գ.թ. 13):

9. 18.02.2009 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2384524 վկայականի համաձայն՝ Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող 109,97քմ մակերեսով առանձնատան, 113,0քմ մակերեսով «հացատուն խարխուլ» շինության, 19,0քմ մակերեսով սանհանգույցի և 0,1352հա հողամասի սեփականատերը Տաթևիկ Ռոբերտի Մուշեղյանն է (հատոր 1-ին, գ.թ.54-56):

10. Տաթևիկ Ռոբերտի Մուշեղյանի ներկայացուցիչն առարկություններով հայտնել է, որ Վաչե Մուշեղյանը 1984 թվականից փաստացի բնակություն է հաստատել հանրակացարանում և հոր տան գրանցումից դուրս է եկել 1987 թվականին (հատոր 1-ին, գ.թ.114):

11. Սվետլանա Մուշեղյանը 18.11.2011 թվականի հայտարարությամբ հայտնել է, որ Վաչե Մուշեղյանը հոր՝ Արտավազ Մուշեղյանի մահից հետո մինչև 1987-1988 թվականներն անընդմեջ բնակվել է Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող տանը, պահպանել և կառավարել է նշված տունը, իսկ Ռոբերտ Մուշեղյանը նշված տանը ժամանակավորապես բնակվել է 2000-2001 թվականներից (հատոր 2-րդ, գ.թ.72):

12. Նաիրա Մուշեղյանը և Մուրեն Ստեփանյանը 18.11.2011 թվականի հայտարարություններով հայտնել են, որ Արտավազ Մուշեղյանի մահից հետո Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող առանձնատանը և տնամերձ հողամասում փաստացի բնակվել է Վաչե Մուշեղյանն իր ընտանիքի հետ, միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու, այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու ուղղությամբ, կատարել է գույքը պահպանելու հետ կապված ծախսերը (հատոր 2-րդ, գ.թ.73, 74):

13. Սևան համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի 09.12.2011 թվականի թիվ Քպ-2/673 տեղեկանքի համաձայն՝ ըստ բնակչության քաղաքային ռեգիստրի տվյալների Ռոբերտ Մուշեղյանը Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում հաշվառվել է 12.01.1995 թվականից մինչև իր մահը (հատոր 3-րդ, գ.թ.40):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն

գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է ժառանգությունն ընդունելու իրավունքը փոխանցելու (ժառանգության տրանսմիսիա) ինստիտուտի իրավական կարգավորման առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի համաձայն՝ եթե ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգության հրավիրված ժառանգը մահանում է ժառանգության բացումից հետո, չհասցնելով այն ընդունել, ապա նրան հասանելիք ժառանգությունն ընդունելու իրավունքն անցնում է նրա ժառանգներին: Մահացած ժառանգի ժառանգությունն ընդունելու իրավունքը նրա ժառանգները կարող են իրականացնել ընդհանուր հիմունքներով՝ նույն օրենսգրքի 1225-1228-րդ հոդվածներին համապատասխան: Որպես պարտադիր բաժին ժառանգության մասն ընդունելու ժառանգի իրավունքը չի անցնում նրա ժառանգներին:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական կարգավորումը և հաշվի առնելով ժառանգական իրավահարաբերությունների առանձնահատկությունը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ նշված դրույթով օրենսդիրը նախատեսել է այնպիսի դեպքեր, երբ ժառանգը (ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի), չհասցնելով ընդունել ժառանգությունը, մահանում է մինչև ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը: Նման պարագայում գործում է քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված ժառանգության տրանսմիսիայի ինստիտուտը, ըստ որի՝ նշված իրավիճակում մահացած ժառանգի ժառանգը ձեռք է բերում ժառանգի այն իրավունքը, որը վերջինս չի հասցրել իրականացնել: Այսինքն՝ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգատուի ժառանգի չիրականացված իրավունքի փոխանցումը վերջինիս ժառանգներին: Ընդ որում, ժառանգը, որը հրավիրված էր ժառանգության և չհասցնելով ընդունել ժառանգությունը կամ հրաժարվել ժառանգությունից, մահանում է ժառանգությունը բացելուց հետո, քաղաքացիական իրավունքի տեսությունում անվանվում է տրանսմիտենտ, իսկ այն անձինք, որոնց փոխանցվում է ժառանգությունն ընդունելու իրավունքը՝ տրանսմիսսարներ:

Ժառանգության տրանսմիսիայի իրավահարաբերությունը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով և ծագում է հետևյալ պայմաններում.

- Ժառանգը, որը հրավիրված է ժառանգության և ունի ժառանգելու սուբյեկտիվ իրավունք (իրավասու է ընդունելու ժառանգությունը կամ հրաժարվել ժառանգությունից), ժառանգությունը բացելուց հետո, չհասցնելով այն ընդունել կամ հրաժարվել ժառանգությունից, մահացել է.

- Մահացած ժառանգը (տրանսմիտենտ) կարող է լինել ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգ.

- Ժառանգը մահանում է ժառանգության բացումից հետո մինչև ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը լրանալը.

- Ժառանգելու իրավունքը, որը պատկանում էր մահացած ժառանգին, փոխանցվում է նրա ժառանգներին: Ընդ որում, առաջին ժառանգը կապված է երկրորդ ժառանգի հետ այնպես, ինչպես ժառանգատուն և ժառանգները.

- Մահացածի ժառանգը (տրանսմիսսարը) իրավասու է ընդունելու ժառանգությունը լիազորությունների այն ծավալով և բովանդակությամբ, որին հրավիրված էր մահացած ժառանգը, կամ հրաժարվելու այդ ժառանգությունից:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ժառանգության տրանսմիսիայի իրավահարաբերության վերը նշված առանձնահատկությունները և ծագման հիմքերը, անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի կանոնակարգմանը ժառանգական իրավունքի նորմերի լույսի ներքո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգություն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի, այդ թվում նաև՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգության ընդունման համար օրենսդիրը սահմանել է վեցամսյա ժամկետ, որը հաշվվում է ժառանգության բացման, այն է՝ ժառանգատուի մահվան օրվանից (տե՛ս Սուսաննա Նեմչինովայի հայցն ընդդեմ Կենտրոն նոտարական գրասենյակի նոտար Էմմա Շաբոյանի, Սուրեն Առաքելյանի՝ 30.05.2008 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/2472/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը:

Այսինքն՝ նշված դրույթով օրենսդիրը ևս սահմանել է վեցամսյա ժամկետ, որի ընթացքում ժառանգության բացման օրվանից ժառանգը կարող է հրաժարվել ժառանգությունից:

Այսպես՝ վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չի կարող խոսք լինել ժառանգության տրանսմիսիայի մասին այն դեպքում, երբ ժառանգը ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում չի արտահայտել իր ցանկությունը ժառանգությունն ընդունելու կապակցությամբ, և մահացել է ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետից հետո: Պետք է ի նկատի ունենալ, որ կենդանության ընթացքում ժառանգի կողմից ժառանգության ընդունման համար սահմանված ժամկետի բացթողումը պայմանականորեն նշանակում է իրավունքի կորուստ, քանի որ ժառանգն այնուամենայնիվ կարող էր ընդունել ժառանգությունը սահմանված ժամկետում, մինչդեռ այն չի

իրականացրել մինչև ժամկետի ավարտը: Ընդ որում, եթե ժառանգը մահացել է ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետից հետո, ապա ժառանգի այդպիսի իրավունքի կորուստն ունի բացառիկ նշանակություն, քանի որ ոչ ոք բացի անմիջապես ժառանգից չի կարող հարց բարձրացնել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին:

Այսինքն՝ ժառանգության տրանսմիսիայի կանոնները գործում են այն դեպքում, երբ տրանսմիտենտը մահացել է մինչև ժառանգությունն ընդունելու կամ ժառանգությունից հրաժարվելու համար սահմանված ժամկետի ավարտը՝ չհասցնելով այն ընդունել կամ դրանից հրաժարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1193-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ կտակի ազատությունը սահմանափակվում է միայն ժառանգության պարտադիր բաժնի կանոններով, իսկ նույն օրենսգրքի 1194-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտադիր բաժին է համարվում ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից, ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում:

Նշված նորմով օրենսդիրը կտակի ազատությունը սահմանափակել է պարտադիր բաժնի իրավունքով, որը կտակի առկայության պայմաններում համարվում է ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից՝ վերջինիս շնորհիվ հատուկ սուբյեկտի կարգավիճակ:

Մինչդեռ, կտակի առկայության պայմաններում ժառանգության տրանսմիսիայի ուժով ժառանգության ընդունման իրավունքը մահացածի ժառանգներին փոխանցվելու դեպքում առկա է սահմանափակում՝ մահացած ժառանգի (տրանսմիտենտի) ժառանգության պարտադիր բաժնի իրավունքի փոխանցումը վերջիններիս ժառանգներին (տրանսմիսարներին) արգելվում է: Այսպիսի սահմանափակումը պայմանավորված է կտակի ազատության, ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը միայն այդ անձին անմիջականորեն պատկանելու սկզբունքով, ինչպես նաև պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգի՝ հատուկ սուբյեկտ լինելու հանգամանքով: Հետևաբար, ժառանգության պարտադիր բաժինը չի կարող փոխանցվել այլ անձի, ով անմիջականորեն չունի պարտադիր բաժնի պահանջի իրավունք:

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1198-րդ հոդվածի համաձայն՝ կտակարարը կարող է կտակում նշել այլ ժառանգի (ենթաժառանգի) այն դեպքի համար, եթե նրա նշանակած ժառանգը մահանա մինչև ժառանգությունը բացվելը, հրաժարվի ժառանգությունից, որպես

անարժան ժառանգ մեկուսացվի ժառանգությունից կամ չկատարի կտակարարի օրինաչափ պայմանները:

Նշված նորմով ամրագրված են այն դեպքերը, երբ կտակարարն իրավունք ունի կտակում ոչ միայն նշել հիմնական ժառանգին կամ ժառանգներին, այլև ենթանշանակել այսպես կոչված պահեստային ժառանգ այն դեպքի համար, եթե ժառանգության բացման պահին մահացած լինի կտակում սկզբնապես նշված ժառանգը՝ չհասցնելով այն ժառանգել:

Մտնանշված իրավահարաբերության դեպքում չի կարող գործել տրանսմիսիայի ուժով ժառանգության ընդունման իրավունքը մահացածի ժառանգներին փոխանցելու ընթացակարգը, ինչն ուղղակիորեն բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1198-րդ հոդվածի իրավակարգավորումից:

Տրանսմիսիայի հիմքով ժառանգությունն ընդունելու իրավունքը կարող է իրականացվել ընդհանուր հիմունքներով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-1228-րդ հոդվածներին համապատասխան:

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն անձինք, որոնց համար ժառանգության իրավունքն առաջանում է միայն այլ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում, կարող են ժառանգությունն ընդունել նույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետն ավարտվելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Տվյալ դեպքում ժառանգության տրանսմիսիայի կարգով ժառանգը կարող է ժառանգությունն ընդունել ժառանգության ընդունման ժամկետն ավարտվելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Ընդ որում, մահացած ժառանգի ժառանգները ժառանգությունն ընդունելու համար ընդհանուր հիմունքներով սահմանված կարգով պետք է իրականացնեն ակտիվ գործողություններ, ինչպես նաև՝ ժառանգությունն իրենց կողմից ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում իրավասու են դիմելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու կապակցությամբ:

Հատկանշական է, որ մահացած ժառանգի (տրանսմիտենտի) այլ ժառանգների (տրանսմիսսարների) կողմից ժառանգությունն ընդունելու պարագայում վերջիններիս համաձայնության առկայության դեպքում ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգը (տրանսմիսսար) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով ևս կարող է ընդունել ժառանգությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է գտնում գուգահեռներ անցկացնել տրանսմիսիայի իրավունքով ժառանգությունն ընդունելու և ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունելու ինստիտուտների միջև:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի համաձայն՝ երկրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1219-րդ հոդվածի համաձայն՝ չորրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը (հորեղբայրները, հորաքույրները, քեռիները, մորաքույրները): Ժառանգատուի հորեղբայրների և հորաքույրների ու քեռիների և մորաքույրների երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի համաձայն՝ մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին (ներկայացման իրավունքով ժառանգություն) և նրանց միջև բաշխվում է հավասարապես: Ներկայացման իրավունքով չեն կարող ժառանգել ժառանգությունից մեկուսացված կամ ժառանգատուի կողմից ժառանգությունից զրկված ըստ օրենքի ժառանգի երեխաները:

Նշված դրույթներից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է նաև այնպիսի դեպքեր, երբ ըստ օրենքի ժառանգը մահանում է մինչև ժառանգատուի ժառանգության բացումը: Նման պարագայում գործում է քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունելու ինստիտուտը, որը ենթադրում է, որ ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է վերջինիս երեխաներին, որոնց միջև այն բաշխվում է հավասարապես: Ընդ որում, ժառանգությունից մեկուսացված կամ ժառանգատուի կողմից ժառանգությունից զրկված ըստ օրենքի ժառանգի երեխաները ներկայացման իրավունքով չեն կարող ժառանգել:

Փաստորեն, ըստ օրենքի ժառանգների շրջանակն ընդարձակվել է նաև ներկայացման իրավունքով ժառանգելու ժառանգների շրջանակով, այսինքն՝ ներկայացման իրավունքով ժառանգման հրավիրվող անձինք

դասվում են ըստ օրենքի ժառանգների թվին: Ի դեպ, օրենսդիրը հստակ սահմանել է, թե ովքեր կարող են ներկայացման իրավունքով համարվել ժառանգներ՝ ամրագրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1217-րդ և 1219-րդ հոդվածներում:

Համեմատելով ժառանգության իրավունքի վերոնշյալ երկու ինստիտուտները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

առաջին. տրանսմիսիայի իրավունքով ժառանգումը տեղի է ունենում ինչպես ըստ օրենքի, այնպես էլ՝ ըստ կտակի, մինչդեռ ներկայացման իրավունքով ժառանգումը տեղի է ունենում միայն ըստ օրենքի:

երկրորդ. տրանսմիսիայի իրավունքով ժառանգելու ժառանգների շրջանակը սահմանափակված չէ, մինչդեռ ներկայացման իրավունքով ժառանգել կարող են միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1217-րդ և 1219-րդ հոդվածներում ամրագրված ժառանգների զավակները:

երրորդ. տրանսմիսիայի իրավունքով ժառանգելու դեպքում ժառանգը մահանում է ժառանգատուից հետո՝ չհասցնելով ընդունել ժառանգությունը: Մինչդեռ ներկայացման իրավունքով ժառանգելու դեպքում ժառանգը մահանում է մինչև ժառանգությունը բացվելը, այսինքն՝ ժառանգատուից առաջ:

Վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ռոբերտ Մուշեղյանն Արտավազ Մուշեղյանի որդին է: Արտավազ Մուշեղյանը մահացել է 17.11.1980 թվականին, իսկ Ռոբերտ Մուշեղյանը՝ 13.06.2008 թվականին: Ռոբերտ Մուշեղյանի դուստր Տաթևիկ Մուշեղյանը 25.07.2008 թվականին և 03.02.2009 թվականին դիմել է նոտարական գրասենյակ՝ տրանսմիսիայի հիմքով պապի՝ Արտավազ Մուշեղյանի ժառանգությունն ընդունելու համար: 03.02.2009 թվականին տրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, որով հաստատվել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի հիմքով 17.11.1980 թվականին մահացած Արտավազ Մուշեղյանի ժառանգ է հանդիսանում թողը՝ Տաթևիկ Մուշեղյանը:

Հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ նախ սույն գործով չի հիմնավորվել այն, որ Ռոբերտ Մուշեղյանն արտահայտել է իր ցանկությունը 17.11.1980

թվականին մահացած ժառանգատու Արտավազդ Մուշեղյանի ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունելու կապակցությամբ, և բացի այդ, Ռոբերտ Մուշեղյանը մահացել է 13.06.2008 թվականին՝ ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետից հետո: Այսինքն՝ տվյալ պարագայում բացակայում է ժառանգության տրանսմիսիայի իրավունքով ժառանգությունն ընդունելու ծագման հիմքը՝ Ռոբերտ Մուշեղյանը մահացել է ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ չարտահայտելով իր ցանկությունը ժառանգությունն ընդունելու կապակցությամբ, հետևաբար Տաթևիկ Ռոբերտի Մուշեղյանը ժառանգատու Արտավազդ Մուշեղյանի ժառանգական գույքի նկատմամբ ժառանգության տրանսմիսիայի ուժով չէր կարող ընդունել ժառանգությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգության տրանսմիսիայի ծագման պայմանների բացակայության պարագայում Տաթևիկ Ռոբերտի Մուշեղյանին 02.03.2009 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 60 վկայագիրը տրամադրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Միաժամանակ սույն գործով Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին, 1226-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերը, 1227-րդ հոդվածի 1-ին կետը, Վաչե Մուշեղյանի վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ սույն քաղաքացիական գործով Դատարանը, վճռի հիմքում դնելով գործով հաստատված փաստերը, պատճառաբանել է, որ Վաչե Արտավազդի Մուշեղյանը գույքը երրորդ անձանց ոսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու, դրա նկատմամբ իր տիրապետությունը հաստատելու վերը նշված ակտիվ գործողությունները կատարել է միայն 2010 թվականի մայիսի 06-ից հետո, երբ բնակություն է հաստատել արդեն իսկ Տաթևիկ Ռոբերտի Մուշեղյանի սեփականությունը հանդիսացող առանձնատանը: Վերաքննիչ դատարանը վիճահարույց հասցեի տունը Վաչե Մուշեղյանի կողմից որպես ժառանգական գույք փաստացի տիրապետելու փաստը նույնպես համարում է չհաստատված՝ հիմնվելով գործում առկա ապացույցների և առաջին ատյանի կողմից հաստատված փաստերի վրա: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Վաչե Մուշեղյանը ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում չի տիրապետել հորը՝ Արտավազդ Մուշեղյանին պատկանող՝ Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 տունը,

հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի ուժով այն չի ընդունել:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոսնձագություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար:

Այս առումով Վճռաբեկ դատարանը վերահաստատում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (տես՝ Արմինե Հակոբյանը և Մամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի, Անահիտ, Մարգարիտ, Քնարիկ Հակոբյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 09-ի որոշումը):

Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը (ի թիվս այլ ակտերի տես՝ Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Մերայանի, ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ ժառանգու-

թյան իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով տրամադրելու, Մերյոժա Բալասանյանի 01.02.1994 թվականի կտակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և Այգեստան 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանի և ավտոտնակի նկատմամբ Կարինե Մերոպյանի սեփականության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջների մասին թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 27-ի որոշումը): Ուստի դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգական գույքի փաստացի տիրապետելու փաստը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով, ընդ որում, գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը, կամ այլ ապացույցներ, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը (տես՝ Գառնիկ Նազարյանն ընդդեմ Գագիկ Նազարյանի, Արտաշատի նոտարական տարածքի նոտարի՝ փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ճանաչելու և Գագիկ Նազարյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1125(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը, ինչպես նաև Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի, Արմավիրի նոտարական տարածքի նոտար Նարինե Մկրտչյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արմավիրի տարածքային ստորաբաժանման՝ Վարդան Վարդանյանի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման եղանակով Միշա Վարդանյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ 3-938(ՎԴ)

քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիս 01-ի որոշումը):

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (տես՝ Կիմա Սարգսյանն ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների կողմից արտահայտված դիրքորոշմանը փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունելու վերաբերյալ, գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները գործին մասնակցող անձանց բացատրությունները, վկաների ցուցմունքները, հայտարարությունները, Սևան համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի 09.12.2011 թվականի թիվ Քպ-2/673 տեղեկանքը՝ որպես ապացույց, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չեն գնահատել համակցության մեջ: Մինչդեռ, նշված ապացույցները փաստական տվյալներ են պարունակում առ այն, որ Վաչե Մուշեղյանը ժառանգության բացման ժամանակ ժառանգական գույք հանդիսացող Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող տանը բնակվել է և շարունակել է բնակվել այնտեղ մինչև 1984 թվականը և միայն 1984 թվականից փաստացի բնակություն է հաստատել հանրակացարանում և վիճելի տան գրանցումից դուրս է եկել 1987 թվականին, որպիսի փաստն ընդունել է նաև Տաթևիկ Մուշեղյանի ներկայացուցիչը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան
Դատավորներ՝ Ս. Անտոնյան

Վ. Աբելյան
Վ. Ավանեսյան
Ա. Բարսեղյան
Մ. Դրմեյան
Գ. Հակոբյան
Տ. Պետրոսյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/1050/02/12
2013 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/1050/02/12
Նախագահող դատավոր՝ Տ. Նազարյան
Դատավորներ՝ Կ. Հակոբյան
Ի. Վարդանյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Գ. Հակոբյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Վ. Ավանեսյանի
Ա. Բարսեղյանի
Մ. Դրմեյանի
Տ. Պետրոսյանի
Ե. Սողոմոնյանի

2013 թվականի նոյեմբերի 29-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Արթուր Վարտանովի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արթուր Վարտանովի ընդդեմ Մարինա Եգիևայի, երրորդ անձ ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու և անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արթուր Վարտանովը պահանջել է 1/2-րդ մասով անվավեր ճանաչել ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից 26.08.2011 թվականին Մարինա Եգիսայի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, իրեն ճանաչել Բենիամին Շահինյանին պատկանող ժառանգական գույքը ներկայացման իրավունքով ընդունած ժառանգ և ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Արարատյան փողոցի թիվ 29 հասցեում գտնվող 61,65քմ մակերեսով օրինական շինությունների 1/2-րդ մասի և 200քմ մակերեսով ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի 1/6-րդ մասի նկատմամբ:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Կուբանյան) (այսուհետ՝ Դատարան) 29.03.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.06.2013 թվականի որոշմամբ Արթուր Վարտանովի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 29.03.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արթուր Վարտանովը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Մարինա Եգիսան:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 2-րդ կետը, որը պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ և 1221-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, որի արդյունքում անտեսել է,

որ իր մորեղբորը պատկանող ժառանգությունն ընդունելու մասին ինքն օրենքով սահմանված ժամկետում և կարգով դիմում է ներկայացրել ժառանգության բացման վայրի նոտարին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ հայցապահանջը վերաբերել է ոչ թե ներկայացման իրավունքով ժառանգմանը, այլ ժառանգման իրավունքին ընդհանրապես:

Վերաքննիչ դատարանը հստակ չի մեկնաբանել, թե միաժամանակ մահացած անձանց ժառանգներն իրավունք ունեն ստանալու միայն իրենց ուղղակի իրավանախորդին պատկանող ժառանգական զանգվածը, թե նաև այն ժառանգական զանգվածը, որն իրավանախորդն իրավունք ուներ ստանալու իր հետ միաժամանակ մահացած անձից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ եթե օրենքը և օրենսդիրը ժառանգական զանգվածից հասանելիք բաժնեմաս են նախատեսում ժառանգատուից ավելի վաղ մահացած ժառանգի իրավահաջորդների և ժառանգության բացումից հետո մահացած ու ժառանգությունն ընդունել չհասցրած ժառանգի իրավահաջորդների համար, ապա ինչ պատճառաբանությամբ ժառանգությունից պետք է զրկվեն այն անձանց իրավահաջորդները, ովքեր մահացել են ժառանգատուի հետ միաժամանակ և նրանից ժառանգելու իրավունք են ունեցել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.06.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա մերժման, քանի որ բացակայում է Արթուր Վարտանովի՝ իր մորեղբոր ժառանգությունն ընդունելու իրավական հիմքը՝ օրենսդիրը հստակ սահմանել է, որ այն անձինք, ովքեր մահացել են ժառանգատուի հետ միաժամանակ և նրանից ժառանգելու իրավունք են ունեցել, ապա նրանց իրավահաջորդները ժառանգությունը կարող են ընդունել, եթե նրանց իրավանախորդը ժառանգատուի մահվանից առաջ է մահացել (ժառանգում ներկայացման իրավունքով) կամ ժառանգատուի մահվանից հետո է մահացել (ժառանգության տրանսմիսիա): Մինչդեռ սույն գործով նման փաստերը բացակայում են, հետևաբար հայցվորը զրկվում է ժառանգությունից:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Արարատյան փողոցի թիվ 29 հասցեում գտնվող ընդհանուր սեփականության իրավունքով գույքագրված 200քմ մակերեսով հողամասի վրա առկա շինություններից 61,65քմ մակերեսով օրինական շինությունը սեփականության իրավունքով որպես առանձին միավոր գույքագրված է Բենիամին Շահինյանի անվամբ (1-ին հատոր, գ.թ. 5).

2) Բենիամին Շահինյանը 23.01.2011 թվականին մահացել է: Նույն օրը մահացել է նաև նրա հարազատ քույրը՝ Լարիսա Վարտանովան: Բենիամին Շահինյանը երեխաներ և կին չունի, իսկ ծնողները մահացել են (1-ին հատոր, գ.թ. 9-10).

3) ՀՀ Արարատի մարզի Ձորակ համայնքի Բաֆֆու փողոցի թիվ 15 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվել է Լարիսա Վարտանովայի անվամբ (1-ին հատոր, գ.թ. 47).

4) 02.02.2011 թվականին Արթուր Վարտանովը հայտարարություն է ներկայացրել ՀՀ «Մասիս» նոտարական տարածքի նոտարին իր մոր՝ Լարիսա Վարտանովայի «մահից հետո մնացած ժառանգական գույքն ըստ օրենքի ընդունելու մասին» (1-ին հատոր, գ.թ. 12).

5) 05.02.2011 թվականին Արթուր Վարտանովը հայտարարություն է ներկայացրել ՀՀ «Շենգավիթ» նոտարական տարածքի նոտարին իր մոր՝ Լարիսա Վարտանովայի «մահից հետո մնացած և ըստ օրենքի ներկայացման իրավունքով իրեն հասանելիք ժառանգությունը, ժառանգական գույքն ամբողջությամբ» ընդունելու մասին (1-ին հատոր, գ.թ. 11).

6) ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Է. Շաբոյանը Բենիամին Շահինյանի քրոջը՝ Մարինա Եգիևային 26.08.2011 թվականին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տվել Երևանի Արարատյան փողոցի թիվ 29 հասցեում գտնվող 61,65քմ մակերեսով շինության և 200քմ մակերեսով ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ (1-ին հատոր, գ.թ. 13):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված է հետևյալ իրավական հարցը.

ովքեր են հրավիրվում ժառանգման մեկը մյուսից հետո ժառանգելու իրավունք ունեցող անձանց նույն օրը մահանալու դեպքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին (ներկայացման իրավունքով ժառանգություն) և նրանց միջև բաշխվում է հավասարապես:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում՝ այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն օրը մահացել են այն անձինք, ովքեր իրավունք ունեին ժառանգել մեկը մյուսից հետո, նրանք մահացած են ճանաչվում միաժամանակ: Ժառանգությունը բացվում է նրանցից յուրաքանչյուրից հետո և ժառանգման են հրավիրվում նրանցից յուրաքանչյուրի ժառանգները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1190-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգներ կարող են լինել ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ մեկը մյուսից հետո ժառանգելու իրավունք ունեցող անձանց նույն օրը մահանալու

դեպքում նրանք մահացած են ճանաչվում միաժամանակ և ժառանգման են հրավիրվում նրանցից յուրաքանչյուրի ժառանգները՝ ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բենիամին Շահինյանը և նրա հարազատ քույրը՝ Լարիսա Վարտանովան, մահացել են միաժամանակ՝ սույն օրը: Այսինքն՝ Բենիամին Շահինյանի ժառանգության բացման ժամանակ Լարիսա Վարտանովան կենդանի չի եղել: Նման պայմաններում վերջինս չէր կարող հանդիսանալ Բենիամին Շահինյանի ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգը:

Հետևաբար սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ որպես հայցապահանջի իրավական հիմք վկայակոչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի 1-ին կետը, քանի որ նշված հոդվածը կարգավորում է մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինը նրա երեխաներին անցնելու (ներկայացման իրավունքով ժառանգություն) և նրանց միջև բաշխելու հարցը, որը մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի երեխաներին իրավունք է վերապահում ժառանգելու իրենց իրավանախորդին հասանելիք այն բաժինը, որը նրան կհասներ կենդանության օրոք:

Հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի վերը նշված վերլուծությունը՝ Բենիամին Շահինյանի մահվանից հետո ժառանգման ենթակա էին հրավիրման միայն նրա ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, մերժելով Արթուր Վարտանովի հայցը՝ ներկայացման իրավունքով իր մորեղբոր ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և սեփականության իրավունքը ժառանգական գույքի նկատմամբ ճանաչելու պահանջների մասին, իսկ Վերաքննիչ դատարանը, մերժելով այդ վճռի դեմ Արթուր Վարտանովի բերած վերաքննիչ բողոքը, թույլ չեն տվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի վկայակոչված վերը նշված խախտումները, քանի որ ճիշտ մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ, 1188-րդ, 1217-րդ, 1221-րդ հոդվածները՝ հանգել են հիմնավոր եզրակացության առ այն, որ որպեսզի Արթուր Վարտանովը ներկայացման իրավունքով ժառանգեր մորեղբոր ժառանգությունը, նրա մայրը պետք է մահացած լիներ մինչև եղբոր մահանալը:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ Վճռաբեկ դատարանի՝ դատական ակտը օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը սույն որոշման պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2013 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Արթուր Վարտանովից հօգուտ Հայաստանի Հանրապետության բնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 31.07.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան
Դատավորներ՝ Գ. Հակոբյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Վ. Ավանեսյան
Ա. Բարսեղյան
Ս. Դրմեյան
Տ. Պետրոսյան
Ե. Սողոմոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԿԴ3/0232/02/13
2014 թ.
Քաղաքացիական գործ թիվ ԿԴ3/0232/02/13
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան
Դատավորներ՝ Գ. Մատինյան
Տ. Նազարյան

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Ե. Խունդկարյանի
մասնակցությամբ դատավորներ Վ. Ավանեսյանի
Վ. Աբելյանի
Ս. Անտոնյանի
Ա. Բարսեղյանի
Ս. Դրմեյանի
Գ. Հակոբյանի
Է. Հայրիյանի
Ե. Սողոմոնյանի

2014 թվականի հուլիսի 18-ին

դրնբաց դատական նիստում, քննելով Ռիտա Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.12.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ռիտա Մնացականյանի ընդդեմ Շավիղ Մնացականյանի, երրորդ անձինք ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր), Աշտարակի նոտարական տարածքի նոտարի, Լուսինե և Գևորգ Մնացականյանների՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված սե-

փականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած համարելու պահանջների մասին, և ըստ հայցի Գևորգ Մնացականյանի ընդդեմ Շավիղ Մնացականյանի, երրորդ անձինք Կադաստրի, Աշտարակի նոտարական տարածքի նոտարի, Ռիտա և Լուսինե Մնացականյանների՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, հարգելի համարել ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելը և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ռիտա Մնացականյանը պահանջել է անվավեր ճանաչել Աշտարակի նոտարական տարածքի նոտարի կողմից 09.09.2006 թվականին վավերացված թիվ 3490 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, դրանից բխող ժառանգական գույքի պետական գրանցումը՝ Շավիղ Մնացականյանի անվամբ, այդ գույքի նկատմամբ կատարված հետագա գործարքները, ինչպես նաև փաստացի տիրապետման հիմքով իր կողմից ընդունված համարել Օնիկ Մնացականյանի ժառանգությունը:

Դիմելով դատարան՝ Գևորգ Մնացականյանը պահանջել է անվավեր ճանաչել Շավիղ Մնացականյանին 09.09.2006 թվականին տրված թիվ 3490 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և ժառանգական գույքի փոխանցման հետագա բոլոր գործարքներն ու վարչական ակտերը, ինչպես նաև իրեն ճանաչել Օնիկ Մնացականյանի՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ՝ հարգելի համարելով ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառները:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Հեբոյան) (այսուհետ՝ Դատարան) 30.09.2013 թվականի վճռով Ռիտա Մնացականյանի հայցը մերժվել է, իսկ Գևորգ Մնացականյանի հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.12.2013 թվականի որոշմամբ Ռիտա Մնացականյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 30.09.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռիտա Մնացական-յանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գևորգ Մնացական-յանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 04.06.1964 թվականի Հայկական ՄՍՀ քաղաքացիական օրենսգրքի 530-րդ, 531-րդ, 532-րդ, 543-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ, 1207-րդ և 1211-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ, 219-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Գևորգ Մնացականյանը որևէ ձևով չի հիմնավորել շինարարական աշխատանքները 2013 թվականին կատարված լինելու փաստը այն դեպքում, երբ բողոք բերողը պնդել է, որ այդ աշխատանքները կատարվել են 2012 թվականին: Հետևաբար, Գևորգ Մնացականյանի կողմից չի հիմնավորվել ժառանգության ընդունման համար բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու հանգամանքը:

Ավելին, Վերաքննիչ դատարանը, նշելով, որ բողոք բերած անձը չի ապացուցել, որ Գևորգ Մնացականյանը կտակի գոյության մասին իրազեկված է եղել ավելի վաղ, քան դատարան դիմելուց վեց ամիս առաջ, այդ փաստի ապացուցման պարտականության բացասական հետևանքները դրել է Ռիտա Մնացականյանի վրա: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Գևորգ Մնացականյանի կողմից ներկայացված կտակը չի կարող ճանաչվել օրինական, քանի որ այն չի համապատասխանում օրենքի պահանջներին:

Մասնավորապես՝ Օնիկ Մնացականյանի կենդանության օրոք գործել է 1964 թվականին ընդունված և մինչև 01.01.1999 թվականը գործող Հայկական ՄՍՀ քաղաքացիական օրենսգիրքը: Նշված օրենսգրքի 543-րդ հոդվածի համաձայն՝ կտակը պետք է կազմվի գրավոր՝ կազմելու վայրի ու պահի նշմամբ, ստորագրվի կտակարարի ձեռքով և վավերացվի

նոտարական կարգով: Այն բնակավայրում, որտեղ նոտարական գրասենյակ չկա, կտակը կարող է վավերացվել կտակարարի մշտական բնակավայրի պատգամավորների համապատասխան տեղական խորհրդի գործադիր կոմիտեն:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Պետական նոտարիատի մասին» ՀԽՍՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ նոտարական գործողություններ կատարելու համար Հայկական ՄՍՀ-ում կազմակերպվում են պետական նոտարական գրասենյակները: Այն բնակավայրերում, որտեղ պետական նոտարական գրասենյակներ չկան, «Պետական նոտարիատի մասին» ՀԽՍՀ օրենքով և նույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված նոտարական գործողությունները կատարում են պատգամավորների քաղաքային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեները: Պատգամավորների քաղաքային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներում նոտարական գործողությունները կատարում են՝ գործադիր կոմիտեի նախագահը, նախագահի տեղակալը կամ քարտուղարը, որոնց վրա պատգամավորների համապատասխան խորհրդի գործադիր կոմիտեի որոշմամբ դրված է նոտարական գործողությունների կատարումը:

Վերոնշյալ օրենքի պահանջներին համապատասխան գործկոմի քարտուղարը կարող էր դիտվել որպես նոտար, եթե այդ շրջանում նոտարական գրասենյակ չլիներ, սակայն Նախրիի նախկին շրջանում 1985 թվականից գոյություն է ունեցել նոտարական գրասենյակ, իսկ կտակում նշված է, որ այն կազմված է երեք օրինակից, որոնցից առաջինը պահվում է Արագյուղի գյուղխորհրդի գործկոմում, երկրորդը տրվում է Նախրիի շրջանի նոտարական գրասենյակին, իսկ երրորդը՝ կտակարար Օնիկ Սարիբեկի Մնացականյանին:

Հետևաբար, նշված պաշտոնատար անձինք պարտավոր էին իրենց հաստատած կտակներից մեկական օրինակ անհապաղ ի պահ հանձնել կտակարարի մշտական բնակության վայրի պետական նոտարական գրասենյակին, որը տվյալ պարագայում չի կատարվել, ուստի 08.08.1994 թվականին գրված փաստաթուղթը չի կարող համարվել կտակ:

Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի արժանացրել այն հանգամանքը, որ Օնիկ Մնացականյանի մահից հետո վեց ամսվա ընթացքում կատարվել են կոմունալ և այլ վճարներ, որպիսի հանգամանքը վկայում է Ռիտա Մնացականյանի կողմից փաստացի տիրապետման հիմքով վիճելի գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունելու մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.12.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա մերժման, քանի որ Ռիտա Մնացականյանը չի ապացուցել, որ Գևորգ Մնացականյանը կտակի գոյության մասին իրազեկված է եղել ավելի վաղ, քան դատարան դիմելուց վեց ամիս առաջ, ուստի հիշյալ փաստարկի ապացուցման պարտականության կատարման բացասական հետևանքները կրում է ոչ թե Գևորգ Մնացականյանը, այլ՝ Ռիտա Մնացականյանը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Եղվարդ համայնքի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն տարածքային բաժնի կողմից 14.11.2006 թվականին տրված Ա.Ա. թիվ 077438 մահվան վկայականի կրկնօրինակի համաձայն՝ Օնիկ Սարիբեկի Մնացականյանը մահացել է 13.04.1997 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 20):

2. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 28.10.2003 թվականի թիվ 496286 և թիվ 496287 վկայականների համաձայն՝ Օնիկ Մնացականյանը ՀՀ Կոտայքի մարզի Արագյուղ հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի, վարելահողի սեփականատերն էր (հատոր 1-ին, գ.թ. 92-97):

3. Աշտարակի նոտարական տարածքի նոտարի կողմից 09.09.2006 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ Շավիղ Մնացականյանը Օնիկ Մնացականյանի ժառանգն է (հատոր 1-ին, գ.թ. 88):

4. Սեփականության իրավունքի գրանցման 22.07.2010 թվականի թիվ 2701485 և 2701486 վկայականների համաձայն՝ Շավիղ Մնացականյանը ՀՀ Կոտայքի մարզ, գ. Արագյուղ, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 8ա հասցեում գտնվող հողամասի և ՀՀ Կոտայքի մարզ, գ. Արագյուղ, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 8 հասցեում գտնվող բնակելի տան և

հողամասի սեփականատերն է (հատոր 2-րդ, գ.թ. 36-39, կադաստրային գործ, գ.թ. 12-16):

5. 10.08.2010 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Շավիղ Մնացականյանը ՀՀ Կոտայքի մարզ, գ. Արագյուղ, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 8ա հասցեում գտնվող հողամասի մի մասը՝ 1500,0 քմ մակերեսը, վաճառել է Լուսինե Մնացականյանին (հատոր 2-րդ, գ.թ. 32-34):

6. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 12.08.2010 թվականի թիվ 2701771 վկայականի համաձայն՝ Լուսինե Մնացականյանը ՀՀ Կոտայքի մարզ, գ. Արագյուղ, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 8ա հասցեում գտնվող հողամասի սեփականատերն է (հատոր 2-րդ, գ.թ. 24-28):

7. 17.08.2012 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Շավիղ Մնացականյանը ՀՀ Կոտայքի մարզ, գ. Արագյուղ, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 8 հասցեում գտնվող գույքը նվիրել է որդուն՝ Գևորգ Մնացականյանին: Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման 23.08.2012 թվականի վկայականի համաձայն՝ Գևորգ Մնացականյանը ՀՀ Կոտայքի մարզ, գ. Արագյուղ, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 8 հասցեում գտնվող գույքի սեփականատերն է (կադաստրային գործ, գ.թ. 5-8):

8. Արագյուղի գյուղական խորհրդի գործկումի քարտուղարի կոմիտեի կողմից 08.08.1994 թվականին հաստատված կտակի համաձայն՝ Օնիկ Մնացականյանն իր ամբողջ գույքը կտակել է թոռանը՝ Գևորգ Մնացականյանին (հատոր 2-րդ, գ.թ. 48):

9. ՀՀ Կոտայքի մարզի Արագյուղ համայնքի ղեկավար Ա. Իսպիրյանի 23.05.2013 թվականի տեղեկանքի համաձայն՝ Օնիկ Մնացականյանի մահից հետո ՀՀ Կոտայքի մարզ, գ. Արագյուղ, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքը տիրապետել է Շավիղ Մնացականյանը, վճարել է հարկերը և այլ վճարումները, իսկ 2003 թվականից սկսած՝ այդ տանը բնակվել է Ռիտա Մնացականյանը (հատոր 3-րդ, գ.թ. 51):

10. ՀՀ Կոտայքի մարզի Արագյուղ համայնքի ղեկավար Ա. Իսպիրյանի 01.08.2013 թվականի տեղեկանքի համաձայն՝ Օնիկ Մնացականյանի մահից հետո՝ 1997 թվականի մայիս ամսից, ՀՀ Կոտայքի մարզ, գ. Արագյուղ, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 8 հասցեում գտնվող տանը մշտապես բնակվում է Ռիտա Մնացականյանն իր որդու հետ (հատոր 3-րդ, գ.թ. 41):

11. Արագյուղ համայնքի ղեկավար Ա. Իսպիրյանը 30.08.2013 թվականին ներկայացված գրությամբ հայտնել է, որ ինքը ՀՀ Կոտայքի մարզի Արագյուղի նորանշանակ գյուղապետն է: Դա է պատճառը, որ ստույգ տեղեկություններ չունի Շավիղ Մնացականյանի կամ Ռիտա Մնացականյանի կողմից վիճելի անշարժ գույքը տիրապետելու կամ կառավարելու մասին: Խնդրել է դատարան ներկայացված՝ իր կողմից տրված բոլոր տեղեկանքները հիմք չընդունել (հատոր 3-րդ, գ.թ. 50):

12. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Հայկ Մնացականյանը հայտնել է, որ Շավիղ և Ռիտա Մնացականյաններն իր հորեղբոր երեխաներն են, Օնիկ Մնացականյանի մահից հետո հայրական տանը բնակվում է Շավիղ Մնացականյանը, և նա է կատարել Օնիկ Մնացականյանի հողարկավորման ծախսերը, Օնիկ Մնացականյանի մահից հետո Շավիղ Մնացականյանը Ռիտա Մնացականյանին տարել է հայրական տուն, և միասին բնակվել են այնտեղ (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

13. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Լաուրա Գաբրիելյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ռիտա Մնացականյանի հարևանն է: Օնիկ Մնացականյանի մահվան 40-րդ օրը չլրացած՝ Ռիտա Մնացականյանն է բնակվել Օնիկ Մնացականյանի տանը, մշակել հողամասը և վաճառել բերքը, Շավիղ Մնացականյանն այդ տանը չի բնակվել, նրան տեսել է միայն թաղման ժամանակ և աղջկա տունը կառուցելուց (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

14. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Կարմեն Գալստյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ռիտա Մնացականյանի հարևանն է, Լուսինե և Շավիղ Մնացականյաններին չի ճանաչում, Ռիտա Մնացականյանն ապրում է հայրական տանը 1997 թվականից, նա է խնամել և մշակել հողամասը, Շավիղ Մնացականյանին չի տեսել այդ տանը, թաղման ծախսերը կատարել է Շավիղ և Ռիտա Մնացականյանների քույրը՝ Ռուզաննա Մանուկյանը (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

15. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Հրաչիկ Մնացականյանը ցուցմունք է տվել այն մասին, որ կողմերն իր հորեղբոր երեխաներն են, Ռիտա Մնացականյանին Շավիղ Մնացականյանն է թույլատրել ապրել հայրական տանը, Շավիղ Մնացականյանն է կատարել թաղման ծախսերը, վերջինիս կողմից են կատարվել գույքահարկի և հողի հարկի վճարումները, սակայն որևէ կոնկրետ ժամանակահատ-

ված չի նշել (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

16. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Նուշիկ Միրզոյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ռիտա Մնացականյանի հարևանն է, հոր մահից հետո 40 օրվա ընթացքում Ռիտա Մնացականյանն է տեղափոխվել և բնակվել հայրական տանը, մշակել է հողը, վաճառել է բերքը, Շավիղ Մնացականյանն այդտեղ չի ապրել, միայն դարպասն է փոխել, նրան մի քանի անգամ է տեսել (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

17. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Սամվել Բաբայանը ցուցմունք է տվել այն մասին, որ կողմերը համազոտադատություններ են, ինքն Արագյուղի նախկին գյուղապետն է, Օնիկ Մնացականյանը մահացել է 1997 թվականին, նա երկրորդ կին ուներ, ով նրա մահից 6 ամիս անց գնացել է այդ տնից: Շավիղ Մնացականյանն է վճարել տան վարձերը, ինքը տեղեկանք է տվել Շավիղ Մնացականյանին գույքի տիրապետման մասին: Ռիտա Մնացականյանը հոր մահից մի քանի տարի անց է սկսել բնակվել հայրական տանը (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

18. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Հրանուշ Խաչատրյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Ռիտա Մնացականյանի հարևանն է, հոր մահից հետո Ռիտա Մնացականյանն է բնակվել հայրական տանը, նա է մշակել հողը, վճարել հարկերը, այլ մարդու չի տեսել (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

19. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Վահրամ Ավետիսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ճանաչում է կողմերին, Շավիղ Մնացականյանը կամ նրա ընտանիքի անդամներն են բնակվել հայրական տանը, նա 2003 կամ 2004 թվականին Ռիտա Մնացականյանին բերել է հայրական տուն, Օնիկ Մնացականյանի մահվան մեկ տարին չլրացած՝ նրա երկրորդ կինը գնացել է այդ տնից, Շավիղ Մնացականյանն է կատարել թաղման հետ կապված բոլոր ծախսերը, Ռիտա Մնացականյանը այդտեղ է բնակվել 2003 թվականից (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

20. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Ջորակ Գրիգորյանը, ցուցմունք է տվել այն մասին, որ կողմերը համազոտադատություններ են, Օնիկ Մնացականյանի մահից հետո Շավիղ Մնացականյանն է բնակվում տանը, նա է տնօրինում գույքը (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

21. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Նորիկ Բաբայանը, ցուցմունք է տվել այն մասին, որ ճանաչում է կողմերին, Շավիղ Մնացականյանն է կատարել հուղարկավորության բոլոր ծախսերը, սակայն չի հիշում, թե ով է ապրել այդ տանը (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

22. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Արտաշես Ավետիսյանը, ցուցմունք է տվել այն մասին, որ ճանաչում է կողմերին, Շավիղ Մնացականյանն է տիրապետել և տնօրինել գույքը, նա է կատարել թաղման ծախսերը (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

23. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Ռուզաննա Մանուկյանը ցուցմունք է տվել այն մասին, որ կողմերի քույրն է, իրենց հոր մահից հետո Ռիտա Մնացականյանն է ապրել հայրական տանը, տան բանալիները եղել են նրա մոտ: Շավիղ Մնացականյանը չի ապրել այդ տանը: Տան գույքահարկը վճարել է Շավիղ Մնացականյանը, իսկ մնացած վարձերը՝ Ռիտա Մնացականյանը (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

24. Գործի քննության ժամանակ որպես վկա հարցաքննված Ալվարդ Հակոբյանը ցուցմունք է տվել այն մասին, որ կողմերի քույրն է, Օնիկ Մնացականյանը մահացել է 1997 թվականին: Ռիտա Մնացականյանն է հոր մահից հետո տիրապետել տունը, Շավիղ Մնացականյանն այդ տանը չի բնակվել (դատական նիստի արձանագրություն, հատոր 4-րդ, գ.թ. 20 ա):

25. 1997 թվականի հարկային վճարումների ընդունման անդորրագրի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Արագյուղի հարկային տեսչություն Ռիտա Մնացականյանի կողմից վճարվել է հողի հարկ՝ երեք հազար ութ հարյուր տասնինը ՀՀ դրամի չափով (հատոր 3-րդ, գ.թ. 54):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Ժառանգի կողմից ըստ կտակի ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջ ներկայացնելու դեպքում արդյո՞ք ժառանգության ընդունման օրենքով սահմանված ժամկետը հայցվորի կողմից հարգելի պատճառներով բաց թողնելու փաստի ապացուցման պարտականությունը կարող է դրվել պատասխանողի կամ երրորդ անձի վրա:

«ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի տասնմեկերորդ բաժնի նորմերը կիրառվում են նաև այն ժառանգությունների նկատմամբ, որոնք բացվել են մինչև օրենսգիրքը գործողության մեջ դնելը, սակայն չեն ընդունվել ժառանգներից ոչ մեկի կողմից և ժառանգման իրավունքով պետության կամ համայնքի սեփականությունը չեն դարձել մինչև 1999 թվականի հունվարի 01-ը:

1998 թվականի մայիսի 05-ի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տասնմեկերորդ բաժինը վերաբերում է ժառանգման իրավունքին և կարգավորում է ժառանգման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ ժառանգության ընդունումը:

Որպեսզի կիրառելի լինեն 1998 թվականի մայիսի 05-ի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տասնմեկերորդ բաժնի նորմերը սույն գործով վիճելի իրավահարաբերության նկատմամբ, «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքը նախատեսում է մի քանի պայման՝

1. ժառանգությունը պետք է բացված լինի մինչև 1998 թվականի մայիսի 05-ի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գործողության մեջ դնելը: «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ է դրվել 1999 թվականի հունվարի 01-ից:

2. ժառանգությունը չպետք է ընդունված լինի որևէ մեկի կողմից: Այսինքն՝ պետք է բացակայի ժառանգական զանգվածում ներառված գույքի՝ իրավահաջորդության կարգով անցումն այլ անձանց՝ ժառանգների:

3. Ժառանգությունը որևէ մեկի կողմից ընդունված չլինելու դեպքում այն չպետք է դարձած լինի պետության կամ համայնքի սեփականությունը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ երկրորդ և երրորդ պայմանները չպետք է տարանջատել, քանի որ դրանք գործում են միաժամանակ՝ հաշվի առնելով այն, որ ժառանգությունը չընդունվելու դեպքում այն դառնում է պետության կամ համայնքի սեփականությունը: Ընդ որում, այդ պայմանները պետք է առկա լինեն մինչև 1999 թվականի հունվարի մեկը:

Նշված իրավակարգավորումից հետևում է, որ նախկին՝ 1964 թվականի հունիսի 04-ի ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ժառանգման հարաբերությունների նկատմամբ կարող է կիրառվել, եթե ժառանգությունը բացվել է մինչև 1999 թվականի հունվարի 01-ը և բացակայում են վերը թվարկված վերջին երկու պայմանները (տե՛ս ՕՖԵյա Խաչատրյանն ընդդեմ ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի և մյուսների թիվ ԵԱՔԳ/0554/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը):

Սույն գործով Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ ժառանգությունը բացվել է մինչև 1998 թվականի մայիսի 05-ի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գործողության մեջ դնելը, վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառվող օրենսդրության հարցը որոշելու համար անհրաժեշտ է համարում ստուգել վերոգրյալ պայմանների՝ սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելիությունը:

Նշված հարցի քննարկման տեսանկյունից կարևորվում են հետևյալ փաստերը. Օնիկ Սարիբեկի Մնացականյանը մահացել է 13.04.1997 թվականին: 09.09.2006 թվականին ՀՀ Կոտայքի մարզ, գ. Արագյուղ թիվ 8 հասցեում գտնվող բնակելի տան, տնամերձ հողամասի, օժանդակ շինությունների և վարելահողի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տրվել նրա որդուն՝ Շավիղ Օնիկի Մնացականյանին: Մինչդեռ Ռիտա Մնացականյանի պնդմամբ հոր՝ Օնիկ Մնացականյանի մահից հետո, ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում փաստացի տիրապետման եղանակով ինքն է ընդունել հոր ժառանգությունը: Մասնավորապես՝ հոր մահից անմիջապես հետո բնակություն է հաստատել նրա ժառանգական զանգվածի մեջ մտնող բնակելի տանը, մշակել է տնամերձ հողամասը, կատարել է հողի հարկի, գույքահարկի, կոմունալ և այլ վճարումները:

Վերոնշյալ փաստերից հետևում է, որ Ռիտա Մնացականյանի կողմից ժառանգության հավանական ընդունումը տեղի է ունեցել ժառանգատուի՝ Օնիկ Մնացականյանի մահից հետո՝ մինչև 1998 թվականի մայիսի 05-ի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գործողության մեջ դրվելը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշվածը բավարար է հանգելու հետևության, որ Ռիտա Մնացականյանի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունելու հարցը լուծելիս կիրառելի է 1964 թվականի հունիսի 04-ի ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, քանի որ բացակայում են «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում ամրագրված պայմանները:

1964 թվականի հունիսի 04-ի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է ընդունի այն: Չի թույլատրվում ժառանգության ընդունումը պայմանով կամ վերապահումներով:

Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին:

Այս հոդվածում նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգության ընդունման ընդհանուր ժամկետների վերաբերյալ նախկին և գործող օրենսդրական կարգավորումները նույնն են՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանը Հարություն Հաբեշյանն ընդդեմ Ռաիսա Հաբեշյանի և մյուսների գործով անդրադարձել է 1964 թվականի հունիսի 04-ի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածով նախատեսված ժառանգության ընդունման ժամկետի հաշվարկի և այդ ժամկետը բաց թողնելու իրավական հետևանքների հարցին: Մասնավորապես՝ նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնակարգմամբ ժառանգության բացման ժամանակ էր համարվում ժառանգատուի մահվան օրը, իսկ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված էր համարվում այն դեպքում, երբ նա փաստորեն սկսում էր տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, որպիսի գործողությունները պետք է կատարվեին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Այսինքն՝ վեցամսյա ժամկետը բաց թողնելու հետևանքով անձը կորցնում էր

ժառանգությունն ընդունելու հնարավորությունը և չէր կարող համարվել այն ընդունած (տե՛ս Հարություն Հաբեշյանն ընդդեմ Ռաիսա Հաբեշյանի և մյուսների թիվ ԵՄԴ/0235/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Վիրառելով վերոնշյալ մեկնաբանությունները սույն գործի փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 1964 թվականի հունիսի 04-ի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի կիրառմամբ Ռիտա Մնացականյանին Օնիկ Մնացականյանի ժառանգությունն ընդունած ժառանգ դիտելու համար անհրաժեշտ է հիմնավորել, որ Օնիկ Մնացականյանի մահից հետո վեց ամսվա ընթացքում Ռիտա Մնացականյանը փաստացի տիրապետել է վերջինիս ժառանգության զանգվածի մեջ մտնող բնակելի տունը, կատարել է կոմունալ և այլ վճարումներ:

Սույն գործով Դատարանը Ռիտա Մնացականյանի հայրը մերժելիս, իսկ Գևորգ Մնացականյանի հայրը բավարարելիս պատճառաբանել է, որ Ռիտա Մնացականյանի և Շավիղ Մնացականյանի կողմից դատարան կանչված վկաները գործի քննության ժամանակ տվել են հակասական ցուցմունքներ և այդ ցուցմունքներով չի հաստատվել Ռիտա Մնացականյանի՝ Օնիկ Մնացականյանի մահից հետո վեցամսյա ժամկետում վիճելի տանը բնակվելու հանգամանքը: Բացի այդ, Դատարանը նշել է, որ Ռիտա Մնացականյանի կողմից դատարան ներկայացրած գույքահարկի վճարման անդորրագրերում որպես վճարող նշված է միայն հանգուցյալ Օնիկ Մնացականյանի անունը, իսկ դրանք Ռիտա կամ Շավիղ Մնացականյանների կողմից վճարված լինելու հանգամանքը հիմնավորող ապացույց դատարանին կողմերը չեն ներկայացրել: Միաժամանակ, Դատարանը հաստատված է համարել Գևորգ Մնացականյանի կողմից Օնիկ Մնացականյանի կտակի մասին դատարան դիմելուց առաջ վեցամսյա ժամկետում իմանալու հանգամանքը:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելով, արձանագրել է, որ Ռիտա Մնացականյանի կողմից չի ներկայացվել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց փաստացի տիրապետման հիմքով ժառանգություն ընդունելու վերաբերյալ: Միաժամանակ, անդրադառնալով վերաքննիչ բողոք բերած անձի այն փաստարկին, որ Գևորգ Մնացականյանը չի հիմնավորել ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառի հարգելի լինելու հանգամանքը, Վերաքննիչ դատարանը հանգել է այն հետևության, որ այդ հանգամանքը պետք է ապացուցվեր Ռիտա Մնացականյանի կողմից, ուստի դրա բացասական հետևանքները կրում է Ռիտա Մնացականյանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառնությունը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս Ռազմիկ Մարությանն ընդդեմ Ստեփան և Անահիտ Մարությանների, ՀՀ Կենտրոն նոտա-

րական գրասենյակի թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ Ռիտա Մնացականյանի կողմից չի ներկայացվել որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց փաստացի տիրապետման հիմքով ժառանգություն ընդունելու վերաբերյալ, չի անդրադարձել 1997 թվականի հարկային վճարումների ընդունման անդորրագրին, համաձայն որի՝ ՀՀ Կոտայքի մարզի Արագյուղի հարկային տեսչություն Ռիտա Մնացականյանի կողմից վճարվել է հողի հարկ՝ երեք հազար ութ հարյուր տասնինը դրամի չափով, և չի նշել, թե ինչու է այդ ապացույցը մերժվում: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված ապացույցը վերաբերելի ապացույց է, քանի որ տեղեկություն է բովանդակում սույն գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքի մասին, հետևաբար ենթակա էր գնահատման ստորադաս դատարանների կողմից:

Միաժամանակ անդրադառնալով ստորադաս դատարանների այն պատճառաբանությանը, որ սույն գործով վկաների կողմից տրված ցուցմունքներում առկա են հակասություններ, ուստի չի հիմնավորվում Ռիտա Մնացականյանի կողմից փաստացի տիրապետման եղանակով ժառանգության ընդունման փաստը՝ Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում նշել, որ վկաների ցուցմունքները գնահատելիս դատարանները պետք է հաշվի առնեն նրանցից յուրաքանչյուրի փոխհարաբերությունները գործին մասնակցող անձանց հետ, ինչպես նաև գործի լուծման համար նշանակություն ունեցող տեղեկության ընկալման, պահպանման և փոխանցման ունակությունը: Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ բոլոր այն դեպքերում, երբ վկաների ցուցմունքներում առկա են հակասություններ, այդ ցուցմունքներից յուրաքանչյուրի արժանահավատությունը հարկ է գնահատել գործում առկա այլ ապացույցների համակցության մեջ:

Մինչդեռ սույն գործով ստորադաս դատարանները վկաների ցուցմունքները գնահատել են՝ անտեսելով գործում առկա այլ ապացույցները, այդ թվում նաև՝ վերը նշված 1997 թվականի հարկային վճարումների ընդունման անդորրագիրը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Ռիտա Մնացականյանը չի ապացուցել, որ Գևորգ Մնացականյանը կտակի գոյության մասին իրազեկված է եղել ավելի վաղ, քան դատարան դիմելուց վեց ամիս առաջ, ուստի դրա բացասական հետևանքները պետք է կրի Ռիտա Մնացականյանը, ապա Վճռաբեկ

դատարանը նման եզրահանգումը գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով Գևորգ Մնացականյանը, ներկայացնելով ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջ, միաժամանակ խնդրել է դատարանին հարգելի համարել ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառները և ի հիմնավորումն այդ հանգամանքի՝ նշել է, որ կտակը գտել է թղթապանակի մեջ 2013 թվականին՝ տան վերանորոգման ընթացքում:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հիմքն ի հայտ է եկել գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կիրառության ժամանակահատվածում, գտնում է, որ այդ մասով վիճելի իրավահարաբերության նկատմամբ ենթակա են կիրառման գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան իրավանորմերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը, ժառանգին ճանաչելով ժառանգությունն ընդունած, լուծում է դրանից բխող ժառանգական գույքի նկատմամբ մյուս ժառանգների իրավունքներին վերաբերող հարցերը, ինչպես նաև անվավեր է ճանաչում նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը: Այս դեպքում չի պահանջվում տալ ժառանգության իրավունքի նոր վկայագիր:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ժառանգության ընդունման օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու հարցը դատարանը լուծում է այն ժառանգի դիմումի հիման վրա, որը բաց է թողել ժառանգությունն ընդունելու օրենքով սահմանված ժամկետը, և միայն այն դեպքում, եթե այդ ժառանգի կողմից դիմումը ներկայացվել է բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումաբանորադարձել է կողմերի միջև ապացուցման դատավարական բեռի բաշխման հարցին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (տե՛ս Էդգար Մարկոսյանը և Զարուհի Գևորգյանն ընդդեմ Մեղա Սարգսյանի թիվ ԵԱՆՅ/0479/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ինչպես Գևորգ Մնացականյանի կողմից ներկայացված փաստարկին՝ ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելու պատճառների վերաբերյալ, այնպես էլ Ռիտա Մնացականյանի այն փաստարկին, որ տունը վերանորոգվել է ոչ թե 2013 թվականի գարնանը, այլ՝ 2012 թվականի աշնանը, որի հետևանքով բաց է թողնվել դատարան դիմելու օրենքով

սահմանված վեց ամսյա ժամկետը, գտել է, որ Ռիտա Մնացականյանը պետք է ապացուցեր, որ Գևորգ Մնացականյանը կտակի մասին իմացել է ավելի վաղ, քան դատարան դիմելուց վեց ամիս առաջ, ուստի և այդ փաստի ապացուցման բացասական հետևանքները պետք է կրի Ռիտա Մնացականյանը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ փաստի ապացուցման պարտականությունը կրում է ըստ կտակի ժառանգ Գևորգ Մնացականյանը, այսինքն՝ այն կողմը, որի վրա օրենքով սահմանված կարգով, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով, դրված է ժառանգության ընդունման օրենքով սահմանված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու և այդ պահից վեց ամսվա ընթացքում դատարան դիմելու հանգամանքները հիմնավորելու պարտականությունը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով լրիվ և բազմակողմանի քննությունն չի իրականացվել, այն է՝ ամբողջությամբ չի պարզվել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը, ճիշտ չի բաշխվել ապացուցման պարտականությունը, չեն հետազոտվել և գնահատվել գործում առկա բոլոր ապացույցները, որպիսի պարագայում գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.2014 թվականի ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.12.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.02.2014 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. Խունդկարյան
Դատավորներ՝ Վ. Ավանեսյան

Վ. Աբելյան
Ս. Անտոնյան
Ա. Բարսեղյան
Մ. Դրմեյան
Գ. Հակոբյան
Է. Հայրիյան
Ե. Սողոմոնյան

ՀՀ ՎՃՈՒԱԲԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՆ

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

(2006-2014)



Տպագրությունը՝

Թուղթը՝

Ծավալը՝

լազերային

օֆսեթ

31,75 տպ. մամուլ

«Մեկնարկ» ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 41
հեռ. 091-40-27-97